



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2100

Կիւ իսկ

ԳԻԿ

84
4-67

Կ. Գալսե
1880

197

305

Կ Ի Ն Խ Ա Ղ Գ Ի Ն Ի

20 03



84-31
4-67
Ux

Հ. ԲՕԼ ՏԸ ԳՕԳ

ԿԻՆ ԻԱՂ ԳԻՆԻ



ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻՆԻՆԵՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵՍՅՑ

Գունգաբու. Պատրիարքարան փողոց

Հրատարակիչ Կ. Ա. Պարոնեան



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐԵԱՅ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ

1880



499

D. POL SC DOE

ԿԻՆ ԽԱՂ ԳԻՆԻ



ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՂԻՆ

Գրացուհի, Անիթան պիտի պարէ այս գիշեր :

— Անիթան, այո՞ դրացի, խաղին տասներորդ և վեշտա-
ւաներորդ պատկերներուն մէջ :

— Ընդ ամենը քանի՞ պատկեր է այդ նոր խաղը :

— Կարծեմ քսան հինգ քսան վեց մը ըլլալու է :

— Ըսել է աղէկ չգիտէք :

— Ո՛հ, մինչեւ վերջին արարուածը դործ չունենալու
համար՝ հոգս չէ, Վեշտասաներորդ պատկերը լինալուն պէս
տուն կերթամ :

— Ուրեմն ներկայացումը շատ ուշ կը լինայ այս գիշեր :

— Անկարելի է որ սկսուած օրը լիննայ, հիմայ՝ եթէ ներ-
կայացումները կէս գիշերը չանցնին ամեն մարդ տոգոհ ետ կը
դառնայ :

— ձշմարխտ է. հասարակութիւնը ծակ աչք եղաւ, ամեն
տուն՝ բանի մը չատկութեանը չնայլը, այլ քանակութեանը :

— Անշուշտ այս գիշեր Թատրոն կուգար :



9

9693
39

— Նայիմ : այս գիշեր մօրեղբօրս տունը պիտի ճաշեմ , եթէ կարենամ փախչիլ , կուգամ :

— Ա՛, ըսել է այս գիշեր ընտանեկան սեղան պիտի բազմիք . այդ աղէկ :

— Ի՞նչ աղէկ պիտի ըլլայ , մօրեղբայրս միշտ կը յանդիմանէ զիս :

— Իրաւունք ալ ունենալու է , քանզի ձեզի համար կը սեն թէ ցոփակեաց էք :

— Կըսեն մի , եւ թո՛ղ է ըսողը :

— Գրեթէ ամեն մարդ :

— Ամեն մարդ ալ կը սխալի :

— Ա՛հ , Պարոն Ֆէլիքս շատ գէշ համբաւ մը ունիք :

— Ֆիկառօ ի սլոս , բայց եթէ կարծուածին պէս չէ՛ :

— Կըսեն թէ զինի , խաղ եւ կիները կը սիրէք :

— Եթէ ես ձեր տեղն ըլլայի կիները կը նախադասէի . կարծեմ անոնք ամեն բանէ առաջ են : Ասկից դաս միթէ յանցանք է զանոնք սիրելը : Եթէ կին չսիրող մէկը տեսնէիք , ի՞նչ պիտի ըսէիք այդպիսուն , « կուպիտ մէկն է » կըսէիք անշուշտ :

— Լաւ , ես այդ պակասութիւնը կը ներեմ :

— Եւ կարծեմ , աւելի ճշմարիտ պիտի ըլլար , եթէ կը յարդեմ ըսէիք :

— Բայց սա կայ որ բանի մը չափն անցունելու չէ , վասն զի՛ երբ մարդ ամեն կանանց սէր տայ , ըսել է թէ՛ եւ ոչ մին կը սիրէ :

— Իրաւ : Բայց զիններուն ամեն աղէկ տեսակները սիրելուս համար , միթէ եւ զի մէկը կը սիրեմ . այսպէս ալ՝ կանանց գեղեցիկները սիրելուս համար միթէ անոնցմէ եւ ոչ մէկն ալ չսիրած կըլլամ :

— Ըսել է թէ ձեր սիրուելոյն երբէք հաւատարիմ չէք :

— Ամենեւին :

— Բայց Պարոն սոսկալի է այդ :

— Իմ այս խօսքս մարդոց երեք չորրորդ մասին խորհածն է , միտն սա տարբերութիւնը կայ , որ անոնք բացայայտ չեն ըսեր , նոքա կեղծաւոր են եւ ես համարձակախօս : Սակայն աշխարհի մէջ ալ համարձակօս ըլլալն աղէկ բան չէ : Աւելի

պակասութիւն մը կը համարուի քան թէ բարեմասնութիւն մը :

— Ուրեմն՝ ըսեմ Աղէքսանդրիս որ ձեզի հետ չտեսնուի : զլսէ պիտի հանէք զինքը :

— Հա՛ , հա՛ , հա՛ , որչափ բարեմիտ էք . ձեր Աղէքսանդրը ալ զլսէ երեսիք չունի . . . մի վախնաք :

— Ի՞նչ ըսել կուզէք պարոն :

— Ինչ ըսել պիտի ուզեմ , անիկա ինձմէ հարիւր անգամ աւելին ըրած հին անառակին մէկն է :

— Ինչո՞ւ համար հին անառակ կը կոչէք զինքը . . . տա-կաւին շատ երիտասարդ է :

— Շատ երիտասարդ . . . առ նուազն երեսուն եւ ինը տարեկան կայ :

— Ո՛չ Պարոն , դեռ երեսուն եւ հինգ տարեկան է :

— Եթէ կուզէք թող քսան եւ հինգ տարեկան ըլլայ :

— Բայց դուք ալ անոնց չափ տարիքոտ կերեւաք :

— Ե՞ս . . . չնորհակալ եմ . . . վեց ամիսէն քսան երեք տարեկան կըլլամ :

— Բայց ի՞նչ կեղայ ատկից , Աղէքսանդր քեզմէ մատղաչ կերեւեալ :

— Հա՛ , հա՛ , հա՛ . . . ճշմարիտ՝ դրացուհի , այս առտու շատ զուարճալի էք եղեր . ափ շատ աղէկ ըսիք . . . զարմանալի է , թատրոնը այդչափ բնական չէք . . . ինչո՞ւ արդ-եօք :

— Պարոն Ֆէլիքս , ալ տաղտկալի եղաք . . . զիս մի բարկացնէք , ապա թէ ոչ վերատեսչին կըսեմ որ զձեզ տեսարանի վրայ քուլիաներուն մէջ չթողու . . . չգիտեմ , ինչպէս կըլլայ որ կը ներեն ձեզ , վասն զի ոչ մուտք ունիք , ոչ հեղինակ էք , ոչ խմբագիր , ոչ գծագրիչ եւ ոչ ալ թարգմանիչ էք :

— Բան մը մտցաք դրացուհի , յուշարար ըսելու մտցաք , սակայն եւ այնպէս կը փափաքիմ երբեմն այդ պաշտօնը կատարել : Գերասանուհիներուն սրունքները մինչեւ իսկ ծրնրակապերը տեսնելու համար շատ յարմար ըլլալու է այդ ծակը :

— Ուրեմն ի՞նչ կեցեր էք , յուշարար չըլլա՞ք :

— Այդ պակաս էր , եթէ մօրեղբայրս ստանկ գիտաւորութիւն մ'ունենայս խմանայ , ի՞նչ կընէ :

— Զձեղ ժառանգութենէ կը զրկէ, եւ աղէկ ալ կընէ :
 — Եւ որովհետեւ մօրեղբայրս երեք որդի եւ աղջիկ մ'ու-
 նի, ես իր ժառանգութենէն բան մը պահանջելու իրաւունք
 չունիմ, ուստի ժառանգութենէ զրկուելէ ի՞նչ պիտի վախնամ :
 — Ուրեմն զի՞նքը սրբողջնելէ ինչո՞ւ այդչափ կը վախնաք :
 — Ի՞նչ ըսել է, մօրեղբայրս իմ միակ պաշտպանս է, զի
 տղայութեանս ատեն հայրս ու մայրս կորսնցնելու դժբաղդու-
 թիւնն ունեցիր եմ : Մօրեղբայրս դաստիարակութեանս խնամք
 տարած, վաճառականութիւն սովորեցուցած է. ասոր համար
 երախտապարտ եմ իրեն :

— Միթէ մօրեղբայրդ հարմուտ է :
 — Կարծեմ մէկ միլիօնի մօտ հարստութիւն ունենալու է :
 — Այ անխճեմալ, երբեմն թատրոնը ներս չբերէք :
 — Միթէ անոր բուխսներու մէջ մտնելը գէշ բան մը չը՞լ-
 լար :

— Մի՛ բարկանաք սիրելիս, ես կատակի համար ըսի :
 — Ո՛չ, ես չեմ սրդողիր էրմանս, քանզի գիտեմ որ չար
 մտքով չէք ըսեր, . . . դուք ձեր Աղէքսանդրէն զատ ուրիշը
 չէք մտածեր գիտեմ . . . դովելի է այդ . ուրիշներն իրենց
 սիրահարները ծաղրած ատեն, դուք ձերը կը պաշտպանէք,
 ըսել է անոնց ամենէն աւելին կարծէք . . . դալով իմ մօրեղ-
 բօրս, երբէք մի՛ մտածէք որ տեսարանը դայ, խտտաբարոյ
 մէկն է, ամենեւին երեսը չիմոզար . . . եւ եթէ խմանայ որ
 ես՝ իր քեռորդին՝ դուրիսները կը յաճախեմ, կընամ ըսել որ
 իր տունը ոտք կոխելս կարգելու :

Տէր ողորմահ . բայց անտանելի է այդ . . . ուրեմն իր
 գաւկնեը ընաւ օր տեսած չունին :

— Զաւկնե՞րն ըսիք . . . խստիւ կը պահէ դանոնը, պա-
 րահանդէս, սրճարան մտնելնին արդիլած է . երբեմն կը թողու-
 որ թատրոն երթան, այն ալ շատ քիչ . . . բայց անոնք ալ
 շատ խելօք են . . . վերջապէս շատ քիչ տեսնուած երկու-
 սարդներէն են :

— Ուրեմն ձեզ չեն նմանիր :
 — Ո՛չ, ճշմարիտ եթէ ես ալ անոնց պէս ապրելու ստիպ-
 ւած ըլլայի, չէի կընար տոկալ . . .

— Անտարակոյս իրենց հօրը հետ կը բնակին :
 — Այո՛, միեւնոյն տունը : Ո՛չ նախաճաշէն եւ օ՛չ ընթրի-
 քէն վայրկեան մը ուշանալու չեն, ապա թէ՛ ո՛չ սաստիկ կը
 յանդիմանուին : Ասկից զատ՝ իրաւ մեծ հարստութիւն պիտի
 ժառանգեն, բայց՝ կերպնում որ, իրենց բաղդին երբէք չեմ
 ցանկար :

— Իսկ օրիմրղը :
 — Մօրեղբօրադուստրս . շատ ազնիւ, շատ քաղցրաբարոյ
 է, սակայն դեռ տղայ է . . . տասն եւ հինգ տարեկան չկայ :
 Մօրեղբայրս անոր այնչափ խստութիւն չընէր, երբեմն միա-
 տեղ թատրոն կը տանի, բայց էմնա ալ իր այս շնորհը չզեղ-
 ծանէր, հօրն առջեւ եղբարցը չափ կը դողայ :

— Տէր Աստուած, ժամը քանի՞ն է . այս առտու վորձի
 պիտի երթամ, բողբոջին մոռցեր էի :

— Կեցիք, հիմա կըսեմ . . . տասնեւմէկը հինգ է անցեր :
 — Տասնեւմէկ . . . այ, քառորդ անցած փորձ կայ, եւ
 ես դեռ հազուած չեմ . . . սուժեցինք . . . Յանցանքը Ա-
 դէքսանդրին է, որ երեք շաբաթէ՛ ՚ի վեր ժամացոյց մը խոս-
 տացած է եւ չբերէր :

— Նայեցէք ձեզի. ըսեմ դրացուհի, եթէ ամիսն անցնի եւ
 սիրահարնիդ իր խոստումը չկատարէ, հաւանական է որ դուք
 այդ ժամացոյցը չունենալով երբէք չպիտի կարենաք ժամանակ-
 նիդ հասկնալ :

Բայց դրացուհին արդէն պատուհանէն քաշուելով, դրացին
 ալ նոյնպէս ըրած էր :

Այս լսած խօսակցութիւննիս Մաղակեան փողոցի տան մը
 հինգերորդ յարկի երկու վարձակալաց մէջ կը կատարուէր, ու-
 բոց մին յառաջակողմը եւ միւսը բակին վրայ դռնուած փոքր
 սենեակ մը կը բնակէր . բայց բակը այնչափ պղտիկ էր, որ դը-
 բացիք առանց ձայներնին բարձրացնելու կընային խօսիլ :

Ինչպէս որ ընթերցողն հասկցաւ, դրացուհին գերասանու-
 հի մ'էր, որ Օրէնայի եւ Թէաթըր Ֆոնանէի թատրոնները ջը
 մտած, Պլուվառ Տիւ Թամբլի վրայ Տէլասըման քօմիք թատրո-
 նը մտնել հարկ դատած էր : Կարծեմ անօգուտ է յարել թէ
 այն ատեն այս պղտիկ թատրոնը տակաւին փրցուած չէր, եւ

այս աղքատիկ Թամբլի Պուլըվառը բոլոր իր թատրոններովը , նարնջավաճառներովը , փոխանիչ ծախողներովը կը փայլէր՝ Գրացուհին յառաջակողմի դատիկոնը կը բնակէր , իսկ ճաշասենեկի պատուհանն եկած ատեն՝ խիստ հանգիստ կերպիւր իր երիտասարդ դրացւոյն սենեակը կը տեսնար :

Գրացւոյն անունը Ֆէլիքս Ալպոէօն էր , գեղեցիկ պատանեակ մը , աչերը սեւ , որք գեղատեսիլ կին մը տեսած ատեն՝ կարկիհանի պէս կը փայլէին , միջակ յարմար հասակ մը , եւ ղոււարթադէմ , խօսակցութենէն հասկցաք , որ այս երիտասարդը վաճառականութեան մէջ է , սակայն ցոփակեաց , վերջապէս գինի , խաղ եւ կիները սիրելու մեծ պակասութեանց վատահամբաւն ուներ : Աերջէն կը հասկնանք թէ արդեօք Ֆէլիքս Ալպոէօն այս համբաւին արժանի՞ էր :

Գերասանը դիւրաւ ծանօթութիւն կը վաստկին : Օրիորդ Էռմանս մէկ քանի անգամ՝ իր թատրոնի քուլիսներուն մէջ զայն տեսնելով ճանչցած էր : Ասկից զատ այս օրիորդին սիրահարը՝ գեղեցիկն Աղէքսանդր՝ օր մը ճաշասենեկի պատուհանին մէջ սիկառ ծխած ատեն՝ ճանչցած էր Ֆէլիքսը Սիւքի սըրճարանը նորա հետ յաճախ խօսած ըլլալուն համար : Անկից ի վեր դրացիք սերտ բարեկամ եղած էին , եւ որ աւելի նշանակութեան արժանի է՝ Ֆէլիքս երբէք սիրահարութիւն ընել չէր մտածեր իր բարեկամին սիրուելոյն հետ , որ եւ բնաւ յաղթանակել չէր խորհէր :

Այս մասնաւորութիւնը հարկ էր որ հոս նշանակէինք՝ իրրեւ ընդհանուր կանոնի զարտուղութիւն մը :

— Անտարակոյս պիտի տուժէ , կըսեր ինքնիրեն Ֆէլիքս , պահարանին մէջ շապիկի ճերմակ օձիք մը փնտռելով . այս սրչափ ատեն է իւր թուալէթին կ'ըրաղի : Կէս օրէն առաջ անկարելի է որ թատրոնը գտնուի : Բայց Աղէքսանդրին գէշ . զի տուգանքը ինք պիտի վճարէ . . . օձիք չկայ հոս . . . ինչպէ՞ս . . . ճերմակ օձիքս չէ մնացեր : Բայց եւ այնպէս մօրեղբօրս տունը ճաշի երթալու համար հատ մը պէտք է : Եթէ ամեն կողմն շնորհքով չըլլայ անտարակոյս պիտի ըսէ թէ « իմ տունս ճաշի եկած ատենդ բնաւ զարդարանքիդ չես նայիր » . Եօրեղբայրս ասանկ բան մը տեսած ատեն խիստ բծախնդիր է

. . . յաղթութիւն . . . անա հատ մը գտնայ . . . բայց կարծեմ վերջինն է այս . . . այ չարածճի . . . ասոր ալ կապը չկայ . . . թշուառութիւն թշուառութեանց . . . բայց ասանց կապի անկարելի է գործածել :

Ֆէլիքս օձիքը ձեռքը սլատուհանը դառնալով սխեց պոռալ , — Գրացուհի միթէ սըվոր կապը չէք կրնար կարել . . . ճերմակ ըլլալով միայն այս մնացեր է : Հէ , ինծի նայէ դրացուհի . — այ անիծեալ իւր սենեկին յառաջակողմը գացեր է . . . Չայնս չլսեր . . . Հիմա միայն մէկ միջոց մը կը մնայ ինձ . յարգելի Տիկին Ռապօթօ դռնապանիս սենեակը երթալու եմ : Գիշերները ուշ գալուս , եւ երբեմն ձեռքը բան մը չտալուս համար իր յայտագրերուն մէջ աղէկ նշանակութիւն չուրնիմ : Չգիտեմ թէ երբեմն ձեռքը բան մը տուած եմ . . . Ենչ որ է՝ այս անգամ գոնէ կէս Փրանք մը տալու է : Ասոր հետ մէկտեղ եթէ քիչ մը աղաչեմ , չուանին վրայ կը խաղայ ալ

ԳԼՈՒԽ Բ .

ԿԱԹ ԵՂԵԱՅԻԸ

Երիտասարդը սենեկին դուռը բանալու կը վազէ , բայց դուրս ելնելու ատեն՝ աւելի կարճ քան թէ միջակ հասակաւ , ուժեղ , հաստաբազուկ քանեւչորս տարեկան երիտասարդի մը գէմը կեղնէ , որուն ձեռքերը ճիշդ տօփան կը նմանէին : Գէմքըն անհաճոյ չպիտի ըլլար եթէ ապշութեան տիպար մը չըլլար : Բայց կերպարանքի նշանակութիւն չտուող անձանց համար գեղեցիկ երիտասարդաց մէջ կրնար դասուիլ , քանզի դուրս ցցուած խոշոր աչեր , գեղեցիկ ակռայներ , առոյգ բերան մը , գեղեցիկ գոյն մը ունէր , որմէ ինչ աստիճանի ոյժ եւ առողջութիւն ունենալը կը հասկցուէր :

Այս գիրուկը երբտասարդը Ֆելիքսը տեսնելուն պէս,

— Ա՛հ, ի՛նչ երջանկութիւն, հոս է եղեր . . . քանզի դճնապան կի՛նն ըսած էր. «Ճշմարիտ չգիտեմ, իր սենեակն է . . . Գ. Արլուէօն օրը հարիւր անգամ կերթայ կուղայ . . . ամեն ատեն ետեւէն նայելու չէ՞մ ես . . . վեր ելէ՛ք նայեցէ՛ք անգամ մը » քայց դո՛հ եմ դճեզ գտնելուս :

— Այո՛, հոս եմ . . . քայց ի՛նչ կուղես Տիւֆիլէ, ինձի գալուդ սլատճա՞ր . . . ի՛նչպէս կըլլայ որ խանութի թողեր ես . . . դեռ մտալաճառ չե՞ս . . . այսինքն, մտալաճառի վարպետիդ քովէն ելնի :

— Հասցա, հասցա . . . քայց շատ ատենուան համար չէ :

— Վարպետդ քեզմէ դո՛հ չէ՞ :

— Ընդհակառակը շատ դո՛հ է, անցեալ շաբթու երկու ոչ-խար մտիթեցի, եւ եթէ քիչ մը ալ յառաջանամ, դալ շաբթու ինձի կտրել պիտի տան :

— Քե՛զ կտրել պիտի ասն :

— Այո, հորթ մը կամ եղ մը :

— Ին՛չ՞ անասուններ, քու վիճակդ ամենեւին չեմ սիրեր Տիւֆիլէ . . . սակայն կը խոստովանիմ որ պառակն ալ շատ կը սիրեմ : Վերջապէս ինչո՞ւ համար ատանկ հագուած եկար . . . քանզի կը տեսնեմ որ սեւեր հագած եւ ճերմակ փողկապ ես դրեր :

— Անտարակոյտ սեւեր հագած եմ, եւ եթէ կարող ըլլայի քիչ մ'ալ աւելի գեղեցկանալու կ'աշխատէի, քայց չկրցայ . . . հոգ չէ, ձեզ հոս գտնելուս համար շատ երջանիկ եմ, ձեր դճնապանուհին ըսաւ թէ « շատ կարելի է որ հոն չըլլայ քանզի . . . »

— Էյ բաւական է, բաւական է, մէկ մը ըսածներդ նորէն պիտի կրկնես : Ըսէ ի՛նչ կուղես :

— Նայէ ի՛նչ է սիրելի եղբայրս . . . քանզի ձեր կաթ եղբայրն եմ, գիտէք ա . . . Մէտէօնի մէջ Տիկին Միշօնին կաթը կերած ենք երկուքնիս ալ . . . ի՛նչ ալ աղէկ կաթ ունէր տա մայր Միշօն :

— Ճշմարիտ քեզ աղէկ անոյց, Սամսոնի պէս ուժեղ ըլլալու ես :

— Սամսոն ո՞ր է չեմ ճանչնար :

— Հոգ չէ, ես քեզի չափ զօրաւոր չեմ, քայց առողջ եմ, ամենէն աւելի պէտք եղածն ալ այս է : Գու իմ կաթ եղբայրըս ես, այս յայտնի է, ասկից դատ քարի եւ պարկեշտ տըղայ մ'ըլլալուդ համար՝ տեսած ատենս կուրախանամ, եւ ընտանեբար եղակի կը խօսիմ հետդ . . . դու ինչո՞ւ ինձի պէս չես վարուիր :

— Ո՛չ, ո՛չ, ես յարգանք ըսած բանդ կը ճանչնամ, նաեւ պարտքս ալ գիտեմ :

— Վերջապէս՝ հիմա յարգանքը մէկդի թողունք, ի՛նչ կուղես ան նայինք :

— Բայց եթէ հոս չգտնայի ալ, անսպառճառ պիտի փընտրուէի :

— Տիւֆիլէ եթէ չլմնցնես, հիմա դուրս պիտի ելլամ :

— Հա՛, կաթ եղբայր իմ, ձեզմէ մեծ ծառայութիւն մը կը խնդրեմ :

— Ծառայութի՛ւն մը, շատ աղէկ, սիրով կը կատարեմ, բաւական է որ դրամի խնդիր չըլլայ, քանզի շատ քիչ կը պատահի որ ունենամ, մանաւանդ որ հիմա ջութերը քաշուած են :

— Զէ խնդիրը դրամի վրայ չէ, գիտէք որ այսօր կամուս նանամ :

— Այսօր կամուսնանա՞ս : — Չգիտէի, հիմայ կիմանամ :

— Ի՛նչպէս, ծանուցագիրս չընդունեցի՞ք :

— Ես բան մը չընդունեցի :

— Չարմանալի բան, նամակներն ես անձամբ նամակատունը տարի, ձերն ալ աղէկ գիտեմ որ մէկտեղ էր :

— Որչա՞փ ժամանակ է :

— Վեց օր առաջ ձեռքերնիդ հասած ըլլալու էր :

— Դո՛նապանուհւոյն մէկ շարութիւնն է, հիմայ վար լջած ատեննիս կը հասկնանք, Վերջապէս՝ այսօր կամուսնանաք, շատ լաւ, թերեւս զիս ալ հարսանեաց ձաշին հրաւիրած էիր :

— Անշուշտ, միթէ չպիտի՞ գայիք, եղբայր իմ :

— Անիծեալ դճնապան . . . պէտք չէ՞ որ գիտնայի . . . այսօր մօրեղբօրս տունը պիտի ձաշեմ, չգիտեմ ի՛նչ պատճառաւ հանդիսաւոր խնճոյք մը կընէ, անկարելի է որ չգտնուիմ :

— Ի՞նչ ձախող դիպուած . . . եկու տես որ մենք ալ մասնաւոր խնամքով պատրաստուած գեղեցիկ խնձոյք մ'ունէինք . . . Պէլլիլի մէջ Սէն Ֆառօթի պարտիզին լճակին քով . . . քանզի օրիորդը Պէլլիլէն է :

— Կինդ գեղեցիկ է :

— Անտարակոյս . . . կանանց մէջ ամենագեղեցիկը կըրոնայ համարուիլ, ինչպէս որ ես արանց գեղեցիկը կը համարուիմ . . . հիմայ կը հասկնաք թէ ինչ աղէկ յարմարած ենք :

— Ճշմարիտ սքանչելի բան պիտի ըլլայ . . . ըսել է թէ հարսին ձեռք տալու համար զլս վնասուելու եկած էիր :

— Մինակ այդ չէ, ուրիշ բան ալ կայ . մտածեցէք անգամ մը, նախ՝ կնոջս եղբայրը Մէուիւշէն պատուոյ երխասարդ պիտի ըլլար, յետոյ աներոջս բարեկամներէն Պարոն Կոանսէնֆը պիտի ըլլար, ես այնչափ չէի ուզեր որ այդ պարոնն ըլլայ, քանզի կաղ է, բնականաբար կնոջս ձեռքէն բռնած ատեն կուզալով ծուռուծու պիտի քալեցնէ . բայց աներս կուզէր որ Կոանսէնֆ անպատճառ պատուոյ երխասարդ ըլլայ, ես ալ չէի կրնար մերժել : Այս առտու դեռ նոր հագուէր էի, աներս մարդ դրկեր էր ինծի՝ իմացնելու համար թէ այդ Կոանսէնֆ բարեկամը ոտքը պալար մը հաներ է, չծակիր, եւ զինքըն այնչափ կը նեղէ որ քաղաքապետին պալատն ալ չպիտի կրնայ երթալ . հետեւաբար անմիջապէս ուրիշ պատուոյ երխասարդ մը պատրաստել կը պարտաւորիմ : Յանկարծ ձեզ յիշեցի, ուստի կաղաչեմ որ այս պատիւը չզլանաք :

— Շատ աղէկ, սիրով կընդունիմ բարեկամ :

— Կընդունի՞ք . . . ա՛հ որչափ բարի էք կաթ եղբայր :

— Այո՛ կընդունիմ, բայց սա ըսէ թէ ամուսնութիւնը ո՞ւր պիտի կատարուի :

— Պէլլիլի մէջ :

— Ա՛յ սատանայ, ուրեմն Պէլլիլի քաղաքապետական պալատը պէտք է երթալ :

— Այո՛ մէկ ժամու գործ է :

— Շատ աղէկ, անգամ մը վաճառատուն երթալու եմ, բայց հոգ չէ ժամանակ ունիմ, ժամը մէկին Պէլլիլի քաղաքապետին սրահը կը գտնուիմ :

— Պարոն Կոանսէնֆի տեղը պիտի անցնիք . . . ա՛հ ի՞նչ երջանկութիւն . . . դուք չէք կաղար :

— Ո՛չ, խօսքը մէջերնիս մնայ սիրելիս Տիւֆիլէ, Հարսնիքիդ մէջ ատանկ Կոանսէնֆ անուամբ մէկը գտնուիրն ալ աղէկ նշանակութիւն մը չունի (1) :

— Հա՛, հա, հա, այո՛ կը հասկնամ . . . աղուոր կատակ . . . Կոանսէնֆ եղջիւրներուն համար . . .

— Անտարակոյս :

— Ա՛, ես անանկ կին մ'ունիմ որ կատակել չգիտէ . . . անցեալ օր կատակի համար մէկ տեղը կըսմբտտել ուզեցի . . . գիտէք ա՛ իրարու հետ ընտանութեան նշան մը . . . երեսիս անանկ ապտակ մը իջեցուց որ ճշմարիտ ոչխար մը կ'սպաննէր . . . « եթէ իրեն սէր յայտնողներուն ալ այս կերպ վարուի, շատ հանգիստ կըլլամ » ըսի ինքնիրենս :

— Կնոջդ անունը ի՞նչ է :

— Լօռէթ, Լօռէթ Մէուիւշէն, հայրը որմնագիր է, անունն ալ Մէուիւշէն Տիւֆիլէ . . . աղէկ նոյնայանգ, իրեն հետ ամուսնանալու էի :

— Եթէ ամեն նոյնայանգ անունները իրարու հետ ամուսնացնէին քիչ մը շատի կերթար : Է՛հ, հիմայ ես ալ զարդարուելու եմ : Մօրեղբօրս տունը ճաշի՛ պիտի երթամ :

— Ինծի նայեցէք, Պ. Ֆէլլիքս . . . ասանկ ի՞նչպէս եմ . . . նոր սէթքի, նոր բանթալօն . . . աղէկ վայել՞ է :

— Նայիմ ետիդ դարձի՛ր . . . այո՛ գէշ չէ, սակայն թեւեւրուդ տակ կարծեմ քիչ մը կը նեղէ :

— Այո՛, սակայն դերձակն ըսաւ որ ինքնիրեն կը շտկուի :

— Միայն բան մը պակաս է . . . կօշիկներդ աղէկ չեն . ատոնք չվայլեր :

— Այո՛, գիտեմ . հիմա գացած ատենս զոյգ՞մը պիտի գընեմ, քանզի « եթէ փայլուն կօշիկներ չառնես, քեզի հետ չեմ կարգուիր » ըսաւ Լօռէթ :

— Նշանա՞ծք ըսաւ ուրեմն բարեկամ շուտ վաղէ կօշիկ ա՛ռ : Ժամանակ կորսնցնելու չգար, ժամը տասնը մէկը քսան անցեր է :

(1) Կոանսէնֆի բառական նշանակութիւնն է մեծ եղջերու .

— Կեցի՛ր մէկտեղ իջնանք, սա նամակիդ վրայ դռնապա-
նէն անդեկութիւն ուղենք :

Կաթ եղբարք հինգ յարկը իջան, եւ Տիկին Ռապոթօ սե-
նեկին առջեւ հասան : Գռնապանուհին չորրցած եւ հին մադա-
ղաթի պէս կոնճմտած կարճահասակ կին մ'էր, եթէ ինքզինքը
քիչ մը սիրուն ցուցնել ուղէր, երեք ակոյաները կը ցուցնէր,
որոց մէկը վերը, միւս երկուքն ալ վարը կարծես թէ քեզ
խածնել կուզէ, Յէլլիքս խցիկը բացաւ, Տիկին Ռապոթօ իր
չան լուերը կը քթուէր, այս կարեւոր զբաղմունքը չընդհատեց :

— Տիկին, ըսաւ Յէլլիքս, ինչպէս կըլլայ որ վեց օր առաջ
այս պարոնին զրկած մէկ նամակը ձեռքս չանցնիր, զոր ինքը
անձամբ նամակատուը ձգած է եղեր :

— Աղւոր հարցմունք, ի՞նչ պիտի ըլլայ, կարծէք թէ ձեր
նամակները կուտե՞մ ես :

— Ո՛չ, բայց կրնայ ըլլալ որ ինծի տալու մոռցած կամ
կորսնցուցած ըլլաք :

— Ո՛չ ես ամենեւին նամակ չեմ կորսնցներ . . . հանդ արտ
կեցիր սրիկայ . . . ո՞ւսկից ալ կը գտնաք :

— Ձէր կրնար ըլլար որ նամակը կորսուի, ըսաւ Տիւֆիլէ,
վասն զի շատ հաստ եւ շատ երկայն էր :

— Հա՛, ըսել է որ շրջաբերապան էր, այդ ուրիշ բան .
պարոնը ատանկ նամակ մը ստացած ատեն « ինծի ատանկ բան
պէտք չէ, ի՞նչ ալ գլխու ցաւ են այս տպագրութիւններն »
ըսելով՝ գետինը կը նետէ. ուստի ես ալ մտածելով որ այդ տե-
սակ գրութիւն մ'է, վառարանս վառելու գործածեցի, « նա-
մակը տանելու նեղութիւնը չարժեր » ըսի ինքնիրենս :

— Բայց իմ ամուսնութեան եւ հարսանեաց խնճոյքի հը-
րաւիրազիրն էր որ վառեր էք :

— Այդ գէշ, կը ցաւիմ ուրեմն բայց ինչո՞ւ համար
այս պարոնն ալ այդ տեսակ շրջաբերապանները իմ սենեակս
կը թողու :

— Տիկին, ասկէց ետքը նայեցէք որ իմ անուանս ուղղեալ
նամակներն ինծի տաք, ապա թէ ո՛չ տանտիրոջ կը բողբեմ :

— Կաւ, լաւ, էյ ատանկ հարսանեաց նամակի մը համար
ալ այդչափ պոռալ կանչուրուտել կըլլայ մի՛ եղեր :

2693
39

— Կին չէ այս, հրէշ : Ասկից ետքը տասնոց մ'անգամ
չեմ տար, պոռաց Յէլլիքս : Օձիքս փոխանակ կարկըտելու նոր մը
կառնեմ : Ի տեսութիւն Տիւֆիլէ, ճիշդ ժամը մէկին Պէլլիլ
քաղաքապետական սրահը կը գտնուիմ :

— Աստահ եմ եղբայր իմ : Ես շուտ երթամ զոյգ մը փայ-
լուն կօշիկ առնեմ :



ԳԼՈՒԽ Գ.

ՓԵՍԻՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՂ

Յէլլիքս իւր թուալէթը լնացուց բացի օձիքէն, զոր իր ճեր-
մակեղէնի վաճառականէն առնել որոշեց : Իր վաճառատունը
վազեց, բայց տարւոյն այնպիսի եղանակի մը մէջ ենք, յո-
րում մուսլիմի եւ ներկեալ կառուներու առեւտուրը դադրած է :
Երիտասարդը որ մշտակայ պաշտօնեայ մը չէ, եւ որ միայն
յաճակտորդներուն մէջ եղած գործառնութեանց պատասխանա-
տու է, այսօր աղաւ էր. ուստի Պէլլիլ դացոյդ հանրակառք
մը նստաւ :

Սա ալ չմոռնանք ըսելու որ ներկայ անցքը՝ ֆարիզ իր
սասմաններն ընդարձակելէն երկու տարի առաջ տեղի ունե-
ցած է, հետեւաբար Պէլլիլ ալ մայրաքաղաքին մէջ չէր :

Յէլլիքս քաղաքապետական պալատը մտած ատեն ժամը
մէկ զարկաւ : Ամուսնութեանց սրահը հարցնելով եւ տեղեկա-
նալով — « Սա իմ ճշդութեանս խօսք չկայ » ըսաւ ինքնիրեն :

Այս մեծ սրահին մէջ շատ բազմութիւն կար, քանզի
նոյն օրը հինգ ամուսնութիւն կար կատարուելիք : Ամեն կողմ
ուրիշ բան չէր տեսնուէր, եթէ ո՛չ զարգարուն մարդիկ եւ
կանայք . իրաւ բոլոր այս զարգարանքներն այնչափ աղէկ յար-
մար չէին, բայց ամենք իրենց կարողութեան շտափով՝ Ընդ-



հանրապէս ամեն դէմք ուրախ, եւ ամենքն ալ զբօսնելոյ ուրոշ միտում մը կը յայտնէին: Նաեւ անանկ հրաւիրեալներ կը տեսնուէին, որ քիչ մ'աւելի կանխած եւ որոց շառագոյն կերպարանքն ու այլայլած զուարթութիւնը կը յայտնէին թէ քիչ մը կանուխ ճանրայ ելած եւ հասնիլ ուղած են:

Ամեն ամուսնացողք աւանդական թուալէթն ունին, նաբընջի ծաղկեփունջը պակաս չէ, եթէ ուրիշ բան պակաս ալ ըլլայ հարսն իրաւունք ունի ըսելու

Եթէ պակաս բան մը կայ

Գէթ ծաղկեփունջս կերեւնայ:

Ճէլլիքս բոլոր այս հարսերը կը տեսնար, ընդ ամենը չորս հատ կային, որոց երկուքը տգեղ, մին միջակ եւ վերջապէս մին գեղեցկագոյն՝ բայց մաղերն ստեպլիւնի պէս կարմիր:

— Իրաւ ինծի դէշ կերեւնայ այս գոյնը, ըսաւ երիտասարդը ինքնիրեն, սակայն անանկ մարդիկ կան որոց համար խիստ հաճելի միանգամայն հրապուրիչ է, չըլլայ որ Տիւֆիլէի կիսն ըլլայ . . . բայց զինքը չեմ տեսնար . . . հարցնենք անգամ մը, գլտեմ որ աներոջն անունը Մէուլիւշէ է:

Ճէլլիքսի քով կարծահասակ պարոն մը կար, որ կարծես դամենքը կը ճանչնար, քանզի ամեն հարսնացելոց երբեմն յայտնի կատակներ կուղղէր, եւ յետոյ սրահը թնդացնելու չափ բարձրաձայն կը խնդար, եւ այս ծիծաղն ամենուն ալ աղղելով հոն գտնուող մարդիկ այս զուարճասէր պարոնին կը համաձայնէին: Սակայն անանկներ ալ կար, որ քիչ մ'ուշ կրհամաձայնէին. Ճէլլիքս՝ նստարաններուն ծայրը, հագուած՝ գիւղացւոյ կերպարանքով մեծահասակ մէկը տեսաւ նստած, որ ամեն մարդ խնդալը լմնցնելէն ետքը խնդալու կ'սկսէր, եւ որ տարօրինակ տպաւորութիւն մը կընէր ամենուն:

— Պարոն, կերեւայ որ դուք հոս ամեն մարդ կը ճանչնաք, միթէ կը բարեհաճիք ինձ ըսելու թէ սա հարսերէն ո՞րն է Օրիորդ Լօռէթ Մէուլիւշէն:

— Լօռէթ Մէուլիւշէն. հա՛ ժէոսմ Մէուլիւշէ որմնաղբին աղջիկն ըսել կուզէք:

— Այո՛, պարոն:

— Որ Փարիզու մսավաճառներէն Նիքօլա Տիւֆիլէ անուն

երիտասարդին հետ կամուսնանայ . . . եւ որ ասկից ամիս մ'ետքը իւր կնոջ բերած օժիտովը գործ մը պիտի հաստատէ եւ իւր տիրոջ խանութը ձեռք պիտի անցնէ . . .

— Այո՛, շատ աղէկ տեղեկութիւն ունիք եղեր, նաեւ ինձմէ ալ աւելի աղէկ, քանզի ես այս վերջին մանրամասնութիւնները չգիտէի:

— Ա՛, ի՛նչ ըսել է, ես ամեն բան գիտեմ: Պէլլիլի մէջ մարդ չկայ որ չճանչնամ. քանը հինգ տարի է որ հոս կը բռնակիմ, կալուածատէր եմ: Ես ամենեւին գործ մը չունիմ, բայց ընկերութեան օգտակար ըլլալ կուզեմ, ասով ամենուն յանձնարարութիւնները կը կատարեմ, եւ հաճոյք ալ կ'ըզամ, քանզի զբաղմունք կընամարիմ ինձ. եթէ մէկը Փարիզէն բանի մը պէտք ունենայ եւ ժամանակ չունենայ երթալու, կուգայ զիս կը գտնէ եւ կըսէ « Սիրելիս Տառտառ » — անունս է, Միհրդատ Տառտառ ձեր ծառայն — « Սիրելիս Տառտառ, միթէ կը բարեհաճիս Փարիզ երթալ եւ այս ինչ կամ այն ինչ բանը գրենել », ես ալ սիրով կընդունիմ ու յանձնարարութիւնս կը կատարեմ . . . ամեն ատեն ալ առանց պակաս բան մ'ընելու. միայն թէ ասկից ութ օր առաջ հիւանդ տղու մը լսվիս ընելու համար ձեծած կտաւատ ուղեր էին, ես սխալմամբ ձեծած մանանիս տարեր եմ, այս ալ անմիջապէս իւր արդիւնքն ունեցիր եւ տղան մեռեր է, քանզի չէր կրնար ետ դառնալ:

— Ուստի, Պարոն Տառտառ, որովհետեւ ամենքը կը ճանչնաք, միթէ կը բարեհաճիք ինձ ցուցնել Օրիորդ Լօռէթ Մէուլիւշէն, քանզի ես իւր պատուոյ երիտասարդն եմ, իւր նշանածն այս առաւօտ եկաւ աղաչեց ինձ որ այս ծառայութիւնս ընեմ:

— Հարցուցածնիդ կը ցուցնէի, սակայն դժուարութիւն մը կայ որ ինքն հոս չէ . . . հա հա հա, սքանչելի պատճառ . . . դեռ Մէուլիւշէի հարսանիքը չեկաւ . . . ուշացան, քանզի երկրորդ են . . . այսօր հինգ հարսանիք կայ, եւ Պարոն քաղաքապետը գալուն պէս պիտի սկսի:

— Ուրեմն սպասենք, հաւանական է որ չեն ուշանար:

— Հա, դուք Տիւֆիլէի պատուոյ երիտասարդներէն էք:

— Այո՛ պարոն:

— Կը հասկնամ, Պարոն Կոստէնֆիլին տեղն անցած էք:

խեղճ Կռանսէնֆ , որչափ կը տառապի իր պալարին ցաւէն .
յաակապէս Փարիզ դասցի սպեղանի մ'առի , որ անմիջապէս
բժշկելու էր . . . բայց վրան դնելուն պէս ցաւը սաստկացեր է :

Յէլիբա ինքնիրէն մտածեց , որ եթէ այս պարոնը հիւանդ
տղուն լափախն պէս բան մ'ալ Կռանսէնֆի պալարին ըրած է ,
դարմանալի չէ որ խեղճը պատուոյ երիտասարդի պաշտօնը չէ
կրցած կատարել :

— Մէկ օրուան մէջ հինգ հարսանիք , ասի խելքիս դէմ
բան է , կըսէր Տառտառ , քանզի կը հասկնաք , որ ամեն կող-
մանէ ալ հրաւիրուած եմ . հինգ կտոր չեմ կրնար ըլլալ , չորս
ըսես . ինչ որ է գէշ չէ սա բառը աղէկ ըսեր էի
հարսնետոններուն « դուք ժամը երկուքին պիտի ճաշէք , դուք
չորսին , դուք ալ վեցին . . . » այս կերպով երեք խնջոյքնե-
րուն ալ կրնայի դանուիլ բայց մտիկ չըրին , ամենքն ալ
ժամը չորսին պիտի ճաշեն :

— Միթէ երեք անգամ կրնայի՞ք ճաշել .

— Այո՛ , քիչ մը զգուշութեամբ կը վարուէի մէկէն
քիչ մը վառեակ միւսէն օձաձուկ ամեն տեղէն ալ
մէկ մէկ քիչ վարուելի թթու , վաճառ դի ամեն տեղ ալ կայ
հա հա հա , անանկ չէ՞ Տիւֆօն , ամեն հարսնիքներուն վա-
րուելի թթուն պակաս չէ . . . :

Տիւֆօն բարձրաձայն սկսեց խնդալ , քովիններն ալ համա-
ձայնեցան , ե վերջապէս երբ ամենքն ծիծաղին կտրեցին ,
նստարանին ծայրը նստող գեղջուկն ալ սկսեց առանձին խնդալ :

— Հա , ահաւասիկ Մէռլիւշէի հարսանիքը , պոռացին խել
մը կանայք պատուհանէն նայելով : Յէլիբա ալ պատուհանը վա-
զեց տեսաւ իր կաթ եղբօր ապառնին , կարմիր այտերով , հաս-
տանդամ գեղեցիկ աղջիկ մը , որ գոռոզաբար հարսանեկան
ծաղկեփունջը դրած՝ երբէք երկչոտութեան կերպարանք չէր
ցուցնէր : Հայրը ձեռքէն բռնած էր , ետեւնուն Տիւֆիլէ պա-
ռաւ ազգականուհւոյ մը թեւը մտած , վեսան սովորականէն
աւելի կարմրած՝ կարծես դժուարաւ կը քայլէր :

Այո հինգերորդ հարսանիքն ալ սրահը մտաւ :

— Կարծես թէ փեռան կը կաղայ , ըսաւ Պ . Տառտառ , ան-
պատճառ այս ամուսնութեան մէջ գէշ բան մ'ըլլալու է :

Տիւֆիլէ կաթ եղբայրը տեսնելով ուրախութեան ձիւք մը
արձակեց : Յէլիբա վաղելով եւ զանի իւր սպառնի կնճը ներս
կայելով ըսաւ .

— Ահաւասիկ իմ պատուոյ երիտասարդս յուսամ թէ
հայր Կռանսէնֆէն նախապատիւ է սա :

Օրիորդ Լօռէթ խիստ հաճոյական ժպիտ մ'ուղղելով առ
Յէլիբա , ըսաւ .

— Անտարակոյս առաւել սիրելի է ինձ այս պարոնը , նախ՝
քանզի գէթ նորաթի է , որովհետեւ շատ անճոռնի բան է ծե-
րունի պատուոյ եղբայր ունենալ :

— Ինձի նայեցէք Պարոն Յէլիբա , ապառնիս գեղեցիկ է
ըսելով՝ ձեզ խաբած չեմ , հէ՛ . . . վերջն ալ ամենագեղեցիկ
կին մը պիտի ըլլայ եւ որովհետեւ

— Օ՛ն , Տիւֆիլէ , էշութիւն պէտք չէ , միթէ պարոնը չտես-
նա՞ր ի՞նչպէս ըլլալս :

— Անտարակոյս Տիկին , եւ այդչափ գեղեցկութեանց տի-
րացողին իմ բարեմաղթութիւններս յայտնելէ ուրիշ բան չեմ
կրնար ընել :

— Գեղեցկութիւնն ալ խօսք է , եւ ի՞նչ գաղտնի գե-
ղեցկութիւններ ունի գիտէ՞ք :

— Պիտի լսե՞ս Տիւֆիլէ , ապա թէ ոչ հայրիկին կըսեմ . . .

— Բայց շատ ուշացաք :

— Յանցանքը Տիւֆիլէինն է , էգ բաղի մը պէս կը քայլէր
. . . . մէկ մը կարծեցի որ զինքը ճանբան սլիտէ ձգենք :

— Յանցանքը կօշիկներունն է ա՛հ անիծեալ կօշիկ .
գիտէ՞ք ի՞նչ կը քաշեմ՝ կօշիկաւորն ըսաւ թէ քայլելով կը բաց-
ուի բայց ընդհակառակն քալած ատենս սարսափելի
կերպով կը ցաւի :

— Սակայն ոտքերդ ալ քիչ մը շնորհքի եկեր են , ըսաւ օ-
րիորդ Լօռէթ , ահաւասիկ քաղաքապետը . մենք երկրորդ ենք ,
այնպէս չէ՞ :

— Այո՛ , այո՛ , տակաւին ժամանակ ունինք ալ չեմ
կրնար զիմանալ քիչ մը հանգստանամ :

Տիւֆիլէ նստարանին ծայրը նստող եւ ամենէն ետքը խն-
դացող գիւղացիին քով գնաց նստաւ , եւ կամաց մը ծեղով կօ-
3

չիկներն հանելուն պէս գոհունակութեան օ՛հ մը արձակեց : Այս միջոցին՝ Օրիորդ Լօռէթ իւր հօրը , յետոյ եղբօրը , ագգականաց եւ հարսնաւորաց ներկայացուց Պ. Ֆէլիքսը : Պ. Մէնլիւշէ , Ֆէլիքսի ձեռքն այնպէս մը թոթփեց , որ կարծես մատերը տեղէն պիտի հանէր . յետոյ գնաց խօսակցութեան սկզբեց Պարոն Միհրդատ Տառատաւի հետ որ կուզէր ամեն տեսակ փաստերով համոզել թէ ժամը վեցին ձաշելը շատ աղէկ է : Սակայն տեղւոյն այս հոգաբարձուն կամ անտեսը(1) կորսնցուց իւր ճարտարախօսութիւնը , քանզի գործը այնպիսի մարդոց հետ էր , որոց ախորժակը միշտ բաց , եւ ամենեւին չզոցուիր . ուստի Մէնլիւշէ պատասխանեց անոր :

— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ , եւ խեղճ կռանսէնքի կողմանէ կը դանդաղեմ :

— Բարեկամնիդ Պարոն կռանսէնքի՞ , ինչո՞ւ : Եթէ իր պալարը չէ հասեր , յանցանքն ի՞մա է :

— Անտարակոյս : Կերեւայ թէ իրեն հրամայուած սպեղանին չես բերէր , դժբաղդաբար դեռ այս առտու կարդաց տուփին վրայ , թէ բլթէնի (նասըր) սպեղանի է այս եւ ո՛չ պալարի :

— Անկարելի է . . . շատ աղէկ զիտեմ որ ես ըլլի՞նքնի սպեղանի ուղեցի եւ ոչ թէ պալարի : Եթէ դեղավաճառը սրխալեր է , միթէ յանցանքը ի՞մա է : Մնաց որ ես աղէկ զիտեմ թէ երկուքն ալ միեւնոյն արդիւնքն ունին , քանզի վերջապէս պալար է եղեր , բլթէն է եղեր , գրեթէ միեւնոյն բանն է :

— Ի՞նչ կըսես միեւնոյն բանը չէ : եւ ապացոյցն ալ կը կենայ , քանզի կռանսէնք աւելի կը տանջուի :

— Պիտի բժշկուի , անոր համար է :

— Մէնլիւշէի հարսանիքը , կարգը Մէնլիւշէի հարսանեացն է , պօռաց դիւանատան սպասաւորներէն մին , սրահին մէջ պտըտելով :

— Կարգը մերն է , մեզ կը կանչեն ըսաւ Օրիորդ Լօռէթ : Ո՛ւր է Տիւֆիլէ :

— Փեսաս , ո՛ւր է փեսաս . միթէ ամուսնանալու վայրկե-

(1) Հայ ռամ . բառ . ժամ սանախը :

նին փնտռելու է զինքը : Նայէ , գացեր նստարանին ծայրը նստեր է . . . ուրեմն զինքը կանչելին չիմանար :

— Երթամ բերեմ , ըսաւ Ֆէլիքս , բազմութիւնը ձեղքելով :

— Տիւֆիլէ խեցեհատնի պէս կարմրած՝ ոտքին մէկը ծունկին վրայ դրեր , եւ փայլուն կօշիկին մէկը ձեռքը բռներ էր :

— Բայց միթէ չե՞ս լսեր , քեզ կը կանչեն ըսաւ Ֆէլիքս : Կարգը քուկդ է . . . օ՛ն ելիր շուտ , կնոջդ համբերութիւնը կը հատնի :

— Այո՛ , այո՛ զիս կանչելին իմացայ , բայց յանցանքն իմս չէ . . . կօշիկներս այնչափ կը նեղէին որ քիչ մը հանգստանալու համար հաներ էի . . .

— Հաղի՛ր շուտ . . .

— Իմ ըրածս ալ ի՞նչ է . . . բայց չեմ կրնար , կերեւայ թէ ոտքերս ուռեցեր են . . . ա՛յ թշուառական չմտնար կոր :

— Ի՞նչ է այս փեսայ , միթէ մեզ կը ծաղրես . . . այսպէս սպասեցնել աղջիկս , քաղաքապետը որ զձեզ ամուսնացընելու համար կը կանչէ , ասի մարդու տեղ չդնել ըսել է : Ըսաւ աները բարկութեամբ հոն գալով :

— Յանցանքն իմս չէ , աներ , կօշիկներս չեմ կրնար հագնիլ՝

— Եւ ինչո՞ւ համար հաներ էիր , պարոն , միթէ մարդ ամուսնանալու կէտին կօշիկները կը հանէ՞ :

— Ա՛րքապէս մէկը հագայ :

Այս միջոցին սպասաւորն սկսեց պօռալ .

— Թիւ երրորդ Ժիկօթօի հարսանիքը . . . Ժիկօթօի հարսանիքն ո՛ւր է . . . Մէնլիւշէի հարսանիքէն առաջ պիտի անցնի , վասն զի անոնք չեն ներկայանար :

— Ահաւասիկ , Ժիկօթօի հարսնացողը , ահաւասիկ ենք : Թիւ երրորդ հարսնեւորը քաղաքապետին առջեւ դացին կեցան :

— Տեսա՞ր մի եղածը , պօռաց Մէնլիւշէ , մեղմէ ետքը եղողները մեզմէ առաջ անցան , պատճառը դու ես փեսայ :

— Ո՛չ աներս , յանցանքը կօշիկներունս է . . . ի՞նչ կըլլայ մեք ալ ետքը կերթանք :

Հայր Մէնլիւշէ գնաց աղջիկը դատու , որ անհամբերութեանն ոտքէրը գետինը կը գարնէր : Թէպէտ Ֆէլիքս զայն հան-

դարտեցնելու համար կարելի եղածին չափ կաշխատէր եւ կը-
սէր :

— Ներելու է Տիւֆիլէին, կօշիկներն հանած ըլլալով չը
կրնար հաշնել :

— Բայց յանցանքն իրն է, ինչո՞ւ համար կօշիկներն հա-
ներ էր :

— Որովհետեւ ոտքերը կը ցաւէին, անտարակոյս տեսաք
որ կը կաղար :

— Ինչո՞ւ կերթայ այդչափ նեղ կօշիկներ կ'առնէ . էշու-
թենէն ուրիշ բան ըրած չունի : Եթէ այսպէս շարունակէ վերջն
աղէկ չպիտի ըլլայ :

— Փեսաս արժանի չէ տուած աղջկանս, ըսաւ ողմադի-
բը, միթէ մարդ ատանկ ալ անպատեհ բաներ կրնա՞յ ընել . . .
քաղաքապետին կոչմանը չհասնիլ . . . սրահին մէջ կօշիկները
հանե՛լ . . . տեսնուած բան չէ :

— Իրաւ է, միթէ ժամանակն էր, ըսաւ Տառտաւ :

Երբ ամենքը կաշխատէին որ հարսն ու հայրը հանդարտե-
ցնեն, Տիւֆիլէ փոխանակ միւս կօշիկը հագնելու, այնչափ
գժուարաւ հագածն ալ հանեց :

— Ըստ որում ուրիշներն անցան մեր տեղը, ի՞նչ հարկ
կայ որ այնչափ ատեն ինքզինքս . . . ա՛հ թշուառական կօշ-
կակար, ինծի կապահովէիր թէ կը բացուին . . . գոնէ տասը
ուժը Փռանք չտամ . . . ի՞նչ կընես գործածելու է . . . արդ-
եօք դուրպաններս հանեմ . . . անշուշտ աւելի դիւրին կըհագ-
նուի . . . բայց առանց դուրպայի ալ կամուսնացուի՞, անհան-
դիստ կընէ կինս, ըսաւ Տիւֆիլէ :

— Վերջապէս Մէռլուչէի հարսնեւորք քիչ մը հանդարտե-
ցան, հարսը Յէլլիքսին ըսաւ :

— Կը տեսնա՞ք, անպիտան ապուշը կը համարձակի՞ քովս
գալու :

— Որո՞ւ համար կըսէք, գեղեցիկ Լօռէթ :

— Որո՞ւ համար պիտի ըլլայ, ապառնիկս, որ փոխանակ
քովս գտնուելու, դացեր ծայրը նստեր է : Գացէք ըսէք իրեն,
որ թէ ես եւ թէ հայրս կը ներենք իրեն, թող անմիջապէս քո-
վերնիս գայ . . . ասոր փոխարէն ես ալ կը թողում որ ծնրա-
կապս դուք առնէք :

— Ատանկ ակնկալութեամբ մարդ ինչե՞ր չընէր . Տիւֆի-
լէի քոջը երթամ :

Յէլլիքս փեսին քով մօտեցաւ որ ոտքերն աղատած եւ կօ-
շիկներն հանած ըլլալուն համար՝ երջանկութեամբ կը ժպտէր :

— Բայց հոս առանձին ի՞նչ կընես բարեկամ, կնոջդ քով
չգա՞ս :

Մտախճառը ժպտեցաւ իւր կաթ եղբօր կրեսին եւ պա-
տասխանեց ,

— Ոտքերս աղատած ըլլալուս համար երջանիկ եմ :

— Ի՞նչ, կօշիկներդ նորէ՞ն հանեցիր :

— Երկուքն ալ չէի հագեր . . . վասն զի ոտքերս այնչափ
կը ցաւէին որ . . .

— Բայց հիմայ նորէն պիտի կանչեն, առաջուան պէս պի-
տի ընես :

— Ա՛, տակաւին ժամանակ ունիմ :

Այս միջոցին դիւանատան սպասաւորին ձայնը նորէն լըս-
ւեցաւ որ կը պօռար :

— Անտարակոյս Մէռլուչէի հարսանիքն եկած է հիմայ . .
. . կարգը անոնցն է . . . քաղաքապետին առջեւը ներկայա-
նայ Մէռլուչէի հարսանիքը :

— Ա՛յ սատանայ, կարգերնիս եկաւ, ըսաւ Տիւֆիլէ, կօ-
շիկներն առնելու համար ծռելով . . . չէի կարծեր որ այսչափ
շուտ պիտի գայ . . .

— Արտօրա՛ քիչ մը թշուառական, նշանածիդ համբերու-
թիւնը հատաւ :

— Արտօրա՛մ, դիւրին է ըսելը . . . գոնէ կօշկակալ մը
ուռննայի, կօշկակալ մ'ալ չունիմ :

Սպասաւորն աւելի բարձր կը պօռար :

— Օ՛ն, Մէռլուչէի հարսնեւորք, քաղաքապետը կ'սպասէ :
Խեղճ Տիւֆիլէ արիւն քրտինք կը թափէր, բայց չէր կըր-
նար կօշիկներն հագնիլ : Անմիջապէս՝ աները կատաղի կերպա-
րանքով մը աչքերը դարցնելով եւ սայլօրդի մը պէս հայնոյելով
վրան եկաւ :

— Բայց թշուառական սրիկայ, սսիկայ վայել՞ց մի . . .
ուրեմն միտքդ դրեր ես որ աղջկանս հետ միանալուդ կէտին
սազի պէս շուրը ձգես դայն :

— Բայց ո՛չ աներ, կը տեսնաք որ կարելի եղածին չափ կաշխատում կօշիկներս հագնելու համար, ոտքերս այնպէս ուռեցեր են, որ չեմ կրնար ըսել:

— Բայց քու այդ կօշիկներովդ զիս էշու տեղ դրես ես . . . աղջիկս ալ կը ծաղրես, հիմայ քեզ գետինը կանցնեմ:

— Հա՛, եղաւ, մէկը մտաւ:

Բայց զիւանատան սպասաւորը այս անգամ չորրորդ հարսանիքը կը կանչէր, քանզի երկրորդ թիւը դարձեալ չերեւցաւ:

— Գարձեալ կարգերնիս կորսնցուցինք, ըսաւ որմնաղիրը դաւազանը գետինը դարնելով, բայց անտանելի է այս, եթէ աղջիկս հաւաներ ինձ, շատոնց կը նետէի քեզ, եւ Կոստանէնֆի ոտքին սլալարը բժշկուելուն սպասելով անոր հետ կը կարգէի:

Հարսը բարկութենէն կուլար, սակայն ամենեւին չէր ուղէր Կոստանէնֆի հետ կարգուիլ: Յէլիքս իւր կաթ եղբօր ըրածին ներուճն խնդրելու համար քոյն եկած ըլլալով, Լօռէթ կըսէր:

— Ար տեսնա՞ք պարոն, Տիւֆիլէի այս ըրածը կը վայլէ՞. ասին մարդ խնդալով երեսս կը նային « չպիտի առնէ, անոր համար ոտքերը ցաւել կը կեղծէ դիտամար, բայց սուտ է » կըսեն:

— Ճշմտրիտ գեղեցիկ Լօռէթ վատահ եղիք որ խեղճ Տիւֆիլէ այդպիսի գաղափարներ ունենալու անկարող է:

— Կարելի է պարոն, բայց կը ճանչնամ ես իմ հայրս, եթէ առաջին անգամ կանչելուն անմիջապէս չներկայանայ, պիտի երթայ երեսին երկու ապտակ իջեցնէ եւ ամուսնութիւննիս չկատարուի:

— Գուք անհող եղիք, այս վերջին անգամ կանչելուն՝ ամուսինդ չպիտի սպասեցնէ: Ես ընելիքս գիտեմ:

— Ա՛հ, շատ երախտապարտ կըլլամ ձեզ պարոն:

Յէլիքս հարսին քովէն դատուելով դնաց փեսին քով, որ կօշիկին մին հագած ըլլալով՝ ի դուր կաշխատէր միւսը հագնելու:

— Տիւֆիլէ գիտեմ որ հարսնիքի մը օր սասանկ վարուիլը յիմարութիւն է:

— Օ՛ն, հիմայ ալ եկեր կաթեղը այրս զիս կը յանդիմանէ, իբրեւ թէ ասոնք իմ յանցանքս ըլլար:

— Անշուշտ յանցանքը քու կը է, եկած ատենդ կօշիկներդ ոտքդ էին, հանելու չէիր:

— Բայց ոտքի վրայ չէի կրնար կենալ:

— Անանկ գեղեցիկ կլին մ'ուռնեալու համար համբերել գիտնալու է:

— Բայց սա միւսը չեմ կրնար հագնիլ . . . կօշկակալ մը մ'ուռնի՞ք:

— Ո՛չ, ես անանկ բան չեմ պահեր վրաս:

— Տէր Աստուած մատուրներս կոտորեցան, դեռ չեմ կրնար հագնիլ:

Գիւանատան սպասաւորին ձայնը նորէն լսուեցաւ:

— Եթէ Մէռլիւչէի հարսանիքն եկած է, թող քաղաքապետին ներկայանայ:

— Տէր Աստուած տակաւին չկրցի հագնիլ, մրմնջեց Տիւֆիլէ:

Սակայն Յէլիքս առանց ժամանակ կորսնցնելու զանի գլբու կածին պէս քաղաքապետին առջեւ տարաւ դայն՝ պօռալով:

— Ահաւասիկ փեսան:

Հիմա ալ օրիորդ Մէռլիւչէի կ'սպասեն:

Սակայն Լօռէթ չ'սպասեցնելով՝ երկու բոսլէէն իւր ապառնուոյն քով դնաց, որ շփոթած առջին կը նայէր, եւ ձախ ձեռքը կռնակը տարած՝ վասն զի կօշիկը բռնած էր: Բարեբաղդաբար քաղաքապետն այս մանրամասնութիւնը չէր նշմարեր, եւ ապառնիք միացան, թէպէտեւ փեսին մէկ ոտքը բոսլիկ էր:

Գալով Յէլիքսին՝ ճակտէն վազած քրտինքը կը սրբէր, քանզի փեսան տանելով քաջութեան դործ մը կատարած էր:

Արարողութիւնը լմնալուն պէս պատուիրեցին փեսին որ երթայ ուրիշ կօշիկ առնէ: Յետոյ բոլոր հարսնեւորք Մէն-Յառժօի լճակին ճաշարանն երթալու համար ճանքայ ելան, ու Յէլիքս ալ խոստացաւ, որ երեկոյին երթայ հարսը խաղցնէ, ու ծնրակապի մաս մը ուղէ, քանզի արդէն վաստկած էր:



ԳԼՈՒԽ Գ.

ՄՕՆԼՕՌԱՆ ԳԵՐԳԱՍՏԱՆԸ

Հիմայ Մօնլօտարանի դերդաստանի հետ ծանօթութիւն մը ընենք, որ Ֆէլիքսի մօրեղբօրմէն, նորա երեք ազաքներէն, եւ մէկ աղջկէն կը բաղկանար: Նսեւ պառաւ աղգակնս մ'ալ կայ, զոր մոռնալու չէ, քանզի Մօնլօտանի տունը կը բնակի եւ մասնաւորապէս օրիորդ Էմմաի դաստիարակութեամբը կը դբադի:

Պ. Մօնլօտան թէ եւ վաթսուն տարեկան, սակայն տաան ալ աւելի կը ցուցնէ, քանզի նիհար, դեղնած, ակտացեալ է, թէպէտեւ միշտ զգուշութեան կանոնաց կը հետեւի եւ ուրիշ բան չուտեր եթէ ոչ իր առողջութեանն օգտակար դատուած կերակուրները: Աղէկ ապրելու համար բոլոր այս զգուշութիւններն իւր հիւանդոտ վիճակէն չէին ազատէր զինքը, եւ իր քեռորդին Ֆէլիքս կը սնդէ նաեւ թէ այսպիսի զգուշութիւններ ընելուն համար է որ մօրեղբայրը միշտ հիւանդ է: Պարոն Մօնլօտան առաւօտեան նախաճաշին իսկ բողկ կուտեր, վասն զի իրեն ըսած էին թէ բողկը քուն կը բերէ: Ճաշի ատեն ջրկոտիմըն եւ վայրի մանր եղերդ պակաս չէր, քանզի ըսած էին թէ արիւնը կը մաքրէ: Միշտ սնակ մը ստեպղին պէտք էր, զի կ'արգելու գալուկը: Ծնեքեկի ատեն ամեն օր ուտելու էր, վասն զի առողջարար է ըսած էին: Իսկ ստամոքսը արդէն բուսաջուրերով վատթարացած ըլլալուն, բոլոր այս կերակուրներուն չէր յարմարէր, որք թէեւ առողջութեան աղէկ են, բայց առտու իրիկուն իմած մոլորչի օշարակները ակորժակը կը գոցեն:

Բարուց մասին խստաբարոյ սովորոյթի, կարգի ու ընտանեկան պարտաւորութեանց կարի անաչառ հաւատարիմ, Պ. Մօնլօտան գրեթէ անդադար կը յանդիմանէր, եւ շատ քիչ բարեւոյն կերեւնար: Թերեւս իւր վատառողջ վիճակին եւ ստամոք-

սի գէշութենէն յոռաջ եկած ըլլայ. մարդ առողջ եղած ատեն շատ դիւրին է զուարթ ըլլալ, սակայն իր կերածը չկրնար մարսել, դժուար է խնդալ, եւ մեք շատ ատեն աւելի ներդամիտ պիտի ըլլայինք մեր քարեկամաց բնոյթին, եթէ իրենց առողջութեան ստոյգ վիճակը մեզի ծանօթ ըլլար:

Պ. Մօնլօտան որ խիստ ուղղամիտ մէկն էր, գործի մէջ վաստկած էր իր հարստութիւնը, սակայն առանց երբէք վրիպելու իր պարտականութենէն եւ ոչ ալ իր յանձնարարեութուն տաան ստակի խարդախութիւն ընելու: Ասոր փոխարէն ուրիշներէն ալ նոյն ճշդութիւնը կը պահանջէր. խոստումը իրեն համար նուիրական էր, խօսք մը ստորապրութիւն բռնէր էր:

Այսպիսի մէկը յայտնի է որ ամենեւին վստահութիւն չունի այն անխորհուրդներուն, որք առանց վստահանք մտածելու այսօր կը զուարճանան, իրեն համար անխորհուրդութիւնը ամեն մոլորեանց ազդիւրն էր, մինչեւ իսկ երիտասարդաց անկարգութիւնները չէր ներէր: Ներողամտութեւնը իր ստաքի նութիւնը չէր, բայց անաչառ եւ խիստ ըլլալը շապացուցանէր որ մարդ ասոնցմով առաքինի ըլլայ:

Պ. Մօնլօտան խիստ կանուխ այրի մնացած էր. չորս դաւակ ունի, որոց երեքը սրու եւ մին աղջկի Ֆէլիքսիէն անդրանիկ որդին, քսան եւ չորս տարեկան է, նօտայի մը քով: Երկայնահասակ, խարտեաշ, բաւական գեղեցկադէմ երիտասարդ մը, բայց իր կապոյտ աչերը շարունակ խօտրհոմ՝ երբէք մարդու երես չնայիր, խօսուածքը ծանր եւ մեղրածոր, կընող մը առջին կը կարմրի, եւ կը յանդիմանէ իր հօրաքեռորդին Ֆէլիքսը, երբ սա քիչ մը թեթեւ կատակ մ'ընէ: Այս երիտասարդն երբէք սիրուհի ունեցած չէ, եւ կամ գէթ էկը ըլլ գիտէ ունեցած ըլլալը: Ամեն օր ժամը տասնին կը պառկի, վերջապէս իր հօրը Բէնիամինն է:

Երկրորդ որդին՝ Ասօլի, առաջինէն տարու մը պզտիկ է, երեսը կըր եւ բաւական զուարթագէթ: Ասի եթէ համարձակէր, պիտի ննդար, իսկ սրովհետեւ հօտէն շատ կը վախնայ, շարունակ երեսը կը նայի, միայն շրթունքներուն ծայրովը կը խնդայ եւ այնպէս կը կեղծէ թէ գիտի մէջ աւելի ջոր կը դնէ, քանզի իմացած է որ հայրը արբնցողներուն գէթ կողտայ: Ասի վաճառատան մը մէջ գործակատար է:

Վերջապէս Վիքթօռէն՝ երրորդ որդին , քսան տարեկան հօրը պէս նիհար եւ տկար բնութիւն մ'ունի , բայց աչացը մէջ այնպիսի փայլ մը կայ , որ աշխոյժ կիրքեր կը յայտնէ , Չլային կազմուածք մը , որ զսպուելուն համար՝ երբեմն կը յամնջուի : Ասի սեղանաւորի մը քով է : Երբեմն աշխուժիւ կը խօսի Պօսսայի մէջ վաստկող իրենց յաճախորդներուն համար . ինքն ալ այսպիսի մեծ վաստակ մ'ընելու համար ունեցած բազմանքը չպահեր . իսկ հայրը խիստ ձայնով մը կը պատասխանէ անոր .

— Շատ աշխատեցէ՛ք , կարդ կանոն պահեցէ՛ք , դիպուածին բան մի՛ տաք եւ այն ատեն կը հարստանաք : Պօսսային մէջ այնչափ շուտ վաստկուած մեծ հարստութիւնները վաստղւած ժամանակի կարծութեանը համեմատ ալ կարճ կը տեւեն : Միայն աշխատութեամբ եւ նեղութեամբ վաստկուածները հաստատուն կըլլան : Մանաւանդ երբէք մի՛ խաղաք , ամենադեղեցիկ հարստութիւնները խաղի մէջ կը խորասուղուին , եւ այս մոլութեամբ թշուառացելոց ո՛չ ոք կը գթայ :

Ասոր Վիքթօռէն կը պատասխանէր ,

— Ես երբէք չեմ խաղար , հայր իմ , գնդախաղի մական բռնելն անգամ չգիտեմ :

— Շատ լաւ դաւակս , գնդախաղը վտանգաւոր է , որ յիմարական ծախուց կը մղէ երիտասարդները . ժամանակէ մը ՚ի վեր ո՛րչափ ալ տարածուեցաւ . վրան « Հարիւր գնդախաղով սրճարան » գրուած տուն մը տեսած ատենս միտքս կը բերեմ թէ ո՛րչափ դործաւորներ պիտի երթան կորսնցնեն եւ իրենց ընտանիքը զրկեն :

Այս երեք տղաքներէն ետքը կուգայ փոքրիկ Էմման , որ տասնեւչորս տարեկան պիտի ըլլայ : Դիւթիչ , առանց դեղեցիկ ըլլալու , աղնիւ՝ առանց հետամուտ ըլլալու , շնորհալի՝ առանց ուղեւու , սիրուն եւ բարի աղջիկ մ'է : Կը սիրէ իր հայրը , որ նորա հաստատամիտ քաղցրութենէն եւ յատկութեան նոյնութենէն յուզեալ անոր քով այնչափ խիստ չէր որչափ որդւոցը քով , եւ կուզէր որ աղջիկը միշտ դուարթ ըլլայ : Շատ քիչ կը պատահի որ Պ. Մօնլօռան աղջիկը յանդիմանէ , եւ ինչո՞ւ յանդիմանէ մինչդեռ միշտ հլու եւ հնազանդ է : Աակայն խընդանդիմանէ մինչպէս միշտ հլու եւ հնազանդ է : Աակայն խընդանդիմանէ որ երբեմն օրերով կը պատճառուի կը հրաւիրէ , այն քիչ մը կայ որ երբեմն օրերով կը պատճառուի կը հրաւիրէ , այն

է թէ երբ իր Ֆէլիքս հօրաքեռորդին պաշտպանել փորձէր , եւ հօրը քով ջատագովէր :

Այն ատեն Պ. Մօնլօռան , կոշտ ձայնով մը Էմմանին կըսէր ,
— Դու ի՞նչ կը խառնուիս , ինչո՞ւ համար անդգամի մը ջատագով կը կենաս . այնպիսի յիմարի մը , որ ամեն պակասութեանց տէր է , եւ ուրիշ բան չպիտի կրնայ ըլլալ եթէ ո՛չ ցոփակեաց մէկը :

— Բայց , հայր իմ , Ֆէլիքս ձեր քեռորդին է , եւ շատ անգամ ձեր բերնէն լսած եմ որ կը սիրէիք ձեր քոյրը , եւ թէ չէք ուզեր տղայն երեսէ թողուլ :

— Ես ալ զինքը երեսէ ձգած չեմ . զինքը դաստիարակել տուած եմ , վաճառատուն մը դրած եմ , եւ երկար ատեն ծախքերն ես եմ ըրեր . բայց ինքն ուրիշ բան չուզեր եթէ ոչ դատարկագորտ չըջիլ , դըստնուլ , խաղալ եւ յոռի ընկերութեանց յաճախել . վերջապէս պարտքեր կընէ . . . անգամ մը վճարեցի . . . բայց ալ բաւական է , թող չվստահի ինձ :

— Իսկ ես վստահ եմ որ պիտի ուղղուի :
— Ձէ՛ , չէ՛ , ալ լմնցած է , մէկ մը չծոի . . . ամեն մոլութիւններն ունի , խաղացող , դինսմոլ , կնա . . . վերջապէս դուն չես կրնար հասկնալ դաւակս , դարձեալ կը կրկնեմ Ֆէլիքս դատարկագորտին մէկը պիտի ըլլայ :

Էմմա չէր համարձակէր աւելի դիմադրելու , կը հառաչէր եւ բաւական կը համարէր խորհիլ թէ ,

— Խեղճ տղայ , մեղք որ այդչափ ցոփակեաց մէկն եղած է , քանզի շատ աղնիւ է :

Գանք Տիկին Սառփէին , Պ. Մօնլօռանի Հեռաւոր աղգականին :

Ասի պառաւ ոչրի մ'է որ երկու հազար ֆրանքի եկամուտ մ'ունի . Տիկին Սառփէ փառամոլ չըլլալուն համար այսչափով իր շքազանքները կրնայ յագեցնել : Իր միակ պակասութիւնը ինքնասիրութիւնն է , սակայն գժբաղգաբար անանկ քիթ մը ունի , որ իւր հաճելի ըլլալուն տենչին արդելը եղած է , վասն զի այնչափ երկայն այնչափ սրածայր է , որ մարդ ինքնին կը մտածէ թէ ինչպէս եղած է որ ասանկ քիթի մը տէր կինը մտնող մէկը գտնուեր է : Անտարակոյս լուսահոգի Պարոն Սառփէ ,

իւր կինը դէմ առ դէմ չէ կրցած համբուրել . բայց նաեւ շատ մարդիկ կան , որք աւելի կուզեն իրենց կինը քովընտի սիրել :

Ասոնց ամուսնութենէն պտուղ մը դոյացած չէր : Տիկին Սառժէ այրի մնացած ատեն հանգուցելոյն յաջորդ մը տալ ուզած ըլլալու է , բայց դանուած չէ անանկ մէկը , որ այնչափ սոցառնալից քիթ մը դիմագրաւել համարձակի : Խեղճ կինն ՚ի զուր խնամք կը տանէր իր թուալէթին , եւ ամուրիի մը հետ խօսած ատեն հաճոյական կերպարանք մը կ'աճնէր . ուստի պէտք եղաւ որ իւր այրիութեան տխուրտուիլը ծերանայ . այնպիսի վիճակ մը , որում շատ կին կը փափաքի , եւ շատը կ'անարդէ : Տիկին Սառժէ հաճելի ըլլալու բաղձանքէն դատ , զոր յիսուն եւ ինը տարեկան հասակին մէջ կը սլանէր , նաեւ տուն մը մեծ խնամքով կառավարել գիտցող կին մ'էր : Պ. Մօնլուանի համար խիստ հազուագիւտ ու թանկագին ըլլալով , սա առաջարկած էր որ գայ իր տունը բնակի եւ աղջկանը Մէնտօրն ըլլայ : Տիկին Սառժէ ընդունած էր նորա առաջարկութիւնը , սա պայմանաւ որ ինքն իր թոշակը վճարէ , թերեւս սա յուսով , որ օր մը Պ. Մօնլուան կրնար իրեն աւելի քաղցր մակերի մը տալ , քանզի նա ալ այրի էր : Սակայն այս յոյսն ալ ՚ի դերեւ ելաւ : Պ. Մօնլուան համոզուած ըլլալով որ ամուսնութիւնը առողջութեան համար փնտասկար է , նորէն կապուելու ամենեւին փափաք չունէր :

Օրիորդ Էմմա խիստ աղէկ կը համաձայնէր Տիկին Սառժէի հետ , որ շատ կուրախանար երբ իրեն ըսէին թէ գլուխն աղէկ շտկած է եւ աղէկ վայրած : Պ. Մօնլուանի աղոյքն ալ իրենց պառաւ ազգականին քթին բաւական շուտով վարժուած էին եւ ալ ուշադրութիւն չէին ընել : Բայց Յէլիքս անանկ չէր , վասն զի սա յոյժ զուարթ բնաւորութիւն մ'ունենալով եւ շատ պըղտակ պատճառաւ մը երկար բարակ բարձրաձայն խնդալու հաճոյք մ'ունենալուն , առաջին անգամ Տիկին Սառժէն տեսած ատենը չէր կրցեր ինքզինքը բռնել , Տիկինը շատ դարմանալով թէ ինչո՞ւ համար արդեօք այս երկտասարդ քեռորդին խնդալէն այնչափ կը մարի , ըսած էր թէ՛

— Ի՞նչ եղար բարեկամ , այդ չափազանց ուրախութեանդ պատճառն ի՞նչ է :

— Ինդպուս պատճա՛ւր . . . հա՛ , հա՛ , դուք աղէկ գիտէք :

— Ճշմարիտ չբխեմ , մտքէս ալ չանցնիր :

— Բէ՛հ , ատանկ շինճու քիթ մը դնելով հանդերձ ի՞նչպէս չէք ուղեր որ ատանկ խնդամ :

— Շինճու քիթ մը . . . ի՞նչ կը նշանակէ : Աղէկ զիտցէք երկտասարդ որ ես շինճու բան չեմ գործածեր :

— Կատակ կընէք , Կաղաչեմ հանեցէք քիչ մը , տեսնամ ի՞նչպէս շինուած է :

— Պարոն Յէլիքս , կաղաչեմ մի՛ ծաղրէք զիս . . . ես ատանկ բան չեմ սիրէր , եւ ձեր տարիքն եղող շարաճճի մը պարտի յարգել ինձ պէս կին մը :

Արդարեւ Յէլիքս այն ատեն տասն եւ եօթ տարեկան էր : Վերջապէս համոզուելով որ Տիկին Սառժէի քիթը շինճու չէ . ամեն անգամ այս տիկինը դէմն ելած ատեն չէր կրնար խընդալը բռնել , որով տիկինը նորա դէմ գաղտնի հակակրութիւն մ'ունեցաւ :

Վերջապէս տարեղլիս ատենները խիստ ցուրտ օր մը Յէլիքս Տիկին Սառժէին մեծ պատեան մը ընծայ ընելով ,

— Տիկին , ձեր քիթին համար է , ջերմաչափը դէրօջն 40 ատտիճան վար իջած է . . . եթէ այդպէս մերկ ցուրտին հանելու ըլլաք , պիտի սառի :

Այս ընծայն ամենեւին պառաւ կնոջ գործին չեկաւ , ու ատոր համար Յէլիքս իւր մօրեղբորմէն խափու յանդիմանուեցաւ , որուն պատասխանեց ,

— Ամեն մարդ մարմնոյն վրայէն զդեատ կը հագնի , սրունքները պահելու համար դուրջաւ եւ ձեռքերը պահելու համար ձեռնոց կը գործածէ . . . ես ալ կարծեցի թէ երբ մարդ այդչափ երեւելի քիթ մ'ունենայ , ի հարկէ անոր ալ բան մը հագցնելու է :

Պ. Մօնլուան իր ծննդեան տարեդարձին համար էր որ այս մեծ հացկերոյթը կընէր , որուն հրաւիրուած էր նախ իւր բըժիշկը , երբէք չմոռցուիր սա , միայն թէ՛ օրովհետեւ Պ. Մօնլուան ինքզինքն աղէկ չդանելուն համար այնպէս կը հաւատար թէ իր բժշկութեանը համար պէտք եղածը տալ չգիտէ :

սա, յաճախ կը փոփոխէր իր բժիշկը, միշտ յուսալով որ նոր մը գտած ատեն պիտի աղեկնայ ինքը :

Ասկից զատ՝ բժշկին հետ դեղագործ մը հրաւիրելը երբէք չէր մոռնար Պ. Մօնլօտան, վասն զի մէկը յանկարծ հիւանդանարով բժիշկը դեղագիր մը գրած ատեն, անմիջապէս 'ի սլաութաբաստի մէկն ունենալու միակ միջոց մ'է : Երբեմն վիրաբոյժ մ'ալ կը հրաւիրուէր, սակայն շատ անգամ ալ դանց կընէին, Վերջապէս կոչնատէրին մէկ քանի ծեր բարեկամներովը խընջոյքը կամբողջանար. գրեթէ ամենքն ալ ծանրաբարոյ, լրջամիտ անձինք եւ որք խօսակցութենէ աւելի ուտել կը սիրէին, այնպէս որ առաւել ուտելու գործը կը կատարէին, քան թէ խօսելու :

Պ. Մօնլօտան գրեթէ երբէք տրկին չէր հրաւիրէր. ինքն այնպէս կը կարծէր թէ անոնց համար նեղուելու է, թէ շատ անգամ զանոնք սպասելու է, եւ թէ անոնց զգեստներուն ու ուղեկի թեւերը սեղանին վրայ իրենց քովինը կը նեղէ : Էմմա եւ այրին Սուբէ առանձինն՝ մարդկային սեռի գեղեցիկ մասը կը ներկայացնէին հոն : Մին իւր աղնուութեամբն արժանի էր, եւ միւսը իր քթին նախապատուութեամբը կրնար հռչակել :



ԳԼՈՒԽ Ե.

ԶՈՒԱՐՃԱՍԵՐ ԲԺԻՇԿ ՄԸ

Պ. Մօնլօտանի տունը ժամը 5 ին կը ճաշէին : Եթէ հրաւիրեալներէն եւ ոչ մէկը գտնուէր, չէր ուղեր իր ճաշի ժամը յապաւել, աղեկ համոզուած ըլլալով որ առողջութիւնը՝ կենաց ամեն գործոց մէջ ճշդութիւն կը պահանջէ : Հրաւիրեալը Մօնլօտանի այս սովորոյթը կը ճանչնային եւ աղեկ գիտնալով որ չսպասէր իրենց, միշտ ժամանակին կը գտնուէին : Բայց այս

անգամ բժիշկը, որ մէկ քանի օրէ ի վեր դեռ նոր կը դարմանէր կոչնատէրը, երկու վայրկեան ուշացաւ, որուն համար Պ. Մօնլօտան յօնքերը կնճախելով ինքնին կրօնէր :

— Կարծեմ այս բժիշկը չպիտի կրնամ պահել, այս ալ գործիս չպիտի դայ :

Բժիշկը ներս մտած ատեն Պ. Մօնլօտան

— Կերակուրը բերէ՛ք, պտաց :

— Բայց տակաւին Ծէլիքս չեկաւ, միմտաց Էմմա երկիւղալիւ հօրը :

— Ե՛հ, ինչո՞ւս պէտք. ի՞նչ, միթէ կարծես թէ անոր համար ճաշիս սովորական ժամերը յապաւելով իմ սաամօքսս պիտի վտանգեմ : Արդէն Պ. բժշկին պատճառաւ՝ երկու վայրկեան ուշացանք, այս ալ շատ է : Գալով Պ. Ծէլիքոյին, ամեն մարդ զիտէ որ նա ճիշտ ժամանակին չգտնուիր. երբէք ճամբու չպիտի մտնայ այդ տղան :

— Բայց հրաւիրեալներէն մին պակաս է, ըսաւ բժիշկը սեղան նստելով, սպասի՛ն մէկը սպարապ մնացեր :

— Ա, քեզ որդուս է, եւ դուք աղեկ դիտեք որ մօրեղբայր մը իւր քեռորդին սպասելու չէ . . . սակից դատ ուրիշ մարդու չեմ սպասէր, եւ եթէ դուք ալ, Տօքթէօր ժուպէս, դուք ալ վայրկեան մ'աւելի ուշացած ըլլայիք, սեղանը պիտի դտնայիք մեզ :

— Զարմանալի բան : Ի՞նչ անաչառութիւն. բայց ես ժամը 5ը 2 վայրկեան անցած լեկայ :

— Լաւ, ըսել է երկու վայրկեան ուշացաք :

— Ի՞նչպէս, միթէ սա ընդհանուր կանոնը չէ՞ք յարգէր. մէկ քառորդ մը շնորհ չգիտէ՞ք :

— Երբէք : Միթէ դիւրին չէ՞ մարդու այնչափ մտադիր ըլլալ :

— Ամեն ատեն չկրնար ըլլալ, կրնայ գործ մը սպատահիլ որ արգելու :

— Ես չեմ ընդունիր այդ : Երբ մարդ ճաշին ժամը գիտէ, գործ մը չընէր, եւ եթէ շատախօսին մէկն ալ պատահելու ըլլայ, ամենեւին առանց պատասխանելու՝ երես դարձնելուդ պէս, խօսակցութիւնն ալ կը վերջանայ :

— Բայց խիստ անաշտու էք :

— Իմ սովորութիւնս այս է : Ես իմ կենացս մէջ մարդ սպասցուցած չեմ , ուստի ինձ այնպէս կը թուի թէ ամեն մարդ ալ ինձի պէս կրնայ ընել :

— Պ. Մօնլօռան , մարդ իր ծանօթները չկրնար ուղղել . դանոնք իրենց պակասութիւններովը տանելու է . այնպիսի անձինք կան , որոց համար այնչափ անկարելի է մտադիր ըլլալ , ցորչափ ձեզի համար խօսքէն վրիպիլ :

— Ա յգպիսի անձինք իմ տունս չեն կրնար ճաշել : Ասկից դատ միթէ ճշմարիտ չէ՞ որ ճաշի ժամու ճշգրութիւնը առողջութեան անհրաժեշտ է :

— Օ , անհրաժեշտութիւնը տակաւին հաստատուած չէ . . . անշուշտ աղեկ բան է , սակայն կէս ժամ կանուխ կէս ժամ ուշ , մնաս չունի :

Պ. Մօնլօռան յօնքերը վեր պրկելով ինքնին կըսէր ,

— Այս բժիշկն իմ գործիս չպիտի դայ . նախ եւ առաջ շատ երիտասարդ է . . . ո՛ւսկից խելքիս փչեց , որ երիտասարդ բժիշկ մը գտնամ , որ միշտ կը խնդայ : Սա անպիտան դեղագործը յանձնարարեց . . . այս ալ պիտի փոխեմ :

Բժիշկն արդարեւ տակաւին երիտասարդ դուարձածէր , սիրօռն , զուարթ մէկն էր , եւ մարդ երեսը նայած ատեն չէր հաւատար որ ակտի կամ հիւանդութեան մը վրայ խորհի : Բայց Պ. Մօնլօռան , այնպէս համոզուած էր թէ աղէկ բժիշկ մը ծանրաբարոյ նաեւ խտտողէմ ըլլալու է , երբէք խնդալու չէ , եթէ աւելի աղէկը կը փնտռես սգազգեսց եւ սգատեսիլ մէկը կուղէր :

— Ապուրը լմննալէն վերջը՝ եթէ Ֆէլիքս տակաւին չգայ , իր սպտը վերցուցէ՛ք , ըսաւ Պ. Մօնլօռան սպասաւորին :

— Ա՛հ , Հայր իմ , ըսաւ Էմմա , Ֆէլիքս անսպասուած պիտի գայ . . . սպասը վերցնել մի՛ տաք :

— Ես օրիորդին համամիտ եմ , ըսաւ Տօքթէօռը : Ձեր պարոնայք որդիքը ճանչնալու բաղդաւորութիւնն ունեցած ըլլալով , ձեր քետորդւոյն տեսակցութիւնն ալ վայելելուս շատ ուրախ կըլլամ :

— Տխտը ծանօթութիւն մը պիտի ընէք , սրիկայ մը , ցո՞ փակեաց մը

— Բայց շատ սիրուն սրիկայներ ալ կան :

— Ձեմ կարծեր :

— Օրիորդ , ինչպատ ձեր հօրաքեռորդւոյն վարուելու համար միջոց մը կայ , ըսաւ Տօքթէօռը , մեք մեր ապուրը շատ կամաց կուտենք , նաեւ նորէն կուզենք , ինչպէս որ հիմայ պիտի ընեմ . . . ասոր հետ մէկտեղ աղէկ կերուանայ ինձ , վասըն զի շատ աղւոր եղեր է :

Էմմա ժպտեցաւ , Պարոն Մօնլօռան յօնքերը վեր պրկեց , բայց դուռը բացուեցաւ եւ յապաղեալ պարոնը սեղանատունը մտաւ որ միանգամ բարեւելով ընկերութիւնն ըսաւ ,

— Ներեցէ՛ք ինձ մօրեղբայր , յանցանքն իմն չէ , քանզի ամուսնութեան մը վկայ կամ պատուոյ երիտասարդ ըլլալու հրաւրեցին զիս :

— Ո՛հ , այդ յայտնի է որ ամենեւին յանցանքը քուկք չըլլար , եւ ինքզինքդ արդարացնելու համար պատրաստի պատմութիւն մը կը գտնաս միշտ . . . բայց գիտցի՛ր որ ատով չես կրնար խաբել :

— Կաթեղբայրս էր ամուսնացողը , մօրեղբայր :

— Եւ միթէ առաջուրնէ չգիտէ՞ր զայս :

— Ո՛չ , քանզի դռնապանուհին ծանուցադիրն ինձ տալ աւելորդ դատած էր : Տպագրեալ բաները զանց կընէ :

— Պարոն , ըսաւ Տօքթէօռը , որուն խիստ հաճոյ կը թուէր Ֆէլիքսի համարձակ դէմքը եւ հանձարեղ կերպարանքը , պատճառ եղաք որ դեռ ապուր կուտեմ . բայց չեմ զղջար եւ ահաւասիկ օրիորդը որ նա ալ ձեզ կը ջատագովէր :

— Ո՛հ , ես աղէկ գիտեմ , նա ինձ համար բարեսիրտ է , պատասխանեց Ֆէլիքս գեղեցիկ կերպով մը բարեւելով այս պարոնը , զոր առաջին անգամ կը տեսնար , եւ որ իր ապուրն աճապարանօք կը կըլլէր . իւր երկրորդ պնակը լմնցնելէն վերջը Տօքթէօռը՝ որ աչերովը մատէս կը փնտռէր եւ չէր տեսնար , սովորական գինիէն խմել որոշեց , եւ իր քովի օրիորդին տալով ըսաւ ,

— Օրիորդ , ապուրին վրայէն մատ մը անարատ գինին աղէկ է :

— Անարատ գինի՛ . . . ա՛հ պարոն ես երբէք չեմ խմեր :

— Կը սխալիք . . . Պարոն Մօնլօռան ըսէք օրիորդին որ իրեն մատուցածս ընդունի :

— Անարատ գինի՛ . . . Տէր ողորմեա . . . իմ տղայքս ինձ պէս կընեն , անոնք ամենեւին զուտ գինի չեն խմեր :

— Ի՞նչպէս , երբէք անարատ գինի չէ՞ք խմեր :

— Շատ կ'զգուշանամ :

— Կը սխալիք , շատ կը սխալիք . . . զուտ գինին ոյժ կուտայ , ստամոքսը կը տաքցնէ , առողջութեան շատ աղէկ է . . . չեմ ըսեր որ ճաշի ժամանակ շարունակ խմէք , թէպէտ եւ այնպիսի անձինք կան որ գէշ չեն համարիր , բայց վերջապէս խմելու է . . . ինչպէս՝ ապուրին վրայէն մատէսէն աղէկ բան չկայ . . . փորձեցէք անգամ մը . . .

— Մատէս չունիմ :

— Բայց ունենալու էք , ես անտարակոյս եմ որ ձեզի շատ աղէկ պիտի գայ : Պարոն Ֆէլիքս դուք ալ ձեր մօրեղբորորդւոյ կարծիքէ՞ն էք :

— Ո՛չ պարոն , ես սիրով կընդունիմ անարատ գինին :

— Ես ալ , ըսաւ գեղազործը , որ մինչեւ այն ատեն խօսակցութեան մտած չէր , ո՛հ , ես , սիրելի պարոն , Տօքթէօռին կարծիքէն եմ , կեցցէ՛ անարատ գինի . . . ասկից զատ՝ Խիօկոստ իսկ կը հաւաստէ թէ առողջութեան համար մատ մը գործածելու է :

Պ. Մօնլօռան աչերը երկինք վեցուց . թէեւ հրաւիրելոց ճաշակը մեղադրելու չհամարձակիր , բայց բարկութեամբ քեռորդւոյն երեսը նայեցաւ . Ֆէլիքս ամենեւին ուշադրութիւն չընելով գաւաթը բժիշկին երկնցուց : Կոչնատէրը երեսը նորէն թթուեցնելով ինքնիրեն կըսէր , «բայց անկարելի է որ ասի բժիշկ եղած ըլլայ » :

Առաջին սպասահարկի ատեն գրեթէ Պարոն ժուպէն միայն կը խօսէր , բարեբաղդաբար շատ լեցուն ըլլալով ինքն երբէք վերջը չբերաւ : Պարոն Մօնլօռանի երեք օրդիքն հաղիւ կը համարձակէին երբեմն մէյ մէկ միավանկ բառ արտասանելու : Իսկ ծերունի հրաւիրեալք առանց խօսելու կուտէին : Միայն Ֆէլիքս կը համարձակէր երբեմն բժիշկին հետ խնդալու եւ նորա կատակներուն կցորդելու : Իսկ կոչնատէրը բողկ եւ ջրրկոտիմն կուտէր միայն , հաղիւ երբեմն պիֆթէկի կոոր մը ուտելու վտանգելով , եւ այս ալ քանզի բժիշկը կը հրամայէր :

— Աղէկ միտքս եկաւ Պարոն Ֆէլիքս , ըսաւ բժիշկը նորա գաւաթը լեցնելով , մոռցաք ըսելու թէ հարսն ի՞նչպէս , գեղեցիկ էր :

— Այո՛ պարոն , բաւական կայտառ թուիս աղջիկ մ'է . . . բայց սովորական գեղեցկութիւններէն մին :

— Միթէ գիւղացի՞ են :

— Ո՛չ , բոլորովին գիւղացի չեն համարուիր , արուարձաններէն . . . Պէլլիլէն են . . . աղջկան հայրը որմնադիր է :

— Բայց ի՞նչպէս եղաւ որ հարսանեաց խնձոյքին չգտնուեցաք :

— Շատ փափաքեցան . . . իսկ ես մօրեղբօրս խոստացած էի . . . խօսքէս չէի կրնար վրիպիլ :

— Միայն այդ պակաս էր որ ելնէիր որմնադիրներու . . . Տիւֆիլէներու հետ երթալիր , ըսաւ Պարոն Մօնլօռան :

— Մօրեղբայր , շատ համեստ մարդիկ են :

— Համեստ ըլլալով իրենց պարտքը կը կատարեն :

— Զձմարիտ է սիրելիս , ըսաւ Տօքթէօռը , բայց շատ մարդիկ կան որ այդ պարտքը չեն կատարեր . . . երբ այդ գործաւորաց հարսնիքներուն մարդ կ'զբօսնու . ո՞ւր է հարսանիքը :

— Մէն-Յառօթի պարտէզը , վերին Պէլլիլի մէջ խոհարար մը կայ , որ գեղեցիկ պարտէզի մը հետ միանգամայն լճակ մ'ալ ունի :

— Միթէ մարդ կրնայ հոն խորասուզիլ , ըսաւ Ֆէլիքսին միմտալով :

— Ուզողը կրնայ , բայց չեմ կարծեր որ Պարոն Մէուիւլէ այս նպատակաւ իր աղջկան հարսանիքն հոն կատարէ :

— Մէուիւլէ՞ . . . ա՛հ , ո՛րչափ զուարճալի անուն . երեկոյին ալ պիտի պարե՞ն :

— Անտարակոյս , պարտէզը գեղեցիկ պարի սրահ մը կայ :

— Բայց դուք չպիտի՞ երթաք պարելու :

— Խոստացայ . . . եւ . . . եթէ կարող ըլլամ . . .

Կոչնատէրը , որ կերեւայ թէ անհամբերութեամբ մտիկ կընէր այս խօսակցութիւնը , ըսաւ մէկէն ,

— Թո՛ղ , Աստուածդ սիրես տա Մէուիւլէներդ եւ շինական հարսանիքներդ , ալ բաւական խօսեցար , ատանկ անլայել շատախօսութիւններ մտիկ ընելու չհրաւիրեցի ես այսչափ մար-

դիկը : Պարոնայք , այսօր իմ ծննդեանս տարեդարձն է , այսօր վաթսուն մէկ տարեկան կըլլամ :

— Ես աւելի տարուք կը կարծէի ձեզ , մրմուռ հրաւիրեալներէն մին , որ դեռ խօսած չէր :

— Ի՛նչ աղնիւ է սա պարոնը , ըսաւ Տօքթօն Էմմաի աւանջէն : Գեռ բերանը բացած չէր , բայց շատ աղւոր սկսեց :

— Այո՛ , ըսաւ կոչնատէրը , վաթսուն եւ մէկ տարեկան եմ եւ կը պարծիմ համեստաբար հարստութիւն վաստակելու , եւ հօր մը սրբազան պարտաւորութիւնները կատարած ըլլալու :

— Եւ ո՞վ կը տարակուսի ատոր , պոռաց դեղագործը , գաւաթը բժիշկին երկնցնելով :

— Ներեցէ՛ք Պարոն Սինուան , բայց կաղաչեմ առանց խօսքըս ընդմիջելու թողէք որ խօսիմ : Ես չեմ հաւատար , որ մէկն ամենաթեթեւ թշնամանք մ'ունենայ ինձ դէմ : Բայց այս ալ բաւական չէ . ես ռզեցի որ զաւակներս իրենց հօրն արժանաւոր դաւակ ըլլան , որ օր մը ինձ պատիւ բերեն , որպէս զի ամեն մարդ զիրենք տեսած ատեն ըսէ թէ « Հարազատ որդի գնամաութիւն բերէ յինքեան » եւ այս մտքով կրթեցի զիրենք՝ Սյօր խիտ մեծ հաճոյք կ'զգամ ըսելու թէ իզձս վարձատրեցին եւ յոյսերս ՚ի դերեւ չհանեցին :

Հոս երեք տղայք ստը ելլելով խոնարհաբար ողջունեցին իրենց հայրը , որ շարունակեց :

— Ֆէլիքսին՝ անդրանիկ դաւակս , իմաստութեան տիպարն է , երբէք ուղիղ ճանքէն չեղած չէ , իւր նօտարը շատ գոհ է իրմէն , օր մը պիտի յաջորդէ իւր վարպետին եւ ես ալ նօտարութեան գրասենեակ մը գնելու համար պէտք եղածը պիտի տամ իրեն : Ասկից զատ ամեն օր երեկոյեան ժամը տասնին կը պառկի , եւ կարծեմ բաւական մեծ գովեստ մ'է այս իւր վարուցը համար . . . քիչէն շատ հասկեցէ :

Գեղագործն ու բժիշկը իրարու երես նայեցան եւ բժիշկը Ֆէլիքսին , որ տիկին Սառժէի քիթը չտեսնելու եւ խնդալը յայտնի չընելու համար ետին դարձաւ :

Պ. Մօնլուան շարունակեց իր ճառը ,

— Երկրորդ որդիս՝ Ատօլֆ , իւր անդրանիկ եղբորը չափ բաւերարոյ վարք մը չունի , բայց սակայն ես ալ ըսելիք մը չուն-

նիմ . . . մանաւանդ յայտնի զգաստութիւն մ'ունի . . . անկարելի է որ գաւաթ մ'անարատ գինի խմցնես իրեն : Իր վաճառականը շատ գոհ է իրմէն եւ քիչ ատենէն իւր վաճառականութեանը մէջ շահու բաժին մը պիտի յատկացնէ իրեն . այս ալ որոշուած է :

Ատօլֆ իւր հօրն այս ճառախօսութեան ատեն կեռասի պէս կարմրելով , աչքը պնակին վրայէն չէր վերցնէր :

— Երրորդ որդիս՝ Վիքթօնէն , իւր եղբարքը պէս այնչափ հանդարտ բնաւորութիւն մը չունի : Գլխուն մէջ քիչ մը փառասիրութիւն կայ , անպատճառ հարստանալ կուզէ : Իւր այս տենջը այսպանելի չէ , եթէ զայն յագեցնելու համար պատուաւոր միջոցներու ձեռնարկէ , ինչպէս՝ աշխատութիւն , յարատեւութիւն , համբերութիւն եւ իր պարտաւորութեանը մէջ մեծ ճշդութիւն գործածելու ըլլայ : Մնաց որ Վիքթօնէն միշտ իմ խրատուցս հնազանդ գտնուելովը , չեմ կասկածիր որ օր մը պիտի յաջողի : Սա ալ կայ որ իւր սեղանաւորը հաշուակալութեան մէջ ունեցած արագավարժութեանը շատ կը դարմանայ : Էմմա աղջիկս տակաւին տասնեւհինգ տարու չկայ . զինքն աստուանացնելու համար պիտի սպասեմ որ քսան տարեկան ըլլայ : Ճիշդ այն հասակին մէջ է , որ կնոջ մ'առողջութիւնը իւր կատարելութեան կը հասնի :

— Բայց օրիորդն արդէն շատ առողջ կերեւնայ , մրմնջեց բժիշկը :

— Արդ կը համարձակիմ պարծիլ որ զաւակներս աղէկ կըրթած եմ : Զիրենք ուղիղ ճանքուն մէջ դրի , եւ հաստատապէս հաւաստի եմ որ հոնկից չպիտի շեղին : Ուստի կարծեմ այլ եւս , առանց թշնամանք հրաւիրելու եւ առանց խօսքի տեղ ձգելու , գործոց բեռը կրնամ ձգել , եւ առողջութեանս ինամոցն ըզբաղիլ . . . որ այնչափ աղէկ չէ . . . եւ մեծ պէտքեր ունի :

— Մեք զձեզ կ'առողջացնեմք եւ մեզի պէս զուարճասէր կընենք , պոռաց բժիշկը : Բայց ամենէն առաջ , սիրելի պարոնս , մեր հրամանացն հետեւելու էք , գինի խմելու , խորտիկ ուտելու , բողկը , ջրկոտիմնը , եղբրդը մէկդի ձգելու էք , քանզի բոլոր ասոնք ստամոքսնիդ կաւերեն :

— Տօքթօն , կը վախնամ որ շտակաւին իմ կազմուածքս աղէկ հասկեցած չէք :

— Ձեր այդ եղանակաւը մարդ չկրնար դիմանալ : Բայց ալ բաւական խօսեցանք հիւանդութեան վրայ : Ես ճաշի առեն խորհրդակցութիւն չեմ սիրեր : Պարոն Մօնլօսան, ներեցէք որ խորհրդածութիւն մ'ընեմ. ձեր օրդուոց վրայ գովեստիւք խօսեցաք . . . այնպիսի գովեստներ, որոց արժանի էին, չեմ տարակուսիր ատոր . . . բայց ձեր քեռորդուոցն վրայ բան մը չխօսեցաք եւ ոչ ալ իրեն նկատմամբ ունեցած կարծիքնիդ յայտնեցիք . . . Պարոն Ֆէլիքսի դէմքն այնչափ աղէկ կարտայայտէ իւր բնոյթն, որ ես մէկանց իւր բարեկամն ըլլալու տրամադիր զգացի ինքզինքս : Օ՛ն, սիրելի պարոն, այդ երիտասարդին նըկատմամբ ի՞նչ կը խորհիք ընել, քանզի ես կարեկից եմ իրեն :

— Քեռորդուո՞յս . . . ես զինքը բան մը ընելիք չունիմ . . . ես զինքը բան մը ընելիք չունիմ . . . իմ զաւակացս պէս կըրթել կուզէի . . . բայց անկարելի եղաւ . . . երբէք չհնազանդեցաւ ինձ . . . :

— Լսեցէ՛ք ուրեմն . . . ամեն երիտասարդ ժամը տանին չկրնար պառկիլ . . . ատոր համար մասնաւոր կազմուածք մը ունենալու է . . .

— Ըստ որում կը պարտաւորէք զիս ըսելու, քեռորդիս ա՛մեն տեսակ պակասութիւններն ունի : Կը սիրէ խաղ, խնճոյք գինի եւ . . . մնացեալն ալ . . .

— Ա՛հ, մօրեղբայր, պօռաց Ֆէլիքս, ձեր այդ ըսածներն ես ուրիշ կերպով չեմ սիրեր եթէ ոչ . . . ամեն մարդոց պէս . . . ինչպէս որ ամեն երիտասարդ ալ կը սիրեն հաճոյքը . . .

— Ամեն մա՛րդ . . . երիտասա՛րդք . . . բայց պարոն նայեցէք անգամ մը իմ զաւակացս, միթէ նոքա այդ պակասութիւններէն մին ունի՞ն :

— Բայց նոքա բնութեան զարտուղութիւններն են . . . ես անոնց նմանիլ չեմ բաղձար . . .

— Ա՛, ես աղէկ գիտեմ որ անոնց չէք կրնար նմանիլ :

— Ո՛հ սիրելիս, ձեր քեռորդուոցն համար այնչափ խրատաւիրտ մի՛ ըլլաք : Քիչ մը ներողամիտ եղիք . . . ես մարդուն դէմքէն կը հասկնամ իւր բնոյթը, եւ Պարոն Ֆէլիքսի աչացը մէջ կը կարդամ որ օր մը իւր մօրեղբօր արժանի պիտի ըլլայ :

— Շնորհակալ եմ, պարոն, շնորհակալ եմ, ինձ նկատմամբ

ձեր ունեցած կարծեացն համար, ըսաւ Ֆէլիքս ձեռքը բժիշկին երկնցնելով : Ինչ որ ալ ըսէ մօրեղբայրս, պիտի աշխատիմ ձեր կարծիքն արդարացնելու :

Ձաշը բաւական պաղ վերջացաւ, քանզի եթէ Պարոն Մօնլօսան կը թողուր որ հրաւիրեալք խմէին, փոխարէն ինք չէր գրգռէր զանոնք որ կրկնէին, եւ չէ թէ մինակ ինքն օրինակ չէր տար, այլ զատ սրուակէ մը ինքը խմելով, որդուոցն ալ անկից կուտար, եւ նոքա չէին կրնար մերժել :

Սեղանէն ելլելով սրահն անցան : Հոն՝ որովհետեւ Պարոն Մօնլօսան կը գարչի խաղէն, խօսակցութեամբ անցնելու է երեկոյթը, եթէ օրիորդ էմմա չհաւանի իր դաշնակին առջեւ հասնիլ :

Արդէն դեղագործն աներեւութացեր էր . բժիշկն այս երեկոյթէն վայելելիք զըօսանքը նախազգարով՝ Ֆէլիքսին մօտեցաւ ու ականջէն,

— Մէռլիւշէի հարսանիքը չպիտի՞ երթաք, ըսաւ :

— Ի՞նչ ըսել է, խոստացայ, ասկից զատ՝ վստահ եմ որ զուարճալի պիտի ըլլայ :

— Զիս ալ միատեղ կը տանի՞ք :

— Մեծ սիրով, Տօքթէօն, եւ կրնամ ըսել մեծաւ հաճութեամբ :

— Բայց չըլլայ որ մեր այս ըրածը հարսնետօրներուն օւժնողացը գէշ երեւնայ :

— Ընդհակառակն՝ ո՛րչափ շատ մարդ տանիմ, այնչափ աւելի գո՛հ կըլլան . . . փեսան ալ իմ կաթ եղբայրս է :

— Ուրեմն որոշուեցաւ, հինգ վայրկեանէն կը չուենք . նախ եւ առաջ ես մօրեղբայրնիդ խօսքի բռնելով իւր առողջութեանը վրայ խօսած ատենս՝ գուք կը փախչիք : Վերջն ալ ես կուգամ վարը ձեզ կը գտնամ . . . կառք մը կը նստինք եւ շիտակ Պէլլիլ կերթանք . . .

— Այո՛, այո՛, բայց մօրեղբայրս աղէկ զբաղեցնելու էք, քանզի եթէ դէպի գրան կողմն երթալս տեսնայ կրնայ ըլլալ որ զիս կանչէ ու վար գնէ :

Տօքթէօն ծուլէն, կարգադրութեանն համեմատ՝ Պ. Մօնլօսանը սրանին մէկ անկիւնը տալաւ ու բաւական երկար ա-

տին խօսքի բռնեց բուսաջուրերուն ու իր անմեղ դեղերուն վրայ խօսելով , յայտնելով միանգամայն որ եթէ աղէկ չեն ընեն , գէշ ալ չեն կրնար ընել : Յետոյ հեռանալով Ֆէլիքսը գտաւ վարը : Ֆէլիքս Տօքթէօնը տեսնելուն ,

— Մօրեղբայրս չտեսա՞ւ մեկնիլս , չհարցօ՞ւց զիս , ըսաւ :

— Ա՛չ , հոգ մ'ընէք . ժամը իննու կէսն է , անտարակոյս բոլոր ընկերութիւնը հիմայ պառկիլ կը խորհի . . . մենք ալ զըւարձանալու կերթանք , չգիտեմ թէ առողջարա՞ր է սա , սա չափ միայն գիտեմ որ զուարճալի է :



ԳԼՈՒԽ Զ .

ՄԷՆՈՒԻՇԷԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

ձանրան կառքով գացած ատեննին՝ առաւօտուն քաղաք պահտին պալատին մէջ կարգը Տիւֆիլէի նշանածներուն եկած ատեն պատահած դէպքը Ֆէլիքս Տօքթէօնին պատմեց :

Պարոն Ժուպէն շատ խնդալով այս պատմութեանն , ըսաւ Ֆէլիքսին ,

— Բայց ինչօ՞ւ համար ճաշի ատեն այս դէպքը չսպասուեցիր , գոնէ քիչ մը խնճոյքը կը զուարթացնէր , կարծես թէ մեռելոց խումբ մը նստած էր :

— Ի՞նչ կըսէք , միթէ ես մօրեղբօրս ներկայութեանն ատանկ բան մը կրնամ պատմել : Ես զինքը կը ճանչնամ , կը յանդիմանէր զիս , փեսան անանկ մէկ ոտքը բոպիկ քաղաքապետին առջեւ տանելուս կը բարկանար :

— Բայց՝ որովհետեւ եթէ ատանկ չընէիր՝ ամուսնութիւնը ետ պիտի մնար , ըսել է թէ յնաս մը չունի : Զիս մտիկ ըրէ՛ք , սիրելիս Պարոն Ֆէլիքս , ես տակաւին քիչ ատեն եղաւ որ ձեր մօրեղբօր բժիշկն եմ , բայց խօսքը մէջերնիս՝ կարծեմ սխալ ճան-

բայ բռնած է , ինչպէս իր զաւակաց , նոյնպէս եւ առողջութեանը նկատմամբ : Ես ձեր մօրեղբօր օրդիքն աղեկ նկատեցի , իրենց հօրն առջեւ կը դողան , բայց ատկից ի՞նչ կելլայ : Եթէ պակասութիւններ՝ նաեւ մոլութիւններ ալ ունին , զգուշութեամբ կը պահեն զանոնք եւ իրենց միտումը ճարտարութեամբ կը կերպարանափոխեն : Ասկից ի՞նչ կը հետեւի , գիտէ՞ք , եթէ անգամ մը ազատ մնան , եւ չպիտի յապաղի այս , քանզի Պ. Մօնյօտան արդարեւ շատ վատառողջ է , եւ երկար ատեն չը պիտի կրնայ դիմանալ իր մոլոչին , ջրկոտիմնին եւ եղբորդին . եթէ անգամ մը ազատ մնան , կըսէի , հիմակուան ճշտան վընասը պիտի հանեն խիստ ազատարար : Այն ատեն՝ չեմ հաւատար որ սա մեծ Ֆէլիսիէնը ժամը տասնին պառկելը շարունակէ , գերուկ Ատօլֆը անարատ գինի խմելը մերժէ , եւ նիհար Վիքթօռէնն ալ թուղթի եւ սիլեարտի խաղէն գարշանք յայտնէ : Ես ձեր մօրեղբօր տանը մէջ էմ մայէն գատ սիրուն մէկը չտեսայ : Նա քաղցրաբարոյ ու միամիտ բնաւորութիւն մ'ունի , եւ թէպէտ երկչոտ , բայց խորհածն ալ չպահէր . ազնիւ կ'ին մը պիտի ըլլայ : Միայն նա կրցաւ ինպատ ձեզ խօսիլ իր հօրը , միւսները բառ մ'անգամ չըսին :

— Թէրեւս իրենց հայրը բարկացնելէ կը վախնային :

— Բացակայ մարդիկը ջատագովելէն վախնալու չէ երբէք , ասկից զատ պարտաւ ազգական մը կար . . . զոր տակաւին չէի ճանչնար . . . բայց ես միայն իր քիթը տեսայ , որ երեսին միւս մասերը տեսնելու արգելք եղած էր :

— Տիկին Սառժէն է , որ թէեւ բարի կ'ին մ'է , բայց ամենեւին չքաշէր զիս :

— Եթէ այդչափ բարի է՝ ինչօ՞ւ չպիտի քաշէ :

— Վասն զի օր մը իր քիթը ծաղրելու դժբաղդութիւնն ունեցայ :

— Սիրելի բարեկամս . . . դուք տակաւին երիտասարդ էք , յիշեցէք զայս . կ'ինքն ուղածուդ չափ յանդիմանեցէք , խարեցէք , մատնեցէք , նաեւ կործանեցէք . . . կը ներեն . իսկ եթէ իրենց մարմնականին դպչիք , երբէք չեն ներեր :

— Ահաւասիկ Սէն Փառժօ պարտիզի ճաշարանին առջեւ ենք :

— Քնարի ձայները կը լսեմ . . . օն , ալ միայն զուարճու-
թիւն խորհինք , եւ ասոր համար միակ անվրէպ միջոց մը կայ :

— Ո՞րն է :

— Մեր գտնալիք մարդոց հաւասարելու ենք : Հետեւա-
բար եթէ հարսնետորք գինով ըլլան , մեք ալ անոնց հաւասա-
րելու համար գինովնալու ենք :

— Իրա՞ն , միթէ այս միջոցը կը գործածէք :

— Միշտ եւ ամեն տեղ . նաեւ մէկ քանի օր առաջ միջին
դասու տիկնոջ մը երեկոյթին հրաւիրուած էի . . . դացի . . .
օրահը մտած ատենս , ուր վեց եօթը կին կային , զանոնք մէյ
մէկ մարդու ծնկան վրայ նստած տեսայ . միայն մէկ պարոն մը
առանձին մնացած էր իր աթոռին վրայ , անմիջապէս մօտենա-
լով եւ բարեկերով ըսի անոր , « միթէ կը ներէ՞ք որ ես ալ ձեր
ծնգացը վրայ նստիմ որ ընկերութեան նմանինք . . . առաջար-
կութիւնս զամենքը խնդացուց :

— Եւ յետոյ :

— Տիկնոնքն ոտք ելան , — Կառավար հոն մտիր եւ օպա-
սէ մեզ :

— Լաւ :

— Ըսէ որ քեզի լսմելիք տան :

Պարի սրահը պարտիղին մէջն ըլլալով անձրեւ իջած ա-
տեն վրած ծածկոց կը քաշէին : Նուագածուք երեք քնարէ ,
մէկ փողէ եւ մէկ մեծ թմբուկէ կը բաղկանային : սոցա իւրա-
քանչիւրն այնչափ ոյժգին կը նուագէր , որ հինգ անձինք քոս-
նի չափ ձայն կուտային : Բայց նաեւ գինիի դաւաթներն ալ չէր
խնայուէր : Երբ Ֆելիքս իւր նոր բարեկամին հետ սրահը մտաւ ,
մարդիկ ամենքն ալ կէս մը գինովցած էին , մէկ քանի կին ալ
ասոնցմէ վար չէին մնար :

— Է՞ն , ըսաւ Տօքթէօրը , պարին մօտենալով , ձկան ա-
պուրի հօտ մը կայ :

— Շատ համեստ էք , Տօքթէօն , գինիի հոտ է :

— Ասոնց նմանելու ըլլանք գէշ չպիտի ընենք :

Տիկնայք արդէն ոտքի վրայ էին , քառեակ մը սկսուած էր
եւ նոյն գիշեր այս առաջին անգամն էր որ փեսան իր կնոջը
հետ պիտի պարէր : Բայց Ֆելիքսը տեսնելուն՝ Տիւֆիլէ փոխա-

նակ դէմ դէմի ելլալու , յանկարծ կանգ առնելով պոռաց ,

— Կաթ եղբայրս . . . ա՛հ կեցցես կաթ եղբայր . . . կե-
ցէ՛ք նուագածուք . . . ինքը պիտի պարէ . . . բայց կեցէ՛ք
կրսեմ . ի՞նչ աւանակ են , դեռ կը շարունակեն :

Տիւֆիլէ կինը թողլով Ֆելիքսին վագեց , որ ըսաւ

— Կարգէ լմնցուր , ետքը կը խօսիս :

— Ո՛չ , ո՛չ . . . ես կուզեմ որ դու իմ տեղս պարես
հարսին հետ . . . դու պատուոյ երկտասարդ ես , իրաւունքդ է
. . . կեցէ՛ք նուագածուք :

— Բայց ես ետքը կը պարեմ . . . իմ բարեկամներէս մէկը
բերի , բժիշկ մը՝ որ զբօսանքը շատ կը սիրէ :

— Է՛ն , աւելի աղեկ . . . շատ աղեկ ըրիր գալուդ . . .
միայն մէկ բարեկամ մը բերիր , բայց Քիչ է . . . գոնէ չորս մը
բերելու էիր :

— Պարոն , ձեզի հաճելի ըլլալու համար ես կաշխատիմ
չորս անձի տեղ բռնել , ըսաւ բժիշկը :

— Ահ , գիտէ՞ք պարոն , ինչո՞ւ համար կըսեմ զայս , բան
մը խօսած ըլլալու համար . . . անչուշտ կընդունիք դաւաթ մը
գինի . . . :

— Ի՞նչպէս . . . չէ թէ մէկ , այլ շատ կընդունիմ :

— Ահ , կեցցէք , որչափ աղատախօս էք . . . շատ աղեկ
պիտի յարմարիք մեզ :

— Պիտի աշխատիմ կարելի եղածին չափ կցորդելու :

— Էյ , Տիւֆիլէ , պարելու կարգը ձերն է . . . եկէ՛ք
. . . տեղերնիդ եկէ՛ք :

— Ամենեւին , ամենեւին , կաթ եղբայրս պիտի անցնի տեղս
. . . կեցէ՛ք նուագածուք :

Վերջապէս նուագածուաց գլխաւորը , որ փեսին ձեւերը
կը տեսնար , մէկանց լռեցուց նուագածուները , որ Քիչ մը քիչ
պաղութիւն չպատճառեց սրահին մէջ . մարդիկ սրունգնին օ-
դին մէջ բարձրացուցած մնացին , կանայք առանձին կատարե-
ցին իրենց ալիքածաւեր եւ Պ. Կոստէսօֆ , որուն պալարը ճաշի
ատեն ծակեր ու հարսին դէմ դէմին էր , պոռաց ,

— Բայց աս ի՞նչ ըսել է . . . ի՞նչպէս , երբ ես ամենէն
գեղեցիկ ձեւ մը պիտի պարէի . . . վասն զի պալարս ծակելէն

ի վեր փետուրի մը պէս թեթեւցեր եմ . . . մէկէն ի մէկ ա-
սանկ նուազը կենայ . . . է՛յ, նուազածուք, ի՞նչ կը մտածէք
հոտ . . . օն, օն, տաքցուցէք պարը . . . մանաւանդ լա բը-
րիք լեքիեռը նուազեցէք . . . ես այն կուզեմ, այո՛ կուզեմ:

— Բայց Պ. Կոանսէնֆ, ամեն անգամ այն չխաղացուիր,
ըսաւ հարսը, դեռ քիչ մ'առաջ խաղացինք:

— Ինչո՞ւս պէտք, ես քիչ մ'առաջ ձեր առջեւ չպարեցի,
գեղեցիկ Լօռէթ, ես լա բըրիք լեքիեռը կուզեմ, քանզի ասոր
մէջ մարդ իւր դէմինը կը համբուրէ:

— Գեղինն անցնիս դու ալ, լա բըրիք լեքիեռը ալ, մըր-
մըռաց հարսը:

Բայց Տիւֆիլէ Ֆէլիքսը կնոջը ներկայելով ըսաւ,

— Ահաւասիկ իմ փոխանորդս . . . կաթ եղբայրս պիտի
խաղայ հետդ . . . հէ՞ . . . կարծեմ չես սրդողիր, հէ՞ .

— Ո՛չ, ո՛չ. շիտակը աղեկ եղաւ պարոնը գայուն:

— Ծնրակապէդ ինծի ալ պահեցի՞ր:

— Այո՛, դիտամաք տակաւին չթողուցի որ առնեն:

— Հէ, կաթ եղբայր, կինս չէ թողուցեր որ առնեն, ձեզի
պահելու համար . . . շատ աղւոր, շատ աղւոր . . . օ՛ն նուա-
զածուք, քառեակը նորէն պիտի սկսիք, նորէն. կը հասկնա՞ք:

— Նաեւ արգիլէ որ լա բըրիք լեքիեռը չնուազեն, ըսաւ
հարսն ամուսնոյն ականջին, վասն զի չեմ ուզեր որ սա Պ.
Կոանսէնֆը համբուրէ դիս:

— Ա՛հ, որչափ խորամանկ է կինս . . . կը հասկնա՞ք Պ.
Ֆէլիքս: Անհոգ եղիր, ես կըսեմ . . . Հա՛ Լօռէթ, մոռցայ ը-
սելու, կաթ եղբայրս հետը իր մէկ բժիշկ բարեկամը բերեր է
. . . շատ զուարճալի է . . . նայէ որ հիւանդ ըլլաս, անմիջա-
պէս կը դարմանուիս:

— Ծնորհակալ եմ, աւելի աղեկ է որ ես առողջ ըլլամ,
դնա՛ նուազածուաց ըսէ:

— Ահաւասիկ կը թռիմ:

Ֆէլիքս նայեցաւ թէ հարսը, որ առաւօտուն Գուք կըսէր
իր ամուսնոյն, հիմայ եղակի կը խօսի հետը, իբրեւ թէ միայն
հիմայ ըրած ըլլայ դայս, ասկից հետեւուց որ ճաշէն ՚ի վեր
ամուսնեաց մէջ բաւական մտերմութիւն մտած էր:

Պարը վերսկսած ատեն Տօքթէօնը հարսին ընտանեացը հետ
կը տեսակցէր. եւ այս տեսակցութիւնը բնականաբար բաժակ
ի ձեռին կը կատարուէ. դաս մը մարդիկ կան, որ անանկ ցա-
մաք խօսակցութիւնը չեն սիրեր:

Որմնադիր վարպետը պարին դէմ դրուած սեղանի մ'առ-
ջեւ նստած էր, որուն վրայ պարապ եւ լեցուն շատ մը սըր-
ւակները մինչեւ այն ատեն ըրած եւ տակաւին շարունակելի
գործողութեանց կենդանի վկայ էին:

Հայր Մէուլիւշէ կարմրած՝ կամ լաւ եւս ճակընդեղի պէս
մանիշակադոյն եղած, կէս երկոտասնակի չափ բարեկամներէ
չըջապատեալ էր, որք իրեն հետ գաւաթները կը բաղխէին եւ
որոց հետ կը ճառէր, եւ շատ անգամ պարբերականներու մէջ
կը կորսուէր, զոր ո՛չ ինքն եւ ո՛չ ունկնդիք կը հասկնային՝
Միայն սա կար որ ընդհանուր սքանչացում մը կը տիրէր:

Տիւֆիլէ իւր աներոջը ներկայացնելով Տօքթէօնը, ըսաւ

— Ահաւասիկ կը ներկայացնեմ կաթեղբօրս բարեկամներէն
մին . . . որ բժիշկ է . . . այսինքն թէ կաթեղբայրս չէ բը-
ժիշկը, սա ինքն . . . եւ կամ սա պէս ըսեմ, կը ներկայացը-
նեմ ձեզ բժիշկ մը որ կաթեղբօրս բարեկամն է, զուարճասէր
մէկը . . . որ մեզի հետ զուարճանալու եւ բաժակ պարպելու
եկած է . . . հայր Մէուլիւշէ:

Բաժակ պարպելու բառը լսած ատեն՝ որմնադիր վարպե-
տը ոտը ելլելով լեցուն գաւաթ մը ներկայացուց բժիշկին՝ պըդ-
տոր ձայնով մ'ըսելով,

— Պարոն եթէ իւր բարեկամին բարեկամներէն էք, մեղ-
մէ կը համարուիք . . . եւ կարող կը դատիմ ձեզ . . . քանզի
ինչպէս որ կըսէ առածը « մեր բարեկամաց բարեկամքը » . . .
ալ մնացեալը գիտէք:

— Այո՛, պարոն, ըսաւ բժիշկն իրեն մատուցուած գա-
ւաթն առնելով՝ եւ ուրախութեամբ կը հրճուիմ այս բարեպա-
տեհ առթին, որ ձեզի եւ ձեր յարգելի ընկերութեան հետ տե-
սակցելու պատիւն ունեցայ:

Այս պատասխանը եւ խօսուածքին կերպը ընկերութեան
անանկ մեծ հաճոյք մը պատճառեց, որ արեւոյդներէն մին իւր
հիացմանը մէջ՝ բժիշկին հետ գաւաթը բաղխելու համար առա-

ջիններէն մին ըլլալ ուզելուն գաւաթը նորա գաւաթին հետ կոտրեց . իսկ սպասաւորն անմիջապէս ուրիշ մը բերաւ , եւ այս դէպքը ընդհանուր ցնծութիւն պատճառեց :

— Պարոնայք , ըսաւ Տօքթէօռ Ժուպէն , Պարոն Մէուլիւ- շէի եւ իր գստեր գեղեցիկ հարսնացելոյն կենացը կը խմեմ եւ մէկ շունչէն .

Ձայս ըսելով Տօքթէօռ մէկանց պարպեց գաւաթը . այս գործը բոլոր արեւոյններն սքանչացուց , որք անոր նմանիլ ու- գեցին , սակայն երեք չորրորդ մասը մէկ շունչէ խմել ուզել- նուն մոլոր փախցուցին :

Այս առաջինը լմնալէն յետոյ , Տօքթէօռ նորէն լեցնել տալով իր գաւաթը եւ բարձրացնելով զայն ըսաւ ,

— Այս երկրորդ բաժակը Պարոն Տիւֆիլէ փեսին եւ ամ- բողջ ընկերութեան կենացը կը խմեմ եւ որուն համար դարձ- եալ մէկ շունչէ կը պարպեմ :

Բժիշկը դարձեալ մէկ շունչէ խմեց : Աքանչացումը կըրկ- նապատկեցաւ , ընկերութիւնը կեցցէներու աղաղակներն յա-ւելցուց . որմնադիր վարպետը ճառ մը սկսել ուզեց , բայց մին- չեւ որ իր առաջին բառը գտաւ բժիշկը նորէն իր գաւաթը լեցնել տալով , վեր բարձրացոյց զայն եւ ըսաւ ,

— Այս անգամ նոր ամուսնացելոց երջանկութեանը , նո- ցա ճոխութեանն ու ապագայ սերընդեանն համար կը խմեմ , վասն զի վստահ եմ որ իրենց սերընդեան բարգաւաճմանը մէջ պակասութիւն մը չլիտի ընեն . . . դարձեալ մէկ շունչէն պարոնայք :

Այս երրորդ բաժակն յիմարական հրճուանք պատճառեց : Արեւոյնը գրեթէ գինուցած են : Իրենց սքանչացումը արտա- յայտելու համար դժօրտային ժխոր մը յարուցանելէ գառ ուրիշ միջոց չգտնալով , կը ծափահարէին եւ սեղանները կը բաղխէին , այնչափ որ պարը յուզուելով այս աղմուկի պատճառը կը հար- ցընէին . ապուշ երիտասարդին մէկը պարողներուն երթալով ,

— Ո՛հ , սարսափելի արեւոյն մը եկեր կը մրցի , եւ ամեն- քը կը յաղթէ . . . երեք գաւաթ իրարու վրայ մէկ շունչէն կլլեց , ամենքը պիտի գինուցնէ :

— Շատ մեծ նեղութիւն շունի կրելիք , ըսաւ գիրուկ մարց

մին , արդէն երեք չորրորդ աստիճանին հասեր են անոնք :

Բժիշկն իր երրորդ բաժակէն ետքը կանգ առաւ : Պ. Մէու- լիւշէ , որ վերջապէս գտած էր ճառին յառաջաբանը , ոտքի ելլելով պոռաց ,

— Պարոնայք , անաւասիկ կոչնական մը որ կ'ապացուցա- նէ մեզ . . . որ կը յայտնէ մեզ . . . թէ մարդուս մեծութիւնը կրնայ բարձրանալ մինչեւ : . . . մինչեւ ամենածաւալ երկրա- գունդը . . . չեմ հաւատար , չեմ կարծեր որ զիս սուտ հանեն երբ ըսեմ թէ ես իւր բարեկամն եմ ցկեանս եւ մինչ 'ի մահ . . . եւ ալ աւելին պիտի ըսեմ . . . աւելին պիտի ըսեմ . . . նաեւ . . . ի՞նչ կըսէի . . .

Բժիշկը տեսնելով որ աները իւր ճառը չպիտի կրնայ վեր- ջացնել բնաւ , զանի շփութեանէ աղատելու համար՝ կրցա- ծին չափ բարձր ձայնով

« Կեցցէ՛ պարոն Մէուլիւշէ » պոռաց :

Բոլոր արեւոյնը միաձայնեցան եւ որմնադիր վարպետը կարծելով որ ճարտարախօսութիւնը ներաղդեց այս արդիւնքը , յարմար դատեց բժիշկին բազկացը մէջ նետուիլ , եւ սրտին վը- րայ սեղմել այն աստիճան խանդաղատանօք որ արտասուելու կը տրամադրէր զինքը : Բարեբաղդաբար պարահանդէսին կողմէն կռիւ մը բռնելով , Պարոն Մէուլիւշէի աչերէն ցայտելիք արտա- սուքն արգիլեց :

Պարոն Կոանսէոֆ խիստ յամառ մարդ մը եւ ասկից գառ զայրացած ըլլալով , որ հարսն այնպիսի վայելուչ երիտասարդ պարոնի մը հետ կը սարէ , զոր չճանչնար , մինչդեռ ինքն հայր Մէուլիւշէի մտերիմ բարեկամներէն մին , եւ որ եթէ ոտքի պա- լարը չըլլար , պատուոյ երիտասարդ պիտի ըլլար . քառեակ մը անգամ չէր կրցած պարել հարսին հետ . վերջապէս Պարոն Կը- ոանսէոֆ գէթ կը յուսար որ լա բըթիք լեթիեռի ձեւի ատեն գեղեցիկ Լօռէթը համբուրելով ըրած կորուստը պիտի վաստը- կէր : Բայց արդէն Բանքայօն , Եթէ , Բուլ եւ Բասթուռեյ պա- ըրեր խաղցուեցան , առանց բըթիք լեթիեռի , վերջապէս երբ այս պարոնը կը յուսար որ այս ձեւն ամենէն վերջը պիտի խաղ- ցուի , նուազածուք կալօսի մը վերսկսելուն , ալ Կոանսէոֆ կատ- գելով պոռաց ,

— Այդ չէ նուազածուք, մենք կալօփ չենք ուզեր, բը-
բիք լեքիեռ կուզենք : Բքիք լեքիեռ նուազեցէք :

Իսկ հարսն իր կողմանէ պօռաց :

— Այո՛, այո՛, կալօփ, ես կալօփ կուզեմ :

Բնականաբար Ֆէլիքս իւր ընկերին հաճոյանալու համար
պօռաց :

— Այո՛, այո՛, կալօփ, լեքիեռ չուզէր, շատ անպիտան է :

Պարող երիտասարդը հարօին հաճոյանալու համար ամեն-
քը մէկանց պօռալ սկսեցին :

— Այո՛, այո՛, կալօփ, Լեքիեռ չուզէր, ատանկ անպիտան
բան չուզէր, մէկդի անպիտանները :

Պարոն Կռանսէնֆի երեսը կանչըցաւ, ինքն այնպէս երեւ-
ւակայեց թէ զինքն անպիտան կը կոչեն, եւ երբ Ֆէլիքս դե-
ղեցիկ Լօսէթի հետ պարել սկսած էր, անոնց վրայ ինչալով
կեցցնել կուզէր : Իսկ Ֆէլիքս եւ ընկերուհին զօրաւոր ըլլախուն
իրենց պարը կը շարունակէին : Պարոն Կռանսէնֆ ալ չզիտնա-
լով թէ ինչպէս արգիլէ զանոնք, երիտասարդին զգեստին քը-
ղանցքը բռնեց ու ետեւէն կախուեցաւ : Ֆէլիքս շարունակ կը
պարէր, պօռալով այս պարոնին :

— Պիտի թողո՞ւս զիս . . . ձգէ զգեստս . . . բայց տա-
կաւին չլինցա՞ւ :

Իսկ Կռանսէնֆ, որ զգեստին քղանցքը բռնած ըլլալուն
համար ինքն ալ վազելու պարտաւորուած էր, շունչը արգելուե-
լով եւ ցատկելով կը պատասխանէր :

— Պիտի հատուցանե՞ս ինձ պարոն, իրաւունք կը պահան-
ջեմ . . . քանզի անպիտան կոչեցիր զիս . . . ես անանկ բան
չեմ ուզեր . չգիտեմ ո՞ւրսկից ելար . . . բայց այս ասանկ չը
պիտի վերջանայ :

— Հիմայ թող զգեստս, վերջն իրար կը հասկնանք :

— Ո՛չ, չպիտի թողում : Ես անպիտան եմ հա՞ . . . դու
ես անպիտանը :

— Ձեմ կարծեր . . . բայց եթէ զգեստս պատռէք, պիտի
վճարէք վերջը :

— Անհող եղի՛ր բռնակալ :

— Բայց կատղեր է այս ծերը, սատանան փորն է մտեր :

— Պարոն Կռանսէնֆն է, ըսաւ հարսը, ինձ պատուոյ ե-
րիտասարդ չկրնալ ըլլալուն զայրացած է :

— Հա՛, սա պարաւոր պարո՞նը :

— Այո՛, ինքն իսկ :

— Բայց կը պարէր :

— Կերեւայ թէ պալարը ծակած ըլլալու է :

— Ի՞նչ աղւոր բան :

Եւ Ֆէլիքս ետին դառնալով ըսաւ :

— Պարոն Կռանսէնֆ՝ այսօրուան ձեր արկածէն վերջը հի-
մայ դալ ատանկ ցաթկելը ձեզի աղեկ չէ, եաքը ուրիշ պալար
մ՛ալ կը հանէք :

— Ո՛չ, ո՛չ ես չեմ կաղար, բժշկուեցայ, եւ քեզի կը
ցուցնեմ :

— Չէ՛, չէ՛, ես անանկ բան տեսնալ չեմ ուզեր, շնորհա-
կալ եմ ձգէ քղանցքս :

Մերուհի պատուոյ երիտասարդը չձգելէն դատ, միւս քը-
ղանցքն ալ բռնել կը փորձէր, բայց այս շարժման ատեն՝ չտե-
սաւ այն երկու պատանիները, որը հարսին ընկերոջը ետեւէն
իյնող այս պարոնը պառկեցնելու դիտմամբ միատեղ ցաթկելու
սկսած էին . արդարեւ այս երկու երիտասարդները անանկ ու-
ժով մը Պարոն Կռանսէնֆի վրայ ինկան որ ասի՝ հարուածէն
սարսափած՝ բռնածը թողուց եւ պարին մէջ տեղն ինկաւ, ա-
մեն կողմանէ ոտնհար ըլլալով անոնցմէ, որ պարելով ցաթկած
ատեննին կանցնէին : Այն ատեն Պարոն Կռանսէնֆ պարահան-
դէսը կը դռացնէր իր աղաղակներովը,

— Հասէ՛ք, օգնու՞թեան հասէ՛ք, վրաս կը կոխկոտեն ու
կը հարուածեն . օգնու՞թիւն . . . խտտի պէս կը թնդեն զիս :

Ահաւասիկ այս աղաղակներն էին որ արեւոյդաց ականջն
հատան այն վարկենին, յորում պարոն Մէռլիւշէ խանդաղա-
տանօք իր բազկացը մէջ կը սեղմեր բժիշկը :

Բժիշկը որմնադիր վարպետին բազկացը մէջէն աղատելով՝
ամեն մարդ պարահանդէսը վազեց, պարողը պարտաւորեցան
կենալ : Պարոն Կռանսէնֆ չորս ոտքի վրայ կեցած դիւահարի
մը պէս կը հայոյէր : Ոտքի վրայ հանեցին զայն . վրան գլուխը
աղտոտած էր, ստկայն մէկ տեղը վիրաւորուած չէր, միայն

ականջը ճղմուներ էր : Բայց կը պնդէր սա որ չորս կողմը վերաւորուած էր :

Բժիշկը երակը զննելով, զարնելով, քննեց դայն եւ ըրաւ, — Բան մը չունիք, գուցէ մէկ տեղերնիդ ճղմուած է, ալ կանջնիդ քիչ մը ձեղքուեր, բայց ուրիշ բան չկայ :

— Այո՛, պարոն, այո՛, ուրիշ կողմս վերաւորուած է, սա կորներս ջախջախուած :

— Ուրեմն հանուեցէք, պարոն, մերկ զննելու եմ Բժիշկին այս առաջարկութեանը վրայ կանայք փախան . քանզի պարոն կռանսէնֆը Ա.գամ Եւայի կերպարանքով տեսնալ չէին ուզեր . եւ Տիւֆիլէ ըսաւ այս պարոնին,

— Ի՛նչ աղէկ բան պիտի ըլլայ եթէ վերաւորուած ըլլաք, քանի որ պատրաստ բժիշկ մ'ունինք, ի՛նչ ալ աղէկ դանուեցաւ . հո՞տ առիք, ի՞նչ ըրիք :

Սակայն Պարոն կռանսէնֆ հանուել չէր ուզեր, բաւական համարեց որ ականջը լուան :

— Բայց ի՛նչ գործ ունէիք որ գացիք պարողներուն սուքերուն տակ մտաք, հարցուց Պարոն Մէռլուչէ : Հոտ քեզի յարմար տեղ մը չէր, աւելի աղէկ կըլլար որ գայիր մեզի հետ գաւաթ բախղէիր . . . եւ այս սիրելի պարոնը . . . ահաւս սիկ մարդ մը . . . սա . . . եւ որ անանկ բաներ . . . անանկ բաներ կրնէ որ կ'ախի մարդ :

կռանսէնֆ Յէլիքսը յուշնելով ըսաւ,
— Ահաւասիկ այս պարոնն է պատճառը : Թշնամանեց զիս . . . անպիտան կոչեց :

— Կաթեղբայրս, անկարելի է, սուտ է :
Գեղեցիկին Լօռէթ, որ Պարոն կռանսէնֆը հանուեցնելու լսօսք եղած ատեն միւս կանանց պէս փախած չէր, մտածելով հաւանականաբար թէ իր նորհարսութեան մէջ զեռ եւս ուրիշ շատ բաներ ալ տեսնել պարտի, բերանը բացաւ եւ գործին ի՛նչպէս ըլլալը մէկիկ մէկիկ պատմեց :


Երբ Պարոն կռանսէնֆին յամառիլն իմացան, որ հարսին օրինաւոր բաղձանացն հակառակ բքիբ լիքիեռ պարել կուզէր, երբ հասկցան որ Յէլիքսի պարելն արդիւրու համար անոր ըզգեստին քղանցքէն կախուեր է, եւ երբ Յէլիքս իր զգեստը

ցուցուց, որուն կարը բաւական քակուեր էր, Պարոն կռանսէնֆի դէմ հուռուայի աղաղակ մը ձգեցին, երիտասարդք վերան խնդացին, կատարեալք այպանեցին, եւ կանայք ծաղրեցին . այն ատեն՝ կռանսէնֆ ոսկորներս ջախջախեալ են ըսած ըլլալը մոռնալով, մէկանց ցաթիկեց, զլիարկը դուրսն անցուց եւ դամենքը մերժեց, ըսելով

— Ա՛հ, միթէ ա՛յդպէս վարուելու էիք իմ հետս . . . ա՛յդպէս ընդունելու էիք հինաւուրց բարեկամ մը . . . մնաք բարով, ալ պէտք չէ ինձ ձեր հարսանիքը . . . ամենքնիդ ալ ապուշ էք :

Չայս ըսելով Պարոն կռանսէնֆ հեռացաւ . ամբողջ ընկերութիւնը ետեւէն աղաղակելով, եւ նորատի հարսը ուրախութեանէն ցաթիկելով կը պոտար :

— Ա՛հ, ի՛նչ երջանկութիւն . . . օ՛՜՜՜՜ ֆ աղատեցանք . . . միշտ կուլ կը վնասէր այդ ծերուկը, իրեն հետ պարելու ձանձրոյթն ալ չպիտի ունենամ :



ԳԼՈՒԽ Է .

ՊԱՐՈՆ ՏԱՌՏԱՌԻ ՄԵԿ ԽԱՐԳԱԽՈՒԹԻՆԸ

Պարոն կռանսէնֆ երթալուն պէս, քաղքին անտեսը՝ պարոն Տառտառ հասաւ : Սա միշտ զուարթ, միշտ փառվառն, միշտ շատախօս, ճակալն քրտինքը սրբելով եկաւ, եւ բոլոր ընկերութեան ձեռք տալով կըսէր,

— Ահաւասիկ եկայ . . . յուսամ թէ պարահանդէսնիդ չը լինջու . . . այսօր երեք հարսանիքի գանուեցայ . . . հիմայ ժիկթթօի հարսանիքէն կուզամ . . . շատ սքանչելի էր . . . շատ զուարթ էր . . . փառած օղի կը խմէին . . . դիչերն ալ ի՛նչ աղւոր կը տեսնուի չարը, պարողներուն հոգի կուտար . . .

բայց ի՞նչ եղաւ Պարոն Կաանսէնֆին, հիմայ ճանքան տեսայ, սայրորդի մը պէս հայհոյելով կերթար. հայհոյելուն պատճառը հարցուցի իրեն, եւ թէ ինչո՞ւ համար այսչափ շուտով ձեր հարսանիքէն ետ կը դառնար, միայն մէկ բառ մը պատասխանեց. . . . ազդու մէկ բառ մը. . . . զոր չեմ կրնար կրկնել, թէ պէտեւ հրապարակային է: Յետոյ կատաղիի մը պէս հեռացաւ. . . . ուստի ես ալ զինքը կեցնել յարմար չգտայեցի:

— Դատ աղէկ բրիք, մենք ալ բաւականէն աւելի ձանձրացեր էինք այդ պարոնէն, ամեն տեղ կը կուռի, ըսաւ Տիւֆիլէ: Ի՞նչպէս Թիկօթօի հարսանիքը ըմբացաւ:

— Օ՛ր, ո՛չ, տակաւին չըմբացաւ. . . . նորքա շատ ուշ պարել կուզեն. . . . բայց ես ալ աղւոր խաղ մը խաղացի իրենց. . . . փեռին հետ համաձայնելով. . . . հա՛, հա, հիմայ ո՛րչափ պիտի բարկանայ գիտե՞ք:

Էյ մտիկ ընենք տա խաղը. . . . պատմէ՛ ուրեմն Պարոն Տառտառ:

— Այո՛, այո՛, պատմէ՛ տա խաղը:

— Դատ աղէկ. . . . մտիկ բրէք: Երեւակայեցէք անդամ մը, Պարոն Թիկօթօ՝ փեսան զիս մէկդի քաշելով ըսաւ, « Պարոն Տառտառ, դմեղ ասանկ ուշ խաղցնելուն ալ կը ձանձրանամ. . . . սիրտս յուզման մէջ է, սէրս կը բորբոքի, քանզի վերջապէս՝ կը հասկնաք. . . . բայց կնոջս հետ խօսելուս պէս, կուզան մեզ կը շրջապատեն, վախնալով որ չփախցնեմ զինքը, բոլոր ասոնք կնոջս ալ ձանձրալի են. . . . քանզի կը հասկնաք. . . . նա ալ ինձ համամիտ է, սիրոյս համապատասխանել կուզէ. . . . ուստի անաւասիկ իմ երեւակայածս. թեւերնիդ կառնէք կիսն, պարահանդէսին մէջ իրեն հետ կը շրջապայիք. . . . ձեզմէ չեն տարակուսիր, ձեր ետեւէն չեն դար. յետոյ խմելու կերթաքի պէս ցուցնելով, շուտով սանդուխէն վար կիջնաք եւ իրեն հետ կը մեկնիք ու զինքն իմ տունս կը տանիք. ինքն իմ բնակութիւնս չգիտէ, զոր յատկապէս երկուքնուս համար վարձած եմ. . . . բայց դուք գիտէք ուր ըլլալը. . . . Ռէ Ռիկօլ փողոց թիւ 18 երկրորդ յարկ. զխոմամբ բանալին դրան վրայ ձգած եմ, մինակ կինս դուռնէն կը ձգէք: Ինքն առանձին վեր կեցնէ. . . . կընդունի՞ք. . . . կը հաւանիք այս ծա-

սայութիւնն ինձ ընել » — Սիրով եւ հաճութեամբ, պատասխանեցի Թիկօթօին, որ ըսաւ « Ես քիչ մը դեռ եւս հոս կը կենամ, որպէս զի գործին կցորդ չկարծեն զիս ալ. . . . հա աղէկ միտքս եկաւ, որպէսեւ կինս տուն կը տանիք, կաղաչեմ հաճեցէք նաեւ սա պղտիկ Յուսնիքէն ալ տունը տանիլ. . . . Տիշդ երկու ժամ է, խեղճին փորը կը ցաւի ու տուն երթալ կուզէ, բայց խեղճ սղան վեց տարեկան է, դիշեր ատեն մինակ չձգուիր, ես ալ չուզեցի որ իր եղբայրը հարսանիքիս հրաբաւիրեմ, որ հրշէջ է, քանզի սրիկային մէկն ըլլալով ամուսինները կը ծաղրէ. . . . կըհասկնա՞ք, հիմայ որ ես ալ ամուսնացելոց դասը կը մտնամ, չեմ ուզեր որ գէշ զրուցեն անոնց: — Դատ աղէկ, ըսի իրեն, բայց ո՛ր կը բնակի այդ Յուսնիքէն:

— Եղբորը քով. . . . միեւնոյն փողոցը, իմ բնակութենէս երկու դուռ ասդին, ձեզի ձանձրութիւն մը չէ կարծեմ:

Մտանց ընդունեցի այս առաջարկը: Թիկօթօ վազեց կընկանը իմացուց. յետոյ ես ալ դացի թեւս ներկայացուցի իրեն, իրերե թէ պարահանդէսի սրահին մէջ պտոյտ մ'ընելու պատրուակաւ: Կինը ժպտելով ընդունեց. . . . քիչ մը շրջապայեցինք. . . . ես ըթխ տակէն կը խնդայի խաղալիք խաղերնուս համար. . . . գիտէք որ ես ասանկ դաւեշտները կը սիրեմ: Վերջապէս՝ պատեհ առիթ մը գտնելով սրահէն դուրս ելանք, սանդուխէն վար իջանք, վարը խեղճ Յուսնիքէն տեսանք, որ փորը ըրունած մեզ կ'սպասէր. անմիջապէս կամացուկ մը փախանք: Յիշեալ փողոցը հասած ատեննիս արուած հրահանգին համեմատ պէտք եղածը կատարեցի եւ հարսին ըսի, « անաւասիկ այս տան մէջ կը բնակի ամուսինդ, երկրորդ յարկն ելէք, բանալին դրան վրայ է, պատկեցէ՛ք, ինքն ալ հիմայ կուգայ զձեզ կը գտնայ »: յետոյ Յուսնիքէն ալ իր դուռը ձգելով ըսի « գիտես դու քու բնակութիւնդ, զնա պատկէ »: Ես ալ ձանձրայ ելլելով հոս եկայ. . . . հա՛, հա, հա, հիմայ ուրիշները հարսը պիտի փնտռեն, պիտի կարծեն թէ իմ անձիս համար փախցուցի զինքը. . . . հա՛, հա, հա. . . . յուսամ թէ աղէկ աշխատեցայ. . . . քիչ մը զովանալու եմ:]

Ամենքը Պարոն Տառտառը ծափահարեցին, իսկ գեղեցիկն Լօռէթ ըսաւ,

— Ես ժիկոթօն հարսին պէս չէի ընէր . ես չեմ ուզեր որ զիս փախցունեն , ես շատ ուշ պարել կուզեմ , զիտեմ ատի հաճելի չէ Տիւֆիլէին , սակայն ինչո՞ւս պէտք :

— Զարմանալի է ըսածդ , ինչո՞ւ անհաճոյ պիտի ըլլայ , ընդհակառակն ես իմ կնոջս զգացմանցը կցորդ եմ :

Գարձեալ ծախահարեցին , յետոյ ամեն մարդ պարել կը խորհէր , քանզի այս զանազան արկածները միշտ պարահանդէսը կընդմիջէին , տիկնայք ըրած կորուստնին լեցնել կուզեն :

Բժիշկը զինքը շրջապատող խաժամուժին մէջ , կլորիկ խարտեաչ կին մը տեսաւ , հաստաբազուկ բայց խիստ սպիտակ մարմին մը , պզտիկ ոտքեր , ամենագեղեցիկ սրունքներ եւ թամբերը լեցուն , զոր չէր պահեր , եւ ընդհակառակը պարած ատեն շրջազգեստը անանկ մը վեր կը ժողվէր , որ կարծես վըտակէ մը պիտի ցաթիկէ : Բժիշկներն ընդհանրապէս դեղեցիկ սրունքի սիրահար են , իրաւունք ալ ունին . ուրիշ խել մը հըրապոյրներէ մարդ կրնայ խաբուիլ , բայց ասկից՝ ո՛չ այնչափ : Ուստի այս գիրուկ կլորիկը պարի հրաւիրեց , կինն ալ ընդունեց զայն , ըսելով

— Իրաւ սա պզտիկ Պլէզէն հրաւիրեալ էի , սակայն ինչո՞ւս պէտք , ձեզի հետ պարելն աւելի կը սիրեմ , վասն զի աշտոր ոտքերը կը քրտնին . . . կըհասկնամք քանի՛ պարէ այնչափ սաքին հոտը կը սաստկանայ :

— Ես դձեզ կրնամ հաւատտել տիկին , որ ինձի հետ այդպիսի անհաճոյ բան մը չպիտի զգաք :

— Կը հուատամ . ասկէց զատ յայտնի է . . . ընդհակառակը շատ աղէկ կը հոտիք , միթէ անուշ հոտ կը գործածէ՞ք :

— Ո՛չ , միայն դաշիինակիս վրայ քանի մը կաթիլ փորթու գալի ջուր սրսկած եմ :

— Բայց վերջապէս պզտիկ Պլէզի ոտքերէն աղէկ կը հոտի . . . հա , ահաւասիկ ինքն ալ : Կը ցաւիմ , Պլէզ , բայց պարոնը հրաւիրեց :

Պատանին Պլէզ , բարի տղայ էր , ատանց սրդողելու հեռացաւ :

Գատտիլ մը սկսեց . Տօքթէօնը պարած ատեն ընկերոջը հետ

շատ մը խօսեցաւ , որուն հաճոյ էր : Առաջին ձեւէն ետքը Տիւկին Թռիքու կոչուիլը , ամուսինն արջառի վաճառական ըլլալը , դրեթէ շարունակ իր առեւտուրին համար ճանապարհորդելը , եւ այս բանն իրեն ճանճրոյթ պատճառեցն իմացած էր . քանզի իր այս առանձնութիւնը անջրպետ մը կը բանար իւր գոյութեանը մէջ :

— Եւ միթէ պարոն Թռիքու այս հարմիքին ներկայ չէ՞ , հարցուց Տօքթէօնը :

— Ո՛չ , դարձեալ Նորմանտիա դնաց եղջիւրաւոր անասնոյ համար . իր խօսքին նայելով կարծես թէ այդ տեսակներն միայն այդ երկիրը կը գտնուին , սակայն ինձի անանկ կուգայ թէ այնչափ հազուագիւտ բան մը չէ :

— Գիտէ՞ք որ այդ խօսքին մէջ մասնաւոր նշանակութիւն մը կայ :

— Հա՛ , հա , հա . . . չար . . . ողջել կուղէք զիս :

— Կը խոտովանիմ որ ասկից աւելին չէի ուզէր . . . այնպէս գեղեցիկ սրունք ունիք , որուն նմանը չկայ պարահանած գէսին մէջ :

— Իրա՞ւ . . . բայց ճշմարիտ է , իմ ոտքերս հարսին ոտքերէն մանր են , եւ կը պարծիմ . . . սրունքս զիտեցի՞ք :

— Եկածէս ՚ի վեր միշտ աչքս հոն էր :

— Ա՛յ նենգաւոր . . . բոլոր այս կանայք կը սնդեն թէ պարած ատենս շատ կը սոթտուիմ ,

— Ճշմարիտ՝ նախանձութենէ կըսեն , քանզի քեզի չափ դեղեցիկ ու լեցուն թամբեր չունին :

— Ա՛հ , թամբերս ալ տեսեր է . . . ասոր հետ մէկտեղ մարդ իր գեղեցիկութիւնը պատիւ համարելու է իրեն :

Բժիշկը կը մտածէր թէ այս անվրէպ սկզբունքով կրնար ըլլալ որ մինչեւ եղեռնական ատեանը հրաւիրուի մարդ , բայց ինչո՞ւն պէտք որ Տիւկին Թռիքուին ըսէ զայս . այնպէս մը հետաքննած չէր : Ընդհանուր աչխոյժ մը տիրեց , պարը չափազանց գրգռ մը ստացաւ , եւ սոխ դեռ եւս կրկնապատկելու համար՝ նուագածուք՝ իեսին հրահանգին համեմատ չէին վերջացներ քառակը , որ արդէն կէս ժամէ ՚ի վեր կը շարունակէր : Ա՛հ

քանի պարողներ չկարենալով այլ եւս շարունակել մէկդի քաշ-
 ւած էին , սակայն ուրիշներն անմիջապէս կը յաջորդէին նոցա .
 Տիկին Թռիքու ոտքը ետ չէր առնէր , եւ ընկերոջը կըսէր միշտ
 թէ կուզէր առանց կենալու մինչեւ փառու պարել , սակայն
 բժիշկը որ ալ չէր կրնար , հասկցաւ որ այն գիրուկ թամբերը
 շատ ջղոտ էին : Յանկարծ անսաւ որ դէմերնին ուրիշ զոյգ մը
 եկած էր , ինքնիրեն կը մտածէր թէ ո՞ւր տեսած է այս նորեկ
 պատանին , որ պարած առին կարծես շնորհ կը խնդրէ , եւ չէր
 կրնար յիշել , սակայն քովէն անցած ատեն ժպտելով մը ըսաւ սա ,

— Ես եմ պարոն ձեր կառապանը . . . եկան զիս պարի
 հրաւիրեցին , ես ալ ի՞նչ ընեմ , ընդունեցի . . . խիստ այլա-
 զան հարմիրք մ'է այս :

— Հա՛ , դուք էք՝ կառապանս . . . ես ալ՝ սա մարդը
 ճանչնալու եմ կըսէի ինքնիրենս . . . շատ աղէկ տղաս . . .
 պարէ՛ , ուղածդ ըրէ . . . միայն թէ . . . մեղք որ երիվարդ
 ալ պարել չգիտէ , վստահ եմ որ եթէ նա ալ գիտնար , պիտի
 հրաւիրուէր :

— Ա՛յ , այդ հոգս չէ , աղեկ կը խնամեն , աղեկ կուտէ :

— Աղեկ որ սա Մէուլիւշէի հարսանիքն եկեր ենք : Բայց
 թշուառական , սա դատուին ալ չլմնցաւ գնաց . . . ակումներս
 իրար կը զարնեն . . . ընկերս միեւնոյն զորութեամբ կը շարու-
 նակէ : . . . կարծեմ այս կինը վերջը չպիտի բերէ , զիս պիտի
 հիւանդացնէ : Իրաւ՝ այնչափ աղեկ չխօսիր , սակայն ինքն ա-
 ղեկ է : Ամուսինն եղջիւրաւոր անասնոց հետ ժամանակ անցը-
 նելու համար ծնած ըլլալու է , կըսէր ինքնիրեն բժիշկը :

— Յանկարծ աղմուկ մը լսուելով այս մշտնջենական քատ-
 ուիլը վերջացաւ :

Այս անգամ աղմուկն արեւցողաց կողմէն լսուեցաւ : Տօք-
 թէօքը պատեն առիթ համարելով զայս , ըսաւ Տիկին Թռիքուին ,

— Սա տեղ կուի կայ , եկուք նայինք ի՞նչ է :

Գեղեցիկ սրնգաւոր կինը՝ պարը շարունակել նախատեժար
 պիտի համարէր , սակայն բժիշկը առանց նորա պատասխանին ժա-
 մանակ ձգելու , քաշելով տարաւ զայն :

Բարձրահասակ երիտասարդ մը կատղած կերուար Պ. Տառ-
 սառի դէմ , որ հայր Մէուլիւշէի սեղանը նստած միշտ կը խոսէր :

— Ա՛ա՛յ , Ժիկօթօն է , պօռացին պարողները՝ անոր մօտե-
 նալով :

— Բայց իւր հարսանիքը թողուվ հոս ի՞նչ գործ ունի :
 Ժիկօթօ իւր այցելութեան պատճառը յայտնեց անմիջապէս
 դիւահարի մը պէս պօռալով ,

— Բայց ամենն այս չէ . . . թշուառական . . . իմ կինս
 պէտք է ինձ . . . ես կինս կուզեմ . . . ես ձեզի յանձնեցի
 զինքը , Պարոն Տառտառ , որպէս զի մէջերնիս երեւակայած
 վարպետութիւնը կատարէք , ի՞նչ ըրիք զայն :

— Զեր ըսածին պէս ըրի , ինչպէս որ մէջերնիս յարմարած
 էինք . . . չեմ հասկնար ձեր բարկութիւնը . . . միթէ կար-
 ծէք որ ինծի համար պահեցի ձեր կինը , ըսել է թէ դուք տա-
 կաւին զիս չէք ճանչնար . . . Աստուած չընէ , ես անանկ բա-
 ներու անկարող եմ :

— Բայց վերջապէս ո՞ւր տարիք , ո՞ր սատանին ծակը խօ-
 թեցիք կինս . . . մենք մէջերնիս այնպէս որոշած էինք , որ
 զինքն իմ բնակարանս պիտի տանէիք , Ռիկօյ փողոցը . . .
 հիմայ ես հոն դացի . . . բանալին դրան վրայ էր , սակայն սե-
 նեկին մէջ լոյս չգար . . . ըսի ինքնիրենս . « կարելի է ամըչ-
 նալէն՝ մութը պառկեր է կինս . . . արդարեւ անկողնոյս մէջ
 մէկը կը քնանար , առանց ձրագ վառելու հանուեցայ , միշտ
 կնոջս ամօթխածութիւնը չվիրաւորելու համար . . . պառկեցայ
 անկողինս . . . բայց հոն ի՞նչ գտնամ աղեկ . . . պզտիկ տը-
 դայ մը , մանուկն Ֆուռնիքէն . . . որ անկողնոյս մէջ անհա-
 ճոյ բաներ ըրեր էր : «Տղայ , ի՞նչ բան ունիս հոս » ըսի . « Ես
 կարծէի որ մեր տունն եմ . . . Պարոն Տառտառը բերաւ զիս
 հոս , վարէն ձգեց , գնա՛ , վեր ե՛լ , բանալին դրան վրայ է ,
 ըսաւ , ես ալ դիտէի զայս , քանզի եղբայրս բանալին միշտ վը-
 րան կը ձգէ » պատասխանեց . բայց կի՞նս , ըսի իրեն , հոս
 պիտի գար ինչո՞ւ չկայ , ասոր վրայ « ես անանկ բան չտեսայ
 ըսելով տղան քնացաւ : Օ՞ն , Պարոն Տառտառ , ի՞նչ ըրիք կինս
 . . . ես իմ կինս կուզեմ . . . քաղաքապետին հրամանաւ իմ
 է նա . . . կը հրամայեմ որ հիմայ ինծի յանձնես :

Երկրին գործակատարը ճակատը կը քերեր , եւ սխալած կը
 կարծեր , յանկարծ ձեռքը ծունկին զարնելով պօռաց ,

— Այո՛, հիմայ միտքս եկաւ . . . այո՛, անպատճառ այսպէս ըլլալու է : Էյ՛ անհող եղիք ժիկօթօ , հասկցայ հիմայ կընտը ո՞ւր ըլլալը . . . կորսուած չէ . . . միայն թէ սխալմունք մ'ըրած ըլլալու ենք , ուղղակի Ֆոլոնիքէի եղբօր տունը տարած ըլլալու եմ . . . ուրիշ բան չէ :

— Հրչէլին տո՞ւնը . . . իմ կինս հրչէլին տունը պառկելու տարեր էք . . . ա՛յ թշուառութեանօ . . . եւ կըսես որ անհող ըլլամ . . . բայց կինս վտանգի ենթարկեցիք պարոն , գարչելի է այս :

— Ձէ՛, չէ՛, չէ՛, մի՛ խոտիք , հրչէլը տեսնելով որ իր եղբայրը չէ քովը պառկողը , ձեր կնոջն ըսած ըլլալու է . «Մի՛ խըլըրտիք . . . սխալմունք կայ . . . եւ անտարակոյս քովէն ելած ըլլալու է :

— Որչափ որ ալ մի՛ խըրտիք ըսած ըլլայ իմ կնոջս . . . ասոր հետ մէկտեղ՝ այդ հրչէլը սրիկային մէկն է : Ա՛հ , խեղճ Թօանօն . . . եթէ անվթար ձեռքս անցնի շատ բաղդաւոր պիտի համարիմ ինքզինքս . . . շուտ հետս եկէք . . . եւ եթէ կինս վտանգեալ ըլլայ , դձեղ աղեկ . . .

— Ի՞նչպէս , ի՞նչ ըսել կուզէք . . . միթէ գիտնալով , գիտնա՞մք ըրի . . . միթէ ամեն օր մարդ չը՞ սխալիք :

— Ո՛չ պարոն , երբ խնդիրը հարսի մը համար է՝ քիչ մ'ուշադրութիւն կըլլուի . . . օ՛ն շուտ երթանք :

Պարոն Տառտառ խոթոտողէմ կերպով մը բարձրահասակ ժիկօթօի հետ գնաց . իսկ ժիկօթօ թեւն առնելով դայն կ'ստիպէր . հարանեւորներէն մէկ քանի երիտասարդք այս պատահարին վախճանը հասկնալու համար՝ միատեղ գացին , եւ մնացողներն ալ կը պօռային ,

— Խեղճ ժիկօթօ . . . գիտէ գիտուն եկածը . . . քանզի այն հրչէլ Ֆոլոնիքէն վերջին ծայր խորամանկ հրապուրիչ մ'է :

— Հարսնիքին հրաւիրած չըլլալուն համար՝ ժիկօթօին ռիս պահած էր :

— Ա՛յ չար սատանայ , ըսաւ Տիւֆիլէ . եթէ ասանկ բան մը ինձ պատահեր . . . ի՞նչ պիտի ընէի :

— Իրաւունք ալ ունիք փեսայ , միմռաց որմնաղիւր վարպետը , որ խմելով խմելով ալ չէր կրնար աթոռէն ելնել . մարդ

մը . . . եթէ մարդ է . . . անա այսպէս վարուելու է :

— Եւ սակայն , ըսաւ փեսան , ես վախնալու չէի . . . քանզի իմ կինս քաջասիրտ է , կրնայ հրչէլ մը յաղթել :

— Ես անանկ բաներէ չեմ վախնար , ըսաւ Լօռէթ , բայց վերջապէս յանցանքը ժիկօթօին է , թող ձգէր որ կինը պարահանդէսին մէջ պարէր , վերջն ալ միատեղ հանգիստ տուն կերթային :

— Իրաւունք ունի հարսը , ըսաւ տիկին Թօիքու , ասկից զատ աղեկ նկատած եմ , որ երբ մարդիկ նենդութիւն մ'ընել ուզեն , մտքերնուն անցածը իրենց գլուխը կուգայ :

Սրչալոյսը ծագելու վրայ էր , եւ անվերջանալի քատախը կրները բորբոքած ըլլալուն , հոն գտնուած փոքրիկ նաւակներով լճին մէջ շրջագայիլ ուղեցին , երիտասարդք նոցա բաղձանացն հաւանիլ փութալով , գեղեցիկն Լօռէթ ուղեց որ Ֆէլիքս իւր մակոյկին թիալար ըլլայ , վասն զի ցորեկը Տիւֆիլէ մակոյկալար ըլլալով , մաղ մնացեր էր որ նաւակը շրջէր :

Տիկնայք անմիջապէս նաւակները մտան , սակայն շատ մեծ չըլլալով , հետերնին շատ քիչ այր մարդ կար : Տիւֆիլէ որ նաւակի մը մէջ տեղ բռնելու համար շատ ուշ հասած էր , ջրին եղերքը մնաց , բայց բոլոր անցնողներուն կը պոռար ,

— Քիչ մը տեղ բացէք ինձի . . . գրաւ կը գնեմ որ դուք քայած ատենիդ նաւակնիդ կը ցաթկեմ :

— Ես գրաւ կը գնեմ որ չես կրնար , պատասխանեց Հարսին եղբայրը , որ հաստարազուկ ապուշին մէկն էր , եւ հօրը պէս իմել ուղեւուն քիչ մը գինովցած էր . եթէ կարող ըլլաս , առաւօտուն ձկնապուր մը կը կերցնեմ :

— Լաւ :

Տիւֆիլէ անմիջապէս իր աներցագին վարած նաւակը ցաթկեց , որուն մէջ չորս կին եւ Տիւֆիլէի ձերուկ մէկ հօրեղբայրը կար : Իրաւ փեսան նաւակը մտաւ , սակայն գրեթէ ուղղակի ձերուկուոյն ուսերուն վրայ ինկաւ , որ զանի չընդունելու համար ետեւին վրայ ծռելով եւ սակայն այս շարժումն ըրած ատեն Հաւասարակշռութիւնը կորսնցնելուն՝ լիճն ինկաւ :

— Ահ , Աստուած իմ , Միտօ հօրեղբայրս խեղդեցի , պօռաց Տիւֆիլէ , լողալ չգիտէ , ջուրէն հանելու եմ զինքը :

Ֆեսան անմիջապէս, միայն իւր բարեարտութենէն զատ
 ուրիշները մտիկ չընելով, անոր ետեւէն ջուրը նետուեցաւ եւ
 ձուկերուն մէջ հօրեղբայրը կը փնտռէր: Բայց չփոթութիւնը
 ամենուն վրայ տիրեց եւ օգնելու համար՝ նաւակներուն ամենքն
 ալ հոն հասան. Պ. Մէռլիւշէ, որ ձեռքը ցող մը բռնած ջուրին
 եզերքը կեցած էր, ձեռքի ցողն անոր երկնցնել ուզելով՝ ար-
 դէն երկու անգամ եղբայր Միոսն ջուրին տակն հրեր էր:

Բարեբաղդաբար ուրիշ աւելի ճարտարներ ձեռք երկնցու-
 ցած էին Տիւֆիլէի, որ հօրեղբորն հետ ջուրին երեսը տես-
 նուեցաւ, որուն անդրափարտիքին յատակէն բռնած էր: Ջու-
 րին եզերքը նետեցին դայն, որ հօրեղբորն զգեստը չէր թո-
 դուր. հայր Միոս ինքզինքին դալով օղի խնդրեց, եւ Տիւֆիլէ
 պոռաց,

— Հոգ չէ, ձկնապուրը ես վաստկեցայ, վասն զի նաւակը
 ցատկեցի:

— Այո՛, բայց հօրեղբայրդ ջուրը նետեցիր:

— Ի՞նչ չիտա ունի, ծովու բաղնիք մ'ըրած եղաւ:

Այս դէպքը պարահանդէսը վերջացուց, վասն զի փեսան
 ջուրէ ելած մուկ դարձած ըլլալուն, զգեստը չորցնելու էր:

— Զարմանալի է, ըսաւ գեղեցիկն Լօռէթ իւր ամուսնոյն,
 այսօր էչութենէ զատ ուրիշ բան ըրած չունիս . . . եթէ
 այսպէս շարունակէ վերջերնիս ի՞նչ պիտի ըլլայ:

Տիւֆիլէ իր կաթ եղբօր ձեռքը սեղմեց ըսելով,

— Յուսամ թէ՛ փարիզու մէջ մեզ կուգաս կը գտնաս, ութ
 օրէն խանութն ենք:

— Պարոնը խօստացաւ ինձ, ըսաւ հարսը ժպտելով:

— Ահ, ուրեմն Լօռէթ, կը տեսնա՞ս, շատ ուրախացայ:

Ֆէլիքս խօստու մը կրկնեց եւ Տօթէօն Ժուպէնը կը
 փնտռէր՝ հետը մեկնելու համար: Բայց արդէն նա Տիկին Թը-
 ուիքուին հետ չուէր էր, եւ երբ երկուսսարդն կառքն ուղեց,
 իրեն խնայուցին թէ կառավարը այնչափ գինովցեր է որ ճաշա-
 րանի սենեակներէն միոյն մէջ պառկեցնել պէտք է եղեր:



ԳԼՈՒԽ Ը.

ՆՐԵՔ ՄՕՐԵՂԲՈՐՈՐԻՒՔ

Պ

Տիւֆիլէ գեղեցիկ Լօռէթի հետ ամուսնանալէն 'ի վեր'
 մէկ քանի օր անցեր էր, Ֆէլիքս մօրեղբօր տունը գացած չէր,
 սակայն եւ այնպէս նորա օգնութեան պէտքն զգաց, վասն զի
 պարագեր ըրած էր, եւ իր վաճառականին քով վաստկած 1500
 Փրանքով չէր կրնար զանոնք վճարել: Բայց չէր համարձակէր
 իւր տագնապը մօրեղբօրը խոստովանելու, որ իրեն հետ այն-
 չափ խստիւ կը վարուէր, եւ ամեն տեսնելուն երկար բարակ
 քարոզ կը խօսէր:

Սակայն առտու մը դերձակը, ճերմակավաճառը եւ կօշ-
 կակարն այնչափ թշնամանեցին, որ Ֆէլիքս պարտաւորեցաւ
 Պ. Մօնլօռանի տունը երթալու համար ճանբայ ելլալ, բայց
 փողոցը Տօթէօն Ժուպէնին պատահեցաւ, զոր Մէռլիւշէի
 հարսանիքէն 'ի վեր տեսած չէր: Այս պարոնները իրարու ձեռք
 երկնցնելով մօտեցան:

— Բարի լոյս Տօթէօն, շատ ուրախ եմ ձեզ պատահե-
 լուս:

— Իս ալ նոյնպէս սիրելի Ֆէլիքս, նախ՝ քանզի քեզ տե-
 սած ատենս մեծ հաճոյք կ'ըզամ, երկրորդ՝ կուզէի ձեզի չը-
 նորհակալ ըլլալ՝ ձեր կաթեղբօր հարսնիքին տանելով ինձ պատ-
 ճառած հաճոյքին համար:

— Իրա՞ւ, աղէ՞կ էր ձեր այդ դրօսանքը:

— Կարծես թէ անանկ բան մը քնաւ տեսած չըլլայի . . .
 ճշմարիտ խնդայէն ճաթելու բան էր. սա գիրուկ կորրիկին հետ
 դիւահարի մը պէս պարեցի, ջուրին վրայ շրջադայեցի, իրաւ
 փեսին պէս ջուրը չինկայ, բայց անոր տեղ սիրոյ յայտարա-
 րութիւն մը փտանգեցի, որ դէշ ընդունելութիւն չգտաւ . . .
 վերջապէս՝ կառապանին հետ դէմ դէմ պարեցի, որ իրաւ ամե-
 նեւին ըրած բանս չէր . . . կարծեմ մարդ շատ տհաճ ըլլալու
 է, այդ երեկոյթէն դո՛ւ չըլլալու համար . . . հա՛, միայն սա

հասկնալ կուղէի թէ ի՞նչ եղաւ խեղճ ժիկօթի արկածին վախճանը, որ կինը չէր գտեր :

— Գտաւ . . . արտաքին երեւոյթէն խաբուելով հրէջին տունը մտած էր, բայց մարդը թուրին վրայ երդուընցաւ որ արթնցած չէր : Աղէկ միտքս եկաւ, ի՞նչպէս տուն դարձաք, մեր կառքը չգտայ ես :

— Անտարակոյս, գիտնալով իմ դէմ դէմիս՝ կառապանը վերջին ծայր գինով էր, կառքն ես ինքն վարեցի Տիկին Թռիքու յաղթանակս իր տունը տանելու համար, բայց նաեւ պանդուկապետին ալ ըսի որ կառապանը դայ այս ինչ տեղը գտնայ՝ Դուք ի՞նչպէս, ոտքով տուն գացիք :

— Այո՛, հարսնիքին մէջ գտնուող խել մը երիտասարդաց հետ, բայց որովհետեւ այս պարոնները ճանքուն վրայ ամեն պատահած դռները բաղխելով, խանութները զարնելով, վերջապէս՝ դժոխային ժխոր մը հանելով կ'ըբօսնուին, իրենց ընկերութիւնն ինծի գէշ երեւցաւ եւ զիրենք թողուցի :

— Հիմայ ձեր մօրեղբօր տունը՞ կերթաք :

— Այո՛, հոն կերթայի :

— Ես ալ հոն կերթամ, եկէ՛ք միատեղ երթանք :

Ճէլիքս փոխանակ բօխչիկն մատուցած թեւն ընդունելու հառաչեց եւ տեղէն չչարժեցաւ :

— Բայց ի՞նչ կայ, պօռաց բօխչիկը, տխուր կերեւնաք, դուք այսպէս չէիք : Արդ՝ որովհետեւ առանց նոր պատահարի մը չկրնար մարդ իր բնոյթը փոխել, ըսէ՛ք ինձ, ի՞նչ եղաւ ձեզի, եւ ի՞նչ է ձեր յառաջանաց պատճառը :

— Ե՛հ, Տօքթէօն նոր բան մը չէ :

— Վերջապէս բան մ'ունենալու էք, պատմեցէ՛ք ինձ, եթէ անձնական հիւանդութիւն մ'է կը բժշկեմ իբրեւ բօխչի, եւ եթէ բարոյական բան մ'ըլլայ, դարձեալ այն կերպիւ կը ճգնիմ միտքարեւ ձեզ :

— Ուրեմն Տօքթէօր, պարտքեր ունիմ եւ դրամ չկայ որ վճարեմ :

— Հասկցայ, ձեր մօրեղբօր այցելութեան պատճառն ամենապարզ բան մ'է, ինքը միլիոնատէր է, պարտքերնիդ տալու է : Գատեմ, նախ՝ պիտի յանդիմանէ, բայց վերջապէս

պէս պիտի վճարէ, վասն զի միշտ անով կրնայ վերջանալ :

— Ահա հոտ է իմ տարակոյսս ալ : Մօրեղբայրս զիս չը սիրէր . . . վասն զի անարատ գինի կը խմեմ, թէ երբեմն պիւրեար կը խաղամ, եւ թէ ամեն գիշեր ժամը տաանին չեմ պատկիր . . . բայց ճշմարիտ Տօքթէօն՝ անկարելի է ինձ մօրեղբօր որդւոցս պէս խելօք ըլլալ :

— Եր հաւատամ, ինձ ալ անկարելի է, եւ քիչ մ'ալ բացայայտ ըսեմ, ես անանկ խելօք ըլլալն ալ չեմ սիրեր, եւ եթէ ըլլայի, շատ կը վշտանայի :

— Մօրեղբայրս արդէն անգամ մը պարտքերս վճարեց, բայց երդուընցնելով զիս, որ անգամ մ'ալ պարտք չընեմ :

— Եւ միթէ երիտասարդներն երդուընցնելու է, երբ խելաճաս մարդիկն իսկ իրենց երդմանցը մէջ այնչափ յաճախ կը վրեպին :

— Մօրեղբայրս՝ որ տարօրինակ մարդ մ'է, միշտ իւր խօստումը պահած է. ուստի ուրիշներէն ալ նոյն հաւատարմութիւնը կը պահանջէ :

— Եթէ մեր առաքինութիւններ ունենալուս համար, մեզ մերձեցողաց ամենուն վրայ ալ նոյն առաքինութիւնները պահանջել հարկ ըլլար, շատ քիչ բարեկամ, նաեւ շատ քիչ ծանօթ պիտի ունենայինք :

— Վերջապէս ես կը վախնամ որ մօրեղբայրս չյանդիմանէ զիս, եւ պարտքերս չվճարէ :

— Ուրեմն մեծկա՞կ դու՛մար մ'է պարտք :

— Հազար չորս հարիւր ֆրանք պարտք ունիմ :

— Հազար չորս հարիւր ֆրանք, բայց ատի ձեր մօրեղբօր համար ջնջին բան մ'է . . . անմիջապէս տալու է :

— Չեմ կարծեր որ անմիջապէս տայ :

— Ինչո՞ւ ձեր մօրեղբօրորդւոց չէք դիմեր ուրեմն : Երիտասարդաց մէջ մեծ հաճոյք մ'է միմեանց երախտապարտ մնալու Բայց գուցէ նոքա ալ դրամ չունենան :

— Ո՛չ, ունին, հայրերնին կուտայ . բայց կարգելու վատնել . ուրեմն այս կերպով ունեցեր կամ չունեցեր են մի եւ նոյն բանն է :

— Չարմանալի ընտանիք . . . վերջապէս այդ պարտքերն

այսօր վաղը վճարելի՞ք են . . . թէ չէ տակաւին ժամանակ ունիք :

— Եթէ միայն դերձակն ու միւս վաճառականներն ըլլային թերեւս քիչ մ'ալ սպասէին . բայց դժբաղդաբար հազար ֆըրանքի տոմսակ մը տուած եմ ձեր հրէի մը , որ եօթը հարիւր ֆրանքի , եւ չգիտեմ որչափ խուրձ սիկառի փոխարէն է . բայց որչափ ալ գարշելի էին . . . պարտամուրհակիս վճարումը պահանջեց կառավարութեան միջոցաւ . վճառելը մ'արաւ . . . վերջապէս կրնայ զիս ձերբակալել տալ . . . եւ եթէ երեք օրէն չվճարեմ , սպառնացաւ որ բանտարկել տայ զիս :

— Այ թշուառական , ուրեմն ստիպողական է : Զիս մտիք բրէք , սիրելիս Ֆելիքս , երթամ նայիմ մօրեղբայրնիդ ի՞նչպէս է : Կուզէ՞ք որ ձեր կողմանէ իրեն խօսիմ :

— Ահ , չէի համարձակէր ձեզ աղաչել , բայց մեծ ծառայութիւն մը ըրած պիտի ըլլաք :

— Բայց ինչո՞ւ քիչ մ'առաջ չըսիք . . . ես չեմ վախնար իրեն խօսելու , անանկ կատարեալ մէկու մը , որ կը պահանջէ թէ ուրիշներն ալ իրեն նման ըլլան : Հոգ մ'ընէք , ես ձեր դատը կը պաշտպանեմ , եւ վստահ եմ որ յաջողիմ : Եկէք , Պ. Մօնլօռանի տան գրեթէ դէմը գտնուած սրճարանն սպասեցէք , այս կերպով անմիջապէս իր պատասխանը կ'առնէք :

Այս պարոնները ճամբային շարունակեցին : Միլիոնատիրոջ տան մէկ քանի քայլ մնացած՝ Ֆելիքս սրճարան մը մտաւ եւ Տօքթէօռն ալ Պ. Մօնլօռանի տունը գնաց :

Ֆելիքս լրագիր մը կարդալ փորձեց , բայց շատ անհամբեր եւ կարգացածին ուշադրութիւն ընելու համար շատ մտադրաղ ըլլալուն , ամեն վայրկեան աչքը փողոցն էր : Յանկարծ Ֆելիքսին մօրեղբորդին տեսաւ , որ հօրը տունը կերթար : Ֆելիքս անմիջապէս Տօքթէօռն ըսածը յիշելով , « փորձենք անդամ մը . ասկից զատ մարդ իր տագնապը իրեն պէս երիտասարդի մը յայտնելէն վախնալու չէ » ըսելով ինքնին , սրճարանէն դուրս ելաւ , եւ փողոցին մէջ երկայնահասակ խարտեաշին ետեւէն վազեց ու կեցուց զայն :

— Բարեւ Ֆելիքսին :

— Վայ , դու ես Ֆելիքս , պատասխանեց երիտասարդն

Մօնլօռան՝ բաւական ցուրտ կերպով մը : Փոխանակ Հիմայ վաճառատունը գտնուելու , հոս ի՞նչ կ'ընես :

— Հաւանականաբար գործ ունենալուս համար եկեր եմ : Միթէ դու ալ մօրեղբօրս պէս քարո՞ղ պիտի խօսիս :

— Ո՛հ , ո՛չ , ասկից զատ ինչո՞ւս պէտք , կուզես աշխատէ կուզես մ'աշխատիր :

— Շնորհակալ եմ , բայց խնդիրը հօն չէ : Ինձի նայէ , կարողութիւն ունի՞ս :

— Ի՞նչ կարողութիւն :

— Ստակ ունի՞ս ըսել կուզեմ :

— Ստակ , անտարակոյս , ես միշտ ստակ ունիմ , միայն զի հայրս շատ անգամ կուտայ . գիտէ որ գէշի չեմ գործածեր եւ քեզի պէս յիմարութիւն չեմ ընէր :

— Ճշմարիտ է , կը խոստովանիմ որ ես քեզի պէս խելօք չեմ : Բայց ո՞րչափ բան ունիս :

— Ի՞նչ հետաքրքիր ես : Բայց շուրջ . . . այո՛ գոնէ երկու հազար հինգ հարիւր ֆրանք մ'ունիմ . . . երբ մարդ չը մտէ կրնայ ժողովել :

— Ստոյգ է : Օ՛հ Ֆելիքսին կրնա՞ս ինձի մեծ հաճոյք մ'ընել , բարեկամական ճշմարիտ ծառայութիւն մը մատուցանել . մեծապէս երախտապարտ պիտի ըլլամ քեզի :

— Ի՞նչ ծառայութիւն , նախ այդ ըսէ :

— Ստիպողական պարտք մը վճարելու համար հազար չորս հարիւր ֆրանք փոխ տուր ինձ . . . քիչ քիչ կը հատուցանեմ : Ճշմարիտ մեծ տագնապէ մը պիտի ազատես զիս :

Ֆելիքսին հեղնական նայուածքով մը հօրաքեռորդուոյն երեսը նայեցաւ , յետոյ խնդալով ըսաւ .

— Հի՛ , հի՛ , հի՛ . . . ճշմարիտ ատոր չէի սպասեր . . . զարմանալի բան , հա՛ , հա՛ , հա՛ :

— Երբ խնդալը լիննայ պիտի պատասխանես ինձ , այնպէս չէ՞ :

— Պատասխանը շատ դժուար բան չէ : Քեզի ստակ փոխ տալու համար նախ ես խենթ մ'ըլլալու եմ : Արդէն հօրս տուածները շուտով կը մտնես , ուրեմն չարժեք որ խմնիս համար ալ միւսներն ճանբան բռնես :

— Բայց նախ՝ մօրեղբայրս շատ ժամանակէ՛ ՚ի վեր ինձի ստակ չտար, եւ եթէ անգամ մը պարտքերս վճարած է, քեզի չվայլէր որ հիմայ ասանկ երեսխա տաս: Ուրեմն կը մերժես:

— Այո՛, դրայպէս:

— Շատ լաւ, ես ալ քեզմէ ասկէ նուազը չէի սպասեր:

— Ուրեմն ի՞նչ հարկ կար որ զիս ճանրէս վար դրի՞ր՝ աստանկ խօսք մ՛ընելու համար: Մնաս բարով Ծէլիքս, ճաշի երթամ:

Երկայնահասակ խարտեաշը հեռացաւ. Ծէլիքս ետեւէն նայելով ինքնին կըսէր,

— Այո՛, կը կասկածէի մերժելը . . . հիմայ փտահ եմ: Բայց այդպէս զիս ծաղրել . . . երբ իրեն կըսեմ թէ՛ նեղութեան մէջ եմ . . . ա՛հ, խիտ է, բարեսրտութիւն մը չյայտնէր այս . . . Ահաւասիկ գիրուկ Ատօլֆը, որ հօրը տունը նախաճաշի կուգայ . . . ինքը բարեգոյն սիրտ մ՛ունի . . . օ՛ն, թերեւս ասոր հետ յաջողիմ:

Ծէլիքս Ատօլֆին ճանրան կտրեց. Սա ձեռք երկնցուց Ծէլիքսին եւ բարեկամարար սեղմելով զայն ըսաւ.

— Ա՛, դու ես Ծէլիքս, երջանիկ Ծէլիքս . . . դու քու ուղածդ կընես, առտուընէ մինչեւ իրիկուն կ՛ըրօսնուս . . . շատ անգամ քու բաղդաւորութեանդ կը նախանձիմ:

— Սիրելիս Ատօլֆ, ըստ կարի կը զուարճանամ, ճշմարիտ է: Բայց այնչափ նախանձելի վիճակ մը չունիմ: Օրինակի համար հիմայ վրաս մէկ կուտ մը չկայ, եւ առանց ստակի ալ մարդ չկրնար զրօսնուլ: Ասկից զատ պարտքեր ալ ունիմ, հաղար չորս հարիւր Փռանք պարտիմ, որուն համար կը հալածեն զիս, կրնա՞ս փոխ տալ, ինձի մեծ ծառայութիւն մը պիտի ընես:

Ատօլֆ թոթվեց նորա ձեռքը եւ հառաչելով պատասխանեց,

— Նախ՝ այդ գումարը քեզի փոխ տալու համար՝ պէտք է որ ես ունենամ զայն, եւ ես հաղիւ հաղ երեք հարիւր Փռանք ունիմ. Հայրս ինձի Ծէլիսիէնի պէս ստակ չտար, անոր վատահոթիւն ունի, զանի կը սիրէ, եւ ամենեւին համար չը պահանջեր անկից: Մինչդեռ ինձի հետ շատ տարբեր կը վարուի, սնտուկս զտնուածը իրեն ցուցնելու եմ: Նրբեմն մէկ

քանի հատ հինգ Փռանքնոց կը պակսի. վասն զի Կլօրիա մը խըմելու կերթամ: Կլօրիան շատ կը սիրեմ . . . քիւռասօ . . . շառթօնօղն ալ շատ կը սիրեմ . . . Ա՛հ, շառթօնօղ սքանչելի բան է: Բայց ստակս պակսած ատեն խել մը սուտեր շինելու եմ, սա ալ կայ որ հնարելու մէջ ալ վարպետ չեմ: Ասոր համար եթէ ուղած գումարդ ունենամ ալ չպիտի կրնամ փոխ տալ, վասն զի երբ հաղար չորս հարիւր Փռանքս պակսի, այնչափ զօրաւոր սուտ մը չպիտի կրնամ շինել: Կաղաչեմ Ծէլիքս չնեղանաս. կը տեսնաս որ չուղելուս համար չէ:

— Չէ՛ բարեկամ, չէ՛ չեմ նեղանար, քանզի դու ալ ինձ պէս համարձակախօս ես:

— Եկուր միատեղ ճաշենք մեր տունը:

— Ո՛չ, հոն չեմ կրնար գալ:

— Ուրեմն մնաս բարով, գիտես ա՛, ուշանալու չգար:

Գիրուկն Ատօլֆ բաժնուեցաւ Ծէլիքսէն, որ ինքնիրեն կըսէր,

— Ասի ամենէն սիրելի է ինձ . . . եթէ կարող ըլլար ինձ ծառայութիւն մ՛ընել, փտահ եմ որ կընէր: Ահաւասիկ Վիքթօնէն ալ կուգայ, արդեօք իրեն ալ առաջարկեմ . . . ինչո՞ւ չէ: Մէկ մը որ սկսեցինք, պէտք է որ մօրեղբօրորդուցս ինձ նկատմամբ ունեցած բարեկամութիւննին հասկնամ:

Վիքթօնէն արագ կը քայլէր, եւ միշտ մտազբաղ կերեւնար: Ծէլիքս ասոր դէմն ելլալուն՝ Վիքթօնէն հրեց զայն, երբ սա ալ ըսաւ,

— Ի՞նչ, չճանչցա՞ր զիս:

— Ա՛, դո՞ւ ես Ծէլիքս. ներէ՛, չէի տեսնար . . . կը մըտածէի . . . որովհետեւ պօռսան բարձրացաւ այս առտու . . . այսինքն երէկ . . . բայց ասկից ութ օր առաջ՝ մարդ եթէ զընամ ըլլար, ի՞նչ աղւոր շահ պիտի ընէր:

— Ճշմարիտ ես ատոնցմէ բան չեմ հասկնար: Կը խոստովանիմ որ պօռսայի գիները շատ քիչ կ՛զբաղեցնեն . . . վասն զի գործ մ՛ընելու կացութեան մէջ չեմ:

— Բայց ատի արգելք մը չկրնար ըլլալ որ գիներուն ընթացքը հասկնաս, զմնես, հաշուես, եւ վերջապէս օր մը մեծ հարստութիւն վաստակելու միջոցները գիտնալ աշխատիս:

— Կարծեմ թէ՛ որ եւ է մէկը չկրնար մէկանց եւ վտանգ կերպով հասկնալ զայդ : Միթէ խաղու վերաբերեալ գործողութիւններն ամենքն ալ դիպուածէն կախում չունին :

— Բայց ո՛չ , անվրէպ կէտեր կան :

— Ես քեզի կը խորտովանիմ որ հիմայ այդ անվրէպ կէտերէն մին գտնալ կուղէի 1400 Քրանք պարտքս վճարելու համար : Օ՛ն , դու որ աղէկ կը հաշուես , եթէ իմ տեղս ըլլայիր եւ այդ գումարը վճարելու համար տասը կուտ չունենայիր , ի՞նչ կընէիր :

— Բայց , եթէ մինակ հարիւր Փռանք ունենայի , հոգ չէ , ի՞նչ խաղու մէջ ալ ըլլար կը խաղայի :

— Ա՛հ , չար խորհուրդ մը , նախ՝ խաղը դժնդակ ապաւէն մ'է , խաղը շատ անգամ անոնց յաջող է՝ որք պէտք չունին անոր :

— Մէկդի ձգէ Աստուածդ սիրես . . . երբ մարդ յաջողմունքն հաշուել զիտնայ , կրնայ դանոնք յաջողցնել :

— Երկրորդ՝ որ ես խաղու մէջ հարիւր Փռանք չեմ կրնար վտանգել , ըստ որում ըսի թէ կուտ մ'անգամ չունիմ :

— Հա՛ , ճշմարիտ է : Ուրեմն մարդ մինակ ստակով կրնայ վաստկիլ :

— Դու ունենալու ես Վիքթօռէն , ուրեմն պարտքս վճարելու համար փոխ տուր ինձ . . . ետքը ես քեզի կը հատուցանեմ :

Վիքթօռէն մէկ քանի վայրկեան խորհելէն ետքը սլառասլառանց .

— Ո՛չ , փոխ չեմ տար . . . եթէ պոստայի գործողութեան մը համար ըլլար , թերեւս վտանգէի . . . բայց եթէ հիմայ պարտքդ վճարես , ձեռքդ բան մը չմնար , եւ չես կրնար վերջըն ինձի հատուցանել . ուստի աւելի աղէկ է որ ստակս ինձ պահեմ . . . մնաս բարով Ֆէլիքս , ստիպողական գործ ունիմ :

Երրորդն ալ միւսներուն պէս հեռացաւ եւ Ֆէլիքս սըրճարան դարձաւ ինքնիրեն ըսելով .

— Հիմայ փորձը կատարուեցաւ , երեք մօրեղբորորդիքս Հասկցուեցան , Հիմայ գիտեմ թէ ո՛րչափ կրնամ վստահիլ իրենց բարեկամութեանը : Եթէ Տօքթէօնն ալ մօրեղբօրս քով չյաջողի ուղղակի Քլիշէի ճանբան բռնելու ենք :

ԳՂՈՒԽ Թ.

ՓՈՔՐԻԿ ՄՕՐԵՂԲՕՐԱԿՈՒՍՏՐԸ

Սակայն Տօքթէօն Շուպէն Պարոն Մօնլօտանը իւր սենեակը գտաւ , ուր փորին , սրունքներուն , գլխուն եւ ստամոքսին համար կը գանդատէր :

— Տօքթէօն աղէկ չեմ , դիս չէք բժշկեր , ըսաւ միլիօնատէրը , բժշկին մտնալը տեսնելով :

— Ձեզ չեմ բժշկեր . . . բայց նախ ի՞նչ է այդ , հարցուց բժիշկը գաւաթ մը եւ թէյի անօթ մը զննելով :

— Կտաւատի օշարակ է , շատ թեթեւ , բայց կակղեցուցիչ , միանգամայն շատ զովարար է :

— Բայց , Տէր ողորմեա՛ , սիրելի պարոնս , ի՞նչպէս կուղէք որ բժշկեմ ձեզ , երբ բոլոր հրահանգացս հակառակ կը վարուիք . . . միթէ ես ձեզի կտաւա՞տ պատուիրեցի . . . ես ձեզի ըսի որ , օրը երկու խոշոր դգալ քինքինայի դինի խմէք , մատէսի դինուով շինուած , ասի ձեզի ոյժ կուտար , ստամոքսնիդ կը կաղդուէր , հիմայ ձեզի ստամոքսի զօրութիւն պէտք է : Ասոր տեղ գու՛ր կտաւատի հունտ կը գործածէք . . . եթէ այդպէս շարունակելու ըլլաք , ես հիմակուրէն կըսեմ թէ՛ ձեզ չպիտի կրնամ դարմանել :

— Տօքթէօն ես կը վախնամ որ այդ քինքինայի դինին իմ տկար ստամոքսիս համար շատ զօրաւոր չըլլայ :

— Ըստ որում ես ձեզի պատուիրեցի , հաւանականաբար աղէկ ըլլալուն համար էր . միթէ վստահ էք ինձ , այո՛ կամ ոչ :

Պ. Մօնլօտան խիստ տարակուսական այո՛ մը թոթովեց եւ քթին տակէն .

— Կը խմեմ քինքինայի դինին , ըսաւ :

— Պիտի տեսնաք թէ որչափ օգտակար պիտի ըլլայ : Հիմայ սիրելիս Պ. Մօնլօտան , յանձնարարութիւն մ'ունիմ կատարելիք : Ձեր քեռորդին Պարոն Ֆէլիքս շատ սիրուն տղայ մ'է , քանի մը վայրկեան առաջ տեսայ զինքը :

— Ֆէլիքս քեռորդի՞ս : Ո՛հ սրիկային մէկը : Իրեն վրայօք աղւորիկ լուրեր առի : Մտածեցէք անգամ մը Տօքթէօն թէ իւր կաթիկորօր ամուսնութեանը , որուն իբրեւ վկայ գացած էր , մինչեւ անգամ համարձակեր է փեօին մէկ ոտքը բոպիկ մէկ ոտքը կօշիկով քաղաքապետին առջեւ տանիլ :

— Գիտեմ ես այդ պատմութիւնը , պատմեց ինձ :

— Եւ միթէ անպատեհ բան մը չէ՞ այս , իշխանութեան առջեւ անպատկառութիւնը . . .

— Բայց իշխանութիւնը չէ տեսեր : Իսկ եթէ այդպէս վարուած չըլլար , ամուսնութիւնն ալ չպիտի կատարուեր :

— Ես ձեր կարծիքէն չեմ , Պարոն բժիշկ , ես այդպիսի անպատեհութիւն մը չեմ կրնար ներել : Տեսնանք , ի՞նչ յանձնարարութիւն ըրաւ այդ սրիկան :

— Աստուած իմ . . . բայց իրեն նկատմամբ բարեյօժար չէք երեւնար . . . կը վախնամ . . .

— Ես իմ քեռորդույս համար կարծիքս չեմ կրնար փոխել . . . ամեն ատեն ասանկ եմ . . . ուրիշ օր մ'ալ այսպէս պիտի գտնէք զիս :

— Ուրեմն վերջապէս լմնցնելու ենք . . . քանզի ստիպողական ալ է : Ձեր քեռորդին 1400 ֆռանք պարտք ունի , ասոր համար կը հալածեն զինքը , նաեւ պիտի բռնեն . . . ուստի կը յուսայ որ պիտի բարեհաճիք այս անգամ ալ իրեն օգնութեան հասնիլ եւ . . .

— Պարտքեր . . . դարձեալ պարտքեր . . . եւ ասոր համար երդում ընելէն ետքը կը համարձակի ինձ դիմել . . . վասըն զի մէկ մ'ալ չընելուն համար երդուընցաւ պարոն , երբ անցեալ տարի ուրիշ պարտքերը վճարեցի : Թշուառակա՛ն , եւ միթէ համեստ մարդ մը իւր երդմանը դէմ գործելու է :

— Բայց ձեր քեռորդին խիստ նորատի է :

— Ա՛լ ասոր դէմ խօսք պէտք չէ :

— Բայց վերջապէս , Պարոն , 1400 ֆռանքի ջնջին դումար մը . ձեզի համար խօսքը չըլլար :

— Անտարակոյս , այդպիսի գումար մը առանց ինձ նեղութիւն պատճառելու՝ կրնամ ուղածիս պէս դործածել , բայց ես յոռի վարմունքը խրախուսել չեմ ուզեր . . . արդայ մը որ կը սիրէ գինի , խաղ եւ կին . . . ա՛հ , ի՞նչ գարշանք :

— Բայց Պարոն , հիմայ բոլորովին սրբանալ պէտք չէ , ամենքնիս ալ ունինք այդ ճաշակները :

— Ա՛չ , Պարոն , ոչ , ես բնաւ ատանկ ճաշակ ունեցած չեմ եւ կը պարծիմ ալ :

— Բայց ինձ այնպէս թուի որ ասոր համար աղէկ չէք :

— Յօդուածացաւ չունիմ ես պարոն :

— Բայց Տէր ողորմեա , սրիկայից ամենքն ալ չունին , ասոր համար շատ օրինակներ կան . հիմայ ձեր քեռորդույն գանք , գիտեմ որ ձեր քեռորդույն բանտարկութեանը չէք յօժարիր :

— Ա յո՛ , պարոն , թող երթայ , աղէկ դաս մ'է իրեն համար :

Այս միջոցիս ծաղկահասակն Էմմա իւր հօրը սենեակը մըտաւ , վասն զի նորա պօռալու ձայնը լսեց , եւ Տօքթէօնը բանեղէն ետքը մրմնջեց :

— Ի՞նչ կայ հայր իմ , որչափ խռովեալ կերեալք , միթէ բարկացած էք :

Պարոն Մօնլուան քրթմնջելով գլուխը կախեց . իսկ Տօքթէօնն աճապարանօք ըսաւ .

— Օրի՛որդ , շատ յարմար ատենին հասաք , ձեր Ֆէլիքս հօրաքեռորդույն ՚ի նպաստ բարեխօսելու համար :

— Հօրաքեռորդի՛ս , բայց ի՞նչ է եղեր պարոն :

— Ի՞նչ ըսեմ օրիորդ , երիտասարդական անմտութիւն մը որ առանց հաշուելու կը մտնեն . . . կարճ խօսքով , պարտք է ըրեր . . . պղտիկ գումարի մը համար զինքը կը հալածեն . . . չհամարձակեցաւ գալ իւր մօրեղբորը , ուստի ես յանձնառու եղայ որ իւր դատը պաշտպանեմ . . . սակայն ձեր հայրը սաստիկ խստասիրտ կերեւնայ . . . կը ժխտէ իւր քեռորդին այսպիսի տաղնապէ մը աղատելու :

— Ա՛հ , հայրիկ , պիտի խանդաղատեք , ըսաւ գեղեցիկ օրիորդը՝ հօրը մերձենալով , ձեր քեռորդին պիտի ուղղուի , վրաստան եմ , եւ դուք ալ իրեն պէտք եղած գումարը պիտի տաք :

— Ո՛չ աղջիկս , քանզի նա չպիտի ուղղուի . ինքն երդուած էր , խստամը դրժեց , ես իրեն բան մ'ալ չեմ ուզեր ընել :

— Ուրեմն խեղճ աղսն բանտ պիտի երթայ , ըսաւ Տօքթէօնը :

— Բա՛նա , Ֆէլիքս բանա պիտի դրուի , պօռաց Էմմա —
Ո՛հ , սոսկալի է այդ , ո՛չ հայր իմ , չէք կրնար հանդուրժել
զայդ . . . կաղաչեմ անողոք մի ըլլաք :

— Բաւական է աղջիկս , բաւական է , ըսաւ սեղանաւորը
հրամայական ձայնով մը , կարգելում որ այլ եւս այդ նիւթին
վրայ չխօսիս : Կաղաչեմ նաեւ Տօքթէօնին որ այնպէս ընէ :

Օրիորդը գլուխը ծռեց եւ սկսեց դողալ : Բժիշկը Պ. Մօն-
լօռանի արտասանութեան կերպէն սաստիկ զայրացած , առաւ
գլխարկը , գլուխը դրաւ ու պօռալով .

— Շատ լաւ պարոն , դուք այն կարծր ու ցամբած սըր-
տերէն ունիք , որոց զովացուցիչ դեղեր պէտք են , խմեցէք
ձեր կտաւատի հունտը , խմեցէ՛ք ձեր բուսածուրերը . իսկ ես
ձեր առողջութեան հետ գործ չունիմ :

— Իմ ալ ուղածս այդ է , մրմնաց Պարոն Մօնլօռան :

Բժիշկին արդէն գրեթէ սանդուխին վարի ծայրը իջած էր ,
երբ փոքրիկ ձեռք մը կամաց մը ուսին դարկաւ : Նտին գոր-
ծաւ եւ նորատի Էմման տեսաւ , որ իրեն թղթապանակ մը
ներկայացնելով յուզեալ ձայնիւ ըսաւ .

— Առէ՛ք այս , պարոն Տօքթէօն , եւ հօրաքեռորդուոյս
տուէք , բոլոր ունեցածս այս է , սակայն յուսամ թէ ասով ալ
փոքր ՚ի շատէ տագնապէ մը կազատի . . . մանաւանդ մի ը-
սէք իրեն ինձմէ առած ըլլալնիդ . . . թող ինքն այնպէս դիտ-
նայ , որ հայրս տուած է . . . մնաք բարով , երթամ . . .

Աքանչելի աղջիկն՝ առանց սպասելու որ Տօքթէօնը նորա
բարեգործութեանը համար զգացածն յայտնէ , արդէն սանդու-
խին վերի ծայրն հասաւ շուտով : Բժիշկը ձեռքի թղթապանա-
կը բանալով հազար ֆոանքնոց տոմսակ մը դտաւ :

— Սիրուն աղջիկ , ըսաւ ինքնին , բոլոր ունեցածը հորա-
քեռորդուոյն կուտայ , եւ իր հօրը բարկութենէն ալ չվախնար :
Ա՛հ , խիտ աղէկ դատած էի ես զինքն , աղէկ տեսած էի որ
իր եղբարքը չնամանիր եւ ոչ ալ իր հօրը . . . եթէ մայրը ողջ
ըլլար իրեն պիտի բարեմաղթէի . հազար ֆոանք . . . բաւա-
կան մեծկակ գումար մ՛է . . . բայց մեր երիտասարդը նեղու-
թենէ ազատելու չբաւեր . . . Ինչո՞ւ չէ , ես ալ մասնակից
ըլլալ կուզեմ օրիորդին ըրած բարեգործութեանը . . . այս առ-

տու ապաքինեալ հիւանդացս մէկէն՝ հինգ հարիւր ֆոանք առի
. . . որմէ ստակ մ՛առնելու յոյս չունէի : Այս հաղարնոցին
վրայ կաւելցնեմ եւ բարեկամը կազատի :

Ֆէլիքս սրճարանը կ'սպասէր , սակայն չէր յուսար . բայց
տեսաւ որ բժիշկը զուարթ դէմքով մ՛իրեն մօտենալով ձեռքը
թղթապանակ մը տուաւ եւ ըսաւ ,

— Ա՛ն , սիրուն երիտասարդ , շատ յաջող էի պատգամաւո-
րութեանս մէջ . . . ա՛ն , ահաւասիկ պարտատեարցդ վճարէ :

— Միթէ կարելի՞ է . . . : Ա՛հ սիրելիս Տօքթէօն , ընաւ
չէի յուսար : Ի՞նչպէս , միթէ մօրեղբայրս խանդաղատեցա՞ւ :

— Մօրեղբայրդ , երբէք , ինքն հնօրեայ քարասիրտ շա-
նաձուկ մ՛է . . . պարզապէս մերժեց նա :

— Բայց ուրեմն ի՞նչպէս . . .

— Ա՛հ , նորատի աղջկան մը դէմքով հրեշտակ մը կար հոն ,
վերջապէս մօրեղբօրադուստրդ , ետեւէս սանդուխէն վար վա-
զեց եւ բոլոր իր խնայութիւնը ձեզի տուաւ :

— Մօրեղբօրադուստրս , միթէ կարելի՞ է :

— Այո՛ , պարոն , եւ արգիլած էր որ ինքը տուած ըլլալը
չըսեմ , բայց ես չեմ համարձակիր գեղեցիկ գործ մը այնպիսի
մէկու մը մասնաւորել՝ որ ձեզ համար անգուժ գտնուեցաւ , եւ
որ յօրի կը դատէ կիները սիրելը . . . անպիտան ծերունի :

— Էմմա՞ . . . սիրուն Էմմա՞ն էր :

— Այո՛ , այո՛ . . . չկրնար մոռնալ : Օ՞ն պարոն , գացէք
շուտ պարտքերնիդ տուէ՛ք , ես ալ իմ հիւանդացս երթամ , ա-
մեն մարդ իւր գործին :

ԳԼՈՒԽ Ժ.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐԿԱԾ ՄԸ

Ֆէլիքս կուզէր որ երթար իւր մօրեղբօրադստերն յայտներ
իր շնորհակալիքն , սակայն նեղութիւն կը համարէր իրեն եր-
թալ մօրեղբայրն ու անոր որդւոց երեսը տեսնալ . ինչպէս ը-
նելը չգիտնալով , պատեհ առթի մը կ'սպասէր որ դիպուածով
տեսնայ զայն եւ երախտազիտութիւնն յայտնէ :

Այս միջոցին երկտասարդն աւելի աշխատասէր եւ աւելի փութաջան եղաւ իր վաճառականին գործոցը մէջ . քանզի շատ անգամ ինքնիրեն կըսէր .

— Էմմաէն ընդունած այս հաղար հինգ հարիւր ֆոանքս , անպատճառ պէտք է որ օր մը վճարեմ :

Սակայն յայտնի է թէ , որովհետեւ Ֆէլիքսի տարիքը չարգելէր որ բարի դիտաւորութիւններով մէկտեղ երկտասարդական անմտութիւններ ալ չընէ , Ֆէլիքս Անիթա անուամբ գեղեցիկ դերասանուհին մոռցած չէր , եւ որուն նկատմամբ առտու մը իր դրացուհեւոյն հետ ըրած տեսակցութիւնը լսեցինք , Այս Անիթան Տէլաքսմանի թատրոնը պաշտօն ունենալուն երբեմն պէտք եղած ատենները կը պարէր : — Գերասանուհի՞ էր , պարչուհի՞ էր . հաւանականաբար երկու պաշտօնն ալ ունեցած ըլլայ , եւ կամ կարծեմ ոչ դերասանուհի էր եւ ոչ պարչուհի , վերջապէս թատրոնին մէջ պաշտօն մ'ունէր , եւ գեղեցիկ կրնոջ մը համար բաւական փափաքելի կացութիւն մ'է :

Ինչպէս որ դրացուհին ալ ըսած էր , Ֆէլիքս միայն յաջող պատահարով մը կրցած էր թատերաբեմի ազատ մուտք ունենալ , քանզի ո՛չ խաղ կը գրէր եւ ո՛չ երաժշտութիւն , ո՛չ վարադոյր նկարել գիտէր եւ ոչ ալ զգեստ գծագրել . գոնէ բաժանորդ ըլլար . ասի թէ եւ միայն արտոյտ մ'է , բայց թատերաբեմը մտնելու իրաւունք կուտայ եւ շատ անգամ ալ ուրիշ բանի համար բաժանորդ չեն ըլլար , եթէ ոչ գուլիսները երթալով , սրահէն այնչափ սքանչելի երեւցած կիները մօտէն տեսնելու եւ սքանչանալու համար : Բայց ասո՛ւնչ , փոխանակ մօտէն սքանչանալու՝ աչաց պատրանքը պիտի կորուսանես , քանզի հեռուէն այնչափ հիանալի տեսնուած կարմիրը , ձերմակը , կապոյտը , ծիրանին , սեւը մօտէն տեսնելու չգար :

Իրաւ է , եթէ ձեր առաջօք պատրանաց մէկ մասը կորսընցընէք , անոր տեղ՝ ճարտար , երբեմն հանճարեղ եւ միշտ անճոռնի զրօսանքով մը , կամ զուարթ եւ միայն թատերաբեմի վրայ լսուած պատրաստական պատասխաններ գտնելով՝ կորուստնիդ կը փոխանակէք , վասն զի՝ զարմանալի է , կը տեսնաք Սպանիացի մեծ ասպետ մը , որ կուգայ փոքրիկ Սափուացի գեղջիկուհեւոյ մը քաղցր խօսքեր կուղղէ . Անգղիացի մը , որ արջի մը հետ կը կուռի , եւ թագաւոր մը , որ հտալիտի մը ընչազեղ կը հրամցնէ :

Ասկից դատ աշխարհիս մէջ այնչափ բաներ դիպուածական յաջող պատահարով մը տեղի կուենան , այնպէս որ գրեթէ իրաւունքի տեղ փոխանակուած է : Միթէ չէ՞ք հաւատար որ բանի մը իրաւունք ունենալնուդ համար ձեռք պիտի անցնէք զայն . . . : Գիւղին մէջ հանգիստ նստած էք : Ահաւասիկ յաջող պատահարն հոն է , կերթայ , կուգայ , կը շարժի , կը խարդաւանէ , կաշխատի եւ վերջապէս իր նպատակին կը հասնի , մինչդեռ դուք , որ ձեր իրաւանցը ձեր արժանեացը վստահելով տուներնիդ հանգիստ կը նստիք , բան մը չէք կրնար ստանալ , փոխանակ զձեզ մտածելու՝ շատ ուրիշ գործեր կայ տեսնելիք :

Բայց հոս կենանք քիչ մը . . . դանք Ֆէլիքսին , ասի երկտասարդի մը բարեկամն եղած էր , որոյ եղբայրը խաղ կը գրէր , եւ այս համբաւով շատ անգամ իւր բարեկամին հետ թատերաբեմն ելած էր , յետոյ առանձինն երթալու սկսած եւ հոն օրիորդ Հէմմանսի Ալէքսանդրը գտած էր : Ալէքսանդր բաժանորդ էր , նորա հետ տօմինօի մէջ շատ բօնձ կորանցուցած եւ ահա այսպէս դուրսներու մէջ կենալու պաշտպանութիւն մը ստացած էր : Գիշեր մը սիրոյ դիցուհիներով եւ սատանայներով գեղեցիկացած պարախառն դիւթական խաղ մը կը ներկայացուէր : Գիտէք որ թատերաբեմի վրայ սատանայներն ու դիցուհիները խիստ գեղեցիկ կերեւան , իրենց հագած թեթեւ ու բարակ զգեստներուն շնորհիւ : Քաղաքի մէջ թէեւ զգեստնին կը փոխեն , բայց ասի արգելք մը չհամարուիր միեւնոյն գործը հոն ալ կատարելու : Օրիորդ Անիթա սիրոյ դիցուհի մը կը ներկայէր եւ որովհետեւ խիստ գեղեցիկ կազմ մ'ունէր , մարմնոյն ըստօրին մասէն հագած ու փակած մետաքսեայ Փանէլան շատ ազուոր վայելելով մեծ յաղթանակներ կընէր , վասն զի թատերաբեմի վրայ մեծ գործ կընէ այս՝ կանանց ընդունելութեան մասին , եւ այն կինը՝ զոր փողոցը պարզ դիւղացեոյ զգեստով տեսած ատենդ երեսը չես նայիր , օղային ոգիներու եւ սիրոյ դիցուհեոյ զգեստով տեսնուած ատեն՝ ծաղկեփունջերով եւ կեցցեններով կընդունուի :

Ֆէլիքս կուղէր որ այս զգեստով տեսնայ Անիթան , որ առանձին չէր , եւ որոնք հառաչել կուտան մեզ այն կորուսեալ գրախտին համար , որոյ մէջ Ադամ եւ Եւա առաջն գերձակի

եւ զերձակուհւոյ պէտք ունենալու՝ կը շրջէին : Ֆէլիքս տեսարանի վրայ երթալով , կ'սպասէր որ զինքն հեռացնող օրիորդը իրեն հետ խօսակցելու պարապոյ վարկեան մ'ունենայ :

Իսկ իւր էրմանս դրացուհին , որ զինքը տեսած էր , տեսարանի վրայ գործ չունեցած մէկ վարկեանը գտնելով՝ եկաւ ականջին ըսաւ :

— Դրացի՛ , զդուչացի՛ր , Թռապուքօս կը պարէ այս գիշեր :

— Այդ Թռապուքօսն ո՞վ է :

— Պարող մը . . . սատանի զդեստ է հազեր , տաղանդաւոր է :

— Ինչո՞ւս պէտք եթէ Թռապուքօս կը պարէ :

— Չգիտե՞ս ուրեմն որ Անիթայի տարփաւորն է , եւ ինքզինքը սիրցնել կուզէ : Վազրի մը պէս նախանձոտ է . . . խիստ չար մէկն է , եւ եթէ Անիթայի հետ խօսակցելը տեսնայ , կըրնայ ըլլալ որ հետդ կուոյ բռնուի :

— Չգէ՛ դու ալ տա Թռապուքօսդ . թող ինքն իր սատանի դերը կատարելը նայի , թո՛ղ ուղածին չափ արգելու ինձ Անիթայի հետ չխօսիլ :

— Այո՛ , բայց որովհետեւ տաղանդաւոր մէկն է ըսի , կըրնայ վերատեսչին բողոքելով հոս մտնալիդ արգելուլ եւ ըսել թէ մուտքերնուս խոչընդոտ կըլլաք :

— Թող ընէ , եւ ի՛նչ տեսակ մարդ ըլլալս տեսնայ :

— Վերջապէս ես ձեզի կիմացնեմ , գոնէ խոհեմաբար վարուեցէք :

— Շնորհակալ եմ սիրելի դրացուհիս , սատանին ըրածներուն աչքս պիտի բանամ :

— Ալէքսանդրը չտեսա՞ք :

— Սիրքի սրճարանը Տօմինօ կը խաղայ :

— Օրիորդ էրմանս տեսարան գնաց : Պարն սկսեց անմիջապէս : Անիթա իր մասը կատարելուն պէս , Ֆէլիքսի գտնուած գուլիսին մէջ եկաւ , եւ բաւական ջերմ խօսակցութիւն մ'սկսեցին սիրոյ զիցուհին եւ երիտասարդ գործակատարը :

Յանկարծ մէկը Ֆէլիքսի ուսին դարկաւ , ետին դարձաւ եւ մէկը չտեսնելով խօսակցութիւնը շարունակեց : Սակայն երկու վայրկեանէն նոյնը կրկնուեցաւ :

— Ո՞վ է այն որ ուսիս զարնելով կ'զբօսնու եւ աներեւոյթ կըլլայ , պօռաց Ֆէլիքս :

— Թռապուքօսն է , պատասխանեց Անիթա ժպտելով : Կամաց մը մօտենալը ու զարնելէն յետոյ փակչիլը տեսայ :

— Հա՛ , սա ձեզի սիրահար պարո՞նն է որ սատանի դեր կը կատարէ . . . միթէ՛ ձեր տարփաւորն է :

— Ըսած խօսքդ ականջդ կը լսէ՞ , ես անանկ մարդիկը չեմ կրնար հանդուրժել , ընդհակառակը տաղտկալի է ինձ : Արդէն խել մ'անհաճոյ դէպքեր պատահած է մէջերնիս :

— Ուրեմն թող հանգիստ կենայ . . . մօտենալը տեսածնուդ պէս , նշա՛ն ըրէք ինձ :

— Ահաւաստիկ կուզայ :

— Լա՛ւ , այս անգամ կը տեսնայ :

Սատանի դեր կատարող անձը կարճահասակ գիրուկ , բայց յաղթանդամ մէկն է : Դէմքը շատ տգեղ ըլլալով՝ սատանի դեր կատարելու աղէկ յարմարութիւն ունէր : Բայց որովհետեւ գեղեցիկ կը կարծէր ինքզինքը , աղէկ ծպտիլ կաշխատէր . եղջիւրաւոր կարմիր կեղծ ծամք դրած , շիշերու այրած խիցքով հաստ յօնքեր շինած էր , որ Թափառական շրէին յօնքերուն պէս իւրար կցուած էին , վերջապէս կեղծ քիթ մը դրած էր , որ մեծ փողի մը ձեւն ունէր , իւր կարմիր մայօին (Ֆանէլա) վրայ օձերով ու ջղջիկներով բանուած , բոլոր ստոնց անուի տեսքը զինքն անարկու սատանայ մը կը կազմէին :

Պարոն Թռապուքօս Անիթայի այս պատանւոյն հետ ունեցած փութ ջանութիւնէն բոլորովին դժկամակած՝ երիտասարդին ուսին զարնելու պատրաստ դիրքով մը կամաց կամաց կը մօտենար , սակայն այս անգամ Ֆէլիքս անանկ դիրք մը բռնած էր , որ սատանան իր ուսին զարնելու վայրկեանին անանկ լըռընցի հարուած մը տուաւ սատանին երեսին , որ նորա կեղծ քիթը կէս մը ճզմուելով տեղը փոխեց եւ գնաց աջ աչքին վրայ փակաւ : Պարոն Թռապուքօս Ֆէլիքսի վրայ ցատկել կուզէր , սակայն նոյն ատեն վերատեսչին ձայնը լսուեցաւ որ կը պօռար :

— Օ՞ն , Թռապուքօս կարգդ եկաւ . . . օ՞ն , շուտ տեսարան մտիր . . . հիմայ մուտքէդ պիտի վրիպիս :

Մէկ կողմանէ պարտաւորութիւնը միւս կողմանէ բարկու-

Թիւն, Թոռապուքոս այս երկու կրից մէջ մնալով, վերջապէս վերատեսչին ձայնին հնազանդելու էր, կատաղիի մը պէս տեսարան մտաւ. բնականաբար զգացած յուզմունքէն իւր սպարն ալ կը սաստկանար. բնաւ այսչափ բարձր ցատկած, եւ այսչափ անչնորճ շարժումներ ըրած չուներ: Բայց ասոնք հրաշալի արդիւնք մ'ընելով, հասարակութիւնը կը ծափահարէր, վերնատունը կարծես կը փլցնէին, մինչդեռ դուրսին մէջէն անգուլթ վերատեսուէր,

— Քի՛թդ, Թոռապուքոս, տեղը դիր քիթդ, աչքիդ վրայ գացեր է, կը սօռար. սակայն Թոռապուքոս քիթը չէր մտածեր, պարած ատեն՝ աչքը Ֆէլիքսի գտնուած դուրսին տնկած էր, որ ատեն դէմքը կը թթուեցնէր, սոսկալի նայուածքներ կընէր, բուն կը ցուցնէր եւ շարժումները կը կրկնապատկեր: Հասարակութիւնը կարծելով որ սատանի բոլոր այս ըրածներն աւելի արդիւնք մը ցուցնելու համար է, կը կրկնէր իւր կեցցէները եւ զարմանալի կը դատէր թէ ի՞նչ նպատակաւ արդեօք այս դերակատարը քիթը սչքին վրայ դրեր է: Ֆէլիքս սատանի այս սպառնալիքները կը ծաղրէր: Ի դուր Սնիթա կըսէր:

— Գնա՛ բարեկամ, Թոռապուքոսին անանկ բռնցի հարուած մը տուիր, որ կատողեր է: Արէժ յուձել պիտի նայի. . . շնորհ կաղաչեմ, գնա՛:

Սակայն երիտասարդը կը կենար, վասն զի չէր ուզեր այս պարոնին սպառնալիքներէն փախչիլ ցուցնել, եւ միայն կը պատասխանէր:

— Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր երթալ: Եսա դուարձալի է ինձ այս սատանան. . . պարելը տեսնել կուզեմ:

Պարը լմնցնելուն պէս Պարոն Թոռապուքոս, մրրկի պէս դուրսի մէջ վազելով Ֆէլիքսի վրայ յարձակեցաւ եւ սկսեց զարնել. իսկ սա, որ այս յարձակումը կը նախատեսէր, պատրաստի սպասեց իր հակառակորդին, եւ ընդունածներուն դէմ աւելի ոյժգին հարուածներով կը պատասխանէր: Կոռուղները բաժանել ուղեցին, անկարելի եղաւ: Իրարու փայթուած, զիրար բռնած, իրար կը հրէին, կը զարնէին եւ վերջապէս գլուխնին ու անձերնուն կէսը դուրսներէն դուրս՝ միատեղ թատերամիջն վրայ գլտորեցան: Հասարակութիւնը մէկէն ՚ի մէկ զարմացաւ

այս շեղջակոյտը տեսնելուն, որ արքային պալատը ինկաւ, եւ դեանի վրայ իրարու բռնցի հարուածներ կուտային:

Սակայն վերատեսուէն ու բազմութիւն ձեւացնող դերակատարներն այս սպարոններուն օտքէն քաշելով հանդիսականաց աչքէն հեռացուցին, սակայն զանոնք տեսնելու եւ վրայնին խնդալու չափ ժամանակ կար: Եւ կարծես դիտմամբ տեղի ունեցած դիպուածով մը՝ Պ. Մօնլոռան, որ դրեթէ բնաւ թատրոն չէր երթար, նոյն գիշերն էմմայի եւ տիկին Սառժէի հետ սրահն էին:

Երկար ստենէ ի վեր էմմա կաղաչէր հօրը, որ ղինքը թատրոն տանի: Սաի վերջապէս հաւանութիւն տուած էր այս հաճոյքն աղջկանը ընելու, եւ տիկին Սառժէ ալ միատեղ տարած էին, վասն զի Պ. Մօնլոռան, որ ամեն բան կը նախատեսէր, ինքնիրէն ըսած էր թէ « Եթէ թատրոնը զիս դէշ ընէ, եթէ հիւանդանամ, աղջիկս բաւական չէ պէտք եղած օգնութիւնն ընելու համար »: Պ. Մօնլոռան թատրոններու մէջ խաղցուած խաղերուն համար ինքն անփոյթ ըլլալուն, ըսած էր իր աղջկանը,

— Ո՞ր թատրոնն երթալ կը փափաքի՞ս, դու ընտրէ, ինձ համար հոգ չէ:

Էմմա ալ պատասխանած էր,

— Ինձի համար ալ հոգ չէ՞, հայր իմ, միայն թէ դիւթական խաղ մը կուզեմ տեսնել:

Թատրոններու նախադրի մը մէջ բնտուեցին թէ այն գիշեր ո՞ր թատրոնը՝ դիւթական խայ կայ: Ա. յն միջոցին միայն Տէլասըմանի թատրոնը կը խաղցուէր, ուստի նախապատիւ համարեցին զայն: Պ. Մօնլոռան իւր աղջկան ու տիկին Սառժէի հետ առաջին յարկի օթեակներէն մին նստած էին, որ տեսարանին խիստ մօտ էր, եւ երբ Ֆէլիքս ու սատանան կոռուելով դուրսներէն դուրս գլտորեցան, զանոնք աղեկ մը տեսնելու գիրքի մէջ էին:

— Միթէ կարելի՞ է, պոռաց Պ. Մօնլոռան, տեսարանի վրայ գլտորող այս երիտասարդը. . . նայեցէք տիկին Սառժէ Ֆէլիքս քեռորդիս չէ՞:

— Ստուուած իմ, այո՛, ինքն է սատանան ձեռող. . . ի՞նչ կը նշանակէ այս:

— Հօրաքեռորդի՞ս . . կը հաւատա՞ք թէ ինքն է , թո՞ք ուրիշ է մնա , յետոյ մէկտեղ , այո՛ , ինքն է , արդեօք դերասա՞ն է եղեր :

— Մինակ այդ պակաս էր . . . ծեծկուլի . . . հասարակութեան առջև բռնցի հարուածներ տալ : Թշուառակա՞նը . . . բայց սոսկալի է այս . . .

— Հոն չեն , հայր իմ , տարեր են . . .

— Ո՛հ , ես աղէկ գիտեմ որ խաղին մէջ այդ տեսարանը չկար . . . բայց անպատճառ կը հասկնամ ես այդ դիպուածին պատճառը . . . վարագոյրը գոցուած ատեն դուրս կելլամ կը տեղեկանամ :

Գրեթէ ամեն հանդիսատէս ալ Պարոն Մօնլօռանի չափ հետաքրքիր էին հասկնալու համար թէ ի՞նչ դիպուածով տեղի ունեցած էր այդ բռնհար կռիւը , վասն զի երիտասարդը ո՛չ զգեստաւորեալ էր եւ ոչ ալ դերասան : Ատոր համար ամեն մարդ արարուածին վախճանին կ'սպասէր անհամբերութեամբ . վարագոյրը գոցուելուն պէս ոմանք սրճարանը վաղեցին , ոմանք թատերաբեմի դռնապանին դիմեցին . անոնք որ ազատութիւն ունէին տեսարանը մտնելու , խուռն բազմութեամբ հոն խռնեցան . յետոյ ամեն մարդ սրահ եկաւ նորանոր լուրերով : Ամեն մարդ նրբաշաւղին մէջ այս նիւթին վրայ կը խօսէր եւ օթեկապահուհիք ալ ետ չմնացին այս կռուին պատճառը հասկնալէ :

Պարոն Մօնլօռան անսպարանօք վազողներուն տեղ կուտար . յետոյ բազմութեան մէջ մտնող օթեկապահի մ'ուղղուելով , ինքն ալ հարցուց պատճառը , քանզի կը կարծէր թէ «ս ամենէն աւելի գիտնալու է :

— Տիկին միթէ կրնա՞ք ինձ ըսել թէ ի՞նչ է այն տեսարանին պատճառը , այն երկու մարդոց մէջ տեղի ունեցած կռուին , որք պարէն ետքը գուլիսէն դուրս գլտորեցան :

Եւ Պարոն Մօնլօռան իւր այս հարցմանը հետ ճերմակ դրամ մը թխեց օթեկապահիկին ձեռքը , որով սա իւր ձայնն աւելի զօրացնելով ըսաւ ,

— Այո՛ , պարոն , այո՛ , անտարակոյս ես ուրիշներէն աւելի աղէկ կրնամ տեղեկութիւն տալ : Մնաց որ ես արդէն կը գուշակիի զայս : Տէր ողորմեա , ինձի չըսած՝ ես հասկցայ եւ

ինքնիրենս ըսի «անպատճառ այս կռիւն Անիթայի համար է » . . . այս աղջիկին ուրիշ այս տեսակ շատ կռիւներու պատճառ եղած է եւ չեմ սխալիր , քանզի այս ալ Անիթայի համար էր . . .

— Ո՞վ է այդ Անիթան , Տիկին :

— Սա սիրոյ դիցուհի ներկայացնողներէն առաջին պարոզը . . . պղտիկ թխագոյն մը . . . գեղեցկակազմ . . . ո՛հ ճշմարիտ իւր սրունքները մեծ արդիւնք ըրած են :

— Կը հասկնամ , ուրեմն անոր համար էր :

— Այո՛ , հասկցաք . Թռապուքօս կը խենթենայ այդ աղջուկան վրայ . . . ըսած է թէ իւր կա՛ն կարասիքն անոր համար պիտի ծախէ . . . սիրահարած է անոր . . .

— Թռապուքօսն ո՞վ է :

— Սատանայ ներկայացնող պարիչը . . . տաղանդաւոր տղայ մը . . . տեսաք թէ պարած ատեն ի՞նչ արհեստ կը յայտնէր . . . ճշմարիտ շատ սիրելի է հասարակութեան . . . բայց Անիթա չսիրեր զինքը եւ այն երիտասարդին խօսքերուն կը հաւատայ , զոր տեսարանին վրայ թաւալազոր տեսաք . . . կերեւայ թէ նա ալ անպիտանին . . . անկուտիլին մէկն է . . . որ իրեն հայլիին ստակն անգամ վճարած չէ . . . բայց սա կանայք ալ ո՛րչափ յիմար են . . . կերթան կուգան անպիտաններուն կը սիրահարին ու մէկդի կը թողուն հասուն մարդիկը , որք կրնան զիրենք հարստացնել . . . Ա՛հ եթէ լես ըլլայի սասնկ խրատ մը՝ չէի տար անոնց :

— Վերջապէս Տիկին :

— Վերջապէս Պարոն , Թռապուքօս արդէն նկատած ըլլալով որ յիշեալ երիտասարդը Անիթայի հետ տեսնուիլ կուգայ գոլիսներուն մէջ , ըսած էր ինքնին «հակառակորդ մ'է սա » պէտք է որ իր չափը հասկցնեմ իրեն » քանզի այդ Թռապուքօս ըսուած մարդը զօրաւոր մարդ մ'է , ջղալին բնաւորութիւն մ'ունի : Նախ աղջկանն իմացուցած էր . ըսելով « եթէ անգամ մ'ալ այդ մարդուն հետ խօսակցիս , զինքը կտոր կտոր կընեմ » եւ Անիթա ալ պատասխաներ էր թէ « այո՛ , ձիւն կեր » :

— Ձիւն կեր ի՞նչ ըսել է :

— Բողկ ըսել կուզէ : Այս տեսակ խօսուածքները շատ կը սիրէ . սակայն եւ այնպէս ըսածին պէս ալ ըրաւ : Անիթա

իւր սիրահարին հետ կը խօսակցէր , Թռապուքօս սլարած ատեն զանոնք տեսնելով , կատղեր էր . սլարը լմնցնելուն պէս երկտասարդին վրայ վաղելով ըսեր է թէ , « կը հրամայեմ որ օրիորդին հետ չխօսակցիս , եւ 'ի հարկին կարգելում » : Կերեւայ թէ միւսն ալ ծաղրեր էր զայն : Այն ատեն ինչպէս որ տեսաք երկու կատղած արդաղներու պէս բիֆ բաֆ բուֆ գնտակները անձրեւի պէս տեղացին . ուղեր են զանոնք իրարմէ զատել , բայց անկարելի է եղեր , եւ այն ատեն իրար փաթտուելով ինկեր եւ մինչեւ հասարակութեան առջեւ գլտորեր են . . . եւ գիտէ՞ք ինչ կընէ եղեր Անիթա . . . զիւահարի պէս կը խընդայ եղեր . . . անսիրտ աղջիկ . . . իրեն համար կուռելին տեսնելով կը զուարճանայ . . . կը սընդէ թէ իրեն համար պատիւ մ'է այս :

— Բայց վերջն ի՞նչ եղեր է :

— Բնականաբար երիտասարդը տեսարանէն վախտուած ըլլալու է , ուր ոտք կոխելու իրաւունք չունէր : Սակայն այս տեսակ բռնի մտնողներուն համար այնչափ խստասիրտ չեն . . . գոնապանն աչք կը գոցէ . . . վերատեսուհն ալ աղէկ տղայ է : Իսկ այս անգամ հասկցուեցաւ , ալ չեն թողուր զինքը տեսարանին վրայ՝ այն գեղեցիկ Ֆէլիքսը . . . Ֆէլիքս էր անունը . վասն զի շատ անգամ Անիթա կըսէր թէ « ա՛հ այս գիշեր Ֆէլիքս չեկաւ , սիրտս կը նեղանայ . . . »

Պարոն Մօնլուան ըստ բաւականի տեղեկութիւն առնելով իւր օթեակը դարձաւ եւ ըսաւ Էմմային ,

— Աղջիկս , անանկ բաներ իմացայ որ քու հօրաքեռորդուդ նկատմամբ ունեցած կարծիքս կը հաստատեն , շատ սրբիկայ տղայ մ'է , որուն վրայ ալ յոյս չկայ : Միշտ կը ջատագովէր զինքը , բայց կը սխալէիր : Եղբարքդ աւելի աղէկ դատած են զինքը , քանզի բնաւ 'ի նպատ անոր բառ մը չեն խօսիր ինձ : Գիտեմ , ապագային մէջ ալ այդ պարոնին նկատմամբ բան մը չպիտի խօսիս ինձ , որուն վարքը կամայնէ , եւ զոր ալ չեմ ուղեր ընդունիլ :

Նորատին Էմմա գլուխը ծռելով տխուր մը թօթովից ,

— Պիտի հնազանդիմ ձեզ . հայր իմ :

Եւ Տիկին Սառէ ալ աւա՛ղ մը հառաչելով ըսաւ ,

— Երբ մարդ կ'ինքը կըծաղրէ , կարող է ամեն բան ընել : Այս պատահարին հետեւեալ օրը՝ Ֆէլիքս իւր մօրեղբորմէն նամակ մը ստացաւ , որ սա բառերը կը պարունակէր .

« Երէկ աղջկանս հետ թատրոնն էի , ուր հասարակութեան առջեւ գայթակղելի տեսարան մը ներկայացուցիք՝ սատանի կերպարանքով դերասանի մը հետ ծեծկուելով եւ գլտորելով : Այսօրուընէ կարգելում ձեզ , այլ եւս տունս ոտք չկոխել , ուր պատուիրած եմ նաեւ որ եկած ատեննիդ չընդունին »

Ֆէլիքս տոմսակը ճմռակեց ձեռքին մէջ եւ ինքնիրեն ըսաւ ,

— Ի՞նչ դժբաղդութիւն . . . մօրեղբայրս որ բնաւ թատրոն չերթար . . . ճշդիւ այս գիշեր է՛հոն դանուեր . . . եւ Թռապուքօսի հետ ծեծկուելու տեսեր է . . . անպատճառ մօրեղբորարդուստրս ալ տեսաւ . . . այլ եւս չուղեր զիս ընդունիլ . . . ո՛չ երայտադիտութիւնս եւ ո՛չ ալ այս մասին զգացած ցաւս չպիտի կրնամ յայտնել Տօթթէօսին միջոցաւ . . . քանզի ժուպէս այլ եւս մօրեղբորս բժիշկը չէ : Եւ բոլոր ասոնք Անիթայի համար . . . զոր առտուն դրամաիտի մ'ընկերոջն հետ կառքով տեսնալովս եղաւ . . . Ա՛հ , յանցաւոր էի . սակայն եւ այնպէս չէի կրնար այդ պարոնին բռնցի հարւածներն ընդունիլ առանց հատուցանելու :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Կ Տ Ա Կ Ը

Ֆէլիքս երբեմն կը տեսնար բժիշկը , Պուլըվառի Թատրոնին մէջ պատահած դէպքը պատմեր էր անոր : Տէօթթէօս ժուպէս խենթի մը պէս խնդաց սատանայի հետ տեղի ունեցած այս կուռոյն պատմութեանը վրայ , որ հասարակութեան առջեւ ներկայացած էր . . . եւ պոռայ ,

— Ա՛հ , ճշմարիտ շատ կուզէի տեսնալ այդ գաւեշտոր . . . կաղաչեմ այդ տեսարանը երկրորդ անգամ ներկայացուցէ՞ք , ճշմարիտ յառաջակողման օթեակներէն հատ մը կը վարձեմ :

— Ո՛չ, միանգամ բաւական է . . . նաեւ շատ ալ է, ըստ որում մօրեղբորս հետ աւրուելուս պատճառ եղաւ, որ ալ չուզէր զիս ընդունիլ :

— Բարեկամ խօսքը մէջերնիս, այդ արդելքով մեծ բանէ մը զրկուած չեղաք, ձեր մօրեղբոր տունն ամենեւին զուարճալի տեղ մը չէ, մարդ կը ձանձրանայ հոն :

— Բայց մօրեղբորադուստրս կը տեսնելի, այն բարի Էմման, որ մեծ նեղութեան մը մէջ օգնեց ինձ, եւ որուն տակաւին չեմ կրցած շնորհակալ ըլլալ այս ծառայութեանն համար :

— Եթէ շնորհակալ ըլլաք իրեն, պիտի տեսնայ որ իւր գաղտնիքը մասնեւ եմ, այն ատեն ինձի ի՞նչ կըսէ :

— Տօքթէօն, անհաւատարմութիւններ կան, որք միշտ ներելի են : Սակայն ես լռելու պարտաւորուած եմ, քանզի չեմ կրնար մօրեղբորադուստրս տեսնել : Եւ դուք ալ Տօքթէօն բնաւ մօրեղբորս տունը չէ՞ք երթար :

— Ո՛չ, գիտէք, ինձի ունեցած պարտքը զրկած էր, ըսեալով միանգամայն որ զինքը դարմանելուս եղանակը իրեն կազմութեանը չէր յարմարեր : Ըսել է կերպով մը զիս կը ձանձրէր : Իեղծ մարդ, որ բժիշկներէն աւելի աղէկ հասկնալ կուզէ . . . իմ արուեստակիցներէս շատերը կան որ թէեւ արծուոյ պէս կորովամիտ չեն, բայց ձեր մօրեղբայրը դարմանել զխոնարհ համար, մի անգամ երեսը նայիլ, հետը խօսիլ եւ սնանելուն եղանակը զխոնարհ բաւական է : Ճշմարիտ տակաւին գոնէ տասը տարի աւելի կապրեցնէի զինքը, բայց հիմակուան իրեն բռնած ընթացքովը՝ շատ պիտի դարմանամ եթէ այս տարի ալ անցնէ :

— Իրաւ կըսէք, շատ ինկած է :

— Այո՛, սիրելի բարեկամս . . . բայց ի՞նչ լուր կայ նոր ամուսնացեալներէն : Ի՞նչպէս են կաթեղբայրդ եւ իւր կենսակիցը :

— Հիմայ Փարիզ հաստատեր են բնակութիւննին, եւ գործերնին աղէկ կարգին է :

— Գեղեցիկ Լօռէթը սքանչելի մտավաճառ մ'եղած ըլլալու է . . . բայց ես աւելի աղէկ կուզէի որ զլանիկ ծախէր, քան թէ միս, քանզի այն ատեն կարելի էր երթալ հետը խօսակցիլ :

— Յայտնի է որ մտավաճառի մը խանութն երթալ ազնիւ դարձուածքներ ընել չըլլար, Տիւֆելէ շատ անգամ կ'ոտիպէ զիս որ երթամ իրեն հետ ճաշեմ, բայց ես աւելի կուզեմ որ կնոջը հետ ճաշեմ :

— Տիկին Քոլբրուն ի՞նչպէս է :

— Քիչ մը շատ պարել կուզէ, որ կը յօգնեցնէ : Աշխարհիս մէջ այս տեսակ կիներ շատ կան, որք իրենց հետ պարողին մէջքը կը կոտրեն, բաւական է որ իրենք հաճոյք զգան, փոյթ չէ իրենց որ ասով ուրիշի մը առողջութիւնը կը վտանգեն : Զգուշացէք այդ տեսակ կիներէն սիրելիս Ֆէլիքս, եւ հաւատացէք ինձ, անձնասիրութիւն մի՛ համարիք անոնց հետ պարելու, ասոր համար ո՛չ աւելի կը սիրեն եւ ո՛չ աւելի հաւատարիմ կըլլան, եւ երբ ձեր շուռնը հասնի, կը փութան անմիջապէս ձեզի յաջորդ դանալ : Բայց ինչ որ է, հօգ չէ, երբ ուրիշ Մէսլիւշէի հարսանիք մը պատահի, կաղաչեմ զիս մի մոռնաք, եկէք զիս դռնէք, բնակութիւնս ալ գիտէք : Զեղի ըսած եմ որ ձեր բարեկամն եմ, թերեւս ես ձեզմէ տասնհազինգ տարու մեծ եմ, բայց հոգ չէ, ընդհակառակը սա աղէկութիւնը կայ որ երկուքնուս մին փորձառութիւն ունի, եւ կըրնայ միւսին ալ օրինակ տալ : Իրաւ ես այնչափ խելօք չեմ երեւար : Ես Խիօկրատի հրահանգին կը հետեւիմ, որ ըսած է թէ գէթ միմիս անգամ մը զուարճանալու է : Բայց բոլոր ատնքարգելք չեն ձեզի աղէկ խրատներ տալու :

— Շնորհակալ եմ Տօքթէօն, շնորհակալ եմ, կը հաւատամ ձեր այն յօժարակամ բարեկամութեանը, զոր մեր առաջին տեսակցութեան օրէն յայտնեցիք, քանզի կը հաւատամ ես համակրութեան, որ զմեզ գէպի այն անձանց կը մղէ, որք նաեւ գէպի մեզ ձգիլ կ'զգան : միթէ այսպէս չէ՞ :

— Այո՛, սիրելի բարեկամս : Նախ պատճառ մը կայ բանի մը հաւատալու . . . դիւրահաւատք աւելի երջանիկ են անոնցմէ, որք ամեն բանի կը տարակուսին : Կը յիշէք Ալօթէնի կուս Տը Քանտիտը եւ վերջը իմ արուեստակից Տօքթէօն Բանկլօսի ըսածը . « Ամուսնացայ եւ վտանգեցայ կնոջս, եւ տեսայ որ երկրիս ամենէն երջանիկ վիճակն է » : ուստի մարդուս համար ամենէն երջանիկ վիճակը իւր կնոջ առաքինութեան հաւատա-

լըն է : Հիւանդ մը դարմանած ատենս , միթէ միշտ իրեն չե՞մ ըսեր թէ՛ պիտի բժշկուի , երբ ես բուրորովին հակառակը գիտեմ , եւ միթէ հիւանդս կատարելապէս իրաւունք չունի՞ ինձ հաւատալուն : Երբ կ'նոջ մը կը յաճախես , միթէ չե՞ս ըսեր իրեն որ բովանդակ կենացդ մէջ պիտի սիրես զինքը . . . ԴՐՈՒՍՈՎԻՆ կը ճգնի քեզ հաւատալու . . . եւ վերջապէս կը յաջողի . կը կրկնեմ ձեզ , կասկած՝ անհանգստութիւն ըսել է , հաւատալ՝ ապահովութիւն եւ հետեւաբար երջանկութիւն է :

Տօքթէօն նորս ձեռքը սեղմելէն ետքը մեկնեցաւ : Երիտասարդն իր բնակարանը մտաւ ըսելով ինքնին ,

— Սա անտարակուսելի է ինձ թէ օրիորդ Անիթան Պօնվալէի պանդոկը ճաշի չհրաւիրելէս 'ի վեր զիս բուրորովին մոռցած է , քանզի այս կանանց հաճոյանալու համար մարդ գըրօ պանը լեցուն ոսկի ունենալու է , ընծաներով , շաքարեղէններով խեղդելու է , բայց եւ այնպէս ասոր հետ մէկտեղ մեզ ծաղրելէ ետ չեն կենար . . . անաւասիկ ասկէց բնաւ չեմ կասկածիր : Իսկ մօրեղբօրադուստրս , այն բարի էմման . . . զոր չորս ամիսէ 'ի վեր տեսած չեմ . . . որ բանտարկութիւնս արգիլեց . . . եւ որուն չկարողացայ շնորհակալ ըլլալ իւր ծառայութեանն համար : Արդեօք ի՞նչ կը խորհի ինձ նկատմամբ մանաւանդ սատանին հետ կուուելով տեսարանին վրայ գլտորիս տեսնալէն 'ի վեր :

Ֆէլիքս շատ անգամ Տօքթէօն ժուպէտին տունը դնաց , բայց ամեն անգամուն ալ չգտաւ զայն : Օր մը դարձեալ փողոցն իրար պատահեցան եւ Տօքթէօնն իւր երիտասարդ բարեկամին ուսին զարնելով ըսաւ ,

- Ի՞նչպէս , ես ձեզի չէի՞ ըսեր :
- Ինձի ըսած էիք , բայց ի՞նչ նիւթի վրայօք Տօքթէօն :
- Տէր ողորմեա՛ , մօրեղբօրդ նկատմամբ :
- Մօրեղբա՛յրս . . . բայց ի՞նչ ըսած էիք կաղաչեմ չեմ յիշեր :
- Ձեզ ըսած էի որ այս տարին չհանէր . . . արդէն ամիս մ'եղաւ . . . բայց իմ չկարծածէս ալ առաջ . . .
- Տէր Աստուած . . . ի՞նչ ըսել կուղէք Տօքթէօն :
- Միթէ չգիտէ՞ք որ մեռաւ :

— Մեռա՛ւ , Մեծդ Աստուած . . . մօրեղբայրս մեռաւ : Ֆէլիքս դեղնեցաւ , բժիշկը բռնեց զայն ու թեւը մտաւ ըսելով ,

— Ներեցէ՛ք բարեկամ , ներեցէ՛ք ասանկ յանկարծակի ըսելուս . . . բայց ես կը կարծէի թէ իմացած էք :

— Ո՛չ , չգիտէի . . . չգիտէի նաեւ խեղճ մօրեղբօրս հիւանդութիւնը :

— Հիւանդ , ո՛չ , չէ հիւանդացեր , սեւ բողկ մ'ուտելով վրայէն ալ մոլոշի ջուր խմած ատեն մարեր է . . . անտարակոյս վերջն այսպէս պիտի ըլլար :

— Եւ ինձի իմաց չտուին . . . ա՛հ , մօրեղբայրս զիս չէր սիրեր . . . սակայն կ'ըգամ թէ կը ցաւիմ զինքը , վասն զի չեմ կրնար մոռնալ թէ իմ մանկութիւնս խնամած է . . . թէ իրեն պարտիմ փոքր ինչ հմտութիւնս ալ . . . եւ այս պատահարը . . . ե՞րբ եղեր է արդեօք :

— Երէկ զիշեր . . . բայց կարելի է թէ տուն գացած ատենս նիդ յուղարկաւորութեան նամակն ստանաք , որ վաղը պիտի կատարուի :

— Կրնա՞ծի՞ք հետս գալ Տէօքթէօն :

— Եթէ մօրեղբայրնիդ տակաւին իմ յաճախորդս ըլլար կը մերժէի , քանզի սովորութիւն չունինք մեր հիւանդաց թաղման հանդիսին գտնուելու , քիչ մը ծանր է մեզ այս , բայց որովհետեւ ես չէի դարմաներ , կուգամ մէկտեղ հասկնալու համար թէ զաւակներն ի՞նչ ջուրի վրայ են :

Ֆէլիքս տուն դարձած ատեն արդարեւ նամակ մը գտաւ , որ թաղման յուղարկաւորութեանը տխուր հանդիսին կը հրաւիրէր : Հրաւիրեալք ըստ սովորականին նշնեցելոյն տունը պիտի հաւաքուէին : Ֆէլիքսի սիրաը սաստիկ կերպով սեղմուեցաւ այս տունը մտած ատեն , ուր վեց ամիսէ 'ի վեր դացած չէր : Սպասաւորէ մը տեղեկութիւն հարցուց իւր մօրեղբօրադստեր նկատմամբ , եւ իմացաւ թէ այս սգալի պատահարէն 'ի վեր Տիկին Սառժէի հետ դիւղ տարեր են :

— Իսկ մօրեղբօրորդիքս , որչափ վշտացած են արդեօք , հայրերնին այնչափ կը սիրէր զիրենք . . . թերեւս իրենք ալ այս տխուր հանդիսին մասնակցելու չպիտի զօրեն :

— Ներեցէք , Պարոն , պատասխանեց սպասաւորը : Ա յդ

պարոնները սրահն են , եւ Ֆէլիսիէն հոյակապ պարահանդէս մը տուաւ Պէտրուսին , քանզի տակաւին ամենուն գլխարկին վրայ սեւ սղարչ անցած չէր : . . . Զարմանալի է , տեսնաք ի՞նչպէս փոխուած է Ֆէլիսիէնի ձայնը իւր հօրը մահուանէն ՚ի վեր . . . առաջ փոքր սրինգի մը պէս քաղցր կը հնչէր : Իսկ հիմայ փողի նման խիստ ձայն մ'ունէի :

Ֆէլիքս առանց սպասաւորին ըրած խորհրդածութեանը ուշ դնելու , սրահը ելաւ , ուր շատ բաղձութիւն կար : Մօրեղբօրորդիքը տեսաւ , որք ըրրա եւ կեղծեալ համեստ կերպարանքով մը հազիւ հազ ձեռք երկնցուցին : Միայն գիրուկն Ասօլֆ էր որ հառաչելով մը ըսաւ Ֆէլիքսին :

— Հէ՛ , ո՞վ կրնար հաւատալ ասոր , այսպէս յանկարծ շուտով մեռնիլ . . . բայց . . . անարատ գինի չէր ուզեր խըմել , թէեւ այնչափ կը պատուիրէին իրեն :

— Ես գիտեմ թէ ո՞վ պիտի խմէ հիմայ , միմտաց Տօքթէօս ժուպէն , որ նոր ներս մտնելով կամաց մը ըսաւ Ֆէլիքսին . Ըստ միթէ ձեզի չէի ըսեր , որ հիմայ մօրեղբօրորդիքդ տեսնելու է . . . արդէն նոյնը չեն , ինչ որ էին , երբ հայրերնին դարմանած ատենս՝ կը ճաչէի իրենց հետ : Տես սա պարոնը , որ ժամը տասնին կը պառկէր , որ միշտ գլուխը խոնարհած եւ այնչափ քաղցրաձայն կը խօսէր . . . Ի՞նչ փոխութիւն , տես հիմայ ի՞նչպէս գլուխը բարձր , նայուածքը դուռդ , ու արհամարհոտ է , ի՞նչպէս ձայնը կսկծեցուցիչ ու որոշ կելլայ . . . կրտսերը , պարոն Ալիքթօնէն , շատ ուրիշ բաներու կը խորհի , քան թէ հիմալուան ըրած կտրատեանը վրայ , տեղ մը չկրնար կենալ , կերթայ , կուգայ , կը շարժի եւ շուրջը դանուած մարդիկը բնաւ հողը չընէր : . . . Անտարակոյտ ասպագային համար մեծ առաջադրութիւններ ունի , եւ գրաւ կը դնեմ որ հիմայ իւր մտածմունքը ասկից շատ հեռի է : Գալով Ասօլֆին , նա նուազ փոխուած է , եւ սակայն իւր կերպարանքին վրայ աւելի հանդարտ եւ աւելի ազատ բան մը կայ : Չեմ ըսեր թէ ճաշի ատեն ի՞նչ ուտելը կը խորհի , բայց հաւասարի եմ որ վիշտն ա խորթակը դոցած չէ : Ո՞վ դուք , որ ձեր դակիները ձեզմէ վախնալու , ձեր առջին դողալու համար կը կրթէք , եթէ կարող ըլլայիք տեսնալ թէ որչափ նուազ կը ցաւին ձեր մահուա-

նը , անտարակոյտ պիտի սորջանայիք կրթութեան այդ կերպը դործածելուդ համար : »

Յուզարկաւորութեան հանդէսն այնչափ փառաւոր կերպիւ կատարուեցաւ , որչափ որ վճարելու կարողութիւն ունեցող անձինք կուզեն : Գերեզմանատունէն դատուելուն պէս՝ Ֆէլիքս փնտռեց իւր մօրեղբօրորդիքը , անոնց քանի մը միտիթաւական խօսք ընելու համար : Իսկ անդրանիկն Ֆէլիսիէն կառք մը հեծնելուն պէս , առանց իւր հօրաքեռորդուոյն պատասխանելու կառքին դռնակը երեսին գոցեց : Գիրուկն Ասօլֆ անեւ բնւոյթ եղաւ եւ Ալիքթօնէն Ֆէլիքսի ըօածներուն կցկտուր պատասխաններ կուտար , այնչափ որ Ֆէլիքս տեսնելով թէ զինքը մտիկ չեն ընէր , բժիշկին թեւը մտաւ ըսելով ,

— Եթէ մօրաքեռորդիքս այսպէս պիտի ընդունին զիս , կրնան վստահ ըլլալ որ իմ այցելութիւններս չպիտի տեսնեն :

— Ի՞նչպէս , սիրելիս Ֆէլիքս , միթէ կը զարմանա՞ս ասոր : Մտածէ անգամ մը թէ այս երիտասարդներն այսօր հարուստ են , եւ թէ ինքզինքնին կարեւոր անձինք կը դասեն Միսչլետ դուք . . . ստակ մը չունիք . . . եւ ասոր հետ մէկտեղ ազգական էք իրենց , ուրեմն այս կրկնակի պատճառ մ'է , որ երես դարցնեն ձեզմէ . . . քանզի աղքատ աղբական մը . . . շատ տաժանելի է . . . միշտ կը վախնան որ փոխատուութիւն չընեն անոնց :

— Բայց շատ կը սխալին ատանկ՝ վախ մ'ունենայնուն : Զշմարխտ ամենաթեթեւ ծառայութեան մը համար իրենց ղլմելու կը ներգանամ . . . իմ միակ բաղձանքս Էմմայի ունեցած պարտքս հատուցանել է :

— Եւ միթէ հիմայ իրեն ատանկ ջնջին դուրս մը աչքին կերեւնա՞յ , մտածեցէք անգամ մը , որ նա այսօր հարուստ ժառանգորդ մ'է :

— Է՞հ , ի՞նչ կըլլայ . . . ես իմ պարտքս հատուցանել կուզեմ . . . սիրելի Էմմա . . . շատ ատեն է որ զինքը տեսած չեմ . . . նայէ , անոր վստահ եմ , որ իւր հօրը մահը կարտասուէ . . . նա իւր եղբարցը չմանիլ :

— Ուրեմն երանի իրենս Գալով ինձ , կը խոստովանիմ որ շատ

հետաքրքիր եմ թէ արդեօք սա պարոնները ի՞նչպէս պիտի գործածեն իրենց հարստութիւնը :

Պարոն Մօնյուռանի թաղմանէն ութ օր վերջը, Ֆէլիքս նա՝ մակ մը ստացաւ նօտարէ մը, որ կը պարտաւորէր զինքը հետեւեալ օրը նորա կտակի ընթերցմանը ներկայ գտնուիլ :

— Վա՛յ, մօրեղբայրս կտակ է ըրեր, ըսաւ Ֆէլիքս . . . եւ ես ալ ընթերցման ներկայ գտնուելու հրաւիրեալ եմ . . . զարմանալի բան . . . այդ կտակն ինձի ի՞նչ վերաբերութիւն ունի . . . մօրեղբայրս, որ չէր ուղէր զիս տեսնալ, թերեւս իւր մահուանէ վերջն ալ զիս յանդիմանել եւ կամ զիս խելացի ընելու համար ապաշխարանք մը դնել կուղէ . . . ինչ որ է հրաւէրին կը գտնուիմ : Իրաւ խորթելի չէ ինձ մօրեղբորորդւոցս երեսը տեսնել, բայց այս անգամ գուցէ իմման տեսնեմ եւ ասով կրած տագնապս փոխանակի :

Իրեն իմաց տրուած օրը եւ ժամուն Ֆէլիքս իւր մօրեղբոր տունը գնաց : Սրահին մէջ գտաւ իւր մօրեղբորորդիքը, անոնց քոյրը, Տիկին Սառժէն, եւ հանգուցելոյն մէկ քանի վաղեմի սպասաւորները, նաեւ վերջին բժիշկը, որոնք կտակին ընթերցմանը ներկայ գտնուելու համար հրաւիրուած էին :

Այս անգամ Ֆէլիքս խիստ պաղ կերպով բարեւեց երեք եղբարքը, որք ընդհակառակն աւելի գեղեցիկ դէմք մը ցուցուցին, բայց անհանգիստ կերեւնային այնպիսի մարդոց պէս, որք կը վախնան թէ հայրերնին կարեւոր նուիրատուութիւն մը ըրած չըլլայ իր քեռորդւոյն : Իեղձ իմմա խիստ տխուր կերեւնար եւ Ֆէլիքսին բաւական մեծարիչ յարգանք մ'ըրաւ . իսկ սա չէր կրնար զանի դիտելէ յագիլ, քանզի վեց ամիսէ 'ի վեր տեսած չէր . զգալի փոփոխութիւն մ'եղած էր անձին վրայ, եւ այս փոփոխութիւնը կատարելապէս իւր զարգացմանը մէջ էր : Այլ եւս դեռ այն մանուկ աղջիկը չէր, որ փոքրիկ դըպրոցականի մը կը նմանի : Հիմայ գեղակաղմ, հանճարեղ, ծաղկահասակ անձ մ'էր, որուն հասակը այնչափ բարդաւաճմամբ զարգացած էր, որ իրական տարիքէն շատ աւելի մեծ կերեւնար : Յետոյ իւր հօրը մահուանն համար զգացած վիշտը իւր կերպարանքին տեսակ մը մեղամաղձութեան նկարագիր մը տրուած էր, որ զինքն աւելի հրապուրիչ կը ցուցնէր :

Ֆէլիքս չէր կրնար յագենալ իւր մօրեղբորադուստրն ըսքանչանօք դիտելէ, զանի դիտած ատեն՝ հրապոյր մը, անբացարելի յուզումներ կ'ըգար : Յետոյ վերջապէս առ ոչինչ համարելով Տիկին Սառժէի քիթը, որ կարծես իւր սիրտը ծակել կուղէր, իմմաի նստած ակոռին մօտենալով եւ դէպի անոր կողմը ծռելով, ցած ձայնով մ'ըսաւ :

— Խիստ երջանիկ եմ վերջապէս ձեզ տեսնելու կարող ըլլալուս, երկար ատեն է որ կը փափաքէի, ձեր ինձ մատուցած ծառայութեանն համար շնորհակալութիւնս յայտնել . . . թերեւս ապերախտ կարծեցիք զիս, բայց կերպնում որ ապերախտ չեմ :

Իմմա յուզեալ տեսուեցաւ, սակայն զգացածը կեղծել ջանաց պաղ կերպով մը պատասխանելով,

— Չգիտեմ ի՞նչ ըսել կուզէք, ինձ երբէք շնորհակալութիւն չէք պարտիր :

— Ա՛հ, մի՛ փորձէք ինքզինքնիդ արգարացնել . . . ես պարտքեր ունէի, եթէ դուք չըլլայիք, պիտի բանաարկէին զիս, վեհանձնարար օգնեցիք ինձ :

— Ե՛ս, բայց ո՛չ, կըհաւաստեմ ձեզ . . . թէ ես չէի . . . իմ հայրս տալ տուաւ այդ ստակը . . .

— Թերեւս մօրեղբորս յիշատակին յարգանք պարտիմ, բայց չեմ կրնար իրեն պարտական ըլլալ այդ ծառայութիւնը : Տօքթէօս ծուպէս իմացուց ինձ, որ դրապէս մերժեր է ինձ օգնելու . . . մինչդեռ դուք բժշկին ետեւէն էք վաղեր, եւ իւրեն տուեր էք հազար Հինգ հարիւր Փոանքը, որուն անհրաժեշտ պէտք ունէի :

— Ո՛հ, ո՛չ, ի՞նչ կըսէք, Տէր ողորմեա՛, թղթապանակին մէջ հազար Փոանք կար :

— Հազար Փոանք . . . լաւ . . . ըսել է կըհաւանիք հիւմայ, որ ինձի համար այդ գումարը սուած էք :

Իմմա սաստիկ կարմրեցաւ եւ ալ ըսելիքը չգիտնալուն, Ֆէլիքս յարեց,

— Կը հասկնամ հիմայ թէ ինձ պէտք եղած գումարը ո՞վ լրացուց . . . ուրեմն Տօքթէօսը մասնակից է այդ բարեգործութեան . . . ուրեմն միտն տեղ երկու բարերար ունիմ . . .

հազար անգամ շնորհակալ եմ , բայց պիտի հատուցանեմ պարտքըս եւ գուցէ որ մը . . .

Տիկին Սառժէ , որ իւր քիթը Էմմայի ու Ֆելիքսի մէջ տեղ խօթեց , արգիւեց շարունակելու : Պարտէ կինը կձու կերպով մ'ըսաւ երխտասարգին :

— Պարոն , հայրը կորսնցնող նորատի անձի մը ճեա պտպէս չխօսակցուիր , անպատէն է :

— Բայց Տիկին , ես իրեն հետ խիստ լուրջ խնդիրներու վրայ խօսեցայ եւ . . .

— Պարոն Ֆելիքս , Էմմայ իմ հսկողութեանս յանձնուած է հիմայ , եւ չեմ թողոր որ հնար խօսակցիք : Ասկից դատ պարոն , կտակի մը ընթերցումը լսելու համար հաւանքուած ենք եւ ո՛չ թէ խօսելու . . . Զանացէ՛ք ձեր մօրեղբօր յիշատակն յարգել : հոս թատրոն չէ որ գլտորիք . . .

— Ա՛հ , Տիկին ըսածնիդ շատ յոռի է . . . երխտասարգական խենթութեան մը համար այդչափ խստիւ վարուիլ արժան չէք :

— Ա յօ՛ , պարոն , արժանի էք : Մնաց որ ես հիմայ խեղճ Մօնլօսանի վերջին կամայը հնազանդելէ ուրիշ բան չեմ կրնար ընել , որ ինձ յանձնելով իւր ազգկան հսկողութիւնը մանաւանդ պատուիրեց ինձ որ երբէք չթողում ձեզ՝ գալ իրեն հետ տեսնուիլ :

Ֆելիքս պիտի պատասխանէր , բայց նօտարը գալով , լսելն աւելի խելացութիւն դատեց :

Օրինաց մարդն ամենուն աչացը մէջ կարգաց այն անհամբերութիւնը՝ որ ննջեցելոյ մը կտակը իմանալու առթին տեղի կունենայ . ուստի ասոր համար սեղանի մ'առջեւ անցաւ եւ անմիջապէս ընթերցմանն սկսեց :

Պ. Մօնլօսան շուրջ մէկ միլիոն հարիւր հազար ֆունտի հարստութիւն մը կը ձգէր : Մէկ միլիոնը հաւասարապէս իւր չորս դաւակաց մէջ բաժնուեցաւ : Մնացեալ հարիւր հազար ֆունտքէն շատ մը գումարներ իրեն վաղեմի սպասաւորաց , զբօսան հազար ֆունտ իւր վերջին բժիշկին կը կտակէր , որմէ խիստ գո՛հ էր , (եւ որ թողած էր որ մեռնի) , վերջապէս կարգը սա յօդուածին եկաւ ,

« Բեռորդիս՝ Ֆելիքս Ալպաէօն , խիստ ցովակեաց մէկն է . սակայն ՚ի յիշատակ իւր մօրը , որ քոյրս էր , կուգեմ գումար մ'ալ անոր ալ , որպէս զի պարտքերը վճարէ : Աւտի ութը հազար ֆունտքի գումար մը կը ձգեմ , որ անմիջապէս իրեն պիտի յանձնուի . իսկ կարգելում ամեն գաւակացս որ երբէք ըստակ մ'անգամ փոխ չտան իրեն . . . »

Ֆելիքս այս յօդուածին ընթերցումը լսելով սաստիկ վշտացաւ , քանզի մօրեղբայրը կտակին մէջ անգամ կը նուազոտացընէր զինքը : Գալով երեք եղբարց՝ թեթեւ ժպիտ մը տեսնուեցաւ նոցա շրթանցը վրայ , ինքնին կրտէին թէ , հարկ չէր որ հայրերնին այս վերջին յանձնարարութիւնն ընէր :

Կտակեալ նուէրները վճարուելէն ետքը , նոյն հարիւր հազար ֆունտքէն մնացած քառասուն հազարն ալ Տիկին Սառժէի յատկացեալ էր կտակագրոյն վերջը , Պարոն Մօնլօսան իրեն աղջկանը խնամած ուհի կանուանէր այս կի՛նը :

Կտակին ընթերցումը լմնալէն վերջը , նօտարը թըղթաւանակի մը մէջէն քսան հատ հազարական ֆունտքնոց թըղթադրամ հանեց եւ բժիշկին տալով դայն , քիչ շատ հեղնական կերպով մ'ըսաւ ,

— Պարոն , անաւասիկ հանգուցեալ Պարոն Մօնլօսանի կողմանէ տրուած նուէրը , որ խիստ գո՛հ էր ձեր խնամոցն համար :

Բժիշկը յառաջացաւ քաղաքավարական կերպով մը քսան հազար ֆունտքն առնելով , բարեւեց ընկերութիւնն ու հեռացաւ , ինքնին մտածելով ,

— Ա՛հ , եթէ բոլոր դարմանածներս եւ բոլոր մեռնողներն ինձի այսչափ ձգած ըլլային , ի՛նչ կլորիկ հարստութիւն մը կունենայի այսօր :

Յետոյ նօտարը ութ հազար ֆունտք ալ Ֆելիքսին ներկայելով՝ ըսաւ ,

— Ահաւասիկ ձեր մօրեղբօր նուէրը :

Ֆելիքս յառաջացաւ , վարանեցաւ , կարմրեցաւ եւ վերջապէս հաստատ ձայնով մ'ըսաւ ,

— Եթէ ՚ի մեծարանս իմ մօրեղբօր յիշատակին չըլլար , պիտի մերժէի այս նուէրը , որ այնչափ կձու խօսքերով միացած է : Իսկ ես միայն ինձ նկատմամբ խորհուած բարեքը կը լնչեմ՝

մօրեղբայրս իւր վերջին կայարանէն պիտի տեսնայ թերեւս թէ սխալ էր իւր դատողութիւնը :

Յէլլիքս տոմսակներն ընդունելով անոնց մէջէն հազարնոց մը հանեց, արտօրնօք անցաւ սրահէն եւ այնպէս մը կարողացաւ մօրեղբորադստեր քովէն սպրդել, որ Էմմաի ծնգանցը վերայ նետեց հազարնոց տոմսակը, յետոյ մեծ քայլերով հեռացաւ, առանց իսկ մօրեղբորորդւոցն երեսը նայելու :

Յէլլիքսի առաջին հոգն եղաւ իւր ծուպէն բարեկամին տունն երթալ, որուն հինգ հարիւր ֆռանքնոց տոմսակ մը տալով ըսաւ,

— Առէ՛ք, ահաւասիկ ինչ որ կը պարտէի ձեզ առանց գիտնալու, հազուադիւտ բարեկամ :

— Ո՛ր կը մնար ասոր արժանիքը, միմնջեց բփշկը, եթէ ամեն մարդ ալ նոյնպէս ընէր . . . ես կուզեմ որ իմ օրինակս չգտնուի, եւ անղուզական ըլլամ :

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՍԵՐԸ ԵՐԲԵՄՆ ԻՄԱՍՏՆԱՅՆԷ

Պարոն Մօնլօռանի կտակագրոյն ընթերցմանէն ՚ի վեր ութ ամիս անցած էր : Յէլլիքս խիստ աղէկ գործածեր էր այս ժամանակը : Մօրեղբորը կտակի նուէրէն իրեն մնացած վեց հազար հինգ հարիւր ֆրանքով զինքը ձանձրացնող խել մը մանր մուկնր պարտքերը վճարեց, այնպիսի սլարտքեր, զոր երիտասարդ մը առանց ուղեւու կը դիգէ :

Յետոյ բոլորովին անցեալ ընթացքը մէկզի թողլով, մանր թաարոններու քուլիաներէն հրաժարելով, երիտասարդը մեծ եռանդեամբ ինքզինքը աշխատութեան տուաւ :

Հիմայ զգաց թէ ո՛րչափ դժնդակ բան է երբեմն բարե-

կամաց միոյն քսակին դիմել, յոյս մը՝ որոյ մտառկոյ մեծ անխոհմտութիւն է . ուստի այլ եւս այս կացութեան մէջ գանձուիլ չուզեց : Ամենէն առաջ մարդու մը փափաքելի բանը անկախ ըլլալն է, եւ ասոր համար ՚ի հարկէ պէտք եղած պաշարըն ունենալու է : Յէլլիքս գեռ միտքը բերած չէր հարուստ ըլլալ, եւ սակայն աշխարհիս երջանկաց հետ համընթաց քայլել կարողանալու այնչափ ընական տեսչը կ'զգար երբեմն իւր սըրտին մէջ : Իւր մօրեղբորորդւոց գոռոզ կերպարանքը եւ գրեթէ արհամարհոտ արտասանութիւնը կը յիշէր, կ'զգար թէ շատ քաղցր պիտի ըլլայ իրեն, եթէ այլ եւս նոցա պէտք չունենալըն ապացուցանելու կարող ըլլայ, եւ թէ ցուցնէ նոցա որ ինքն կարող եղած է ինքնին վատսկիլ այն հարստութիւնը, զոր իրենք միայն իրենց հօր պարտին :

Ասկից զատ՝ ուրիշ զգացում մը, ուրիշ յիշատակ մ'ալ ունէր, որ դուցէ ամեն բանէ աւելի կերպարանափոխ ըրած էր երիտասարդը : Իւր մօրեղբորադստեր պատկերն իւր երեւակայութեանը կը ներկայանար անդադար, քանի որ Էմման մեծցած, լրջացեալ, գեղեցիկ տեսաւ, քանի որ մանկի մը տեղ անոր վրայ դիւթիչ օրիորդի մը բարեմասնութիւնները գտաւ, զգաց թէ այն մանկին համար ունեցած բարեկամութիւնը սաստիկ սիրոյ փոխուած է օրիորդին համար, կը սիրէր զայն, սակայն զինքը վշտացնողն այն էր թէ իրեն նկատմամբ խիստ յոռի գաղափար մ'ունէր : Անոր հետ կտակագրին ընթերցմանը գրտնուած ատեն խիստ սլաղ կերպով պատասխաներ էր, եւ անկից ՚ի վեր չէր տեսած . գիտէր որ Տիկին Սառօէ չպիտի ընդունէր իւր այցելութիւնները . քանզի կը պնդէր թէ Պարոն Մօնլօռանի վերջին կամացը հպատակելու համար կընէ զայս : Բոլոր ասոնք կը յուսահատեցնէին Յէլլիքսը, սակայն այնչափ՝ ցորչափ կը յուսահատի երիտասարդ եւ գեղեցիկ տղայ մը, որ վիպական յատկութիւն մը չունի եւ չբաղձար բնաւ Ալէքսթէոփ եւ Անթօնիի նմանիլ, իսկ այս կիրքերը չունենալով հանդերձ, որք ուղեղը կը խանգարեն եւ անմտութիւններ գործել կը պարտաւորեն մեզ, կարելի է սաստիկ սիրել եւ ճշմարտի սիրել : Այն կրակներն՝ որք նուազ փայլ ունին, աւելի երկար ժամանակ կը տեսնեն :

Եթէ չէր կարող Էմման տեսնել , գէթ իրաւունք ունէր առ այն զբաղիլ : Գիտէր որ Մալէուպ Պուլլովաուի վրայ վարձեալ խիտ գեղեցիկ տուն մը կը բնակի Տիկին Սառժէի հետ , թէ խիտ աղւոր պարտեղ մ'ունին , որուն շատ կ'ըբաղի իւր մօրեղբորադուստրը , եւ թէ այս կանայք գրեթէ դուրս չեն ելներ , որ Պարոն Մօնյօռանի սգոյ առաջին տարւոյն մէջ բընական է : Վերջապէս՝ Ֆէլիքս կըսէր ինքնին թէ գեղեցիկն էմմա շուրջ տասներկու հազար ֆրանքի եկամուտ մ'ունենալուն՝ զինքը շատ մ'ուզողներ պիտի դանուին , ու ինքը տկար աղքատ ըլլալով անոնց կարգը չպիտի կրնար մտնել , եւ թէ՛ հարբստութիւն ալ վասակելու ըլլայ , իւր մօրեղբորադուստրը չը պիտի ուզէր զինքը , քանզի այնպէս կը հաւատար թէ ցոփահեաց մէկն է :

— Սակայն ինչ բանի մէջ ցոփ եմ , կըսէր ինքնին մեր երիտասարդ սիրահարը : Կը սիրեմ հաճոյք . . . բայց միթէ բընական չէ՞ իմ հասակիս . . . սակայն այս հաճոյքն հայթայթելու համար երբէք այնպիսի դործ մ'ըրած չեմ , որով կարմըրիմ . . . Թռապուքօսի հետ ունեցած կռիւս կրնան երնախտալ . . . բայց եւ այնպէս այն ալ կատակերդութեան տեսիլ մ'է : Գժաղագբար գեղեցիկն էմմա այդ թատերական արահածներուն վրայ աղէկ տեղեկութիւն չունի , դժխամակեր էր , եւ շուրջը գանուողները այդ երիտասարդական խենթութեան մէկ գործն իբրեւ հրեշային աղետ մը նկատել տուած էին : Այն անգութ Տիկին Սառժէն , որ էմմայի քոյիքն է , ուրիշ բան չընէր եթէ ոչ զիս միտակ նորա առջեւ . . . Ա՛հ , ինչո՞ւ ծաղրեցի նորա քիթը . . . բայց նաեւ ինչ կըլլայ եղեր կնոջ մը քիթը ծաղրելէն . . . երիտասարդութիւնն ալ ս'ըջափ անխաճեմ է :

Գալով մօրեղբորդուստրը , Ֆէլիքս ամենեւին զանոնք չէր մտածեր . իրեն ինչուն պէտք այդ երեք չնաչխարհիկներուն վարքը , որոց նմանիլ ալ չէր փափաքէր :

Հաւանականաբար հիմայ ուրիշ բան չեն մտածեր , եթէ ոչ հարստութիւննին աւելցնել , եւ այս ալ իրենց համար երջանկութիւն է , Աստուած տայ որ աւելի աղէկ ըլլան . . . բայց չսիրել երբէք կիները , աղէկ գիտին . . . դնտախաղ կամ թուղթ մը չխաղալ , միթէ կեանք է այս , միայն սա չափ կը սիրեմ որ

ասոնք ալ գեղծելու չէ . . . իրաւ գեղեցիկ ու քաղցր կերեւնայ մարդուն , բայց վտանգաւոր է : Եւ որովհետեւ հասակիս հաճոյքները կը սիրէի , մօրեղբորադուստրս այնպէս հաւատացած է թէ բոլոր այդ պակասութիւններն ունիմ : Երեն ըսած ըլլալու են որ սրիկայ մը , գինեմոլ մը , խաղամոլ մ'եմ . . . ա՛հ , ես հիմայ խելացի եմ , կեանքս բարեկարգ՝ ու աշխատող եմ . . . բայց ինքը չգիտէ զայս . . . եթէ ես անձամբ կարող ըլլայի իրեն ըսել , չպիտի հաւատար խօսքիս . . . ասկից զատ ինչպէս ընելու է , ըստ որում իր խնամածուհին Տիկին Սառժէ չուզեր զիս ընդունիլ . . . վերջապէս եթէ պատահմամբ տեսնայի էմման , գէթ այն մեծ քիթը չպիտի կրնար արգելել ինձ զանի բարեւելու եւ բարի լոյս մ'ըսելու :

Եւ էմման հանդիպելու յուսով Ֆէլիքս յաճախակի Մալէուպի Պուլլովաուը , Մօնսօի պարտէզը չըջագայելու կերթար , ու անկից մինչեւ Պուլճեի անտառը կը յառաջանար , որ մօտ էր : Շատ մը ճեմողներ կը պատահէր հոն , խել մը գեղեցիկ կիներ կը տեսնար , որք զարդարանաց եւ վայելչութեան մասին միտանց հետ կը մրցէին , սակայն էմման չէր տեսնար , եւ բուլլին տխուր ետ կը դառնար , ըսելով ինքնին ,

— Իր պարտէզը կը չըջագայի . . . ա՛հ ինչո՞ւ չեմ կրնար իրեն հետ չըջագայիլ . . . իսկ անշուշտ ինքը բնաւ զիս չխորհէր , սակայն բարեկամ էր ինձ . . . այն հազար ֆրանքը , զոր պարտքերս վճարելու մասին ինձ օգնելու համար տուած էր . . . միթէ ապացոյց մը չէ այս . . . այո՛ , բարեսիրտ էր . . . թերեւս բանտարկութիւն սպառնացեալ ամեն անձանց համար միեւնոյն բանն ընէր :

Ֆէլիքս ճեմողներուն մէջ պարտած ատեն կընէր այս մըտածմունքը , որով շատ անգամ դէմն ելլող անձանց վրայ լինալու կենթարկէր զինքը , ուստի եւ կը պօռային ,

- Զգուշացի՛ր :
 - Միթէ այս պարոնին աչքը չը՞տեսնար :
 - Առջեւնիդ չէ՞ք կրնար նայիլ :
- Եւ այս տեսակ ուրիշ խել մը պարբերութիւններ , որոց չպատասխանելը նախապատիւ կը համարէր :
- Սակայն ասոնցմէ մին այս սովորական բողոքներէն քիչ մը

աւելի դուրս ելնելով հաստ ձայնով մը պօռաց ,

— Անպիտան անասո՛ւն , կնոջս շրջազգեստին վրայ [կոխեցիր . . . եթէ գիտնայի թէ դիտմամբ ըրած է . . .

Յէլլքս կեցցաւ այս պարոնին պատասխանելու համար , որ զինքը անատուն կանուանէր եւ ըիչ մ'ալ աւելի չափն անցուցած էր . բայց գրեթէ անմիջապէս երկու ձիչ լսուեցան , մին այր մարդու եւ միւսը կնոջ ,

— Ա՛հ , Աստուած իմ . . . կաթեղբայրս :

— Ա՛հ , Պարոն Յէլլքս . . .

Յէլլքս աչքերը վերցուց եւ կեցող այս ամուր ձանչցաւ , որ Տիւֆիլէ եւ նորա կինը գեղեցիկ Լօռէթն էր :

Երիտասարդ մսավաճառը յուսահատութենէն ձակտին դարձնելով պօռաց ,

— Կաթեղբայրս անասուն կոչեցի . . . բայց որչափ անպիտան եմ . . . ի՞նչ էչ եմ , Պարոն Յէլլքս ապտակ մը զարկէք ինձ , արժանի եմ :

— Բայց ո՛չ , Տիւֆիլէ արժանի չէք :

— Այո՛ , կաղաչեմ ապտակ մը զարկէ՛ք , շատ գոհ կըլլամ . . . անպիտան անասուն կոչեցի ձեզ . . . ես ալ անասուն եմ :

— Եթէ օտար մ'ըլլար կը բարկանայի , բայց քեզի երբէ՛ք , ասկից զատ կնոջ շրջազգեստին վրայ կոխեցի , արժանի եմ յանդիմանութեան :

— Ո՛հ , պարոն բան մը չէ . . . վրայի ժայլաւէնը քակուեր է , նորէն կը կարուի , հոգ չէ :

— Նորէն կը կարուի . . . բան մ'ըսել չէ . . . եթէ կուզէք դարձեալ կոխեցէք կաթեղբայր :

— Միթէ կարծես թէ զուարճանալու համար կոխեցի կընով շրջազգեստին վրայ . . . մտազբաղ եմ . . . աջ եւ ձախ կը հայէի . . . ձեզ չտեսայ . . . ահա ասոր համար ըրի այդ անպատեհութիւնը . . . բայց կիմայ թողունք ատոնք : Նեղուլթեան մէջ չէք երեւնար կարծեմ . շարթու մէջ սասանկ Պուլօնի անտառը շրջադայելու կուգարք , խանութը որո՞ւ կը ձգէք :

— Խանութը . . . մեք մեծամեծաց տեսակէն ենք , ժամը չորս ու կէսին կը գոցենք . . . այն ատեն վրան բաց կառք մը կը վարձենք ու հոս կուգանք . . . հոս ալ ոտքով կը շըր-

Շաղալինք , վասն զի Լօռէթ կը պնդէ թէ կառքով պտրտելու համար իրեն սեպհական կառքն ըլլալու է :

— Սո՞ւտ է Պարոն Յէլլքս . . . այնչափ գեղեցիկ ու ծանր ձիասպաներու մէջ կառքով պտրտիլ աղւոր բան մը չըլլար :

— Անշո՛ւշտ , բայց սա ալ գիտցած ըլլաք տիկին որ շատ ընտիր վարձու կառքեր ալ կան , եւ այդ անձանց . մեծ մասը , զորս այնչափ գեղեցիկ սպաներու մէջ բազմեալ կը տեսնէք ձեզի չափ ալ հարուստ չեն : Հոս՝ Փարիզու մէջ՝ ամեն բան կը վարձուի , զեղխութիւն , կառք , սպասաւորք , սպասաւորաց զգեստ , զարդարանք , ամեն բան , մինչեւ իսկ համբաւն ալ :

— Կը հասկնա՞ս Լօռէթ , ամեն բան կը վարձուի . . . շատ ուրախ եմ որ իմացար այդ . . . մինչեւ իսկ համբաւ . . . Ըսել է կաթեղբայր , եթէ հանձարեղ մէկու մը համբաւն ունենալ ուզեմ , կրնամ վարձել :

— Բայց շատ սուղի կըլլայ այդ , զոր օրինակ , պէտք է լրագրաց դիմել , յօդուածներ , յայտարարութիւններ դնել սալ . . . զորս դու ինքն պիտի գրես , եւ պիտի ըսես « Պարոն Տիւֆիլէ՛ Փարիզու հանձարեղ մսավաճառը խիստ փափուկ պառակ ունի միշտ » :

— Իրաւ , իրաւ , շատ աղւոր կըլլայ . . . Լօռէթ կուզե՞ս որ Փարիզի հանձարեղ մսավաճառն ըլլամ :

— Ատանկ բան մ'ընելու եղիր , ես ալ ուղղակի Պէլլէլ հօրս տունը կը դառնամ :

— Կը տեսնա՞ք , կինս չուզեր որ հանձարեղ երեւնամ : Բայց ճշմարիտ խնդալու համար կըսէի . . . կաթ եղբայր եթէ համարձակէի առաջարկել . . . շատ մեծ փառք կը համարէինք մեզ , եթէ բարեհաճէիք կնոջս թիւն ընդունիլ :

— Բայց Տիւֆիլէ իրաւունք չունիս ատանկ առաջարկութիւն մ'ընելու , զի ինք ուրիշ ձանրէ մը կերթար :

Յէլլքս նախապատիւ պիտի համարէր Փարիզ վերադառնալ , բայց չէր ուզեր գոռոզ տեսնուիլ եւ կաթեղբորը նեղութիւն պատճառել նորա կնոջ թեւ տալը մերժելով : Բայց նորատի մսավաճառուէին բաւական գեղեցիկ էր եւ անախորժ չէր համարուեր առաջարկութիւնը , վասն զի Տիւֆիլէի կինը ըիչ մը զօրեղ , մսեղ , կարմիր այտերով , բայց Անտալուզի մը

արժանի զոյգ մ'աչեր , կանոնաւոր գիծեր , մարգարտաչար
ակռաներով առոյգ բերան մը , եւ այնչափ կատարելապէս յայտ-
նի գեղեցկութիւնք , որք ամէն տեսակ մարդոց հաճելի են :

Ուստի Ֆէլիքս սիրուն կերպով մը թեւը գեղեցկիկ Լօռէթին
մատոյց , ըսելով ,

— Խիստ երջանիկ կըլլայի ձեզ հետ մէկ քանի անգամ շըր-
ջադայելով :

Մտղկահասակ կինը ուրախութենէն մանիշակագոյն եղաւ
եւ իրեն մատուցուած թեւն ընդունեց . Տիւֆիլէ ալ իւր կնոջը
չափ ուրախ էր , եւ ուրախութեանը մէջ՝ կնոջն ետին անցաւ
եւ ինքն ալ նորա շրջադպեւտին վրայ կոխեց : Պէտք եղաւ որ
Ֆէլիքս ալ բարկանայ իւր կաթեղըօրը , որպէս զի գայ իրենց
քովէն քայլէ :

Քիչ մը կը շրջադայէին , յետոյ ճանբուն եղերքը կը կայնէին՝
ձիասպաններն ու կառքերու մէջ բազմեալ գեղեցկութիւննե-
րը տեսնելու համար :

Գեղեցկիկ զարդարանքներն ու կանանց գլխարկները տես-
նելու համար՝ գեղեցկին Լօռէթ բաւական չէր համարէր իւր
երկու աչերը , եւ ամեն անգամ Տիւֆիլէ կըսէր ,

— Թշուառակահ՛ն , ի՞նչ գեղեցկութիւն . . . Լօռէթ , դու
որ ընտիր բաները կը սիրես , դո՛հ ըլլալու ես . . . կինս միշտ
Պուլճնի անտառը գալ պտըտիլ կուղէ ընտիր բաներ տեսնելու՝
համար . . . Լօռէթ , երբ օրը երկու եզ ծախելու ըլլամ , քե-
զի աղւոր գգեստներ կը շինեմ . . . ասոնց պէս գլխարկ կառ-
նեմ . . .

— Կը լռե՞ս Տիւֆիլէ , եզ ծախելդ միթէ ամեն մարդ գիտ-
նալու է :

— Բայց բոլոր աշխարհի կերածն ալ այն է , ըսել է թէ
անարգելի վիճակ մը չէ : Ո՞հ , ի՞նչ գեղեցկիկ կիներ : Բոլոր ա-
սոնք կոմսուհի մարքիզուհիներ են , այնպէս չէ՞ կաթ եղբայր :

— Բարեկամ ասոնցմէ շատերը կը տեսնամ , որ գիշերը ի-
րաւ յուշարարի ծակին առջեւ մարքիզուհի ու կոմսուհի են ,
բայց չեմ կրնար որոշ ըսել . . . չըսի՞ . . . տե՛ս սա նորատի
կինն , որ այնչափ փայլուն զարդարուած է եւ որ կառքով դէպ
ի մեզ կուգայ . . . Տէլասըման թատրոնի դերասանուհի մ'է ,
կամ գէթ էր . . . Անիթա . . . պզտիկ Անիթան . . .

— Ի՞նչ , այդ կինը . . . իշխանուհի մը չէ՞ :
— Այո՛ , կանթեղաց կամ թատրոնի իշխանուհի կըսենք
մենք ասոնց . . . ա՛հ , Աստուած իմ :

— Ի՞նչ եղաք Պարոն Ֆէլիքս :
— Կառքին մէջ Անիթային քով գտնուող պարոնը Ֆէլի-
սիէնն է , մօրեղբորորդուցս անդրանիկը :

Այս վայրկենին՝ կառքը , որ այնչափ շուտ չէր երթար , ե-
կաւ ճեմողներուն քովէն անցաւ : Օրիորդ Անիթա տեսաւ Ֆէ-
լիքսը , որ գեղեցկիկ Լօռէթը թեւն առած էր , զանի պիտելով
սկսաւ խնդալ եւ գլխովը նշան մ'ըրաւ :

— Այս տիկինն զձեզ բարեւեց կաթեղբայր , պօռաց Տիւ-
ֆիլէ , մինչդեռ Ֆէլիքս միշտ կառքը կը դիտէր , որ հեռացաւ :
Միթէ այդ տեսակ փառաւոր կիները ճանչնալուդ երջանի՞կ էք :

— Ի՞նչ , դու ալ զանոնք ճանչնալ կուղէիր , հարցուց գե-
ղեցկին Լօռէթ աչերը կատաղաբար ամուսնոյն դարձնելով :

— Ահաւասիկ մեր նախանձտը բարկանալ սկսեց : Ասանկ
ալ առտուները՝ երբ սպասուհի կնոջ մը առած միտն իրեն տա-
լով քիչ մը երեսին խնդամ , տիկինն իր տեսարանները կ'սկսի
— Լռէ Տիւֆիլէ , դարձեալ յիմարութեան սկսեցիր :

— Բայց ի՞նչ կըսեմ որ , նախանձոտ է ըսի :
Ֆէլիքս թողուց իւր կաթեղբայրը , որ կնոջն հետ վիճէ :

Մնաս բարով , ըսաւ ու Փարիզ վերադարձաւ : Բայց ճանբան
տեսածին վրայ խորհելով ինքնիրեն կըսէր ,

— Ֆէլիսիէն Անիթայի հետ : Անկարելի է սիտլած ըլլա-
լու եմ :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Կ Ա Ն Ա Յ Բ

Ֆէլիքս տակաւին Պուլճնի անտառը պատահածին վրայ
կը խորհէր , երբ՝ հետեւեալ առաւօտուն քաղցրաբոյր , բայց

գէշ գրուած տոմսակ մը ստացաւ : Կնոջմէ մը եկած ըլլալը նա-
խազգաց , եւ զարմացման ճիչ մ'արձակեց , տեսնելով որ Անի-
թայէն է : Աճապարեց տոմսակը կարդալու :

« Իմ փոքրիկ բարի Ֆելիքսս . երէկ մահը կնոջ մը հետ էիր :
Ի՞նչ շեղջակոյտ , իրաւ գէմքը գէշ չէր . բայց ամբողջութիւնը
մէկտեղ առնելով վայելուչ բան մը չէր : Եկուր ինձի ըսէ թէ ուս-
կից որսացիր այդ կէտը . եկո՛ւր դտիր զիս , զամանալի բաներ
ուսնիմ քեզի պատմելիք՝ այնպիսի մէկու մը վրայօք , զոր խիստ
աղէկ կը ճանչնաս . . . Շօսէ տ'Անթէն թիւ 24 տունը կը բը-
նակիմ : Աղէկ միտքս եկաւ , Անիթա մի հարցնէր , ըսածդ չը
պիտի հասկնան : Ես հիմայ Տիկին Միռօպէլլի կը կոչուիմ , Իաա-
լական սերնդէ յառաջացած : Հիմայ կիթառ նուագել կը սորվիմ .
խօսի քեզի համար միշտ

Անիթա

Ֆելիքս կրկին կարդաց տոմսակը եւ հետաքրքիր ըլլալով
հասկնալու թէ՛ արդեօք առջի իրիկուն Ֆելիսիէնն յիստահամբաւ
կնոջ մը հետ տեսած ըլլալուն խաբուած չէ՞ . ուստի կըսէր ինք-
նին , « ընդունելու եմ հրաւէրը , ո՛չ թէ վերստին Անիթայի
հետ առնչութիւն ունենալու համար , այլ կուղեմ հասկնալ թէ
արդարեւ Ֆելիսիէն իր հե՛տն էր :

Եւ ժամը երկուքին ատենները Ֆելիքս որոշեալ տեղը դը-
նաց , խիստ գեղեցիկ տուն մը մտաւ , գոնապան մը գտաւ ,
որուն օթեակը սրահ մ'էր , ուր դաշնակ մ'ալ կար : Տիկին
Միռօպէլլին հարցուց պարոնի մը , որ լրագիր կարդալու զբա-
ղած էր եւ որ առանց գլուխը դարցնելու պատասխանեց ,

— Առաջին յարկը . . . աջ կողմի դուռը :

Ֆելիքս՝ զանի ընթերցումէն արդիւնելու համար , գրեթէ
ներողութիւն խնդրել պիտի փորձէր , սակայն վեր ելլել փու-
թաց , ինքնիրեն ըսելով :

— Ինչպէս ալ ամեն բան կը կատարելագործուի ֆարիդի
մէջ . . . կամաց կամաց իրենց դուռը Զուլցերիացի մը պիտի
դնեն , նախ Զուլցերիացիին դիմելու է հասկնալու համար թէ
արդեօք պարոն դոնապանը հո՞ն է , թէ արդեօք կրնայ զինքն
ընդունիլ : Ի՛նչպէս ալ կայլափոխի ֆարիդ , ամեն կողմ մե՛ծ

վայելչութիւն . սակայն սա ալ խոստովանելու է թէ տակաւին
Անդրիացեոց աստիճանին չկրցինք հասնիլ , որոց ծխանի մաք-
րիչներն ալ կառք ունին եւ ամենաստորին անձինք ալ միշտ
սեւ զգեստ եւ ձերմակ փողկապ կը դնեն : Արդեօք մենք ալ
մինչեւ այն աստիճանին պիտի հասնի՞նք . յուսալու՞ է թէ ո՛չ :
Ճշմարիտ գեղեցիկ զարդարուած մուրացկանէ մ'ալ աւելի տը-
գեղ բան չկայ :

Ֆելիքս դրան զանդալը զարկաւ : Պզտիկ կռում մը (մա-
նուկ սպասաւոր) եկաւ դուռը բացաւ : Խիստ չքեղ զարդար-
ւած սրահ մը մտաւ , յետոյ բաւական տգեղ սենեկապանուէի
մը (թերեւս սոցիալաց միտքը չցրելու համար) եկաւ հասկնա-
լու թէ ո՞վ էր ներկայացողը : Երիտասարդը անուռն ըսաւ ,
անմիջապէս սենեկապանուէին առաջնորդեց զայն պոռալով ,

— Ա՛հ , դուք կրնաք մտնել պարոն , Տիկինը ձեզի համար
տեսանելի է :

Պերճութեամբ եւ նազանօք զարդարուած սրահէ մը անց-
նելէն ետքը , Ֆելիքս հեշտական փոքրիկ խցիկ մը առաջնորդ-
ւեցաւ , ուր չորս կողմը հայելիներով , թաւիչով , սնդուսով ու
ծաղիկներով շալոյթէն զարդարուած էր , տեսածներովն այնչափ
չլացան աչերն , որ սենեկի մէջ տեղը կայնելով՝ պօռաց ,

— Բայց ո՞ւր եմ ես , բոլոր տեսածներս կը յախշտակեն
միտքս : Ուրեմն պայիկ մը կամ գէթ դիցուէի մ'է հօս ընակողը :

— Այո՛ սիրելիս . . . եւ դիցուէին ես եմ : Զայս ըսելով
Անիթա , որ բազմոցի մը վրայ պռուկած կամ գրեթէ ընկողմ-
նեալ էր , մէկանց ոտք ելաւ եւ վիզը ցատկելով՝ ողջագուրեց
Ֆելիքսը :

Երիտասարդը թողուց . . . մարդ միշտ այսպէս կուզէ ,
Յովսէփ գեղեցիկին նմանիլ բաղձալով , եւ այս ալ քիչ մը քիչ
փորձիչ չէ : Յետոյ Անիթային քով նստելով ըսաւ անոր ,

— Կը բարեմաղթեմ . . . ուրեմն հարստացա՞ր :

— Այո՛ սրբելիս . . . խիստ գովելի վիճակի մը մէջ եմ . . .
վերջապէս նորաձեւութեան գեղեցիկներէն մին կը համարուիմ :

— Եւ ինչո՞ւ համար է այդ Միռօպէլլի անունը :

— Քանզի Անիթա անունը խիստ ծանօթացած էր Պուլը-
վառի վրայ :

- Եւ հիմայ կիթա՞ն կը նուագես :
- Գեռ ուրիշ շատ բաներ ալ . . . հիմայ Իտալացի եղայ . միայն ձայնս պակաս է :
- Շատ սքանչելի է բնակարանդ . . . ոսկեղօծեալ կարասիք , հայլիններ , ամենէն հաղուագիւտ ծաղիկներ . . . ուրեմն բան պակաս չէ :
- Լաւ եւս ըսէ՛ թէ բան մը պակաս չեն ըներ . . . մօրեղբորորդիդ շատ աղէկ կը վարուի , այնպէս չէ՞ :
- Ի՞նչ , իրա՞ւ : Ուրեմն չէի սխալեր . . . երէկ կառքիդ մէջ հետդ գտնուողը Ֆէլիսիէն Մօնթօնանն էր :
- Ինքն իսկ :
- Սիրահա՞րդ է :
- Սիրահա՞րս , ո՛հ , ոչ . . . որչափ ալ առաջ կերթաս : Իմ մատակարարս է , որ նոյն բանն ըսել չէ : Բայց շատ անպիտան է , շատ ապուշ , անբարտաւանին մէկը , որուն երբէք չեմ կրնար սէր տալ . . . մօրեղբորորդիդ ճշգրիտ ոտարէ մը , խեցեմորթ մ'ի :
- Ա՞յդպէս կը վարուիս միշտ : Այնպիսի մէկը որ գեղզ պալատի մը մէջ կամ անոր նման տեղ մը կը դնէ :
- Միթէ չգիտե՞ս որ վճարողները չեն սրտի բարեկամը , թերեւս երբեմն բացառութիւն ըլլայ , բայց այնպիսիք ալ հազուագիւտ են :
- Աերջպպէս չեմ հասկնար : Ֆէլիսիէն՝ այն խելօք տղան , որ չէր համարձակէր աչքը վերցնել կնոջ մը դէմ :
- Ֆէլիսիէն . . . սակայն կը պաշտէ կիները . . . ուղածնին ընել պիտի տային . . . արդէն Քառօլինայի եւ փոքրիկ Թանթինէթի հետ բաւական ժամանակ անցուց . . . իսկ զիս տեսած ատենը՝ մէկ նայուածք մ'ըրի , եւ անմիջապէս գերի եղաւ ինձ . . . իսկ որովհետեւ կը սիրեմ պարը , գրեթէ ամեն դիչեր պարահանդէս կը տանի զիս :
- Հօրը կենդանութեանը ատեն՝ ամեն գիչեր ժամը տասնին կը պառկեր :
- Աղէկ որ դուք կըսէք , անոր վնասը լեցնել կուզէ : Դըպրոցականաց պէս է , կաթերնին առանց շաքարի կուտան , բայց ասոնք վերջը օշարակ կը շինեն :

- Բայց ձեզմէ առաջ արդէն ուրիշ սիրուհի ունէ՞ր :
- Անտարակոյս . . . ըստ որում , կը կրկնեմ դարձեալ , այդ պարօնը կը պաշտէ մեր սեռը : Եթէ ես չհսկէի , Անթօնիա անուամբ կլին մը կայ , որուն աչքը պակաս չէ վրայէն , ձեռքէս յափշտակել պիտի ուզէր . . . իսկ ես աղէկ բռնած եմ զինքը , եթէ թողում , փետտած հաւ պիտի դարձնեն դայն :
- Բայց Անիթա , շատ գէշ կը խօսիս . . . ի՞նչպէս բոլորովին փետտել կուզես մօրեղբորորդիս :
- Ինչո՞ւ չէ . . . ես կամ ուրիշ մը . . . եթէ ես չըլլամ անպատճառ ուրիշ մը պիտի կողոպտէ . . . : Ա՛ , ես աղէկ կը ձանձնամ հիմայ Ֆէլիսիէնը՝ իբր թէ ես մեղրամոմէ շինած ըլլայի զինքը . . . ճշմարիտ հացի խմոր է : Աղէկ միտքս եկաւ , Ֆէլիքս , ո՞վ է այն 'ի կին ծպտեալ թնդանթաձիգ զինուորը , զոր երէկ անտառին մէջ թեւդ առած էիր :
- Կաթեղբորս կիներն է . . . մտավաճառ է :
- Հա՛ , ատանկ ըլլալու է , «Ի՞նչ զիտտեր կըսէի ինքնին» , ուրեմն հիմայ մտավաճառներու հետ է գործդ :
- Ես հիմայ մէկու մը հետ գործ չունիմ . . . ալ խելօքացայ : Կարգին մտայ :
- Ի՞նչ , հիւա՞նդ ես :
- Ամենեւին , եթէ կործանել ուղողներ կան , ես ալ ընդհակառակն հարստանալ կը փափաքիմ :
- Ե՛յ բարեկամ , ուրեմն դուն ուրիշներէն նուազ անմիտ ես :
- Դրան զանգակը զարնուեցաւ , սենեկապանուհին եկաւ աղդարարեց ,
- Պարոն Ֆէլիսիէն :
- Լաւ . . . թող սպասէ սրահը . . . տակաւին տեսանելի չեմ . . . հիմայ . . . ես զանգակը կը զարնեմ :
- Սենեկապանուհին դուրս ելաւ :
- Չար սատանա՛յ , բայց ի՞նչ պիտի խորհի արդեօք Ֆէլիսիէն զիս հոս դանելով , ըսաւ Ֆէլիքս :
- Ա՛հ , ամենեւին փոյթ չէ ինձ , միթէ ինծի համար պատճառաբանութիւն պակաս է . . . բայց ես աւելի կուզեմ որ առանց զքեզ տեսնելու , մօրեղբորորդուդ հետ ունենայիք խօ-

սակցութիւնս լսես , որպէս զի հասկնաս ու դատես իրեն վրայ ունեցած իշխանութիւնս . . . սա սենեակը մտի՛ր , հոնկէջ շատ աղէկ կը լսես . . . եւ եթէ վարագոյրը մէկդի ընես կրնաս նաեւ տեսնալ :

— Բայց ես ձեր խօսակցութիւնները մտիկ ընել չեմ ուզեր :

— Այո՛ , այո՛ , կուզեմ որ ձանձնաս մօրեղբորորդիդ , զոր կատու մը կը կարծես . . . մտի՛ր . . .

— Բայց գոնէ ուրիշ բաներ չտեսնեմ . . .

— Ա՛յ անիրաւ . . . հոգ մ՛ըներ :

Անիթա քովի խցիկը հրեց Ֆէլիքսը եւ դուռը դոցեց : Յետոյ զանգակը զարնելով սենեկապանուհին տեսնուեցաւ , որուն հրամայեց որ Ֆէլիսիէնը մայնէ :

Խօստասիրտ Պարոն Մօնլուանի անդրանիկ որդին Անիթայի սենեակը մտաւ : Ո՛ւր էր առջի երիտասարդ Ֆէլիսիէնը : Ութ ամսուան մէջ կարծես տասը տարուան ծերացածէ՛ր , իւր թարմ ու վարդագոյն դէմքին տեղ՝ դեղնած երկնցած ու խոնջեալ երես մը , թարչամեալ գծեր , դորմած ու շուրջը կարմրած ազանողիք . կերպարանքին վրայ տարտամ տպաւորութիւն մը կը տեսնաք . վերջապէս այնպիսի մէկը , որ հաճոյքը չարաչար եղծած եւ զոր բժիշկ մը տեսած ատեն՝ անպատճառ ետ կենալուես այդ ընթացքէն , պիտի ըսէր :

Ֆէլիսիէն բաւական ցասկոտ սենեակը մտաւ , ու բազմոցի մը վրայ իյնալով , ըսաւ ,

— Այ զիս միջնասենեակն ստասել կուտաք . . . բայց ի՞նչ պատճառաւ ուրեմն անմիջապէս չէք թողուր որ ձեր գտնուած սենեակը մտնամ :

— Քանզի՛ կարծեմ այնպէս ուզեցի : Նախ՝ միջնասենեակը չկեցաք , քանզի սրահն էիք :

— Ձեմ հասկնար թէ ի՞նչ գաղափարաւ կարգելէք իմ մըտնայս :

— Բայց դուք բան մը չէ՞ք հասկնար : Եթէ նոր կը հագուէի՞ :

— Ի՞նչ կըլլար , միթէ առաջին անգամն է որ գձեղ շապիքով կը տեսնամ :

— Ի՞նչ աղւոր կը լսօսիք , թմբուկ զարնել տալու էիք այդ ըսածներդ :

— Հարկ չէ թմբուկ զարնել : Միթէ ամեն մարդ չգիտէ՞ իմ սիրուհիս ըլլալնիդ :

— Ուրեմն գլխարկնուդ վրայ դրել տայիք , աւելի աղէկ կը հասկցուէր :

— Կարծեմ այսօր ջիղերնուդ դպած է , ըսածներս գէշի կը մեկնէք :

— Այո՛ , ջիղերուս դպած է , եւ դուք էք պատճառը . . . կատաղի մը պէս կը մտնաք հոս , անմիջապէս պարոնը քովս չձգելնուն համար կ'սկսի տեսարանները կատարել . . . եւ այս ալ՝ որովհետեւ ոտքերս ջուրը դրեր էի . . .

— Օ՛ն , յանցանքն իմն է . . . է՛յ , ալ բաւական է սիրելիս , մի՛ բարկանաք :

Ու Ֆէլիսիէն ծաղկահասակ կնոջ մօտենալով ձեռքը բռնեց ու շրթանցը տարաւ , իսկ Անիթա ուժգին քաշելով ձեռքը՝ ըսաւ ,

— Թողէ՛ք . . . զիս սիրել կը կեղծէք , սակայն կը տեսնեմ որ ստոյգ չէ . . . ինձի համար չէ հառաչքնիդ :

— Ա՛հ , գեղեցիկդ իմ . . . արժանի չեմ այդ նախատանացդ . . . եւ կուզեմ . . .

— Թողէ՛ք զիս , կըսեմ ձեզի . . . երբ մէկը կին մը կը սիրէ , կը փութայ նորա ամեն բաղձանքը կատարել , նորա ամենափոքր յօժարութիւններն յագեցնել :

— Բայց կարծեմ թէ իմ ըրածս ալ այդ է :

— Իսկ ես ընաւ այդպէս չեմ տեսներ , սակից երկու օր առաջ՝ գոհարավաճառի մը խանութը ազամանդեայ ու վարդակնեայ (սօղա) փոքրիկ պոռ մը ցուցուցի ձեզ , որ խիստ ախորժելի երեւաց ինձ . . . ես կարծէի թէ պարոնը պիտի փութայ անմիջապէս բերել զայն . . . ջնջին գոհար մը . . . աղէկ զիտեմ որ առ առաւելն չորս հինգ հազար ֆրանքի բան մ'է . . . սակայն մտքերնուդ անգամ չանցաւ այդպիսի ընծայ մ'ընել ինձ :

Ֆէլիսիէն քիչ մը երեսը կախեց , սակայն խօսք փնտռելով պատասխանեց ,

— Ա՛յ , այդ գոհարը . . . այո՛ , պոռ մ'էր գիտեմ . . . բայց շատ որոշ չգիտէի . . . եւ սնա այդ պատճառաւ . . . տարակուսելով թէ . . .

— Կը ստէք . . . դուք շատ աղէկ գիտէք ինձ հաճելի եւ
րեւցածը . . . ա՛հ, եթէ օրիորդ Անթօնիա միեւնոյն բաղձան-
քըն յայտնէր ձեզ, արդէն շատոնց գոհ կընէիք զինքը :

— Ա՛հ, ի՛նչ գաղաբար . . . բայց ի՞նչ է այդ Անթօնիայի
խօսքը, որ մտքէս անգամ չանցնիր, մինչդեռ միայն զձեզ կը
պաշտեմ . . . օ՛հ սիրեցեալդ իմ, գրկախառնութիւն մը . . .
եւ . . .

Անթիթա խստիւ հրեց իր երկրպագուն, ու մէկանց օտք ել-
նելով պօռաց :

— Ա՛հ, հրէ՛չը, մատնէ՛չը, անարդը՛ . . . դեռ ինձ մօտե-
նալ կը ժողի . . . բրաբրին կը ժանտահոտի . . . ես չեմ կրնար
այդպիսի հոտ մը հանդուրժել : Օրիորդ Անթօնիայի սիրած հոտն
է, անտարակոյս իր տունէն կուգաք, որ զձեզ այդպէս քաղց-
րաբուրեր է :

— Կերդնում սր այդպէս բան չկայ . . . զարդարանաց սե-
ղանիս վրայ խել մը սրուակներ կային, որն որ ձեռքս եկաւ,
թաշկինակիս կաթեցուցի, եւ այս ալ առանց ուշադրութեան :

— Կը ստէք . . . Անթօնիայի հաճելի ըլլալու համար է . . .
լաւ պարոն, ես ալ Պուռսիքօֆ իշխանին հետ պիտի սկսիմ . . .
հարուստ Ռուս իշխան մ'է, որ իր ծաղկեփունջերովն ու սի-
րատմաներովը կը նեղէ զիս : Ա՛հ, նա ինձ պօռչներ ալ կուտայ,
գիտեմ, եւ բրաբրին չհոտիր :

Յէլիսիէն սենեկին մէջ Անթիթային ետեւէն վազեց, ըսելով .

— Ա՛հ, գորովալիբ բարեկամուհիս, չպիտի ընէք զայդ .
այդ Ռուս իշխանը չպիտի լսէք, այնպէ՞ս չէ . . . զիս վշտա-
ցնելու համար միայն այդպէս կըսէք :

— Ա յո՛, այո՛, պիտի լսեմ Պուռսիքօֆը . . . գացէք Ան-
թօնիայի համար քաղցրաբոյր հոտեր գործածեցէք . . . գացէք
իրեն աղամանդ առէք :

— Բայց երբէք : Միայն զձեզ կը պաշտեմ . . . անաւասիկ
երթամ առնեմ, ու ձեր ծնգանցը վրայ պիտի դնեմ . . . նախ
տուն երթամ ու փոխեմ ձերմակեղեններս, որուն հոտն անա-
խորժ է ձեզ . . . այն ատեն ալ չպիտի մերժէք զիս, այն-
պէս չէ՞ :

— Ա յն՛ ատեն . . . այն ատեն գուցէ սիրտս իջնայ եւ նե-
րեմ ձեզ :

— Ահաւասիկ կը վազեմ, կը թռիմ ու կը վերադառնամ :
Յէլիսիէն գնաց, Յէլիքս խցիկէն դուրս ելաւ : Անթիթա իր
բազմոցին վրայ ինկաւ, ուր խնդալէն կը ճաթէր . յետոյ Յէ-
լիքսի երեսը նայելով,

— Ահաւասիկ այսպէս կը խաղան, սիրելի բարեկամ . հի-
մայ ի՞նչպէս, տակաւին անմեղ թռչնի՞կ մը կը կարծես զինքը :

— Ճշմարիտ, կը խոստովանիմ որ աչացս հաւատալ չեմ
ուզեր . . . բայց որչափ փոխուեր է, Աստուած իմ : Մօրեղ-
բայր . . . եթէ հիմայ տեսնայիր քու ամենասիրեցեալդ . . .
բայց ո՛չ, աւելի աղեկ է որ այսպէս չտեսնար դայն . . . հի-
մայ աղամանդ բերելու գնաց :

— Անտարակոյս : Աստուած տար որ միատեղ չբերէր :

— Մնաս բարով Անթիթա :

— Յուսամ թէ դարձեալ զիս տեսնելու կուգաս երբեմն :

— Ա յո . . . աղէկ միտքս եկաւ, Թասպուքօս ի՞նչպէս է :

— Հա, հա, հա . . . նա հիմայ ասկից երեք յարկ տակն է :
Յէլիքս հեռացաւ, ինքնին մտածելով որ եթէ մօրեղքօր
որդին այսպէս խաղալիք ըլլայ կանանց, իրեն մէկ չորրորդ
միլիոնը շատ չտեւէր կը հաւանի :

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՄՕՆՍՍԻ ՊԱՐՏԵԶԸ. — ՓՈՔՐԻԿ ՄՈՒՐԱՑԿՈՒՀԻՆ

Անշուշտ Մօնսօի պարտէզը գիտէք : Աքանչելի տեղ մը,
գեղեցիկ ծառուղիներ, սիւգախառն հովանիք, անձաւ մը, գե-
ղատեսիլ մարդ, ընտիր ծաղիկներ : ձեմոդներն հրապուրելու
համար պէտք եղածէն աւելի են ասոնք, եւ սակայն այս զօ-
տավարի սքանչելեաց մին՝ հոն շատ մարդ չգտնուիրն է : Ի՞նչ
է ասոր պատճառը : Թաղն է, որ տակաւին հեռու է կեղրո-
նէն, Փարիզու շարժումէն :

Ֆէլիքս թէեւ հեռուն կը բնակէր , սակայն գործերէն քիչ մը ազատելուն պէս Մօնսօի պարտէզը շրջագայելու կերթար , թէեւ խիստ քիչ անգամ կրնար գործէ ազատ մնալ , քանզի ժամանակէ մ'ի վեր աշխատութեան այնչափ փափաք տուած էր , եւ այնչափ աղէկ գիտեր իրեն յանձնուած գործերը տնօրինել , որ վաճառատան տնօրէնը ղինքը կարեւոր պաշտօնի մը բարձրացուց , եւ իմացուց իրեն որ վաճառատան շահուցը մէջ բաժին պիտի ունենայ : Ֆէլիքս կը գոռոզանար իւր այս նոր կացութեանը վրայ եւ կըսէր ինքնին ,

« Եթէ Էմմա գիտնար որ ինձմէ դո՛ս են , ինձ նկատմամբ ունեցած կարծիքը պիտի փոխէր . . . եթէ ես անձամբ ըսէի իրեն , թերեւս չպիտի հաւատար . . . ասկից զատ չեն ուզեր զիս ընդունիլ . . . : Ա՛հ Տիկին Սառժէ , ո՞ւսկից էր միտքս եկաւ քթիդ համար պատեան նուիրելը » :

Մօնսօի պարտէզին մէջ պտտած ատեն այս մտածութիւնները կընէր : Գեռ նոր մտած էր ծառուղիներէն միոյն մէջ , երբ ութը տասը տարեկան պզտիկ աղջիկ մը առջին ելնելով ժպտեցաւ երեսին , բայց առանց ողորմութիւն ուղեւու համար ձեռք երկնցնելու : Գեղնած՝ վտիտ մանուկ մ'էր , որուն քաղցր ու կարեկից դէմքը կեղծ տպաւորութիւն մը , արտասուադէմ ու արուեստական տխրութիւն մը չէր յայտնէր , որք շատ անգամ կը տեսնուին այն տղայոց վրայ , որոց մուրացկանութիւն դաս տրուած է : Այս մանուկն աղքատիկ կերպով հագուած , սակայն պատուած չէր : Երեսը մաքուր . վրան չէր տեսնուէր այն տեսակ մը թշուառութիւնը , որ աւելի կարեկից ընել տալու համար՝ կարծեն թէ գարշելի ցուցնել հարկ է :

Ֆէլիքս՝ որ բաւական յաճախ կուգար Մօնսօի պարտէզը , առաջին շրջագայութեանը ատեն տեսած էր այս պզտիկ աղջիկը , որ կոյր աղքատ կնոջ մը ետեւէն կերթար : Մանուկն անցորդներուն երեսը կը նայէր առանց ողորմութիւն խնդրելու , բայց իւր նայուածքը այնչափ աղքու եւ այնչափ սրտաշարժ էր՝ որ խօսքէ աւելի կը բացատրէր : Ֆէլիքս փոքրիկ աղջկան ձեռքը արծաթ դրամ մը դնելով , առանց նորա շնորհակալութիւնները մտիկ ընելու հեռացած էր :

Բայց ամեն անգամ պարտէզը գալուն , խեղճ կոյրն ու աղ-

ջիկը տեսած էր հոն : Ամեն ատեն երիտասարդն աղջկան մօտենալով իր նուէրը կուտար : Ասի իրեն համար հաճոյք մը եւ գրեթէ պարտականութիւն մը եղած էր , եւ առանց փոքրիկ մուրացկունի տեսնելու շրջագայած ատեն՝ անհանգիստ կըլլար :

Փոքրիկ աղջիկն ալ իր կողմանէ մեծ ուրախութիւն կըզգար այս սլարոնը տեսած ատեն , որ իրեն ու մօրն համար այնչափ առատաձեռն էր : Նաեւ հեռուէն տեսած ատեն կը պօռար , « Ահաւասիկ ինքը » եւ խեղճ կոյրը թողլով Ֆէլիքսի առջեւ կը վազէր , որ ժպտելով եւ սրտառուչ ձայնիւ մը կըսէր ,

— Ա՛հ պարոն , ձեզմէ ողորմութիւն խնդրելու չեմ վազեր , այլ մօրս եւ իմ կողմանէ շնորհակալ ըլլալու համար :

Այս անգամ Ֆէլիքս քաղցրութեամբ տղուն ձեռքը սեղմելով ըսաւ ,

- Բարեւ սիրուն մանկիկ , ո՞ւր է մայրդ :
- Հոն նստարանին վրայ . . . անհանգիստ չէ , քանզի իրեն ըսի թէ ձեզ տեսայ ու բարեւել պիտի երթամ :
- Լաւ , զաւակս , բայց ես ալ կուզեմ որ իմ բաղդի փոփոխութեանս դուք ալ մասնակցիք : Առաջուրնէ աւելի պիտի շահիմ . . . ուստի աւելի առատաձեռն պիտի ըլլամ ձեզ , ահաւասիկ ա՛ն սա եւ մօրդ տար :

Չայս ըսելով Ֆէլիքս փոքրիկ աղջկան ձեռքը քսան ֆրանքնոց մը տուաւ : Աղջիկը զարմացման ճիչ մը արձըկեց , ու յետոյ միմնջեց ,

— Քսան ֆրանք , ա՛հ պարոն շատ էր . . . մայրս պիտի յանդիմանէ զիս այսչափ մեծ գումար մը առնելուս . . . ինչո՞ւ համար այդչափ ստակ կուտաք ինձ , պարոն :

— Կը կրկնեմ դարձեալ , հիմայ աւելի հարուստ եմ քան ինչ որ էի ասկից ութ օր առաջ , եւ յետոյ քանզի իմ նոր պաշտօնս ասկից վերջը ալ այնչափ յաճախ հօս դալու չպիտի ներէ , ուստի կը տեսնաս որ աւելի առատաձեռն գտնուելու եմ : Ծ՛ն , մօրդ տար այդ քսան ֆրանքը եւ ըսէ թէ իրեն համար տակաւին երջանկութիւն կայ երկրիս վրայ , ըստ որում քեզի պէս այսչափ գեղեցիկ , այսչափ անձնուէր աղջիկ մ'ունի :

Մանկան աչերն արտասուօք լցան , յայտնի կը տեսնուէր թէ կուզէ՝ բայց չհամարձակիր այսչափ բարերար ձեռք մը համբուրել . . . առաւ այս քսան ֆրանքը սօսալով ,

— Ա՛հ , երջանիկ պիտի ընեմ մայրս : Յետոյ վազելով դէպ 'ի խեղճ կոյրին նստարանը գնաց :

Յէլիքս շրջագայութիւնը շարունակեց : Արդէն երկար ատենէ 'ի վեր փոքրիկ մուրացկուհին մոռցած էր , երբ բաւական հեռուն տեսաւ որ երկու սղաւոր կանայք իրեն կուգային : Սիրտը բարբախեց , կեցաւ եւ ուշադրութեամբ դիտեց . . . յետոյ տեսաւ որ այս երկու անձանց մին իր մօրեղբորադուստրն էման էր :

— Ինքն է . . . ո՛հ , այս ինքն է , ըսաւ ինքնիրեն . . . վերջապէս տեսայ . . . ի՛նչ երջանկութիւն որ այսօր հոս եմ եկեր . . . պիտի կրնամ քիչ մը հետը խօսիլ . . . յուսամ թէ իրնաւ մածոնին չպիտի արգիլէ ինձ զայն բարեւել :

Արդարեւ էման ու Տիկին Սառժէն էր , որք արտաքոյ կարգի դիպուածով մը Մօնսօի պարտէզը շրջագայելու եկած էին : Տիկնայք դէպ 'ի Յէլիքսի կողմը կը յառաջանային , եւ որովհետեւ երկուքն ալ քօղարկեալ էին , չորոշեցին երիտասարդը , որ առանց քալելու ծառի մը կրթներ էր : Մէկանց առջեւնին ելաւ ու բարեւելով զանոնք կեցուց :

Էման իւր հօրաքեռորդին ճանչնալով յուզուեցաւ , եւ Տիկին Սառժէ կծու ձայնով մը ճչեց :

— Պարոն Յէլիքս . . . ա՛հ ի՞նչ պատահմունք :

— Շնորհակալ եմ դիպուածոյ գործին , որ զձեզ հոս գըտնելու առիթ տուաւ , սիրելի մօրեղբորադուստրս , քանզի շատ երկար ատենէ 'ի վեր զձեզ տեսնելու եւ ձեզմէ լուր առնելու տենչանօք կը սոչորիմ :

— Շնորհակալ եմ , դուք ի՞նչպէս էք :

— Ա յո՛ , շատ աղէկ եմ . . . : Ա՛հ , աւելի գեղեցկացեր էք , եւ սակայն դժուար էր . . .

— Ա յո՛ , այո՛ , աղէկ ենք . . . եւ շատ աղւոր ենք , ըսաւ Տիկին Սառժէ ցասկոտ կերպով մը , եւ հիմայ որ գիտէք բոլոր ասոնք . . . եկէք էման , մնաք բարով Պարոն Յէլիքս . . .

Սակայն Յէլիքս պառաւ կնոջն առջեւ անցնելով , հաստատ ձայնիւ մ՛ըսաւ :

— Վայրկեան մ՛ալ Տիկին , յուսամ թէ պիտի ներէք ինձ մօրեղբորադուստրս հետ քանի մը բառ խօսելու , զոր տասն եւ

մէկ ամիսէ 'ի վեր տեսած չեմ , եւ միթէ այնչափ ահաբկու մէ՞կն եմ որ ներկայութիւնս երկիւղ ազդէ . . . : Թափեց դատ ի՛նչ ըրած եմ ես այսպէս մերժուելու համար . . . երիտասարդական մէկ քանի անմտութեանց համար միթէ վայրենոյ մը պէ՞ս ընդունուելու եմ Գիտցէք Տիկին , ես յոռի ճանքու մը մէջ չյարատեւեցի , աշխատութեան մէջ ունեցած դործօնութիւնս , վարուցս բարեկարգութեան շնորհիւ վաճառատան տնօրէնը՝ լորոյ քով իրբեւ պարզ պաշտօնաւոր մ՛էի , զիս առաջին գործակատարի աստիճանը բարձրացուց եւ խոստացաւ շահու բաժին մը տալ ինձ վաճառատան գործերէն :

— Կարելի է պարոն , աւելի աղէկ , եթէ ճշմարիտ է , Բայց ըստ որում այդչափ աղէկ կաշխատիք հիմայ , ցորեկ ատեն ի՞նչ կրնէք Մօնսօի պարտէզին մէջ , միթէ հոս այսպէս շրջագայելով կը գրէք ձեր գրերը :

— Տիկին , ամեն գործոց մէջ երբեմն պարապոյ ժամեր ալ կան . . . ես իմ պարապոյ ժամերս հոս կուգամ անցնելու . . . քանզի . . . ինչո՞ւ համար չխոստովանիմ , քանզի կը յուսայի միշտ որ մօրեղբորադուստրս պատահիմ հոս , որ դիտեմ մօտերը կը ընակի . . . եւ ահա միայն այսօր կրցի այդ երջանկութիւնն ունենալ :

— Քանզի պարոն , մեք մեր ժամերը շրջագայութեամբ չենք անցնել , կարծեմ թէ Վիքթօռէնն երբէք հոս պատահած չունիք , ինքն ալ կաշխատի . . . ինքն ալ հարստանալ կուզէ . . . եւ պիտի յաջողի . . . քանզի ամեն օր պօստան է :

— Եւ հարստանալու համար կարծէք թէ բաւակա՞ն է այդ :

— Կը հաւատամ պարոն , որ մարդ հոն կրնայ իր գործը տեսնել քան թէ հոս՝ Մօնսօի պարտէզը :

— Յէլիսիէն մօրեղբորորդիս ի՞նչպէս է , նա ալ կը հարըստանա՞յ տիկին :

— Յէլիսիէն . . . երկար ատեն է որ զինքը տեսած չեմք , ինքը քիչ մը զանց կառնէ մեզ . բայց հաւանականաբար իւր գործոց , իւր աշխատութեանցը պատճառաւ . . . նա այնչափ խելացի . . . մտացի երիտասարդ մ՛է . . . նորա օրինակին հետեւեցէ՛ք պարոն , եւ անպատճառ կուղղէք ինքզինքնիդ :

— Այդ չէ՛ իմ դիտաւորութիւնս տիկին , Վերջապէս օրի-

որդ միթէ միշտ ռխակա՞լ էք ինձ, եւ չպիտի բառնաք արդ-
եօք այն խիտո նշանաբանը, որ կը զրկէ զիս ձեր տեսակցու-
թեանէն . . . երբ ինձ այնչափ բաղձալի է :

Էմմա չփոթեցաւ ու թոթովեց,

— Պարոն Ֆելքս . . . եթէ իմ կամքէս կախում ունենար
ես ձեր այցելութիւնները չէի արգելուր . . . բայց . . .

— Սակայն ես պիտի արգիլէի, սօռաց տիկին Սառօէ,
նախ՝ իբրեւ ձեր խնամածուհին, երկրորդ՝ ձեր հօր վերջին
կամացը հնազանդելու համար . . . եւ կը դարմանամ էմմա որ
այսչափ շուտ մոռցած ըլլաք :

— Ձեմ մոռնար Տիկին, զի ըստ այնմ կը վարուիմ :

— Բայց օրիորդ եթէ մօրեղբայրս դեռ ապրէր, ինքն այլ
եւս չպիտի մերժէր զիս իր տունէն . . . գիտնալով հիմակուան
իմ վարքս . . . առաջին ինք պիտի ընդունէր զիս իւր բազկացը
մէջ :

— Թա, թա, թա . . . հիմայ որ մօրեղբայրդ մեռաւ,
զիւրին է բոլոր ասոնք ըսել . . . Պարոն Ֆելքս, մենք ալ
ձեզի չափ նրբամիտ ենք . . . եւ մեր մեծ քիթը չարգելուր
յայտնի տեսնալ . . . կուզէք դալ էմման տեսնալ ինքզինքնիդ
իրեն սիրցնելու համար, քանզի գիտէք որ բաւական հարուստ
կտոր մ'է, տասներկու հազար ֆունք եկամուտ ունի, առանց
հաշուելու իմ առ ինքն ձգելիքս . . . վասն զի իմ միակ ժա-
ռանդորդս պիտի ըլլայ եւ առանց հաշուելու այն հարստու-
թիւնը, զոր Վիքթօռէն՝ իւր եղբայրն՝ իրեն համար վաստկիլ
կուզէ . . . քանզի իր քրոջ ունեցածը պիտի եռապատկէ . . .
ուրեմն Պարոն Ֆելքս, ցաւօք սրտի կը յայտնեմ, որ բոլոր
ասոնք ձեզի համար չպիտի ըլլան :

Ֆելքս չկրցաւ իր բարկութեան շարժումը բռնել եւ դէսի
ետե քայլ մ'առնելով սօռաց :

— Բաւական է Տիկին, դուք կը նախատէք զիս հիմայ, են-
թադրելով թէ իմ մօրեղբորադատերս համար զգացածս միայն
չահախնդրութեան ոգւով է . . . Ա՛հ, եթէ էմմա աղքատ
ըլլար, ես աւելի երջանիկ պիտի ըլլայի իրմէն ընդունուելուս
համար, սակայն ինքն հարուստ է, իրաւունք ունիք, ես չեմ
կրնար զինքը սիրել եւ յաճախել . . . բայց բան մը կայ, զոր

Կոյրին զաւկին հարցուց, աղջկէն իմացաւ թէ իւր մօրեղ-
բորադուստրը խիտ յուզուած էր՝ թշուառներու համար ունե-
ցած բարեստութիւնը լսելով, մինչդէռ ընդհակառակը Տիկին
Սառօէ պտուղներ էր թէ խելացութիւն չէ մտբացիկներու քսան
ֆունք տալ : Փոքրիկ աղջկին իմացած էր բոլոր ասոնք, տը-
ղայք սքանչելի յիշողութիւն ունին, որոյ համար բան մը չէր
կորսուէր :

— Ձեր օրիորդ մօրեղբորադուստրը շատ գեղեցիկ, շատ
բարի է, ըսաւ փոքրիկ աղջիկը, ֆունք մը տուաւ ինձ ըսելով
թէ վրան աւելի դրամ չունենալուն համար կը ցաւի . . . բայց
մէկ ֆունքն ալ արդէն մեծ բան է . . . սովորաբար մէկ կամ
երկու տասնոց կուտան մեզ . . . ամէն մարդ ձեզ չնամանիլ
սլարոն :

— Եւ միթէ այդ օրէն 'ի վեր մօրեղբորադուստրս չաւտա՞ր
այս սլարտէզին մէջ :

— Ա՛հ, պարոն :

— Եթէ տեսնաս կը ձանչնա՞ս :

— Կը ձանչնասն ալ խօ՞սք է . . . այո՛ պարոն . . . իւր
դէմքը մտքիս մէջ տպաւորեալ է : Մեզի համար սիրուն անձին-
քը այնչափ հաճութեամբ կը դիտենք . . . ասկից զատ շատ
գեղեցիկ է, այնչափ աղւոր չատ չենք տեսնար . . . դարմա-
նալի է : Հոսկից անցնող բաղմութեան մէջ հարիւր տղեկներէն
հազիւ մէկ գեղեցիկ մը կը տեսնանք :

— Բայց ալ չգար . . . ա՛հ, անտարակոյս եմ որ այն չար
տիկին Սառօէն չուզեր ալ այս սլարտէզը շրջադայիլ, վախճա-
լով որ ինձ չպատահի . . . եւ արդեօք ալ չը՞պիտի տեսնամ :

Ֆելքս տխրագին հեռացաւ . իսկ իւր բազմաթիւ դբադ-
մունքը զինքը կ'սփոփէին, քանզի ձանձրոյթն ու վիշտն վանելու
համար աշխատութենէ լաւագոյն դարման չկայ : Ամիս մ'անցաւ
եւ նախանձայոյզ ըլլալով որ իւր տիրոջը շահուցն արժանի ցուց-
նէ ինքզինքը, Ֆելքս զրեթէ զրասենեակէն հեռացած եւ ա-
մենեւին Մօնսօի սլարտէզն եկած չէր . սակայն առտու մը նը-
ւազ դբադեալ ըլլալով, ըսաւ ինքնին,

— Եւեղձ կոյրն ու աղջիկը հիմայ պիտի մտածեն թէ բո-
լորովին զիրենք մոռցած եմ, իրաւ չպիտի պատահիմ մօրեղ-

բօրադատերս , բայց ասի պատճառ մը չէ որ իմ փոքրիկ պաշտպանեալս երեսէ ձգեմ :

Ֆէլիքս պարտէզը գնաց : Հոն մտած ատեն սովորաբար կուրին եւ նորա աղջկան գտնուած կողմը գնաց շուտով : Հաղիւ յիսուն քայլ առած էր ծառուղիին մէջ , ուրախութեան ճիչ մ'եկաւ ականջին : Յետոյ մուրացկուհին դէպի առ ինքն վազելով կը պօռար ,

— Ահաւասիկ ինքը , մայրիկ . . . մեռած չէ . . . հիւանդ ալ չէ . . . ահաւասիկ մեր բարի երիտասարդը : . . . ա՛հ , ի՛նչ երջանկութիւն . . . ինքն է . . .

Տղան ուրախութենէն կը ցատկէր , յետոյ Ֆէլիքսին դէմ վազելով ձեռքը բռնեց եւ իւր ձեռացը մէջ կը սեղմէր , եւ նայւածքները նորա նայուածքներուն այնպիսի ճշմարիտ ուրախութեան մը հրճուանօք կը խառնուէին , որ բոլորովին խանդաղատելով մըմնջեց :

— Այո՛ , մանկիկս , այո՛ , ես եմ . . . երկար ատեն եղաւ որ հոս եկած չեմ , այնպէս չէ՞ :

— Ա՛հ , այո՛ , պարոն , դուք որ վերջերը գրեթէ ամեն օր կուգայիք . . . մայրս խիտ շատ անգամ կըսէր . « Քառօլին ալ չես տեսնար այն պարոնը , որ մեզի համար այնչափ բարի էր , աղէկ չես նայիր ուրեմն » . ես ալ կը պատասխանէի , ա՛հ մայրիկ , աղէկ գիտես որ առանց մեզ տեսնելու չէր երթար » :

— Իրաւունք ունէիք սիրուն աղջիկս , սակայն մոռցած չէի ձեզ . . . շատ զբաղեալ էի . . . ասկից շատ հեռու կը բնակիմ . . . առ , Քառօլին , ա՛ռ սա , շատոնց է որ ձեզի բան մը տուած չեմ :

— Ա՛հ պարոն , դարձեալ այնչափ դրամ . . . բայց կը վըշտացնէ զիս այս : Եւ փոքրիկ աղջիկը կուլար :

— Ինչո՞ւ համար կուլաս Քառօլին :

— Քանզի կը վախնամ որ չկարծէք թէ . . . մեզի ստակ տալերնուդ համար միայն՝ զձեզ տեսնելուս կուրախանամ , ասոր համար չէ՛ որ կը սիրեմ զձեզ :

— Ո՛չ զաւակս , ո՛չ , դուրին է տեսնել աչացդ մէջ որ հօգիդ երախտագէտ է . . . օ՛հ , մի՛ լար , ապա թէ՛ ո՛չ կը յանդիմանեմ քեզ :

— Ալ լմնցաւ Պարոն , չեմ լար :

— Հիմայ ըսէ ինձ , անտարակոյս մօրեղբօրադուստրս չտեսաք հոս :

— Ո՛հ , բայց այո՛ Պարոն , ընդհակառակը , եւ ձեզի պէտքի ըսէի . քանի մ'օրէ ի վեր մէկ երկու անգամ տեսանք :

— Երկու՞ անգամ . . . դժբաղդ . . . ի՛նչպէս եղաւ որ ես հոս չէի . միթէ՛ ի՛նքն էր :

— Ո՛հ , այո՛ Պարոն , ճանչցայ զինքը , թէպէտեւ ալ սղաւոր չէր , եւ ոչ ալ պառաւ կինը :

— Իրաւ է . արդէն ամիսէն աւելի ըլլալու է որ սուգէն ելած ըլլալու են . խօսեցա՞ւ հետդ :

— Այո՛ Պարոն , սակայն տխուր կերեւար , քանզի այն պառաւ կնոջմէն զատ հետը ուրիշ մարդ մ'ալ կար :

— Մա՛րդ մ'ալ . . . ո՞վ էր ուրեմն :

— Երիտասարդ մը . . . գեղեցիկ եւ ազնիւ պարոն մը :

— Երիտասարդ մը . . . անուշտ իւր եղբարցը մին :

— Չգիտեմ . . . բայց չեմ կարծեր որ այդ պարոնը եղբայրն ըլլայ , քանզի պառաւ կինն անգամ մը ձեր մօրեղբօրադստերն ըսաւ թէ « Ինչո՞ւ համար Պ . տը Սէնթ Էսթէվի թեւը չէք մտնար Էմմա » , եւ օրիորդն ալ պատասխանեց , « քանզի առանձին քայլել կուզեմ » :

Ֆէլիքս դեղնեցաւ , սիրտը խռովին զգաց , [հանդարտիլ փորձեց եւ թոթովեց ,

— Սէնթ Էսթէվ . . . ո՛հ , ո՛չ , իր եղբայրը չէ՛ նա . եւ վերջին անգամ տեսած ատենդ միատեղ էր :

— Երկու անգամուն ալ այդ պարոնը միատեղ էր :

— Երկու անգամուն ալ . . . ա՛հ լաւ . . . կը հասկընամ :

— Պարոն , կարծեմ ըսածներս կը վշտացնեն ձեզ . . . Աստուած իմ որչափ կը ցաւիմ . . . եթէ գիտնայի . . . չէի ըսէր :

— Ո՛չ զաւակս , մի՛ արտմիր . . . պէտք էր որ ուշ կամ կանուխ գիտնայի զայս . . . եւ միթէ՛ գեղեցիկ է այդ պարոն Սէնթ Էսթէվը :

— Ի՛հ , այո՛ Պարոն . . . բաւական աղիկ է . . . սակայն դողող , արհամարհոտ կերպարանք մ'ունի . . . երբ ձեր օրիորդ մօրեղբօրադուստրը քովս մօտեցաւ ողորմութիւն տալու հա-

մար , պարոնը մայրս ու զիս դիտեց անանկ արհամարհոտ նայ-
ուածքով մը որ . . . ո՛հ ձեր եւ նորա մէջ ի՛նչ տարբերու-
թիւն :

- Մնաս բարով դաւակս :
- Կը մեկնի՞ք , Պարոն :
- Ա յո , ստիպեալ եմ , գործ ունիմ :
- Միթէ դարձեալ այնչափ պիտի ուշանա՞ք :
- Չգիտեմ . . . ո՛չ . . . բայց ինչ որ ալ ըլլայ , հաւաս-
տի եղիք որ զձեզ երեսէ չպիտի ձգեմ . . . մնաս բարով :

Ֆէլիքս լաւ հասկցաւ որ այդ Պ. Սէնթ Էսթէվը իւր մօրեղ-
բօրադասեր ձեռքն ուզող մ'է . սակայն՝ թէպէտեւ Էմմաի
ձեռքն ստանալու բնաւ յոյս չուներ , բայց եւ այնպէս քիչ մը
քիչ ցաւ չզգաց , մտածելով որ թերեւս հեռի չէ այն վայկեա-
նը , յորում իր մօրեղբօրադուստրը ամուսնոյ մը բազկացը մէջ
պիտի անցնի : Որովհետեւ՝ ամէն իրաց մէջ , Ֆէլիքս իրաւամբ
կը խորհէր թէ բնաւ տարակուսանաց մէջ մնալու չէ , իւր մօ-
րեղբօրադասեր բնակարանը գնաց , ըսելով ինքնին ,

- Դռնապանը կը խօսեցնեմ . . . այն մարդոցմէ աղեկ տե-
ղեկութիւն առնելու միջոցները կան միշտ . . . երկու աւուր
մէջ երկու անգամ այդ պարոնին հետ Մօնսօի պարտէզը շրջա-
գայելու գացեր են . . . Ահ , Տիկին Սառօէ , գիտեմ դարձ-
եալ քու քթիդ ոխը կայ այս գործին մէջ : Ինքնիրէն ըսած ըլ-
լալու է « եթէ Ֆէլիքսը պատահելու ըլլանք , պիտի տեսնայ որ
իւր մօրեղբօրադուստրն ասպետ մ'ունի , եւ ինքը աղեկ գիտէ
զիս , թէ միայն ասպունի ամուսնոյ մը կը թողում գալ այսչափ
յաճախ ընկերանալ մեզ » : Ֆէլիքս՝ Էմմաի տան մօտ հասաւ :
Ձէր ուղէր որ Էմմա եւ Տիկին Սառօէ զինքը տեսնան . ստու-
գիւ ալ դռնապանը դուրսը աւելու դրադած էր . նշան մ'ըբաւ
անոր , դռնապանը աւելը ձեռքը քոյն եկաւ : Ֆէլիքս զանի
քիչ մը հեռուն տարաւ , յետոյ ձեռքը հինգ ֆռանք տալով ,
սրտի յուզմունքէն եւ զինքը զրգոող խոովմունքէն ձնչեալ
ձայնիւ մը մրմնջեց ,
- Մօրեղբօրադասերս տունը պարոն Սէնթ Էսթէվ մը կու-
գայ , քանզի օրիորդ Մօնսօանի հօրաքնոորդին եմ :
- Ո՛հ , գիտեմ Պարոն , արդէն անգամ մը ինձի ըսած էք ,

երբ տեղեկութիւն առնելու եկաք թէ տիկնայք յաճախ դուրս
կելլեն , ասկից գրեթէ տարի մ'առաջ . . . :

- Ուրեմն տեղեկացուցէք ինձ . . . այդ պարոն Սէնթ Էս-
թէվը ո՞րչափ ատեն է որ կուգայ :
- Գրեթէ վեց ամիսէ ի վեր . բայց սկիզբներն այնչափ յա-
ճախ չէր գար : Տիկնայք սուգէ ելնելէն ի վեր է որ այդ պա-
րոնը յաճախ կուգայ . տիկնանց սպասուհիներէն կնոջս լսածին
նայելով , կերեւայ թէ օրիորդ Մօնսօանի ձեռքն ուզող մ'ըլ-
լալու է . . . թէ Տիկին Սառօէ կը պաշտպանէ զայն , թէ հա-
րուստ մէկն է եղեր այդ պարոնը , եւ թէ ձեր օրիորդ մօրեղ-
բօրադասեր շատ յարմար է . ոսկայն կերեւայ թէ օրիորդն այն-
չափ ամուսնանալու փափաք չունի :

- Լաւ , լաւ . . . բաւական է այդչափ գիտցածս . . .
մանաւանդ բան մ'ըսէք թէ ես եկայ այս հարցումներն ըրի :
- Անհոգ եղիք Պարոն . . . կինս որչափ որ շատախօս է ,
ես ալ անոր հակառակ խորհրդապահ եմ . . . այնչափ որ եթէ
այս հինգ ֆռանքը տուած չըլլայիք , ձեզի ալ բան մը չէի
խօսէր :

Ֆէլիքս խիստ տխուր եւ վշտացեալ հեռացաւ , ինքնիրէն
ըսելով ,

— Էմմա այնչափ փոյթ չցուցնէր ամուսնանալու : Սակայն
աղաչանօք , թախանձանօք վերջապէս կը հաճեցնեն . . . Աս-
կից զատ միթէ վերջն ալ այսօրէս չպիտի ըլլայ . . . Սէնթ Էս-
թէվ կամ ուրիշ մէկը . . . եւ եթէ աղեկ յարմար է . . . սա-
կայն եթէ մօրեղբօրադուստրս չափահասութեան սպասել ու-
ղէր . . . այն ատեն իւր կամացը համեմատ վարուելու աղատ
կըլլար . . . բայց պիտի ամուսնայնեն իրեն հետ այդ Սէնթ Էս-
թէվը , որ՝ անտարակոյս եմ , ինձի չափ չսիրէր :

Երիտասարդը զիպուածով կը շրջագայէր , այս խորհրդա-
ծութեանց մէջ խորասուզեալ . թեւ մը իր թեւը մտաւ եւ բա-
րեկամ ձայն մը ըսաւ իրեն ,

- Ողբերգութիւն թէ թատրերգութիւն կը խաղանք , որոց
վերջաւորութիւնը դժուար է ուրիշ կերպ փոփոխել :
- Ահ , դո՛ւք էք սիրելի Տօքթէօս , ո՛չ , թատրերգութիւն
չէ ըրածս . . . սակայն շատ վշտացած եմ :

— Օ՞ն , պատմէ տեմանք ուրեմն . . . ցաւերը պատմուե-
լով միշտ մէկ մասը կը կորսուի . . .

Ֆէլիքս Տօքթէօն ծուպէսին պատմեց Մօնսօի սլարտիղին
մէջ ունեցած պատահմունքներն , յետոյ այն օրը լսածները :

— Բայց սիրելի բարեկամ , ես հոգ այդչափ յուսահատա-
կան բան չեմ տեսնար . . . Ձեր մօրեղբորադստեր կը յաճա-
խեն , շատ պարզ բան մ'է այդ , քանզի հարուստ է . . .
սակայն այս ամուսնութիւնը կատարուած է . . . Ի՞նչ ըսաւ
փոքրիկ մուրացիկուհին , շրտա՞ որ էմմա իւր թեւը տալ չէր
ուզէր այդ պարոնին , պատասխանելով թէ առանձին պտղախի
կուղէ : Եթէ էմմա այդ Սէնթ Էսթէվի համար ամենափոքր մի-
տումն ունենար , միթէ կուղէ՞ր առանձին չըջիլ եւ թեւ չտալ
այդ պարոնին : Ասոր ամենեւին ըսելիք չկայ . . . ուրեմն մօ-
րեղբորադուստրդ չսիրէր այդ պարոնը . . . հիմայ դուք կը
խոստովանիք թէ գեղեցիկն էմմա փոքրիկ մուրացիկուհւոյն հետ
խօսելէն հաքը քաղցր հայեացք մը՝ սիրուն ժպտ մ'ըրաւ ձեզ ,
ըսել է թէ ձեր բարեարտութենէն սաստիկ յուզեալ էր , եւ ու-
րովհետեւ միշտ բարեկամութիւն ունեցած է ձեզ . . . ըսել է
թէ արդէն ապացոյցն յայտնեւ է . . . իւր լսած խօսքերը հոգ-
ւոյն խորը նիրհող դագայումները զարթուցեր են , ձեր սիրոյ
յայտարարութիւնները ձեզի համար ունեցած զգացմանցը մէջ
լուսաւորեր են զինքը . . . եւ գրաւ կը դնեմ որ ինքն Սէնթ
Էսթէվի հետ չպիտի ամուսնանայ :

— Ա՛հ , սիրելի Տօքթէօն , յոյս կուտաք ինձ , երջանկու-
թիւն , կեանք կը շնորհէք :

— Ուրեմն եկուր միատեղ երթանք ճաչենք , պիտի աշխա-
տիմ նաեւ ախորժակդ բանալ :

Այս պարոնները Բալէ Ռօայալ գացին , ուր մարդ խիստ
աղեկ կը կերակրի , երբ տեղն աղեկ ընտրել գիտնայ : Ֆէլիքս
իւր զուարթութիւնը գտաւ , քանզի բնապէս տխուր բնոյթ
չունենալով՝ քիչ մը բանով կը զուարթանայ : Ուստի օրը միա-
տեղ գիշեր ընելու համար երկու բարեկամները միատեղ թատ-
րոն գացին , որ շատ ուշ կը լմնայ , որով խիստ երկար ատեն
տակաւին Պուլլվառը պտրտեցան , քանզի հաճօք կ'զգային մի-
ատեղ գանուելու , Ֆէլիքս Տօքթէօնին պատմեց Անիթայի տու-

նը ըրած այցելութիւնը , եւ հոն իր մօրեղբորդուոյն նկատ-
մամբ ստացած տեղեկութիւնները :

— Ես վստահ էի , ըսաւ Ժուպէն , անտարակոյս այդ պէս
պիտի վերջաւորէր . . . կանայք պիտի կորսնցնեն Ֆէլիքսը , քան-
զի սա իւր կորուսեալ ժամանակը վաստակելու համար , իւր ցան-
կութեանցը կը թողու ինքզինքը եւ կարող կը կարծէ շէրակի
աշխատութիւններն 'ի կատար հանելու . . . այսպէսով շատ
չտեւէր :

Սիրահարը՝ վերջն իւր սիրուհւոյն խօսքն ըրաւ , եւ Տօք-
թէօն զայն լսած ատեն՝ խիստ յաճախ կը յայտնէր թէ մօրեղ-
բորադուստրն իրեն համար միտումն ունէր :

Յանկարծ բժիշկը ժամացոյցն հանելով ըսաւ .

— Կէս գիշերը ժամ մ'է անցեր , ալ տուն երթալու եմ՝
յդի յաճախորդ մ'ունիմ . . . Թերեւս հիմայ եկած զիս փընտ-
ռած են :

— Ա՛յ սատանայ , իսկ եթէ ծնած է :

— Եթէ ես չըլլամ անկարելի է . . . ո՛չ , ո՛չ վաղուան
չմնար . . . ձկնալաճառաց թաղն երթալու եմ , ուր Մօնթօ-
լօն փողոցը պիտի գտնամ :

— Միատեղ կուգամ բարեկամ , ես այնչափ քուն չունիմ
. . . շատ խռովեալ եմ , քունս չպիտի տանի :

— Լաւ , միատեղ եկուր :

Փողոցները շատ քիչ մարդ մնացեր էր , սակայն դիտարա-
նի բարձանց վրայ երկու բարեկամք առջեւնին մէկ պարոն մը
տեսան , որ գրեթէ պատին փակած թատրոնին աղջարարու-
թիւններն անպատճառ կարդալ կուղէր , թէ եւ մեծաւ մասամբ
քաշուած ու պատռուած էին :

— Եթէ այս պարոնն այս գիշեր թատրոն երթալ կուղէ
կարծեմ քիչ մ'ուշ մնացած է , ըսաւ Ֆէլիքս :

— Սակայն առանձին կը խօսի , կարծեմ գիտնով է :

— Այդչափ շնորհքով հագուած մէ՛կը , կը կարծէ՞ք . . .

— Միթէ պատճա՞ռ մ'է այդ . . . քիչ մը զինքը մտիկ
ընենք , շատ զուարճալի բան է գիտնով մտիկ ընելը . . . անանկ
բաներ կըսեն , որ միայն անոնց բերնէն կը լսուի , երբեմն ըն-
տիր ճշմարտութիւններ ալ կըսեն . . . որք հորէն ելած են :

Առջեւնին կեցող մարդը նորէն քիթը պատին քսեց մըր-
մըռալով ,

— Ի՛նչպէս ալ կազը դէշ կը լուսաւորէ հոս . . . ես մար-
մարեայ աղջիկները տեսնալ կուզէի . . . ինքը . . . ըսաւ թէ
այս գիշեր կը խաղան . . . չեմ կրնար գտնալ . . . հա՛, կար-
ծեմ սա է . . . ոտք . . . մնացեալը չկայ . . . կարծեմ աչ-
քերուս առջին մատախուղ իջած է . . .

— Զարմանալի բան . . . կարծեմ թէ ճանչնալու եմ այս
ձայնը , ըսաւ Ֆէլիքս :

— Ես ալ . . . կեցիր . . . Ա՛հ , այո՛ . . . ձեր Ատուֆ
մօրեղբորդին է :

— Միթէ կարելի է . . . եւ այս վիճակի մէջ . . . վասն
զի խեղճը չկրնար ինքզինքը բռնել . հիմայ եթէ չբռնենք պիտի
կնայ :

— Ո՞վ է ան , հարցուց գինով երիտասարդը շտկուելով ,
եւ քանի մը քայլ առնել փորձելով , որ ատեն կը դողար , եւ
մէկ քանի անգամ պիտի կնար : Անունս ըսին . . . Ատուֆ կո-
չեցին զիս . . . Ատուֆ Մօնլօտան . . . ես եմ . . . եթէ բարե-
կամ են , թող ըսեն . . . :

— Է՛հ , այո , բարեկամ են , պրոսպ Ֆէլիքս իւր մօրեղբոր
որդւոյն թեւէն բռնելով : Ես եմ Ֆէլիքս Արպոէօն հօրաքեռոր-
դիդ եւ Տօքթէօն ժուպէօր որ հօրդ բժիշկն էր :

— Թէեւ ոչ այնչափ երկար ատեն , բայց ձեր տունը ճա-
շած ատենս ձեզի անարատ գինի տալու համար բաւական ժա-
մանակ ունեցայ . աղեկ դուշակած էի որ դուք չէք դարչիր ա-
նարատ գինիէն :

— Տօքթէօն ժուպէն , Ֆէլիքս . . . վայ , վայ , վայ . . .
Ի՛նչպէս ալ աղեկ պատահեցանք . . . շատ ուրախ եմ ձեզ գըտ-
նայուս . . . դուք ալ ինծի հետ մարմարեայ աղջիկները տես-
նելու պիտի գայիք :

— Բայց շատ ուշ է . . . արդէն հիմայ թատրոններէն ե-
լած են . . . ամեն մարդ պառկելու կերթայ . . . մենք ալ
այնպէս ընելու ենք .

— Իրաւ . . . հիմայ խաղցուած է . . . :
— Օն սիրելիս Պարօն Մօնլօտան , ըսել է թէ պանդոկը ճա-

շած եւ քիչ մը աւելի փախցուցեր էք . . . նաեւ շատ ալ փա-
խեր է կրնամ ըսել :

— Սատանայ՛ Տօքթէօն . . . Ի՛նչպէս ալ շուտով կը հա-
կընայ . . . անանկ բաները որ . . . : Ա՛հ , որչափ ալ սահուն
է սա գետիկները . . . :

— Ինծի կըթընէ մօրեղբորդի :

— Ինծի ալ , ըսաւ Տօքթէօնը Ատուֆի միւս թեւը մանե-
լով , այսպէս հանդիստ կը քալենք . . . : Ո՞ւր կը բնակիք :

— Միշտ այն տեղը :

— Շատ աղէկ , բայց ո՞ւր է այդ նոյն տեղը :

— Ըստ որում փոխած չեմ . . . մի եւ նոյն տունն է :

— Հասկցայ , բայց այդ տունն ո՞ւր է :

— Մի եւ նոյն փողոցին մէջ . . . ես մէկ տունէ միւսը փո-
փոխել չեմ սիրեր :

— Թշուառութեա՛նս , բայց սակայն անկէց ելլալու էր
. . . Ֆէլիքս տակաւին Մաղակոան փողոցը կը բնակիք :

— Ո՛չ , հիմայ Սանթիէ փողոցը կը բնակիմ , իսկ դուք
Տօքթէօն :

— Ես Մօնթօլէն փողոցը . իսկ դուք Ատուֆ :

— Ե՞ս . . . միշտ մի եւ նոյն տեղը :

— Բայց անտանելի է այս , ըսաւ Տօքթէօն Ֆէլիքսին ծը-
ռելով . Ի՛նչ պիտի ընենք այս մարդը :

— Կեցի՛ք , միտքս ուրիշ բան եկաւ . . . մօրեղբորդի ,
հիմայ զիս ձեր տունը պիտի տանիք , այնպէս չէ՞ , եւ մեզի
ձեր օդիէն խնցունէք , ՚ի հարկէ ընտիր տեսակէն ունիք :

— Հա . . . ապրիս . . . տեսա՞ր . . . օղի ունի՞մ մի կը-
սէք . . . շաքարեղէն . . . ընտիր շամբաներ . . . Հնդկաստա-
նի . . . :

— Լաւ , օղին մատէռի հետ կը խառնէ :

— Ուրեմն մեզ միատեղ տար , ո՞ւսկից պիտի երթանք :

— Ո՞ւսկից . . . ուսկից . . . ասկից երկու քայլ հեռի է
. . . որովհետեւ Ռօպինատի պանդոկը ճաշեցի . . . Եշիքիէ փո-
ղոց թիւ 7 , Ֆլանքէթ ալ ճաշին միատեղ էր , միշտ ինծի կը-
սէր « մի՛ երթար , տանդ մօտ ես , ես քեզի կը տանիմ . . . »

բայց ես , մարմարեայ աղջիկները տեսնալ կուզէի . . . յետոյ
անոնք Լանսինէ խաղալ սկսեցին . . . ես խաղը չեմ սիրեր :

— Ուրեմն, տանդ մօտ ենք . . . լաւ . . . ո՞ր կողմ պիտի դառնանք :

— Հէ չդառնանք . . . մարդուն սիրտը կը խառնուի . . . արդէն քիչ մը գլուխս դարձեր է . . . Յլանքէթ անանկ գինիներ ունի որ խմիններուս քով բան մը չէն արժեր . . . ես անանկ մատան մը . . . անանկ մատան մ'ունիմ որ . . . տեղ մը չգտնուիր նմանը . . . :

— Երբ ձեր տունը ճաշենք կամ ընթրենք, կը հասկնանք :

— Վաղը . . . ճիշդ վաղը ձեզ կսպասեմ . . . կըլլա՞յ :

— Ինչո՞ւ չէ . . . ես ալ միատեղ կը գտնուիմ . . . վաղը ձեր տունը պիտի ճաշենք . . . այնպէս չէ Յէլիքս :

— Շատ աղեկ . . . բայց հոս փողոցը պառկելու չենք . . . օ՞ն, ա՞ջ թէ ձախ կողմը մտնանք :

— Այ չարաճճի Տօքթօն . . . մէկ փառատի փողոցը չը կրնար գտնալ :

— Փառատի փողոց . . . ա՛հ, յաղթութիւն . . . օ՞ն յառաջ, յուսամ թէ տունը կրնայ գտնալ :

Այս պարոնը բռնելով, ճանրանին շարունակեցին, որ ամեն մէկ քայլին կը կենար թոթովելով,

— Բայց ես մարմարեայ աղջիկները տեսնալ կուզէի :

— Վաղը կամ միւս օր կը տեսնաք . . . շատ զիւրին է տեսնալ, ամէն տեղ ալ կը գտնուի . բայց Ռօպինաո բարեկամդ գլուխ դարնող գինի կը խմցնէ ձեզի, աս աղեկ բան չէ :

— Ճշմարիտ է, իրաւունք ունիք Տօքթօն, անոր գինիները գլուխ կը դարնեն . . . գլուխս շատ կը ցաւի . . . :

— Անտարակոյս . . . տուն երթայնուդ պէս սպասաւորնիդ թող թէյ մը պատրաստէ . . . :

— Թէյ, ամէն գիշեր կը շինէ :

— Ըսել է թէ գիտէ որ ամէն գիշեր պէտք ունիք, նախազգոյշ է եղեր :

— Այո՛, շատ նախազգոյշ է, մեղք որ գող է :

— Ինչէ՞ն գիտէք որ կը գողնայ :

— Յլանքէթն ըսաւ, եւ խրատեց որ ճամբեմ զինքը :

— Բայց այդ Պ. Յլանքէթն ո՞վ է . . . ի՞նչ գործ կընէ :

— Գործ . . . միջնորդ է, ամեն բանի . . . վաղը միատեղ պիտի ճաշենք :

— Ա՛, վաղը ձեզի հետ կը ճաշէ :

— Գրեթէ ամեն օր . . . առանց քաշուելու, առանց հըրաւէրի սպասելու կուգայ :

— Շատ հետաքրքիր եմ սա պարոնը տեսնելու . . . բայց ահաւասիկ փառատի փողոցն եկանք . . . լաւ, ձախ կողմը կը հակի :

Բարեբաղդաբար Պարոն Ատօլֆ փողոցին բերանը կը բնակէր, տանն առջին կեցաւ : Երկու բարեկամը դուռը զարկին Սպասաւորը դռնապանին սենեակը կ'սպասէր իւր տէրը, եկաւ մեր գինուը բռնեց, որ ըսաւ,

— Ահաւասիկ ժան . . . միշտ վարը կ'սպասէ զիս . . . անտարակոյս եմ թէ վերը թէյ պատրաստած է :

— Տէրդ աղէկ վիճակի մէջ է, մրմնջեց Յէլիքս սպասաւորին, որ պատասխանեց,

— Ա՛հ, պարոն ես սորված եմ, գրեթէ ամեն գիշեր այսպէս տուն կուգայ :

— Միթէ կարելի՞ է, ի՛նչ դժբաղդութիւն :

— Վեր չէ՞ք դար գաւաթ մը խմելու, թոթովեց Ատօլֆ սպասաւորին ետեւէն :

— Ո՛չ, այս գիշեր միայն թէյ խմելու է :

— Ուրեմն վաղը . . . գիտէք ա՛ . . . հոս պիտի ճաշենք :

— Ժամը քանիի՞ն :

— Ժան, ժամը քանիի՞ն նախաճաշը կը պատրաստես :

— Սովորաբար կէս օրին :

— Ուրեմն վաղը կէս օրին :

Երկու բարեկամը փախան : Յէլիքս տեսածին վրայ ամենեւին մեկնութիւն մը չէր կրնար տալ, ու Տօքթօնին ըսաւ,

— Ահաւասիկ ասոր համար վաղը իրեն տունը ճաշի երթալու է . . . ասով կը հասկնանք թէ ինչ՞ վիճակի մէջ է :

ԳԼՈՒԽ ԺԶ .

Գ Ի Ն Ի

Հեռուեալ օրը ժամը 11 1/2ին (կէս օրէն կէս ժամ առաջ) Յէլիքս եւ բփշկը առջի գիշեր գրեթէ կռնակոյնին տուն աւարած մարդուն տունը դացին : ձաշի ժամը տակաւին հասած չէր , բայց այս պարոններն անոնցմէ չէին , որ տեղ մը հրաւիրուած առեմնին կը կարծեն թէ ճիշդ սեղան նստելու ժամանակ երթալու է , որ տան օրոջն ըսելու մը պէս կըլլայ թէ « ուսելու համար կուգանք ձեր տունը , եւ ո՛չ թէ ուրիշ բանի համար » : Եթէ աղէկ կերպ մ'է այս , սակայն հաճելի ալ չէ : Ըստ պատահարը սրահը շփելու զբաղած էր , իւր տէրը շատ ուշ ելած էր անկողինէն :

Ատօլթի գիշերազգեստոյն եկաւ . գինովութիւնն անցած էր , եւ Յէլիքս կրնար ուզածին պէս զայն զննել , որ արտաքոյ կարգի գիրցեր էր , երեսը գրեթէ ուռեցած , եւ քիթը մանիշակի զարնող կարմիր գոյն մ'առած էր . . . որ եւ ոչ մէկու մը կը վայլէ , մանաւանդ երիտասարդի մը համար շատ տղազեղ բան է , բոլոր ասոնցմով կը հասկցուէր թէ իւր մօրեղբորորդւոյն վրայ եղած փոփոխութիւններն իրեն յարմարագոյն չէին , թէ եւ ինքը գոհ , երջանիկ կերեւնար , որ կերպարանքը կը կենդանացնէր :

Ենդալով մը հրաւիրեալներն ընդունեց եւ ըսաւ անոնց ,

— Ի՞նչ պարոններ , հիմայ ծուռկերս քիչ մը երէկ գիշերը լնէ աւելի հաստատուն են , այնպէս չէ . . . հէ՛ , հէ՛ , երէկ շատ աղեկ ճաշեր էի , ճշմարիտ ի՞նչ պահեմ , սեղանն իմ միակ տարրս է . . . ուտելը շատ կը սիրեմ :

— Մանաւանդ աղեկ ալ խմեր էիք . . . ես ալ աղեկ գինին կը սիրեմ , բայց մինչեւ հաւասարակչութիւնը կորսնցնելու շափ խմելու չէ :

— Ա՛հ , հա՛ , սիրուն Տօքթէօն . . . ես հիմա ձեզի ամենաբնական ձերմակ գինի մը խմցնեմ որ . . . կրկին եռացեալ . . . կրկին եռացեալ ձերմակ գինի խմած ունի՞ս :

— Այո՛ ձերմակ , ընտրեալագոյն ձերմակ գինի մ'է , բայց շատ գլխու կը զարնէ :

— Ի՞նչ փաստ ունի . . . հասա՞ Վօզնի գինի՞ն . . . կը ճանչէ՞ք տէօքթէօն :

— Ես , ո՛չ , Պօսի գինին կը ճանչնամ որ խիստ աղեկ գինի մ'է :

— Վօզնը անկից աղեկ է . . . Պուռկօնեկն աղեկը . . . :

— Հասա՞ Ռօմանէ՛ն :

— Ա՛հ այդ գինին կը ճանչնամ :

— Հիմայ կը խմցնեմ ձեզի , էյ հասա՞ Աէօնփ՛լը , ասի Պօտոյի տեսակէն է :

— Այդ ալ աղեկ կը ճանչնամ , շատ կը սիրեմ :

— Հասա՞ . . . :

Յէլիքս ընդմիջեց այս անուանակարգութիւնները :

— Բայց մօրեղբորորդի , միթէ միւսակ գինիի խօսք պիտի ընենք :

— Գտիր ուրեմն խօսակցութեան աւելի աղեկ նիւթ մը :

— Բայց իրաւ , դու ինձ պիտի հաւտացնես թէ ճշմարիտ գինեմով մ'ես եղեր . . . յուսամ թէ այնպէս չէ :

— Բայց թէ որ այդպէս ալ ըլլայ , ի՞նչ կայ եղեր . . . Եօրս կենդանութեան առեմն՝ միայն գետի ջուր կը խմէի . . . այսօր ալ անոնց փաստը կը հանեմ . . . միթէ իրաւունք չունի՞մ , միթէ առաջուրնէ աղեկ դէմք մը չունի՞մ . . . տեսէք որչափ գիրցեր եմ . իսկ դու Յէլիքս . . . դու միշտ նոյն ես . . . չես գիրցեր :

— Գոհ եմ , ես գիրնալ չեմ սիրեր : Թ՛ն , Ատօլթի , մօրեղբորս մեռնելէն ՚ի վեր ի՞նչ դործ կընես , միթէ միւս մի եւ նոյն վաճառատունն ես :

— Տէր ողորմեա՛ , զիս ո՞վ կարծիքի . . . մէկ քառորդ միլիոն հարստութեամբ վաճառատուն այստասո՞ր ըլլալ , զբաղութիւն ընել . . . ես այնչափ էչ չեմ . . . իրաւ է որ արդէն այդ քառորդ միլիոնին մեծ մասը սպառեցաւ . . . բայց տակաւին հարուստ եմք . . . եւ Յլանքէթ՝ որուն հետ օգրի վրայ կարեւոր դործ մը սկսեցինք , ինձի ըսաւ որ մեծ շահ պիտի բերէ մեզ :

— Այս առտու մեղի հետ ճաշելու պիտի գար, այն պարօնն է, հարցուց Տօքթէօնը :

— Այո՛, այո՛, պիտի գայ, իրաւ իրեն բան մը չըսի, բայց պիտի գայ :

— Բէ՛հ, ամեն օր հոս է նա, մոմուաց ժան, որ սրահը կը շփէր, եւ Ֆէլիքսի ականջէն ըսաւ, ճշմարիտ հացկատակ մ'է այդ պարոն Ֆլանքէթը :

— Վերջապէս Ատօլֆ, ցորեկը ինչո՞վ կ'ըրաղիս :

— Յերեկը, ա՛, շուտ մը կանցնի . . . նախ առտուները ուշ կեղլամ . . . որովհետեւ շատ անգամ ուշ կը պառկիմ . . . կը ճաշեմ . . . ամեն օր հետոս միատեղ ճաշող բարեկամներ կու-նենամ . . . դիտէ՞ք առանձին ճաշելը աղւոր չէ . . . չես կըր-նար գաւաթ բաղխել . . . նախաճաշն մինչեւ ժամը երեք կը տեւէ :

— Այն օրէ՞ն սկսելով . . . ի՛նչ նախաճաշ :

— Մարդ ճաշելու ատեն խօսակցելու է : Յետոյ դուքս կեղլանք, կը պտըտինք, մէկ քանի մաս գնդախաղ կը խաղանք, անաւասիկ միայն այս գնդախաղը կը սիրեմ, վասն զի մարմնա-մարզութեամբ ախորժակը կը բացուի, յետոյ ժամը վեցին եօթ-նին կընթրենք, այս մինչեւ ժամը տասը կը տեւէ, յետոյ սըր-ճարան կերթանք բօնճ կամ պիսքօֆ մը խմելու : Ար տեսնաք որ ինչպէս ժամանակը կանցնի եւ զբօսանքով կը քաղցրանայ :

— Բայց բոլոր ասոնց մէջ, յաւելցուց Ֆէլիքս ժպտելով, սիրելի Ատօլֆ քառորդ մը չե՞ս նուիրեր սիրոյ . . . անկարելի է որ քու տարիքդ մէկը սրտին մէջ գորովալի զգացում մը չու-նենայ :

— Զգացո՛ւմ, ո՛չ, ո՛հ, կը տեսնա՞ք, կի՛ն . . . այդ մասին բնաւ բաղձանք չունիմ . . . չեմ ըսեր որ ժամանակ ժամանակ ախորժակի չէ . . . ինչպէս որ կերակուրին վրայէն օշարակ մը . . . բայց համարձակ խօսելով, ես գետնասուենկով պատրաստուած հնդկահաւի մը եւ խորտիկի մը փոխարէն ամենէն գեղեցիկ կի-ներն այ կուտամ :

— Ուրեմն ձեր Ֆէլիսին եղբօրը չէ՞ք նմանիր դուք :

— Ֆէլիսին . . . ա՛հ, տես անոր գործը գէշ է . . . խեղճ տղայ . . . ջանած թուղթի գոյն գարցեր է . . . երեսը . . . դեղ-

նած, հիւժեակ . . . ի՛նչ մեծ տարբերութիւն կայ մեր մէջը :

— Այն ալ ուրիշ տեսակ մը :

— Վերջին անգամ տասն եւ հինգ հազար ֆոանք փոխ առ-նելու եկած ատեն ճշմարիտը վախցայ :

— Ինչպէ՞ս, Ֆէլիսին եղբայրդ փոխառութեա՞ն պէտք ունի :

— Այո՛, . . . չգիտեմ, ինչու համար ըսաւ որ ստակ չու-նի . . . հա՛, այո, երկաթուղիները ծախել չէր ուզեր, վասն զի ինկած են . . . տուած ստակս ութ օրէն պիտի հատուցա-նէր . . . բայց ահա երեք շաբաթ է երեսը չտեսայ . . . բայց ան-հանգիստ չեմ . . . նա Ալիքթօնէնը չնմանիր . . . իրաւ է թէ Ալիքթօնէնի տուածս մեծ գումար մ'էր :

— Ի՞նչ, Ալիքթօնէ՞նն ալ փոխառութիւն ըրաւ :

— Քառասուն հազար ֆոանք, միայն այսչափ :

— Քառասուն հազար ֆոանք . . . բայց նա ալ քեզի չափ հարստութիւն ունէր, իր ունեցած ստակներն ի՛նչ ըրաւ :

— Պօռուարի մէջ գործ է ըրեր . . . մեծ շահադիտումներ, որք զինքը միլիոնատէր պիտի ընեն եղեր . . . ասոր հետ մէկ-տեղ փոխ տուած գումարս ԱՅ օրէն պիտի վճարէր, փոխանակ վճարելու, ուրիշ քառասուն հազար մ'ալ փոխ ուզեց : Ես ալ ինչ մեղքս պահեմ, մերժեցի . . . Ֆլանքէթը խրատելով ըսաւ ինձ, « զքեզ կաթ տուող կովու տեղ դրեր են, մարդ իւր աղգականին փոխ տուած ստակը չկրնար ետ առնել, ալ մի՛ տար » :

— Չեմ հասկնար, ըսաւ Ֆէլիքս, տօքթէօնին դառնալով :

— Ինչո՞ւ համար . . . ընդհակառակն բնական է . . . ձեր մօրեղբորորդուց իւրաքանչիւրը, սիրելիս Ֆէլիքս, իւր ցանկու-թիւնն ունի . . . ասոնք իրենց հօր ատեն մոխրոյ տակ ծած-կուած էին, կրակն արծարծեց :

— Իսկ քո՞յրդ, կարծեմ երբեմն կերթաս զինքը տեսնելու :

— Ո՛չ, միայն մէկ անգամ մը գացի . . . ճշմարիտ հոն սիրտս նեղացաւ : Տիկին Սառժէ շաքարաջուր մը հրամցուց . . . շնորհակալ եմ . . . եւ ըսի ինքնիրենս, « դու զիս մէկ մ'ալ չպիտի կրնաս ընդունիլ » :

— Բայց գիտնալու ես որ քոյրդ Սէնթ Էսթէվ անուն մէ-կու մը կուտան :

— Ինչո՞ւս պէտք, որու որ կուզեն թող տան, աղեկ դիտեմ որ հարսանիք չպիտի ընեն . . . այդ մարդիկ ապրիլ չը գիտեն :

Երկու պարոն գալով խօսակցութիւնը վերջացաւ : Մին սովորական կոչնական բարեկամ Ֆլանքէթն էր, քառասուն տարեկան մարդ մը, որ կատարեալ կարմիր մօրուք մ'ուներ : Երկայն, վտիտ ու սաստիկ ծաղկահար երես մը, բաց մրուրի թուխ գոյն մը, այտերն ու կզակը ցցուած, նայուածքն աղուէսի ու կատուի, ձայնը գեղգեղեալ եւ միշտ ինչ ըսելը փընտռելով, ինքն ալ շատ անգամ ըսածին զարմանալով երեսդ կը նայի հասկնալու համար թէ հաւատացի՞ր էք խօսքին :

Ասոր հետ գտնուող պարոնը իրմէն աւելի տարօք եւ աւելի տգեղ, քիթը մեծ շաքանակի մը պէս, որուն վրայ մարդուն բռնցի հարուած մը տալը կուգայ . բերնին ակօսյները թափած՝ եւ որ ասոր հակառակ շարունակ ժպիտ մը կը յայտնէ, մազերը բուրդի պէս, եւ այնչափ անկարգ՝ որ գլուխն ուսերէն աւելի լայն կերեւնայ : Խօսուածքը գերմանական, աղեկ հագուած, սակայն ձեռքերն աղտոտ ու ոտքերը տղմոտ :

— Կէս օր չհնչե՞ց տակաւին, ըսաւ Պ. Ֆլանքէթ սրահը մտնալով եւ գտնուողները բարեւելով : Եթէ երբէք վայրկեան մ'ուշացած եմ նախաճաշէ եւ ընթրիքէ մը՝ հազար սկուտ տուգանք տալու կը հաւանիմ . . . ծառայ եմ պարոնայք . . . սիրելիս Մօնչօտան, ներեցէք որ ներկայացնեմ ձեզ Պ. Կուտման իմ ազնիւ բարեկամներէս մին . . . որ գիտակի վաճառական է, նախաճաշի եկաւ ինձ : Ես ալ իրեն ըսի, « ընկերացիք ինձ բարեկամի մը տունը, ուր պիտի ճաշեմ, եւ այս կերպով ինձի հետ ճաշած կըլլաք » : միթէ կը ներէ՞ք ինձ իմ այս մեծ ու պզտիկ ազատութեանս :

— Շատ աղեկ ըրեր էք սիրելի բարեկամ, եւ եթէ պարոնը կը սիրէ ազնիւ գինիները . . . :

— Օ՛հ ետ՝ . . . շատ կը սիրեմ լաւ գինին . . . եւ աղեկ կը ճանչնամ :

— Կուտման կը սիրէ գինին եւ աղեկ կը ճանչնայ . փոռպէս կամաց մը Թէլլեքսին ըսաւ :

— Կարծեմ այս դիտակի վաճառականը Պ. Ֆլանքէթի մէկ

պարտատէրն է որ ըսած է իրեն, « ես ձեզի չեմ կրնար վճարել, բայց եկէք ձեզ ճաշի տանիմ » :

— Աս յայտնի է որ օղիի միջնորդը անպիտան խաբեբային մէկը կերեւնայ ինձ . . . վախնամ որ այս բարեկամները չխաբեն մօրեղբորդիս :

— Հաւանական է . բայց ի՞նչ ընելու է : Զեր Պ. մօրեղբորդին աւելի այդ պարոններուն խօսքը մտիկ պիտի ընէ սիրով, քան թէ մերը :

Խոհարար կինը ծանր կանչեց եւ ծան եկաւ անմիջապէս ազդարարեց թէ՛ ճաշը պատրաստ է :

— Ահ, այդ աղեկ լուր, ըսաւ Ատօլֆ . օն սեղան երթանք : Պարոնայք, կը ներէ՞ք որ զիշերազգեստով ճաշեմ :

— Ինչո՞ւ չէ :

— Գիշերազգեստով աւելի հանդիստ կուտուի, ըսաւ Ֆլանքէթ . . . բան մը չսեղմէր . . . ուրիշ կերպ ճաշելն աւելի աղեկ չպիտի ըլլար . . . սիրելիս Ատօլֆ, տունը հին անձեռոց մը ունիմ, որ հոս պիտի բերեմ ձգեմ ճաշի ժամանակ դործածելու համար :

— Չարժէր Ֆլանքէթ, հոն տակը բան մ'ուներիմ որ ես աչեմ դնէր . . . վաճն զի ինձի շատ նեղ կուգայ . . . ես ձեզի հատ մը կուտամ :

— Կարծեմ կամաց կամաց անկողին մ'ալ պիտի ուզէ միջօրեայ քունը քնանալու համար, ըսաւ տօքթէօնը կամաց մը Թէլլեքսին :

Սեղան նստեցան : Պ. Կուտման չէր խօսէր, միայն ուտել եւ խմել կը խորհէր : Պ. Ֆլանքէթ ալ շատ լաւ գործ տեսնալով հանդերձ, միշտ խօսակցութիւնը չէր ընդհատէր :

— Սքանչելի մատէս մ'է, այնպէս չէ՞ պարոնայք :

— Այո՛, կատարեալ է :

— Հնդկաստանէն կուգայ, ըսաւ Ատօլֆ քիչ քիչ լուր գիտնին ճաշակելով : Հէ՞ Պ. Կուտման, դուք աղեկ կը ճանչնաք ի՞նչ կրտէք ասոր :

Գիտակի վաճառականին բերանը այնչափ լեցուն էր, որ չէր կրնար պատասխանել, բաւական համարեց միայն իւր պարպած դուռը ներկայել :

— Դարձեալ կուզէ, ըսել է թէ այս ալ ամենամեծ գն-
վեստ մ'է :

— Հիմայ տլ համեմեալ երկկամուռքով ձերմակ զինին
անցնինք պարոնայք :

— Կը տեսնա՞ք սա ձերմակ զինին, ըսաւ բժիշկը, որով-
հետեւ շատ ընտիր է կըսեն : Եթէ հասկնա՞ գոհ կըլլամ :

Քանի քանի անգամներ ձերմակ զինին պարպեցին, սա-
կայն Ֆէլիքս երբէք չպարպեց գաւաթը, վասն զի կզգուշա-
նար : Բժիշկը յայտնեց թէ ձերմակ զինին բարձրագոյն է : Ա-
տօլֆ այս գովեստներէն շատ երջանիկ ըլլալով ըսաւ Պ. Կուտ-
մանին ,

— Իսկ դուք ի՞նչ կըսէք պարոն, դուք որ աղեկ կը
ձանջնաք :

Այն ատեն զիտակի վաճառականը, որուն բերանը շարու-
նակ լեցուն էր, կրկնեց իր մունջ կատակը գաւաթը երկնցնե-
լով, եւ Ֆլանքէթի բարեկամը նոյն կերպով կրկնեց իր պար-
բերականը :

— Երբ ամենքը կը խմէին Ֆէլիքս պատեն առիթ համարե-
լով, ըսաւ ,

— Բայց սիրելի մօրեղբորդիս, ըստ որում այդչափ աղեկ
կ'ասպնջականէք, ինչո՞ւ համար չէք ամուսնանար : Եթէ կին
մ'ունենայիք պիտի օգնէր ձեզ հրաւիրեալներնիդ աղեկ ընդու-
նելու, եւ տնական հարիւր մանրամասնութիւններ կան, որոց
դուք առանձինն չէիք կրնար զբաղիլ :

Պարոն Ֆլանքէթ երեսը ծումակեց, Պարոն Կուտման պա-
տառաքաղը քիթը խօթեց, եւ բժիշկը խնդալով, Ատօլֆ ալ
պօտայ ,

— Ամուսնանա՛լ . . . ես ամուսնանամ . . . Տէր ողորմես
. . . ազատութիւնս կորուսանիմ . . . ես այնչափ էջ չեմ :

— Ասկից զատ, ըսաւ պարոն Ֆլանքէթ, ճաշակները մի
եւ նոյնը չեն . . . այնպիսի կիներ կան, որք չեն սիրեր այս-
չափ երկար ատեն սեղան նստիլ :

— Իսկ ես, կեանքս սեղանի վրայ անցնել կուզեմ . .
նաեւ կանայք միշտ սիրուն չեն :

— Ընդհանրապէս ինչպէս վարժեցնէք այնպէս կըլլան, ես

ամուսնութեան շատագոյով եմ . . . ընկերութիւն մը, բարեկա-
մութիւն մը . . . գոյութեան կցորդ երկրորդ ինքնութիւն մ'է :

— Այո՛, ըսաւ պարոն Ֆլանքէթ, երբեմն երրորդ ինքնու-
թիւն մ'ալ ամուսնութեան մէջ, այնպէս չէ՞ Կուտման :

Պարոն Կուտման, որ չգիտեմ ինչպէս եղաւ նոյն վայրկենին
բերանը լեցուն չէր, պատասխանեց ,

— Կս անդգայ կին մ'ունիմ :

— Պարոն, ըսաւ Տօքթէօրը, Անդրիացի գրագէտին մէկն
ըսած է թէ, « անդգայ կնոջ մը հետ ամուսնանալ՝ առանց խա-
զէն շա՛ սպասելու թողիթ խաղալ ըսել է, իրաւ մեծ հաճոյք
չկայ, բայց վերջապէս ժամանակ անցնել է » :

— Ալ բաւական խօսեցանք ամուսնութեան վրայ, ըսաւ
Ատօլֆ, սա Վօդնէն ճաշակեցէ՛ք . . . պարոն Կուտման, ձեր
գիտողութիւնն ընելու էք :

Բայց զիտակի վաճառականը խօսելու անկարելիութեան
մէջ գտնուելով, Ֆլանքէթ նորա համար պատասխանեց ,

Վօդնը շատ քաղցր գտան, յետոյ անցան Լէսվիլի, յետոյ
Լաֆիլթի, յետոյ Նամբանի : Ֆէլիքս շարունակ կը պահպանէր
ինքզինքը, իսկ բժիշկը այնպէս չէր ըներ, ասով միւս կոչնա-
կանայ պէս շինուեցաւ :

— Ահաւասիկ այդպէս խելացի էք . . . ըսաւ Ֆէլիքս իւր
բարեկամին :

— Ճշմարիտն ըսելով բարեկամ, բոլոր այս գիւնիներն ամե-
նաընտիր բաներ են . . . Ասկից զատ մէկ հատը միայն սովո-
րական չէ, Լիօքրատ ալ կը ներէ . . .

— Իսկ ծննդաբերութեան վրայ գտնուող կինը եթէ պէտք
ունենայ ձեզ :

— Չէ՛, չէ՛ . . . տակաւին ժամանակ ունիմ . . . գիշերն
է անոր ատենը :

Երբ Ֆէլիքս տեսաւ թէ մօրեղբորդին բաւական գինով-
ցած է, թէ բժիշկն առանց բարձրաձայն խնդալու չէր կրնար
բառ մը ըսել, թէ Պարոն Ֆլանքէթ կը շփոթէր եւ պարբերու-
թիւնները շէր կրնար լմնցնել : Վերջապէս թէ զիտակի վաճա-
ռականին աչերն գլխէն դուրս ցցուած էին, կտուց մը սեղանը
թողլով առաւ գլխարկն ու աներեւութացաւ :

ԳԼՈՒԽ ԺԷ .

ԱՆՇԱՀԱՍԻՐ ՍԵՐԱՀԱՐ ՄԸ

Հիմայ զարմանազեղ Էմմայի եւ նորա խնամածուհի երկայնաքիթ կնոջ բնակած՝ Պուլըվառ Մալեուպի շքեղ, հոյակապ ու գեղեցիկ տունը մտնանք :

Օրիորդն իր հորաքեռորդին Մօնսօի պարտէզին մէջ պատահելէն ՚ի վեր, ուր Ֆէլիքս համարձակ խոստովանած էր թէ զինքը կը սիրէ, Էմմա նոյնը չէր, հոգած, խոհուն եղեր էր. առանձնութիւն կը սիրէր, ասոր մէջ իւր սիրտը քննելու համար, միշտ գաղտնի միտում մը կ'գգար իւր հորաքեռորդուոյն համար, բայց իրեն այնչափ դէշ կը խօսէին նորա նկատմամբ, որ զանի իւր մտածութեան վանել կուզէր, երբ դարձեալ հոն ներկայանալ կը յամառէր :

Ասկից զատ՝ Ֆէլիքս տակաւին իրեն ըսած չէր որ կը սիրէ. ընդհակառակն օրիորդը կը կարծէր թէ անդադար պարչուհիներու եւ թատրոնի կանանց հետ զբազեալ է, այն տանն ամենեւին պատճառ մը չէր գտնար իւր սրտին խորը այնպիսի քաղցր զգացում մը անուցանելու, որ ՚ի նպաստ իւր հորաքեռորդուոյն կը խօսէր իրեն : Ֆէլիքսը Մօնսօի պարտէզը տեսնալէն ՚ի վեր՝ բոլորովին տարբեր էր. Ամենայն ինչ փոխուած էր իրեն համար, հիմայ գիտէր որ սիրեալ է, պաշտեալ է այնպիսի մէկէ մը, զոր ինքն ալ կը խորհէր, եւ փառքիկ մուրացկուհուոյն ըսածը սաստիկ կառաւելուր այն միտումը՝ զոր հորաքեռորդուոյն նկատմամբ կը տածէր : Այլ եւս չէր կրնար հաւատալ նորա այնչափ պակասութեանցը, այնպիսի անձի մը՝ որ թըշուառներու համար այնչափ բարութիւն կը յայտնէ : Ասկից զատ եթէ Ֆէլիքս ընդարմացեալ, նաեւ անառակ ցօի մը եղած ըլլար, չըսա՞նք միթէ որ ուղղած էր իր վարքը եւ թէ հիմայ միայն աշխատիլ կը խորհէր :

Ահաւասիկ այսպէս կըսէր խիստ շատ անգամ Օրիորդ Էմմա Տիկին Մառտէլին, երբ սա կը մերժէր Մօնսօի պարտէզը շրջագայութեան երթալ եւ կը սրտար :

— Կրնայ ըլլալ որ դարձեալ Ֆէլիքս հորաքեռորդիդ տեսնանք հոն, անտարակոյս պիտի գայ խօսի եւ ես չեմ ուզեր որ այդ պարոնին ըսած անանկ խայտառակ խօսքերն ու անմտութիւնները մտիկ ընես :

— Բայց Տիկին, իմ հորաքեռորդիս խայտառակ խօսքեր չը խօսիր . . . եւ միթէ անմտութիւն, անպատեհութիւն է գիտ սիրելը, քանզի ահաւասիկ ասոնք են իրեն ըսածները :

— Սիրել՝ զձեզ, միթէ կը հաւատա՞ք զայս սիրելի զաւաակըս, կը հաւանի՞ք այդ սրիկային խօսած պարբերութեանցը : Բայց ինքը ձեր անձը չէ որ կը սիրէ, ձեր հարստութիւնն է եւ ոչ այլ ինչ :

— Եւ ինչո՞ւ չէք ուզեր որ ստուգիւ զիս սիրէ :
— Քանզի՞ այն մարդիկը, որք ամեն կանանց ետեւէն կը վաղեն, չեն կարող միայն մէկը ճշմարտապէս սիրել :

— Բայց ըստ որում հորաքեռորդիս ուղղած է իր վարքը, ըստ որում միայն աշխատիլ կը մտածէ . . .

— Միթէ կը հաւատա՞ք . . . այսպէս ըսած ըլլալուն համար զարմանալի պատասխան . . . խմողը միշտ կը խմէ . . . վանելնականն, սրարչաւ ետ պիտի դառնայ . . . գիտէք որ ստոածներն զոգաց իմաստութիւններն են :

— Ո՛չ Տիկին, չգիտէի :

— Մտի՛կ ըրէ՛ք Էմմա, ձեր հայեացքն ընդունելու արժանի երիտասարդ մը եթէ կայ, այն ալ Պարոն Սէնթ Էսթէյնն է : Տե՛ս անոր վարուցն ըսելիք մը չունիմ . . . նա սիրուն է . . . միայն գեղեցիկ ընկերութեանց մէջ կը յաճախէ . . . նա դերասաններու հետ դուլիաներուն մէջ չգլտորի . . . նա հարուստ է եւ գեղեցիկ . . . ահա ձեզի արժանի մէկը որ ճըմարտիւ կը սիրէ ձեզ : Ձեր հարստութեան համար չէ որ ինքզինքը սիրցնել կուզէ :

— Ինչէ՞ն գիտէք Տիկին :

— Քանզի՞ այդ պարոնը 45,000 ֆրանք եկամուտ ունենալով, արդէն հարուստ է, եւ իր ամուսնանալիք անձին վրայ հարստութիւն գտնել չնայիր, ինքն իսկ շատ անգամ ըսած է :

— Բայց ես չեմ սիրեր այդ Պարոն Սէնթ Էսթէյնը, անձնագով կերպարանք մ'ունի :

— Այ՛ օրիորդ, պէտք եղածին պէս կերպարանք մ'ունի, ճշմարիտ է որ գինետունները յաճախողներուն անանկ յայտնի անպատեհութիւններ չունի . . . բայց ծխախոտ չհոտիր, եւ այս ալ մեծ գովեստ մ'է իրեն :

Սգաւորութեան տարին ընցած ըլլալով Տիկին Սառժէ պարտաւորեց Պարոն Սէնթ Էսթէվը, որ յաճախ գայ զիրենք տեսնայ . յետոյ գործին ընթացքը փոխելով, կըսէր ինքնիրեն, « Մօնօն պարտէզը պտղաբեր իրթալու ենք, բայց Պարոն Սէնթ Էսթէվը ալ միատեղ կը տանինք, այս կերպով Ֆէլիքս կը տեսնայ թէ Էմմաի քով ասպետ մը, հետամուտ մը կայ, 'ի հարկէ իւր մօրեղբօրադաստէն սիրուելու յոյսը մէկդի կը թողու :

Գիտենք որ այս խորհուրդը կատարելագէս յաջողած էր՝ Էմմաի որտի՛ն հակառակ եկած էր, տեսնելով որ Պարոն Սէնթ Էսթէվ իրենց հետ պտղատելու կուգայ . սակայն չէր կարող զիմադրել, միայն նորա թեւն ընդունելը մերժած էր, եւ առանց մասնաւոր նպատակի չէր որ մուրացկուհւոյն առջին ըսած էր թէ մինակ քայլել նախապատիւ կը համարի . . . կարծես անըրեւոյթ բան մը իրեն դուշակել կուտար թէ փոքրիկ աղջիկն իր խօսքերը հօրաքեռորդուոյն պիտի տանի : Կանայք սրտի վերաբերեալ բաներու մէջ նախադրացունն ունին . իսկ մեք այր մարդիկ՝ միայն զիտութիւն ունինք, եւ այն ալ . . .

Սակայն Պարոն Սէնթ Էսթէվ, որոյ թեւը մերժած էր, ասոր համար չկասէր . Տիկին Սառժէի քով խիստ փութաջան եղաւ, դրեթէ օր մը չէր անցներ, որ այցելութեան չերթայ այս Տիկնանց : Էմմաի խնամածուհին խիստ աղեկ ընդունելութիւն կընէր երիտասարդին, արդէն իրրեւ իւր աշակերտուհւոյն ապառնի ամուսինը կը վարուէր, թէպէտեւ տակաւին աղջկան կողմանէ գոհացուցիչ պատասխան մը ընդունած չէր :

Իւր սէրը յայտնելու համար բարեպատեհ առիթներ չէր պակսէր Պարոն Սէնթ Էսթէվին, որ շատ անգամ Էմման պարտէզը կը դտնար, մինչդեռ երկայնաքիթ կինը սրահը կը մնար :

Այս պարոնը Տիկին Սառժէի հրամանաւը օրիորդին քով գացած էր, որ իւր ծաղիկները խնամելու զբաղած ըլլալով, իւր այնչափ քաղցր զբաղմանը մէջ գինքը խռովող երիտասարդը տեսնելով յայտնի տհաճութեան նշան մ'ըբաւ :

Պարոն Սէնթ Էսթէվ, որ Էմմաի ծաղիկներուն մը շինելը տեսաւ, մտեցած ատեն ձայնը լսելի ըլլալու չափ պօռաց .

Մարդ իւր ընտանեացը ծոցէն գատ ուրիշ ո՞ւր տեղ կըրնայ երջանիկ ըլլայ . . .

Օրիորդը դուրը վեր վերցուց եւ գրեթէ ստահակ կերպով մը այս պարոնին երեսը նայելով պատասխանեց,

— Ի՞նչ կը նշանակէ այդ պարոն :

— Ի՞նչպէս, օրիորդ, միթէ կը հարցնէք նշանակութիւնը . . . կարծեմ մեկնութեան կարօտ չէ ըսածս :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Այս վկայութիւնը . . . որ կարծեմ հանրածանօթ երաժշտութեան կտոր մ'ըլլալով շատ յարմար պարագան է հոս կրկնելու :

Եւ պարոն Սէնթ Էսթէվ սկսեց երգել,

Մարդ իւր ընտանեաց, իւր ընտանեաց ծոցէն գատ, ուրիշ ո՞ւր տեղ կրնայ երջանիկ ըլլայ :

— Օ՛հ, շնորհակալ եմ պարոն, բայց չէր արժէք երգել :

— Արդ՝ օրիորդ զձեզ ծաղկանց մէջ կը տեսնեմ . . . որոց մէջ դուք ալ ծաղիկ մ'էք, հետեւաբար ձեր ընտանեաց ծոցն էք . . . յայտնի է սա . . . :

— Այո՛, այդ մեկնութեամբ վերջապէս կրցի հասկնալ :

— Քանզի ձեր պարկեշտութիւնը չարդելուր զձեզ ծաղկանց մէջ դասիլ . . . եւ սակայն դուք ամենէն գեղեցիկն էք . . . :

— Ա՛յ պարոն, եթէ զիտնայիք թէ այդ տեսակ մեծաբանքներն ո՞րչափ կը ձանձրացնեն զիս, անտարակոյս զանց պիտի առնէիք :

— Իսկ ես իրրեւ մեծարանք չեմ խօսիր ասոնք . . . ճշմարտութիւնը կը խօսիմ :

— Իմ հօրաքեռորդիս Ֆէլիքս, մեծարանք չխօսիր ինձ . . . սակայն կը սիրեմ իր խօսակցութիւնը :

Պարոն Սէնթ Էսթէվ բարկութեամբ միշտ շրթունքները կը խածնէր, երբ Էմմա իւր Ֆէլիքս հօրաքեռորդուոյն համար կը խօսէր : Վերջապէս սրտաց,

— Օրիորդ, ես ինքզինքս երբէք այդ պարոնին հետ եւ ոչ մէկ կերպով չեմ բաղդատէր . . . անշուշտ նա ինձմէ աւելի հանձար ունի :

— Իմ հօրաքեռորդիս ինքզինքը հանճարեղ ցուցնել չուզէր պարոն . . . :

— Բայց իմ աղեկ զիտցածս սա է որ , ինքն չսիրէր ձեզ այն անկեղծութեամբ . . . այն անշահասիրութեամբ՝ որ զձեզ ուրիշ ամեն կիներէ աւելի նախապատիւ կը ցուցնեն ինձ՝ եթէ աղքատ իսկ ըլլայիք . . . եթէ ձեր աշխատութեամբն ապրելու ստիպեալ պարկեշտ գործաւորուհի մ'ալ ըլլայիք . . . :

— Եթէ ես խեղճ գործաւորուհի մ'ըլլայի , պիտի ամուսնանայի՞ք ինձ հետ . Բայց ո՛չ , ես չեմ հաւատար պարոն :

— Ա՛հ չքնադդ Էմմա , ընդհակառակն՝ աւելի երջանիկ պիտի ըլլայի , վասն զի այն ատեն պիտի տեսնայիք թէ միայն զձեզ կը սիրեմ . . . ասկից զատ՝ ես ինքն փոքր ինչ հարստութիւն ունենալով կրնայի զձեզ հարստացնել . . . զձեզ մասնակից ընել . . . Ս՛հա կը կրկնեմ ձեզ , եթէ բան մ'ալ չունենայիք , ուխտս պիտի կատարուէր :

— Ուրեմն ստակի աչք չ'ունի՞ք :

— Ո՛հ . . . ի՞նչ է դրամն սիրոյ քով . . . անարգ մետաղ մը որ խիստ շատ անգամ մօլութիւնները՝ յոռի կիրքերը յագեցնել կը ծառայեն . . . սիրեցելոյն մէկ քաղցր հայեացքը՝ անաւասիկ դանձուց առաջինը :

Տիկին Սառէ է որ երիտասարդաց քովն երթալու համար սրահէն եխելով պարտէզն էր , Սէնթ Էսթէվի արտասանած վերջին խօսքերը լսելուն պուսաց ,

— Տեսա՞ք սիրահարաց ճշմարիտ զգացումները . . . անարգեղի է իրենց հարստութիւնը . . . անտարակոյս չեմ ըսեր որ պաշտելու է դրամը , բայց վերջապէս չիլատեր երջանկութեան , ընդհակառակը կը նպաստէ . . . սէր , այո՛ շատ ընտիր է . . . բայց , բաւական չէ . . . միայն սիրով անկարելի է քաշմիրի շալեր եւ ասղնեգործեր առնել կնոջը . . .

— Փառք Աստուծոյ Տիկին , օրիորդին պէս բարեկիրթ անձի մը ճաշակը դոհացնու համար ես բաւական հարուստ եմ . եւ եթէ ինքն աղքատ ալ ըլլար , աւելի երջանիկ պիտի ըլլայի , քանզի ամենայն ինչ ինձ պիտի պարտէր :

— Բոլոր ասոնք ձեր անշահասիրութիւնը կասկացուցանեն , երիտասարդ , եւ ես երբէք տարակոյս չունիմ . . . Էմման իւր

անձին հաւար կը սիրէք . . . բայց ցաւ կ'զգամ ըսելու , որ զինքն հարուստ պիտի գտնաք . . . նաեւ խիստ հարուստ . . . չկարծածնուք չափ . . .

— Ի՞նչ , Տիկին :

— Այո՛ , այո՛ , ասի իրեն ասպունի ամուսնոյն համար մեր պահեստի մէկ զարմացումն է . . . այնպէս ըրէք որ օրիորդը վերջապէս ձեր ձեռքն ընդունիլ հաւանի , եւ պիտի տեսնաք . . .

— Կիմանա՞ք օրիորդ . . . միթէ դարձեալ այնչափ անգո՞ւթ պիտի ըլլաք :

— Պարոն , արդէն ձեզի ըսի որ ես խիստ նորատի եմ , եւ չեմ ուզեր տակաւին ամուսնանալ :

Սէնթ Էսթէվ մտածեց եւ թափերական բարձր ձեւ մ'ընելով հեռացաւ . . . Տիկին Սառէ կտեւէն գնաց , ըսելով ,

— Համբերութիւն , համբերութիւն . . . նորատի օրիորդք օր մը կը մերժեն եւ հետեւեալ օրը կը զոհուին :

ԳԼՈՒԽ ԺԸ.

Խ Ա Ղ

Պ. Սէնթ Էսթէվի հետ տեղի ունեցած այս խօսակցութեան հետեւեալ օրը , Էմմա Տիկին Սառէին հետ նախաձաձած ատեն՝ ըսաւ անոր ,

— Տիկին , ինչո՞ւ համար երէկ իմացուցիք այդ պարոն Սէնթ Էսթէվի թէ կարծուածէն աւելի հարուստ պիտի ըլլամ :

— Բայց սիրելիս , քանզի անպատճառ այնպէս պիտի ըլլայ , ուրեմն մոռցա՞ք ասկից երեք ամիս առաջ զիբթօւէնին հոս դայր եւ բրածր :

— Եկաւ ինձ աղաչեց որ իրեն համար խիստ արդիւնաւոր ըլլալիք վաճառականական գործի մը համար , հարիւր երեսուն հազար ֆունդ փոխ տամ : Գուք ինձ ըսիք թէ եղբօրս վրայ վստահութիւն ունենալ պարտ էի . . . էս ալ նօտարին ուղղեալ մտերհակ մը տուի , որ անպատճառ այս գումարը տուած ըլլալու է իրեն :

— Եւ շատ աղեկ ըրիք . . . Վիքթօռէն խելացի աղայ մ'է , որ միայն մէկ խորհուրդ մ'ունի , այն է մեծ հարստութիւն վատակիլ . . . եւ պիտի վատակի . . . գուք գիտէք որ իւր անձին համար աշխատած ատեն ձեզ համար ալ կաշխատի . . . ինքն ըսած է ինձ « ըրօջս գրամագլուխը կրկնապատկել կուգիմ . . . » եւ բարի խորհուրդ մ'է այս :

— Բայց իր ունեցածն ի՞նչ ըրեր է :

— Գործի մը գրած է , չէր կրար այն ատեն այս գործէն հանել . . . կը հասկնա՞ք :

— Ա՛յ այնչափ . . . ես գործերէ այնչափ աղեկ չեմ հասկընար , սակայն եղբօրս վրայ կատարեալ վստահութիւն ունիմ . . . միայն թէ աւելի հարուստ ըլլալ չէի փափաքէր . . . :

— Կը սխալիք . . . ես չէի սրբօղեր որ հարստութիւնս սպահով շարադրութեանց մէջ կրկնապատկի . . . Վիքթօռէնն ալ զիս հաւատած է որ վտանգաւոր գործերու չձեռնարկէր . ես իմ ունեցածս ալ տուի . . . իմ կալուածներս եւ հօրդ ինձ ձգած գումարը :

— Ի՞նչ , Տիկին , բոլոր ունեցածնիդ եղբօրս տուիք :

— Այո՛ գաւազն : Մտիկ ըրէք , իմ հասակիս մէջ ստակն անարգելի չէ , հազար ու մէկ մանր փողաքչանք լսել , դժբախտեանք տեսնալ սիրելի է մեզ . . . կը ծուլանանք . . . անհոգ կըլլանք եւ կամ այլ եւս այն ոյժը , այն փրութիւնը չմնար որ մարդ ինքզինքին ծառայէ եւ ամեն վայրկեան ուրիշին ծառայութեանը պէտք չ'զգայ :

Վիքթօռէնի գալուստն ընդմիջեց այս խօսակցութիւնը : Այս երիտասարդն իր եղբարցը պէս եղած էր , հօրը մահուանէն՝ այսինքն շուրջ տասն եւ ութը ամիսէ՛ ՚ի վեր ձերացած էր : Բայց ասոր վրայ իր դժերուն մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը հաճոյից զեղծունն չէր յայտնէր : տեսնալին յայտա-

բարութիւն մը , անդադար դրադեալ մտքի մը փոթաձանութիւնն է , որ իր երեսին վրայ , իւր անոցը մէջ կը կարդացուի , որ կը տեսնուի բոլոր իւր շարժմանցը մէջ , որք մտազուալ մարդու մը կերպերն են , մարդու մը՝ որ հազիւ մտիկ կ'ընէ իրեն խօսած ատենդ , քանզի Չլիերը միշտ դրդեալ են , ձախողանքէ յուզեալ , զորս պահելու պարտաւորեալ է :

Պատաւ տիկինն ու օրիորդը Վիքթօռէնին դալը տեսնելով , հրճուանաց ճիչ մ'արձակեցին :

— Ահաւասիկ եղբայրս :

— Ահաւասիկ սիրելի Վիքթօռէնը . . . հիմայ , բարեկամ , ձեր խօսքը կընէինք :

— Բարեւ Տիկին Սառժէ . . . բարեւ Էմմա :

— Գրկախառնութիւն մը եղբայր իմ . . . կը տեսնա՞ք , մըտքէն անգամ չէր անցնէր . . .

— Մեզի հետ ճաշելու եկաք Վիքթօռէն , շատ աղնիւ էք :

— Ա՛յ , ո՛չ , Տիկին . արդէն ճաշած եմ : Օ՛ , ես այնչափ ուշ չեմ կրնար ուտել ձեզի պէս :

— Ա՛յ , եղբայր իմ , մենք քիչ մը ծոյլ ենք . . . մտիկ ըրէ՛ , աճապարելու պատճառ մը չունինք :

— Իրաւ է , մինչդեռ ես . . . ես այնչափ գործ ունիմ . . . այնչափ գրելիք նամակներ . . . որ առաւօտուն շատ կանուխ կելլեմ . . .

— Սիրելիս Վիքթօռէն , խիստ բարի է աշխատութիւնը սիրել . . . բայց նաեւ շատ ալ յոգնելու չէ՛ . . . դեղնած կը տեսնեմ ձեզ . . . կերպարանքնիդ փոխուած է :

— Աչերնիդ ալ կապոյտցած . . . ինչո՞ւ համար կոպերը կապոյտցեր են :

— Ինչո՞ւ համար , զտրմանալի է խօսքդ , քանզի շատ դիչերներ գրելով անցուցի :

— Կը տեսնա՞ք բարեկամ , իրաւունք ունէի ըսելու թէ շատ կաշխատիք . . . առողջութիւննիդ պիտի վտանգէք :

Վիքթօռէն խոռովեալ կը շրջագայէր սենեկին մէջ եւ կը մըրմընէր :

— Առողջութի՛ւնս . . . առողջութիւնս լաւ վիճակի մէջ է եւ այս չէ՛ զիս անհանդիստ ընողը :

- Անհանգիստ ես եղբայր իմ :
- Ե՞ս . ո՛չ . . . բան մը չունիմ , ընդհակառակը . . .
- Քանի մ'օրէ 'ի վեր եղբարքս տեսա՞ր :
- Ե՞ս , ո՛չ , ժամանակ չունեցայ :
- Մեզի ստակ բերելու եկաք , շատ ստակ բերիք , այն-պէս չէ՞ :

Երոտասարդը գէմըը կերպարանաւորութեամբ համար՝ շրթունքը խածաւ եւ պատասխանեց ,

— Ո՛չ , Տիկին Սառժէ , ո՛չ , ձեզի ստակ չբերի . . . դորձերը այնչափ շուտ չեն լմննար : Բայց անհոգ եղիք , ձեզի համար ստակ պակաս չէ :

— Օ՛ , ես շատ հանգիստ եմ , բարեկամ . . . դիտեմ որ դուք խելացի , խոհեմ տղայ մ'էք . . . դուք ձեր հարստութիւնը պօռսայի մէջ չէք վտանգէր :

— Աստուած չընէ . . . ես միշտ ընտիր գործողութիւնները կը դիտեմ , կ'սպասեմ եւ երբ ներկայանան կը բռնեմ . . . ինչպէս այս վայրկենիս , գործ մը կայ , որուն մէջ առ նուազն երեսուն հազար ֆռանք շահ կայ . . . եւ դուցէ կրկին անգամ աւելի . . . Սակայն անոր ձեռնարկելու համար անմիջապէս հարիւր հազար ֆռանք պէտք է , ուստի քրոջմէս ուղելու եկայ : Եմամ իւր մեծ աչերը բանալով՝ պօռաց ,

— Հարիւր հազար ֆռանք , բայց արդէն հարիւր երեսուն հազար տուի , անոնք ի՞նչ ըրիր :

— Ի՞նչ ըրի : Ուրիշ ընտիր գործի մը կապած եմ զայն . . . որ մեծ շահ պիտի բերէ քեզ . . . սակայն չեմ կրնար հիմայ անկից առնել . . . ահաւասիկ ասոր համար այսօր դարձեալ կուզեմ ուրիշ անվրիպելի գործողութեան մը համար , զոր փախցընելը շատ գէշ պիտի ըլլայ . . . կարծեմ յայտնի է , այնպէս չէ՞ Տիկին Սառժէ :

— Անտարակոյս սիրելիս , անտարակոյս : Ես գործոց ընթացքը Եմայէն շատ աւելի աղեկ կը հասկնամ :

— Ուրեմն Տիկին , կարծէք որ եղբօրս ուրիշ հարիւր հազար ալ փոխ տալով , աղեկ պիտի ըլլայ :

— Անտարակոյս սիրելիս , ըստ որում այնպիսի գործողութեան մը համար է , զոր փախցնել չուզեր :

— Բայց ինծի բան մը չպիտի մնայ . . . արդէն գիտէք որ ժառանգութեան ծախքերը ինծի վճարել տուին . . . վերջը կը հատուցանենք ըսին եղբարքս :

— Անհոգ եղիք , ձեր ծախքերը կը վճարեն ձեզ . . . ձեր հարիւր հազար ֆռանքը սեղանաւորի մը քով են կարծեմ :

— Այո՛ , որ ինծի հարիւրին հինգ տոկոս կը վճարէ :

— Հարիւրին հի՛նգ , ճշմարիտ սքանչելի թշուառութիւն . . . ես կուզեմ որ այդ հարիւր հազար ֆռանքը հարիւրին տասը տասներկու շահ բերեն :

— Բայց իմ ստակներս , Ալիքթօնէն :

— Զեր ստակները , սիրելի Տիկին , անոնք ալ քրոջս ունեցածներուն պէս պիտի ըլլան . . . անպատճառ միեւնոյն բանը . . . : Ահա Էմմա , ստորագրէ սա թուղթը , զոր արդէն պատրաստած էի . . . գրէ՛ , « վերոյգրեալ տողերն ընդունած եմ » ստորագրէ՛ :

Օրիորդը քիչ մը վարանելէն ետքը՝ վերջապէս թուղթը եզրօրը տալով՝ ըսաւ ,

— Բայց հիմայ ալ մեզի շատ քիչ ստակ մնաց հոս . . . այնպէս չէ՞ Տիկին :

— Ճշմարիտ է եւ դալ ամիս տան վարձու պայմանաժամը կը լրանայ . . . եթէր հարիւր ֆռանք պիտի տանք . . . քիչ ժամանակ ունի՞ք . . .

— Ո՛հ , անհոգ եղիք . . . ես այս ամիս չլրացած կամ ամսուն վերջը ձեզի ստակ կը բերեմ :

— Մեզ չպիտի մոռնաս եղբայր իմ :

— Ո՛չ . . . առ այժմ՝ մնաք բարով , երթամ սեղանաւորէն ստակներն առնեմ . . . ժամանակ կորսնցնելու չգար , բանդի իմ նոր գործիս այսօրուընէ ձեռնարկել կուզեմ : . . . 'ի տեսուած թիւն Տիկին Սառժէ . . . բարեւ Էմմա . . .

— Եղբայր իմ ամսուն վերջը մեզ մի՛ մոռնաք :

Ալիքթօնէն չպատասխանեց , արդէն հեղացած էր , կառքը հեծաւ ու սեղանաւորին դնաց , որոյ քովն էր քրոջը մնացեալ ստակները : Սեղանաւորն զբաղեալ ըլլալուն , հոն պէտք եղաւ քիչ մը սպասել : Աւերջապէս՝ գործը լմնեցին զրամասեղանին վրայ հարիւր հազար ֆռանքի յանձնարարութիւն մը տալով :

Կրամատեղանք դնաց, ուր դարձեալ բաւական ատեն սպասել պէտք էր: Երբ վերջապէս ստակները ձեռք անցուց, պոստայի ժամն անցած էր, եւ անա հոն կը կատարէր Պարոն Մօնլուտանի կրտսեր որդին իւր աղաչով անուանած գործողութիւնները, բայց այս գործողութեանց մէջ արդէն փտտնած էր բոլոր իրեն հարստութիւնը, քրոջն հարստութեան մէկ մասն, ու իրեն փոխ տրուած գումարները:

Վիքթօռէն սաստիկ վշտացաւ, պոստայի հրապարակին վերայ կը շրջէր: Վայելուչ նորաձեւութեան մտադիր երկտասարգ մը միականի ակնոցը աչքը դրած առջին գալստի,

— Ի՞նչ կ'ընես հոս, սիրելի, ձանձրացած կերելիս, իբրեւ թէ ողբերգութեան մը ընթերցումը մտիկ ըրած ըլլայիր:

— Հա՛, դո՛ւ եւ Սօզվիլ: Սիրտս շատ նեղացած է, սաստիկ նեղացած . . . հարիւր հազար Ֆրանք ունիմ . . . պոստան մտնալ կուղէի, ուր մինչեւ հիմայ յաջողութիւն մը տեսած չեմ . . . այսօր գիները բարձրանալու գաղափարով պիտի խաղայի . . . անշուշտ էի որ այսօր գիները պիտի բարձրանան, եւ ստազիւ այսօր արժեթղթերը բարձրացան, ու քիչ մ'աւ աւելի . . . սակայն շատ ուշ հասայ, պոստան գոց էր . . .

— Բարեմիտ աղայ, բան մը կայ զոր չեմ հասկնար. սա պոստայի խաղուն սէրը, անանկ գործ մը՝ որ անպատճառ ամսուն վերջը սպասելու է, վատկած կամ կորսնցուցած ըլլալդ հասկնալու համար . . . Ես իմ բաղդս շուտով հասկնալ կուզեմ . . . ինծի Լանսըրնէի, Պաքառայի, նաեւ Եքատթէի խօսք ըրէ . . . վերջապէս անանկ խաղերու, որոց մէջ մէկ գիշերը կրնայ մարդ կրկնել եւ եռապատկել իւր գրամադուխը, անաւասիկ ասոնք են զբօսեցուցիչ խաղերը: Ահաւասիկ այս է որ շունչ առնել կուտայ, կը յուղէ եւ ամեն վայրկեան երկիւղէ ի՞նչ կը փոխադրէ . . .

— Այո՛ . . . բայց ի՞նչ կը վատկուի այդ երկիւղիներուն մէջ . . . մէկ քանի հազար Ֆրանքնոց տոմսակ . . . ես ընաւ անանկ խաղացողներ չեմ գտած, որք աւելի վտանգել ուղեն. եւ ինծի այդչափ պղտիկ շահ պէտք չէ . . .

— Ճշմարիտ այնպիսի ժողովներ կըլլան, որոց մէջ ամենամեծ գումարներ ալ կրնայ մարդ կորսնցնել կամ շահիլ . . .

վասն զի դու անանկ մեծ տուներ ներկայացած չես . . . հիմայ ես այս գիշեր անանկ ժողովքի մը պիտի երթամ, ուր արտաքոյ կարգի փայլուն բան մը պիտի ըլլայ . . . : Մարդոց ամենաբնտիրներն՝ թերեւս կանայք ալ խառն ըլլան . . . բայց մեզի ի՞նչ, ընդհակառակն աւելի զբօսալի է: Հետս եկուր, ես քեզ կը ներկայացնեմ:

— Եւ միթէ հոն մեծ խաղեր պիտի խաղցուի՞ն:

— Ճշմարիտ ես պատասխանատու չեմ: Հոն չորս կողմերնին ոսկի լեցուցած օտարականներ կուգան . . . Ռուս իշխաններ . . . բայց ճշմարիտ Ռուսիացիք, որք առանց երես թըթւնեցընելու հարիւր, երկու հարիւր հազար Ֆրանք կը կորսնցընեն, այնպիսի Ամերիկացիք, որք բոլոր գիշերը կը խաղան . . . Սնդղիացիք, Սպանիացիք, որք Քալիֆօռնիայէն կուգան եւ չը գիտեն թէ ի՞նչ ընեն իրենց ոսկոյ զանգուածները . . . մինչեւ իսկ Չինացիք ալ կուգան, որոնք մեծամեծ խաղացողներ են:

— Յօշնըը մոռցար:

— Ո՛հ, չէ՛, քու գիտցածիդ պէս Յօշներ չկայ: Տիկին Տալվիմառ իւր հրաւիրելոց ընտրութեանը մասին խիստ անաչառ է, կասկածելի խաղացող մը երկրորդ անգամ չընդունուիր:

— Իրաւ դու զիս ներկայի՞ր կուզես, բայց անոնք զիս չեն ճանչնար:

— Մակայն զիս կը ճանչնան, եւ աղեկ գիտեն որ ես անանկ յոռի խաղացողներ չեմ տանիր: Օ՛ն, բռէ՛, այս գիշեր կուգա՞մ:

— Կուգամ՛, ինչո՞ւ չէ, տա՛ր զիս այդ Տիկին Տալվիմառի տունը . . . ես ալ կուզեմ այդ մեծահարուստ մարդոց կարգին մէջ զանուել:

— Արեմն միատեղ ճաշենք, վերջը ֆօնթէօ փողոցի գեղեցիկ մէկ պանդոկը կերթանք: Պիտի տեսնաս սիրելիս, ամեն կողմ գորգեր, հայելի, ծաղիկ, ոսկեղօծ . . . վերջապէս ըսքանչելի վայելչութիւն մը . . .

Երկու երեսասարգք Պուլլվառ Տէզիթալիէնի վրայ սիւսառ մը ծխելու գացին, եւ անկից Մէզօն տ՛Օռէ: Վիքթօռէն քիչ կուտեր, ընդհանրապէս խաղացողը ախորժակ չունին, զիրենք սպառող կիրքերը բոլոր ուրիշ ցանկութիւնները կը մոշեն, չեն

ճանչնար սէր , անդգայ են գեղեցիկ կնոջ մը ժողովն , սեղանի հաճոյից , թատրոնի քաղցրութեանց . ամենէն օգտակար եւ առաջին կարգի արուեստաւորաց խաղացած ընտիր մէկ խաղը անտարբեր կը թողու զիրենք , շատ անգամ մտիկ ալ չեն ընել , վասն զի տէգի (մաշա) միաւորով եւ սրտի (քուբա) աղջիկով զբաղեալ է մտքերնին :

Ռօզվիլ որ Վիքթօռէնի չափ խաղացող չէր . . . պատմեց իր բարեկամին նենգութիւններն ու մեծ հարստութիւնները . կրտսերն Մօնլօռան՝ արդէն բոլոր իր կորուսած դրամը կը խորհէր , սակայն համոզուած էր թէ խաղու ոգին միշտ իրեն հակառակ չէր կրնար ըլլալ , եւ թէ երջանիկ յաջողութիւն մը պիտի ունենայ : Տիկին Տէլվիմառի տունն երթալու անհամբեր ըլլալուն , բարեկամը պարտաւորեցաւ ըսել :

— Համբերութիւն , սիրելի , ժամը ինն ու կէսէն առաջ չենք կրնար երթալ , գիւղէն եկած պիտի կարծեն մեզ . . . ասկից զատ մեծամեծ խաղացողք ժամը տասնէն առաջ չեն գար :

Վերջապէս ֆօնթիւն փողոցն երթալու ժամանակն եկաւ : Երկու բարեկամք կառքով մը գացին . եւ Վիքթօռէն տեսաւ որ առաջնորդը զինքը խաբած չէր : Տիկին Տալվիմառի տունն ամենայն ինչ փայլուն , վայելուչ եւ շքեղ էր . սրահները՝ որոց կարասիքը յոյժ մեծածախ էին , լոյս կը ցոլային : Տիկնայք պարահանդէս երթալու պէս զարգարուած եւ զրեթէ ամենն աւգեղեցիկ , սիրով կը խօսակցէին ու ակտրօթելի կերպով կը ժրպտէին օտարականաց : Բայց բոլոր ատոնք կը սահէին Վիքթօռէնի սրտէն . ինքն ուրիշ բան չէր նկատեր , ուրիշ բան չէր փնտեր , եթէ ոչ կանանչ գորգ : Ասդ եւ անդ էքստրէի փոքրիկ խաղեր կը կատարուէր , իսկ մեծամեծ խաղացողք դեռ եկած չէին :

Վիքթօռէն ժամանակ անցնելու համար՝ գնաց սեղան մը նստեցաւ , ուր մէկ քանի տիկնայք երկաթուղի կը խաղային : Միայն մէկ ոսկի կը գրուէր հոն . բայց մէկ քանի թղթադրամներ կորսնցնելու միջոցը գտաւ . տիկնայք ալ ազդու նայուածքներ կընէին , եւ այս ալ իրեն աւելի պջրանք յայտնողներն էին , որ ուսին վրայ կը ձռէին , բազկին կը կրթնէին , անանկ կէս բաւեր կուղղէին իրեն , որոցմէ ամբողջ պարբերութիւններ կը

հասկցուի . . . իր անձնասիրութիւնը կը խայթէին . ըսելով ,

— Տակաւին պիտի կենա՞ս հոտ :

— Յետոյ սա՞ :

— Ես հիմայ ամէնքն ալ կը բռնեմ , պատասխանեց Վիքթօռէն , որ երբէք խաղու դրուած ստակները ահնջափ մեծ չէր գտնար , սակայն այսպէսով տասը հազար ֆռանք թողուց այս կանանց ձեռքը , որ խաղը թողով պոռացին ,

— Ալ հիմայ պարելու երթանք :

— Ո՛հ , խիստ լաւ , կըսէր ինքնին Վիքթօռէն , խաղը կը թողուն անանկ վայրկեանի մը՝ ուր բաղքս պիտի յաջողէր . . . բայց ես ալ յիմար եմ որ կանանց հետ կը խաղամ , եւ միթէ մարդ ասոնցմէ կրնա՞յ ստակ առնուլ . . . վերջապէս հիմայ մեծամեծ խաղացողները կուգան , յուսալու ենք :

Նրդարեւ օտարականք հասան , ու անմիջապէս մեծ խաղերն սկսան . . . Վիքթօռէն ժամանակ մը խաղու սեղանները նստող անձինքը զննեց , Անմիջապէս մեծ Ռուս իշխանը Լանսքընէի մաս մը սկսելու համար թղթերը շինեց եւ առջին երեք հատ հազարնոյ տունակ նետեց , երեք խաղացողք ալ այնչափ գումար դրին եւ սեղանաւորը վաստկելով ըսաւ ,

— Վեց հազար ֆռանք կայ պարոնայք :

— Պանքօ , պոռաց Վիքթօռէն , գորգին վրայ տոմսեր գնելով :

Սեղանաւորը երկու միաւոր քաշեց : Գարձեայ նոյն ձայնով եւ միշտ նոյն պարբերականով սկսեց , բայց այս անգամ միայն թուահամարը փոխուած էր .

— Պարոնայք , քսան եւ չորս հազար ֆռանք կայ ընելիք :

— Պանքօ , պատասխանեց Վիքթօռէն , որուն ձայնէն յուզմունք կը հասկցուէր , թէպէտ կաշխատէր որ չափաւորէ զայն :

Այս անգամ խաղն այնչափ հետաքրքրական եղաւ , որ շատ անձինք իրենց տեղը փոխեցին Լանսքընէի սեղանին մօտենալու համար . Ռուսիացին խառնեց թղթերը եւ նորէն վաստկեցաւ : Տոմսերը ամբողջ առջին դնելով պոռաց ,

— Հիմայ քառասուն եւ ութ հազար ֆռանք կայ ըլլալիք . . . իսկ եթէ շատ է կառնեմ . . .

— Ո՛չ . . . ևս կը խաղամ . . . քառասուն եւ ութը հազարին համար պանքո . . . ըսաւ Վիքթօռէն դողդոջիւն ձայնով եւ վրան մնացած դուժարը սեղանին վրայ նւտակով , որ սառագիւ քառասուն եւ ութը հազար ֆռանք էր :

— Ա՛հ , պռալօ պարոն , սքանչելի խաղացող էք եղեր , ըսաւ Ռուս իր հակառակորդին երեսին ժպտելով , ևս ալ ձեզի պէս լայնարձակ խաղացող անձանց հետ խաղալ կուզեմ :

Վիքթօռէն բան մը չպատասխանեց , անձկութեամբ կ'ըսպատէր որ սեղանաւորը թղթերը դարձնէ . . . սրահին մէջ խրաքանչիւր ոք կարծես իր անհամբերութեանը մասնակից էր եւ հաւանական է թէ ամենուն ալ կամքը երկտասարդին համար էր , որ այնպիսի մէկու մը դէմ կը խաղար , որ վատակերութեամբ պէտք չունի :

— Խորին լուսթիւն մը տիրեց : Աեզանաւորը դարձուց թղթերը . . . երկու աղջիկ բաշեց , Վիքթօռէն դարձեալ կորանցուց :

— Ինչու՞ն եւ վեց հազար ֆռանք կայ , ըսաւ Ռուս իշուանը իր սովորական հանդարտութեամբը :

Ո՛չ որ պատասխանեց : Վիքթօռէն հեռացաւ սեղանէն , չէր կրնար խաղալ , քանզի չունէր այլ ինչ : Ինչու՞ն հազար ֆռանք Վանսքընէի եւ տասը հազար ֆռանք երկաթուղիին կորսնցուցած էր , ըսել է վրան դանուած հարիւր հազար ֆռանքը :

Գլուխը կախած , աչերէն կրակ ցայտելով , սրահէն կատաղաղէմ աներեւութացաւ : Գուրս ելլելուն պէս կատաղութեան տուաւ ինքզինքը , մազերը քաշեց , զինքն հալածող բաղդին կը հայնոյէր , եւ ամեն վայրկեան կը պռար ,

« Բան մը չմնաց , բան մը չմնաց » :

Եւ մի՛ հաւատար թէ այս վայրկեանին իր քոյրը եւ կամ Տիկին Սառժէն կը խորհէր , որոց մին մոխրի վրայ նստեցուցած եւ միւսը թշուառութեան դատապարտած էր , եւ ո՛չ ալ իւր եղբայրն կամ ուրիշները որոց նուազ կամ առաւել մեծ գումարներ պարտ էր : Միայն մէկ բան մը կ'գրազեցնէր զինքը , այն է թէ ի՞նչ կերպով ստակ պիտի կրնայ հայթայթել նորէն խաղի սկսելու համար :

ԳԼՈՒԽ ԺԹ .

ՆԵՆԳՈՒԹԵԱՆ ՄԸ ԳՍԴՏՆԻՔԸ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ

Ամսուն վերջը հասած էր եւ Վիքթօռէն չտեսնուեցաւ Պուլլա Մալէուսի վրայ :

Էմմա անհանգիստ էր , բայց չէր համարձակէր իւր խնամածուհւոյն առջեւ ինքզինքն յայտնել , որ չէր դադրէր ըսելէ ,

— Վիքթօռէն այսօր կուգայ . . . անտարակոյս պիտի գայ . . . ինքն աղեկ գիտէ որ ստակնիս հատած է . . . ա՛հ , իր ըզբաղմանց պատճառաւ չկրնար դալ . . . վստահ եմ , որ տակաւին չգալուն յանձանքը իրը չէ ,

— Տիկին աղեկ գիտէր որ գրասեղանիս մէջ հինգ հարիւր ֆռանքէ աւելի չունիմ . . . տունը վայելուչ կերպով դարդարել տուի , բայց շատ սուղի եղաւ ինչ :

— Գիտեմ դաւակն , պատառաղործին ցուցակը տեսայ . . . դուք բաւական հարուստ էք ասանկ նորաձեւ կահ կարասիք մ'ունենալու համար . . . բայց խնդիրը հող չէ . . . ես ալ սնտուկս չուրջ չորս հարիւր ֆռանք ունիմ . . . :

— Բայց ամսուն տասն հինգին եօթը հարիւրը տան վարձու վճարելու ենք . . . ամեն օր ալ ստակ պէտք է :

— Անտարակոյս . . . բայց Վիքթօռէն մեզ նեղութեան մէջ չթողուր . . . կուգայ :

Փոխանակ Վիքթօռէնի՝ դեղեցիկն Աէնթ Էսթէվներկայացաւ այս տիկնանց տունը , եւ քանի մ'օրէ 'ի վիւր չգալուն համար թողութիւն խնդրելով՝ Տիկին Սառժէի ձեռքը պագաւ , ըսելով թէ Հիւանդ պառաւ աղգակհանաց միտն համար ետ մնացած էր , որմէ պիտի ժառանգէր՝ թիպէտե կանարդէր ստակը , սակայն պարտք մը համարած էր իւր հօրաքեռ քովէն չզատուիլ որ խիտ հարուստ եւ զինքը շատ կը սիրէր :

Էմմա ամենակատարեալ անտարբերութեամբ մտիկ կընէր ասոնք , սակայն Տիկին Սառժէ փութաց պատասխանել ,

— Շատ աղեկ ըրիք գալերնուդ , սիրելիս պարոն Աէնթ Էս-

թէ՛լ, վասն զի մեզի ծառայութիւն մը պիտի մատուցանէ՛ք :

— Ծառայութիւն մը տիկին . ա՛հ, յոյժ երջանիկ եմ, որ ինծի բարեպատեն առիթ մը կը մատակարարէ՛ք ձեզի հաճելի ըլլալու մասին ունեցած եռանդս եւ ժրջանութիւնս յայտնելու համար . . . մէկ քանի ծառայութիւն պահանջեցէ՛ք ինչ հրամայեցէ՛ք, պատրաստ եմ :

— Սիրելի պարոնս, շարունակեց պառաւ կինը խնդալով, անգամ մը աչերնուդ առջեւ բերէ՛ք այնպիսի անձինք, որք ըստակ մը չունին, եւ կամ անոր նման բան մը, քանզի հազիւ հազ իրենց տան վարձքը վճարելու չափ ստակ ունին :

Երիտասարդը բացաւ իւր խոշոր աչերը, յետոյ ինքն ալ սկսաւ խնդալ :

— Ա՛հ, ինչ զարմանալի գեղեցիկ կատակ . . . կը հասկնամ ի՞նչ ըսել կուզէ՛ք, ձեր գրասեղանի կամ մտտուկի բանալին կորսնցուցած է՛ք, եւ կամ այնպիսի գաղտնիք մը, զոր չէ՛ք կըրնար գտնել . . . կուզէ՛ք հասկնալ թէ՛ ես կրնամ՞ գտնալ արդեօք :

— Ա՛յ, այդպէս չէ . . . մենք խիստ աղեկ կը բանանք մեր գրասեղանը . բայց ստակ չունինք ըսելուս, ճշմարիտ, չեմ կատակեր . . . բարեբաղդաբար մեզ անհանդիստ շնոր այս . . . մէկ քանի աւուր գործ է . . . սէտք է դիտանաք որ մեր բուր ունեցած հարստութիւնը Էմմայի եղբարց միոյն, Ալիքթօնը ունեցած հարստութիւնը, որ բարեկարգ, խելացի տղայ ոէն Մօնթօնի վտանած ենք, որ բարեկարգ, խելացի տղայ մ'է, որ զիչեր ցերեկ կաշխատի, վասն զի ինքն ալ միլիոնատէր ըլլալ կուզէ . . . եւ պիտի ըլլայ . . . պիտի կրկնապատկէ քրոջը հարստութիւնը, նաեւ իմ փոքրիկ մէկ ունեցածս ալ . . .

Սէնթ Էմթէ՛լ որ սկսած էր գովամակութեան կերպարանք մը զգնուլ, ընդմիջեց պառաւին խօսքը :

— Գիտեմ այդ պարոնին ստակ սուած էք . . . բայց կը մտածեմ թէ՛ օրիորդը բոլոր իր հարստութիւնը անոր վտանած է՛ :

— Ներեցէ՛ք, ամենքն ալ Ալիքթօնի ձեռքը յանձնեցինք . . . Էմմա չէր ուզեր, եւ ինքզինքը բաւական հարուստ կը գտնար . . . բայց ես ըսի իրեն « գաւախ, շատ հարստութիւնը մնաս մը չընէր . . . եւ ձեզ ամուսնացնողն ալ համարիտ պիտի գտնուի ինձ . . . »

— Ուրեմն օրիորդը կարծեմ նոտարի մը եւ սեղանաւորի մը քով ունեցած հարստութիւնները քաշեց :

— Ա յո՛ւ, պարոն, խնամածուհիս խորհուրդ տուաւ . . . եւ եղբայրս այնչափ աղաչեց . . .

— Բայց ի՞նչ գործ կընէ՛ ձեր պարոն եղբայրը . . . ի՞նչ կացութիւն ունի :

— Ճշմարիտ չգիտեմ պարոն :

— Ալիքթօնէն, ըսաւ Տիկին Սառէ, շահադիտական գործեր կընէ . . . վաճառականական գործողութիւններ . . . ո՛հ, աղեկ գիտցէ՛ք որ շատ խելացի տղայ է, իրեն յանձնուած հարստութիւնը չփտանդէր . . . միշտ ապահով գործերու կը դիմէ . . . ինքն այսօր վաղը ստակ պիտի բերէ . . . բայց մինչեւ որ բերէ կարծեմ մեզի հազար Փոանք փոխ տալը ձեզ այնչափ չնեղացնէր . . . եւ այս ալ քանի մ'օրուան համար . . . Թեթեւս վաղը հատուցանենք, ահաւասիկ ասոր համար այսպիսի խնդիր մ'ընելու չեմ քաշուիր :

— Սէնթ-Էմթէ՛լի կերպարանքը բոլորովին փոխուեցաւ, դէմքը երկարեցաւ, իւր սիրուն նայուածքը, վայելուչ ժպիտն անհետացան, տարակոյտ, անհանգստութիւն յաջորդեցին : Թոթովեց կամ լաւ եւս անչորս ձայնով մը ըսաւ :

— Ահ, միայն հազար Փոանքի՞ պէտք ունիք . . . ատի զիս այնչափ չնեղացնէր երբէք . . . միայն թէ հիմայ քովս չկայ . . . երթամ բերեմ . . . կատքս վարն է . . . շուտով կը վերադառնամ :

— Եթէ այսօր ժամանակ չունենաք, վաղն եկէ՛ք :

— Բայց ո՛ւր կը բնակի ձեր եղբայր Պարոն Ալիքթօնը . . . հոն ալ երթամ անգամ մը . . . իրեն յիշեցնելու համար թէ զինքը կ'ստատէք :

— Ա յո՛ւ, պարոն, ձեր կողմանէ բարութիւն մ'ըրած կըլլաք : Եղբայրս Սէն Փօսթ փողոց թիւ 27 տունը կը բնակի :

— Շտա լաւ, կերթամ կը տեսնամ :

— Եւ եթէ ինքն ժամանակ չունենայ գալու, ըսաւ Տիկին Սառէ, թո՛ղ ձեզի յանձնէ մեզի տարիքը . . . այդպէսով գուցէ փոխատուութեան պէտք չէ՛ք ունենար :

— Ո՛հ Տիկին . . . շատ երջանիկ պիտի ըլլամ . . . բայց

չեմ կրնար ժամանակ կորսնցնել . . . երթամ ձեր յանձնարարութիւնները կատարեմ . . . 'ի տեսութիւն Տիկնայք :

— Կարելի եղածին չափ շուտով :

— Ա յո՛, այո՛, հիմա :

Գեղեցիկ պարոնը , որ շատ աճապարանք կը ցուցնէր մեկնելու , գլխարկն առաւ եւ այնչափ փութով , որ դուռը շուտ գտնայու համար ակտո մը տապալեց , որուն Էմմա սաստիկ ինդալով ըսաւ :

— Աստուած իմ , Պարոն Սէնթ Էսթէյվ որչափ արտօրալ կը յայտնէր երթալու համար . . . մազ մնաց քոնսօրն ալ տապալէր . . .

— Մեզ հաճոյանալու համար ունեցած եռանդը կը յայտնէ այս . . . մենք ալ շնորհակալ ըլլալու ենք իրեն . . .

— Չգիտեմ այդ եռանդն էր որ բոլորովին իր կերպարանքը փոփոխեց . . . բայց իմանալով որ բոլոր իմ հարստութիւնս եղբօրս յանձնած եմ , անանկ աճոռնի գէմը մ'ըրաւ որ . . . ա՛հ ես կարծէի թէ պիտի լար :

— Էմմա՛ , դուք չէք սիրեր այդ երկտասարդը , ապերախա էք . . . ըստ որում ինքը կուզէր որ աղքատ ըլլայիք , որպէս զի ձեզ առնելով հարստացնէ :

— Ո՞վ գիտէ . . . թերեւս այդ պատեհութիւնն ալ ունենայ . . .

— Բայց որչափ ծիծաղելի է այդ ըսածնիդ . . . հիմայ ալ ձեր եղբօր բարի հաւատարմութեանը վրայ երկմտելու կելլաք :

— Աստուած չընէ տիկին , միայն թէ իմ ունեցածովս շատ աղեկ կը գտնայի ինքզինքս . . . ես այնչափ փառամու չեմ :

— Լաւ է օրիորդ , բայց ձեր հասակին մէջ պէտք է որ փորձառու անձանց առաջնորդած շաւղին հետեւիք :

— Իմ ըրածս ալ այդ էր , տիկին :

Ի վերայ այս օրն իրիկուն կըլլար , եւ Պարոն Սէնթ Էսթէյվ չերեւաց : Էմմա բան մը չըսաւ , բայց սրտին խորէն կը գուարճանար այս պարոնին իրենց օգտակար ըլլալու համար ցուցած նուազ եռանդեանը :

Տիկին Սառտէ չէր կրնար ինքզինքը բռնել , եւ երբեմն կը մրմնջէր ,

— Զարմանալի է որ Պարոն Սէնթ Էսթէյվ չգար . . . ա՛հ երկտասարդք . . . բարեկամներու հանդիպելով , զինքը ճանաչէր դարձուցած ըլլալու են . . . եւ կամ թերեւս հօրաքոյրը դարձեալ հիւանդացաւ :

Էմմա չէր պատասխանէր : Գիշերն ալ ցերեկուան պէս անցաւ , պառկելու պիտի երթան առանց Սէնթ Էսթէյվի եւ Վիքթօռէնի վրայ լուր մ'առնելու :

Հետեւեալ օրը տարտամ անհանգստութիւն մը պաշարեց պառաւ տիկինը : Ամեն վայրկեան ականջ կը դնէր , յուսալով որ դուրսի գանգակը պիտի զարնուի , սակայն մարդ չեկաւ , եւ կէս օր զարնելուն Էմմա չէր կրնար ինքզինքը բռնել եւ կըսէր ,

— Ի՞նչ կըսէք Տիկին սա Պարոն Սէնթ Էսթէյվի մեզ երախտապարտ ընելու համար յայտնած փութաջանութեանը . . . կարծեմ թէ այսչափ անշահասէր երկտասարդ մը ամենեւին հոգը չընէր մեզի հազար ֆունք փոխ տալու :

— Չեմ հասկնար : Արկած մը պատահած ըլլալու է . . . բայց Վիքթօռէն իր վրայ լուր մը չտա՛ր . . . նա ալ հիւանդ ըլլալու է :

— Բայց երեք օրէն անտուն տասն եւ հինգն է . . . գիտէք որ վարձքը երկարաձգելու սովորութիւն չունինք :

— Միրելի դաւակն , երթամ կառք մը բռնեմ ու Վիքթօռէնի տունն երթամ , վասն զի ասոնց նշանակութիւնը հասկընալու է : Լաւ մը յանդիմանելու եմ զինքը , որ այսպէս մեզ մտնալը հասկնայ :

— Ո՛հ , այո՛ , տիկին եղբօրս տունը գացէք , եւ եթէ չը գտնաք զինքը , տեսէ՛ք Ֆէլիսիէն ու Ատօլֆ միւս եղբարքս . կարծեմ աւելի բնական է իրենցմէ փոխ առնել , քան թէ այդ Պարոն Սէնթ Էսթէյվէն , որուն երախտապարտ ըլլալ ցաւալի պիտի ըլլար ինձ :

— Ա յո՛ . . . այդպէս է , քանի որ չգար այդ պարոնը . . . ո՛հ , բայց ես կը պնդեմ որ իրեն բան մը պատահած ըլլալու է :

Տիկին Սառտէ շուտով լմնցուց զարդարանքը , սպասուհին զրկեց , որ գնաց կառք մը բերաւ , եւ ճանաչալ ելաւ ըսելով Էմմային ,

— Եթէ Պ. Սէնթ Էսթէյլ բացակայութեանս դայ , որ հաւանական է , աղաչեցէք իրեն որ սպասէ ինձ :

— Ես ալ կը պնդեմ որ այդ նեղութիւնը չպիտի ունենամ : Երբ տիկինը կառքը Վիքթօնէնի տունը քաշել տուաւ , ներս մտաւ ու դռնապանին հարցուց ,

Պարոն Վիքթօնէն Մօնլօտանն իր սենեակն է :

Դռնապանն այլանդակ ծաղրածու դէմքով մը պատասխանեց ,

— Է՛ն . այո՛ . . . դտաւ հարցնելիք մարդը . . . ձմեռ գալով , թռչունները տեղափոխեցին :

— Չլսեցի՞ք զիս դռնապանն : Կուզեմ հասկնալ թէ Պարոն Վիքթօնէն Մօնլօտանն իր սենեակն է . . . միթէ հոս չը՞քնակիր :

— Ճշմարիտ չգիտեմ թէ ո՛ւր կը բնակի հիմայ . բայց եթէ այն վազելովը երթայ , հիմայ շատ հեռուն ըլլալու է :

— Կը վազէ՞ ըսիք . . . միթէ կը ճանապարհորդէ՞ , բայց աղեկ բացատրեցէք խօսքերնիդ . . . չեմ հասկնար . . .

— Սակայն շատ դիւրին է հասկնալը . . . այդ երիտասարդըն անմտութիւններ եւ ամեն կողմանէ պարտքեր ըրած էր , վասն զի՛ փառք Աստուծոյ , ամեն օր պարտատէրներուն 20 ը կերթայ 50ը կուգայ , երեք շաբաթ է աներեւոյթ եղաւ , մարդու մը ստակ չտալով գնաց . . . խոյս տուաւ :

Տիկին Սառէի գոյնը փոխուեցաւ , դեղնացաւ , կանչցաւ , քիթը կարծես կուռնար , դռնապանին լիւրէն բռնեց պօռալով ,

— Անկարելի է այս . . . կը սխալիք . . . իմ խօսքս Պարոն Վիքթօնէն Մօնլօտաննի համար է , ազնուական ընտանիքէ երիտասարդ մը . . . աշխատող , հարուստ . . .

— Շատ հարուստ , այո՛ , հոս բնակելու եկած ատեն այնպէս էր կրսնն . . . ասոր հետ մէկտեղ մարդու ստակ չէր տար . . . տակաւին կան կարասեաց պարտքը զրած է , եւ տան տիրոջ ալ երկու վարձք . . . առանց բանածը հաշուելու . . .

— Բայց միթէ Վիքթօնէն Մօնլօտաննի համար է ըսածնիդ :

— Այո՛ տիկին , բաւական գեղեցիկ տղայ մը , քիչ մը կարճահասակ , քիչ մը վտիտ , քիչ մը դեղնած . . .

— Եւ չգիտէ՞ք հիմայ ուր ըլլալը , միթէ բնակութեան տեղը չյայտնե՞ց :

— Շատ անգամներ . . . ի՞նչ կըսէք , առանց բան մ'ըսելու . . . եւ պարտապահանջներուն որջը գտնալու համար փախաւ տիկին , փախաւ :

— Ա՛հ , Աստուած իմ . . . Աստուած իմ , Աստուած իմ : Տիկին Սառէ կառքը հեծաւ , մինչդեռ դռնապանը օթեակը մտաւ , ինքնին ըսելով ,

— Կերեւայ թէ այս կինը խաղրկեկ առնելիք մ'ունի . . . անաւտարիկ երիտասարդաց փոխ տալու հետեւանքը :

Էմմաի խնամածուհին տակաւին չէր կրնար համոզուիլ , որ այս դռնապանը ճշմարիտ ըսած ըլլայ . ուստի կառքը Ֆէլիսիէնի տունը քաշել տուաւ , յուսալով որ Վիքթօնէնի վրայ աւելի հաստատ տեղեկութիւն մը կրնայ առնել անկից , եւ ուր բռնակին հասկնալ :

— Պարոն Ֆէլիսիէն Մօնլօտան , հարցուց պառաւ տիկինը դռնապանուհեոյ մը :

— Հիմայ հոս չբնակիր տիկին , Տէմաթէն (մարտիրոսաց) փողոցը կը նստի . . . անաւտարիկ իր հասցէն :

Տիկին Սառէ հասցէն առաւ , Ֆէլիսիէնի նոր տունը քաշել տուաւ կառքը . բայց մէկանց դարմացաւ աղտոտ , խաբխոււ , թշուառ տուն մը գտնելուն եւ իր հարցումն ուղղեց պառաւ դռնապան կնոջ մը , որ տանը կը նմանէր ,

— Պարոն Ֆէլիսիէն Մօնլօտան , եթէ կը հաճիք :

— Պարոն Ֆէլիսիէն . . . ա՛ , շատ աղեկ դտաք . . . հոս է . . . որովհետեւ սովորաբար այս ատեն տունը չէր գտնուեր , նպարավաճաւ տերջը տետրակները բռնելու կերթար . . . բայց այսօր չտեսնուեցաւ , քիչ մը հիւանդ ըլլալուն համար . . . Ես մատուտակի (միլանքէօքի) հիւթով մուռ մը կե իեմ իրեն , հարբուխի համար շատ աղեկ է . . . եւ այնչափ սատով կը հազայ խեղճ պարոնը , որ ձայնէն Ազօն կը հաչէ , որովհետեւ վարձակալիս կարասիքը շտկելու համար միատեղ կը տանիմ :

Տիկին Սառէ , որ առանց բան մը հասկնալու մտիկ կընէր , ըսաւ ,

— Տիկին , կարծեմ կը սխալիք եւ ձեր վարձակալն իմ վրնա-

առած երիտասարդս չէ . Պ . Ֆէլիսիէն Մօնլուան շատ հարուստ է , եւ տնանկ նպարավաճառի տետրակ չըռնէր :

— Ս' , մտիկ ըրէք : Իմ վարձակալին խօսքին նայելով , իւր հաճողիցը տուած է եղեր ինքզինքը , քանզի ամբողջ օրը իւր հարստութիւնը ցաւելով , եւ « ա՛հ , կանայք , կանայք » պոռալով կանցնէ . . . խօսքը մէջերնիս , կերեւայ թէ քիչ մը շատ ճաշակած է . . . իրաւ սիրելու է . . . արանց պարտքն է այս . . . եւ մենք ալ արժանի ենք . սակայն բնութեան սահմաններն ալ սնցնելու չէ :

— Ի՞նչպէս մարդ է վարձակալդ :

— Երկայնահասակ խարտեաչ մը , յախճապակեայ աչելով հիմայ սարսափելի նիհարցած . . . ըստ իս քսան եօթ քսան եւ ինը տարեկան . . . :

— Ս. յդ նկարագրութիւնը իրեն բաւական կը յարաբերի . իր սենեակն է :

— Ա. յո՛ , տիկին , զլուխ տանելու չափ կը հաղայ . . . :

— Վ. եր ելլամ . . . քանի՞երօրդ յարկն է , կաղաչեմ :

— Հինգերօրդ , ձեռիչներուն քովի դուռը . . . սակայն անձրեւ եկած ատենը միայն հոտը կեղայ :

Տիկին Սառժէ մութ ու ազտոտ սանդուխէ մը վեր ելաւ , ուր ամեն մէկ ոտքը , ամեն մէկ քայլիդ կը սահիս , վերջապէս հինգերօրդ հասաւ , դուռ մը բացաւ ու գարշելի խցիկ մը մտաւ : Ֆէլիսիէն թշուառ խշտեակի մը վրայ նստած էր : Ա. յնչափ փոխուած , որ դժուարաւ կրցաւ ճանչնալ : Սակայն եւրիտասարդը խիստ աղեկ ճանչնալով զայն՝ պօռաց :

— Վ. այ՛ Տիկին Սառժէ . . . շատ աղնիւ է դալ դիս տեսնելիդ . . . եթէ տենդ չունենայի , քրոջս տունը գալով . . . իրմէն փոխ ստակ պիտի առնէի . . . սակայն դուք տուէք՝ նոյն բանն է :

Պատաւ տիկինն ավշած մնաց եւ Ֆէլիսիէնը կը դիտէր մըրմընջելով :

— Ի՞նչպէս , իրաւ , միթէ դո՞ւք էք Ֆէլիսիէն . . . այս թշուառ սենեկին մէջ . . . ինչո՞ւ համար թողուցիք ձեր գեղեցիկ բնակարանը . . . Ի՞նչ կը նշանակէ այս :

— Կը նշանակէ թէ ալ բան մը չունիմ . . . թէ կանայք

փետտեցին . . . բայց ինչպէս որ կըսեն , մորթը կրեւնալու չափ փետտեցին . . . մանաւանդ Անիթան ու Անթօնիան էին որ դիս լմնցուցին . . . : Ա՛հ , Անիթա . . . հէօ , հէօ . . . հիմայ բուսաջուր կը խմեմ . . . եւ հազիւ թէ կարողութիւն ունիմ ոտիցս վրայ կենալու :

— Միթէ կարելի՞ է , Ատուած իմ , դուք Ֆէլիսիէն , որ աչելիդ կը խոնարհէիք դէմս :

— Ա՛հ , այդ բան մ'ըսել չէ :

— Իսկ Ֆիքթօռէն եղբա՛յրդ , կը տեսնէ՞ք զինքը երբեմն , ո՞ւր կը բնակի հիմայ . . . իրեն վրայօք տեղեկութիւն առնել կուղեմ :

— Վ. իթօռէ՞ն . . . եւ միթէ տեղեկութիւն ունի՞մ . . . ինչո՞ւս պէտք . . . ագահ մը . . . իրմէն փոխ ստակ առնել ուղեցի . . . մերժեց . . . սատանան տանի զինքը . . . բայց փոքրիկ քոյրս պիտի հաճի փոխ առլ ինձ . այնպէս չէ՞ , Տիկին Սառժէ :

— Ո՛չ , պարոն , ո՛չ . . . անոր ալ մի՛ վստահիք . . . ձեր շոյալուծեանցը նպաստելու համար . . . երբէք . . . ասկից դատ . . . երբ ուղեր ալ . . . : Ո՛հ Ատուած իմ . . . մի՛նակ յոյս ո՞ր եւ եթ կը մնայ մեզ . . . մնաս բարով Պ . Ֆէլիսիէն :

— Ի՞նչ , կը թողո՞ւք դիս այսպէս , Տիկին Սառժէ . գէթ տասը ֆուանք տուէք դո՛ւնապանուհեոյս համար :

Խեղճ կի՛նն ալ չէր մտիկ ընել :

Հինգ յարկէն վար իջաւ՝ ամեն մէկ քայլին սայթաքելով . առանց պատասխանելու անցաւ դո՛ւնապանուհեոյն առջեւէն , որ կը պոռար :

— Ի՞նչպէս է պարոնդ :

Եւ իւր կառքը նստեցաւ Ատօլֆ Մօնլուանի տունն երթալու համար :

Ասի բնաւ տունէն ելած չէր , իւր հաւատարիմ բարեկամացը Ֆլանքէթի եւ կուտմանի մէջ տեղը սեղան նստած կը ճաշէին : Երեքն ալ գրեթէ գիւնուցած էին , սակայն գերուկն Ատօլֆ միւս երեքէն աւելի էր :

Տիկին Սառժէին ներս մտնալը տեսնելով՝ ի նորիս իւր քէթին , որ միշտ խիստ ճանաչելի է , Ատօլֆ զարմացման ճիչ մը արձակեց , որ իր երկու կոշիկազանները վախցուց :

— Տիկին Սառժէ . . . ի՞նչ երջանկութիւն . Տիկին Սառժէ մեզի հետ ճաշելու եկեր է . . . դարմանք . . . մենք արդէն ճաշած ենք , սակայն հոգ չէ , կը շարունակենք . . . մենք ամբողջ օրը ճաշելով կանցնենք . . . ժամ . սպաս բե՛ր . . . Կաւաթ բե՛ր . . . մէկ քանի գաւաթ ալ աւելի . . . :

— Բայց ո՛չ , սիրելիս Պ. Ատօլֆ , ես ճաշելու եկած չեմ . . . ես անօթի չեմ . . . արդէն անօթութիւնս ալ անցաւ :

— Ի՞նչ վնաս ունի , գինի կը խմէք . . . տիկնանց համար ալ գինի ունիմ . . . նաեւ շանքաներ . . . շանրաներ կը սիրէ՞ք :

— Գեղեցիկ սեռի գինին է . . . մրմուսաց Պարոն Յլանքէթ քաղաքավար ձեւ մ'առնել ջանալով : Տիկին Սառժէ կը մտածէր թէ այս ուռեցեալ այտերով , մանիշակագոյն քիթով գեր պարոնն արդեօք Ատօլֆն էր , որոյ աչերն մանրցած էին եւ գինով մարդոց ապուշ եւ տարտամ նկարագիրն ունէին . Յետոյ Տիկինն աչքը Պարոն Յլանքէթի դարձուց , որ կը ջանար ուղիղ բռնել ինքզինքը , եւ դիտակի վաճառականին , որ միշտ կը ժպտէր իրեն եւ շարունակ կը բարեւէր զինքը :

Ատօլֆ գաւաթները լեցուց ուրիշ գինիով մը , զոր ժան սեղանին վրայ դրաւ , դաւաթին մէկը տիկին Սառժէի ներկայացուց եւ այս պարոնները գաւաթնին բաղխելով թոթովեցին ,

— Տիկնանց առողջութեանը :

— Ահ , սքանչելի է այս գինին , կարմիր շամբաներ ըլլալու է :

— Ո՛հ , ոչ . . . կռնաչ է . . . ի՞նչպէս պարոն կուտման չճանչցա՞ք :

— Գանալ . . . ո՛չ . ես աղկից խմած չէի :

— Ուրեմն մայր Սառժէ խմեցէք մեզի հետ :

Պառաւ տիկինը գաւաթը ժխտելով պատասխանեց ,

— Ո՛չ . դարձեալ կըսեմ Ատօլֆ , ես հոս խմելու համար չեկայ :

— Բայց ուրեմն ի՞նչ բան ունիք հոս :

— Ձեզ Ալիքթօնէն եղբօր վրայ տեղեկութիւն առնելու համար , որպէս զի ինձ լմացնէք թէ ի՞նչ կընէ . . . ի՞նչ եղած է վաղն անպատճառ պէտք է , որ զինքը գտնամ :

— Ալիքթօնէն դողին մէկն է . . . ինձմէ քառասուն հա-

զար ֆռանք փոխ առաւ . . . փոխանակ զանի վճարելու , ուրիշ ալ կը խնդրէր . . . ճիբս . . . ես քրեա չեմ բռնուիր . . . անկից 'ի վեր զինքը տեսած չեմ . . . Յլանքէթ ալ փնտռեց զայն ամեն տեղ . . . անկարելի եղաւ գտնայ . . . Ֆէլիսիէն ալ տաան եւ հինգ հազար պարտք ունի , զոր երբէք տեսնալիք չունիմ . . . երախտապարտ ընել եղբայրները . . . ծառայութիւն ընել անոնց . . . չնորհակալ եմ . . . ալ բաւական է . . . ձեր առողջութեանը :

— Ես ձեզի ազդարարած , կանխաւ լմացուցած էի , որ մարդ իր ազգականացը փոխ տալու չէ երբէք . . . կորսուած է . . . այնպէս չէ՞ կուտման . . . կուտման աչքով գլխով կը պատասխանէր , իր կռնաչի դինին ճաշակելով . . .

— Աստուած իմ , միթէ կարելի՞ է . . . բայց Ալիքթօնէն կործանեց քոյրդ . . . բոլոր մեր ունեցածը առաւ , ըսելով թէ դրամագլուխնիս պիտի եռապատկէ . . .

— Ձեմ դարմանար , կարող է ատանկ բաներու . . . ես աւելի կը սիրեմ Շամբաներ . . . բայց ասոր շաքարը քիչ մը շատ է :

— Սիրելիս Ատօլֆ , քոյրդ նեղութեան մէջ է . . . չպիտի մերժէք իրեն երկու երեք հազար ֆռանք փոխ տալու . . . փառք երկնից դուք տակաւին հարուստ ըլլալու էք :

Գեր Ատօլֆ պառաւ կնոջը երեսը նայեցաւ ապուշ կերպով մը , յետոյ իր Յլանքէթ բարեկամին գառնալով թոթովեց ,

— Յլանքէթ , միթէ տակաւին հարո՞ւստ ենք . . . խօսէ ընկեր :

Պարոն Յլանքէթ շտկուեցաւ , քիթը սրբեց ու խոպոտ ձայնով մը պատասխանեց ,

— Աւա՛ղ , օղիի վրայ ունեցած ձեռնարկութիւննիս մեր յուսացածին պէս չյաջողելով . . . ստակի կողմէ մեծ նեղութիւն պատճառեց մեզ . . . հիմայ ալ բոլոր հարստութիւննիս դարօղիի վրայ կապած ենք . . . եւ հասոյթի կ'ողպասենք . . . կուտման , դարօղիին զինքը բարձրացան երէկ :

— Ես չորս շիշ առեր էի տուես . . . միշտ նոյն տեսակէն . . . սա . . .

— Բաւական է , աւելի խօսք պէտք չէ . . .

— Ի՞նչպէ՛ս Ատօլֆ , մի՛թէ կը մերժէ՞ք ձեր քրոջն օգնելու :
 — Սիրելիս Տիկին Սառժէ . . . ես եղբարցս օգնեցի , բա-
 ւակամ է . . . անկէց ինձի շահի՞ չեղաւ : . . . աօկից դատ
 ինչո՞ւ համար քոյրս այ բոլոր իր հարստութիւնը Ալբրթօսի
 տուաւ . . . անհաւասիկ ձախորդութիւն մ'ալ . . . եւ դուք
 որ իր խնամածուհին էք . . . դուք ալ ի՞նչպէս հաւանութիւն
 տուիք . . . ձեր առողջութեանը :
 — Ե՞ս . . . ե՞ս . . . թո՛թովեց խեղճ կինը , որ չէր կըր-
 նար այլ եւս խօսիլ . . . ե՞ս . . . ա՛հ . . . այո՛ , շատ յանցա-
 ւոր եմ :

Եւ յուսահատ դուրս ելլալով այն սրահէն , ուր երեք գի-
 նեմով բազմած էին , Տիկին Սառժէ կառքը մտաւ , հաղիւ հազ
 կրցաւ կառավարին ըսել որ իրեն տունը տանի : Շփոթած , դու-
 դալով եւ աչերն արտասուօք լի տուն մտաւ :

Էմմա՞ իւր խնամածուհին այս վիճակին մէջ տեսնելուն
 զարհուրած՝ փութաց դէպի անոր երթալ , գրկեց զայն եւ թիկ-
 նաթոռի մը վրայ տանիլ ուղեց , սակայն պառաւ տիկինը դէմ
 կեցաւ , անպատճառ Էմմայի ոտքն իյնալ կուղէր , եւ հոն հե-
 ծեծանօք ընդմիջեալ ձայնով մը ,

— Անի՛ծէ՛ դիս դաւակս , քանզի ես եղայ ձեր կորստեանը
 պատճառ . . . կործանած էք . . . ես ալ բան մը չունիմ . . .
 հարստանալու համար ունեցած բաղձանքս թէ՛ իմ եւ թէ՛ ձեր
 կորուստը պատճառեց . . . իմս բան մը չէր . . . բայց դուք .
 որ երջանիկ ապրելու համար բաւական բան ունէիք . . . զձեզ
 թշուառութեան մատնեցի . . . ա՛հ , սոսկալի է . . . երբէք
 չպիտի ներեմ ինձ զայս . . .

Գեոափթիթ օրիորդը պարտաւորած էր իր խնամածուհին
 միսթարել , երդնուլ որ ինքը կը ներէ , թէ ամենեւին ոխ չու-
 նի եւ պիտի կրնայ այս ձախողանաց համբերել : Այն ատեն
 Տիկին Սառժէ իւր երթեւեկութեանը միջոցին տեսած եւ լսած-
 ները պատմեց Էմմային :

Էմմա մասնաւորապէս իւր Ֆէլիսիէն եւ Ատօլֆ եղբարցը
 վիճակին խռովեցաւ , յետոյ մըմնջեց :

— Ալբրթօսէն քսակահատ մը . . . ո՛հ , ո՛չ , չպիտի հա-
 ւատամ երբէք :

— Եւ . . . եւ Պ. Սէնթ Էսթէվ եկա՞ւ , հարցուց աիկին
 Սառժէ զողջօրջիւն ձայնով մը :

— Ա՛հ , ո՛չ , չեկաւ , եւ փառք կուտամ երկնից . . .
 Մտածեցէ՛ք Տիկին , որչափ անհնարին ցաւ պիտի ըլլար ինձ
 այժմ այդ պարոնին պարտական մնալ , զոր չպիտի դիմնայի
 ինչպէս հատուցանելս . . . Տիկին , մեր այս թշուառութեանը
 մէջ ես երջանիկ մէկ կողմը կը տեսնեմ , այն է թէ՛ այդ կեղծ
 անշահասէր պարոնը ձանչցանք , եւ որ կըսէր թէ՛ միայն զիս
 կը սիրէ . . . ինքն ալ իմ հաստատութեանս հետ անհետացաւ .
 . . ինչպէս ծիծեռնիկներն՝ որք ձմեռ չեկած կը փախչին :

— Բայց վերջապէս , դաւակս , մենք ալ բան մը չունինք :
 Ի՞նչ պիտի ընենք , ի՞նչ պիտի ըլլանք :

— Տիկին , տակաւին ունինք սա մեծածախ կարասիքն որ
 գրեթէ տասը հազար Փռանքի եղաւ ինձ , կը ծախենք . յետոյ
 անմիջապէս կը թողունք այս դեղեցիկ տունը , երկու սպասա-
 ւորները կը ձամբենք , փոքրիկ պարկեշտ բնակարան մը կը վար-
 ձենք եւ . . . ես ալ կաշխատիմ :

— Ի՞նչքա՞նչ աշխատի՞ք Էմմա . . . դուք որ հանգստեան եւ
 բարութեան սովորած էիք :

— Ինչո՞ւ չէ , Տիկին , իմ Ֆէլիքս հօրաբեորդուոյս պէս
 կընեմ . . . ինքը կաշխատի հիմայ եւ ընդհակառակը դէշ վի-
 ճակի մէջ չէ . դեռ պզտիկ եմ , քաջասրտութիւն ունիմ , մեր
 երկուքնուս համար կաշխատիմ . . . գիտնալով որ իմ գօյուս
 թիւնս մէկու մը օգտակար է , պիտի դատողանամ :

ԳՂՈՒԽ Ի.

ԵՐՋԱՆԻԿ ԱՆԿՈՒՄՆԵՐ ԱՂ ԿԱՆ

Ձմեռուան խստաշունչ հողմոց ատենն էր : Ֆէլիքս բոլորս-
 վին անդէտ էր իւր մօրեղբօրազատեր կացութեանը մէջ պա-
 տահած փոփոխութիւններուն : Պուլըփառ Մալեուպի գանապա-
 նէն առած տեղեկութիւններէն , եւ Պ. Սէնթ Էսթէվի խորեւ

ապառնի ամուսին էմմայի ընդունուելը գիտնալէն ի վեր՝ միտքը դրած էր որ չլինաւէ զայն , որ չպիտի կրնար իրեն կին ըլլալ : Սակայն ամեն ամիս առ նուազն անգամ մը Մօնսօի պարտէզը կերթար , եւ այս ալ փօքրիկ մուրացկուհւոյն քիչ մը բան տալու համար , որ առանց երկտասարդին հարցմանն սպասելու տխրութեամբ կըսէր իրեն ,

— Ձեր գեղեցիկ մօրեղբօրագուստրն ալ չգար հոս շրջա- գայելու :

Ֆէլիքս աշխատութեան մէջ ցրել կուզէր այն սէրը , զոր ի դերեւ կաշխատէր սրտէն վանելու . սակայն իր զուարթու- թիւնը կորսնցուցած էր , եւ տօքթէօն ժուպէն ի գուր կը ջա- նար զայն վերստին զուարթացնել :

Առաւօտ մը բժիշկը գերուկ զուարթերեսի մը զէմը գըտ- նուեցաւ , որ զինքը բարեւելով ըսաւ ,

— Վա՛յ , իմ կաթ եղբօրս բարեկամՊ . բժիշկն է , որ հաւ- սանեացս եկաւ ու գաւաթներ պարպեց :

— Բայց . . . դուք Պ . Տիւֆիլէ՞ն էք . . . ճշմարիտ պա- րոն մեծ հաճոյք էր ինձ ձեր հարսանեաց մէջ պարելս . . . Սէն Ֆառօի պարտիզին լճակը . . . :

— Այո՛ , այո՛ , դուք , շատ աղեկ զուարճացանք , այն- պէս չէ՞ :

— Շա՛տ . Ինձի համար զուարճալի յիշատակ մ'է . ի՞նչպէս , տիկին ամուսիննիդ ի՞նչպէս է :

— Լօռէ՞թը . . . ահ , շատ աղեկ . . . ինձի նայեցէ՛ք , եղաւ , եղաւ :

— Ի՞նչ եղաւ որ , ես բան մը չեղայ :

— Ըսել կուզեմ թէ . . . ինքը հիմայ երկու հոգևով է . . . հէն , կը հասկնա՞ք :

— Հա՛ , թերեւս ըսել կուզէք թէ տիկինը յղի է :

— Թերեւս պէտք չէ հոտ : — Եղաւ . . . եզան պէս փորը մեծցաւ . . . ես ալ մանկաբարձ մը ճարելու համար դուրս ե- ըայ , վասն զի մէկ վարկեանէ միւտը . . . կը հասկնա՞ք . . . մէկէն ի մէկ յանկարծակիի գալը աղեկ բան չէ : Պ . Տառտաւը կայ , որ անպատճառ դայեակ կին մը բերել կուզէ , վասն զի իր պաշտպանածն է եղեր : Բայց իմ կինս Պ . Տառտաուի վրայ վրս-

տահուժիւն չունի : Լօռէթ կըսէ թէ « երբ մանկաբարձի մը սէտք ունենամ , կերթայ դայեակի տեղ թուղթ քաշող կին մը կը բերէ :

— Հա՛ , տա խառնակութեան պատճառ եղող պարո՞նն է :

— Այո՛ . գիտե՞ք ա ի՞նչ ըրաւ Ժիկօթօի հարսնիքին մէջ . . . ինձի սէտք չէ . . . կարելի է փոխանակ Վերախոյն ծնա- նելու , հոտ կը զրկէ . . .

— Ինձի նայեցէ՛ք , եթէ մարերնուդ մէջ մէկը որոշած չէք . . . ես ալ մանկաբարձ եմ :

— Իրա՞ւ : Գուք անանկ բսնեք կրնա՞ք ընել :

— Գրեթէ երեք հարիւրէն աւելի տղայ աշխարհ եմ բերեր :

— Այ չարածճի զուարճախօս . . . էյ , ուրեմն , եղաւ , եղաւ . . . եկէք որ զձեզ Լօռէթի ներկայացնեմ , շատ գո՛ն պի- տի ըլլայ ձեզ տեսնելուն :

Տիւֆիլէ խանութ տարաւ բժիշկը : Գեղեցիկն Լօռէթ դը- րասեղանին առջին էր . անմիջապէս ճանչցաւ բժիշկը եւ ամե- նամեծ ուրախութիւն յայտնեց իրեն ընտրուած մանկաբարձն ըլլալուն : Տիւֆիլէ ալ իրեն կողմանէ շատ ուրախ եւ գո՛ն էր : Կաթեղըայրը փնտուելու պիտի երթար անոր իմացնելու համար թէ իր բարեկամը զինքը հայր պիտի ընէր : Բայց բժիշկն ըսաւ անոր ,

— Անհանդիստ մի՛ ըլլաք , ես հիմայ Ֆէլիքսը կը տեսնամ եւ անպատճառ կըսեմ իրեն թէ տիկինը բարեհաճեցաւ զիս ի- րեն մանկաբարձ ընդունելու :

— Ասկից զատ իմա ալ պիտի ըլլաք , այսինքն թէ իմ բը- ժիշկս , երբ հիւանդ ըլլամ . . . ո՛հ եղաւ , լինցաւ :

Բժիշկը զատուեցաւ իր նոր յաճախորդներէն : Իր գործերը զինքը Սէն Մառթէնի արուարձանին բարձրը տարած էին . երբ ճիշ մը լսեց իր բողէն , կին մը գետնի սառոյցէն սահելով , ին- կած էր : Վաղեցին անմիջապէս վերցնելու , ժուպէն ալ հաս- նողներուն առաջինն էր , կնոջ երեսը նայելով , սաստիկ զար- մացաւ Տիկին Սառթէն տեսնելուն , զոր այնչափ յաճախ կը տեսնար Պարոն Մօնուսանի բժիշկն եղած ատեն :

Արդարեւ էմմայի խնամածուհին էր լինողը : Թէ եւ վի- րաւորուած չէր , բայց մէկ կողմ ու ծունկը սաստիկ ճզմուած :

Բժիշկը կառք մը բերել տալ ուղեց զանի տուն տանելու հա-
մար, սահայն կինը դէմ կեցաւ, ըսելով թէ տունը մօտ է ։

— Ուրեմն թեւս մտէք տիկին, պատիւ պիտի ունենամ
ձեզ տուներնիդ տանելու, ուր նաև դեղազիր մ'ալ կուտամ
․․․ քանզի աօանկ իյնալէ ետքը բան մը խմել պէտք է ։

Տիկին Սառժէ տակաւին ճանչցած չէր բժիշկը, թեւը մշա-
նալով, զանի տուն տարած ատեն իր անունը տուաւ, և բա-
րեբաղդ համարեց ինքզինքը հոն գտնուելով օգնութեան հաս-
նելուն, պառաւ տիկինն իր անկումէն ընդարմացած ծուպէ-
ռին երեսին կը նայէր ու կըսէր ։

— Արդարեւ պարոն կ'սկսիմ ճանչնալ . . . այո՛, պարոն
Մօնթօնանի բժիշկն էիք ։

— Բայց ոչ այնչափ երկար տտեն ։ Ստիպայ ի՞նչ դիպուա-
ծով տիկին, մինակ, հետի, և ձեր թաղէն այնչափ հեռու կը
գտնամ ձեզ, վասն զի կարծեմ դուք Պուլըվառ Մալէոպը կը
սինակիր ։

Տիկին Սառժէ մեծ հառաչանք մը հանեց և Տօքթէօնի
բնրեւը նայելով թոթովեց ։

Ձ — Ա՛հ, պարոն, ուրեմն չգիտէք մեր թշուառութիւնները ։

— Ձեր թշուառութիւնները, բայց բնաւ բան չգիտեմ
տիկին, արդեօք օրիորդ Էմմա՞ ալ նեղութեան մէջ է . . .
վշտացեալ է . . .

— Ա՛հ Պարոն աւելի գէշ է . . . ամեն բան կորսնցու-
ցինք . . . կործանեցանք . . . Վիրթօռէն, Էմմայի եղբայրը,
որ իր խօսքին նայելով մեր հարստութիւնը եռապատկել կու-
գէր, մեր դրամովը մէկտեղ անհետացաւ ։

— Միթէ կ'օրելի՞ է ։

— Յանցանքն իմն է պարոն ։ Ես էի խեղճ աղջկը խըրա-
տօղը որ հարստութիւնը եղբօրը վստահի . . . և հիմայ դրժ-
բաղդ աղջկը կաշխատի մեզ սնուցանելու համար . . . եկէք
պարոն, հոս կը բնակկինք, չորրորդ յարկը ։ Եկէ՛ք մեր աղքատ
բնակարանը տեսէք ։ Արդէն երկու ամիս եղաւ որ հոս կը բը-
նակկինք . . . և Էմմա դեռ մէկ վայրկեան չտրտնջաց ։

Տօքթէօնի սիրտը սեղմուեցաւ, լսածին չէր ուղեր հաւա-
տալ ։ Փոքրիկ պարկեշտ բայց մաքուր բնակարան մը մտնելով

և տեսնելով օրիորդը՝ որ կ'անդնագործէր վառարանի մ'առջեւ,
որուն մէջ հազիւ երկու ճիւղ կը վառէր, ծուպէն վաղեց ան-
որ և աչերն արտասուօք լի ողջագուրեց զայն, յետոյ մրմնջեց,

— Ներեցէ՛ք ինձ, սիրելի օրիորդ, ներեցէ՛ք ինձ, սիրուն
զաւակ, եթէ յանդգնութիւն ըրի . . . բայց զձեզ այսպէս
տեսնելով . . . զձեզ որ հարուստ և երջանիկ թողած էի . . .
չառ գէշ եղայ . . . Ա՛հ, ներեցէ՛ք որ ինքզինքս քիչ մը
միտթարելու համար անգամ մ'ալ համբուրեմ ։

Էմմա հրճուանօք Տօքթէօնին ձեռները կը սեղմէր, երջա-
նիկ էր զայն տեսնելուն և ժպտելով ըսաւ անոր ։

— Ահ, պարոն, այս ձախողանայ մէջ կղզամ որ երջանիկ
եմ դմեղ սերող անձինք տեսնելու, և մեր թշուառութեան
ի վեր դուք առաջինն էք որ այնչափ կարեկցութիւն և բա-
րեկամութիւն կը յայտնէք մեզ . . .

— Բայց սիրելի օրիորդ, ինչո՞ւ համար ձեր բարեկամայ
չիմացուցիք ձեր այս արկածը, ու ձեր Ֆելիքս հօրաքեռորդին
տակաւին չգիտէ զայդ, ինչպէս որ ես ալ չգիտէի ։

Էմմա աչերը խոնարհեց ու պատասխանեց ։

— Եղբարքս մերժեցին ինձ օգնել ։ Տիկին Սառժէ պնդեց
թէ անօգուտ էր ուրիշներուն դիմելը ։ Ասկից զամ՝ պիտի
խոստովանիմ, ես կարծէի թէ հօրաքեռորդիս մեր թշուառու-
թիւններն իմացած է, և կըսէի ինքնին « շատ գէշ բան է
որ չգար զմեզ միտթարելու » ։

— Կը կրկնեմ ձեզի, օրիորդ, թէ Ֆելիքս տակաւին զձեզ
երջանիկ կը կարծէ, և կը հաւատայ թէ պիտի ամուսնանաք
զեղեցիկ պարոնի մը հետ, որ շրջագայութեանց ատեն ձեզ
կընկերանար ։

— Ի՞նչպէս, կը հաւատա՞ր զայս . . .

— Եթէ գիտնար ձեր կացութեան փոփոխութիւնն, անտա-
րակոյս պիտի դար ։

— Ահ, պարոն, որչափ դո՞ եմ, այսպիսի բան մը լսելու

— Տիկին Սառժէ միշտ գէշ դատած էր ձեր հօրաքեռոր-
դին . . . քանզի անգամ մը միայն նորա քիթը ծաղրելու դրժ-
բաղդութիւնն ունեցած էր ։ Ա՛հ կանայք, Վիրաւորեցէք ի-
րենց անձնասիրութիւնը և չպիտի մոռնան երբէք . . . բայց
22

այդ երիտասարդը որ պիտի ամուսնանար ձեզ քնեա եւ որ հա-
րուատ է, ինքն, այդ Սէնթ էսթէյլը ինչպէս կրնայ զձեզ այդ
կացութեան մէջ ձգել:

— Պ. Սէնթ էսթէյլ . . . մեր կործանումէն ի վեր երկու
անգամ փողոցը քովես անցաւ, ու զիս չբարեւելու համար՝
գլուխը դարձուց:

— Ի՞նչ տմարդութիւն:

— Ահ, պարոն, դուք ալ համոզուեցէք որ շատ երջանիկ
եմ այդ պարոնին հետ չամուսնանալուս համար:

— Այո՛, այդ ալ մեծ մխիթարութիւն մ'է:

— Բայց ի՞նչ զիպուածով հոս եկաք այս առտու Տօքթօն.

— Արդարեւ զիպուած մ'է . . . փողոցը տիկինին ոտքը
սահելով, ինկաւ . . . եւ կօրհնեմ զԱստուած . . . որովհետեւ
անկումը վտանգաւոր չէ եւ այս ալ պատճառ եղաւ որ ձեզի
պատահածներն իմացայ:

— Տօքթօն, ես չեմ կրնար հաւատալ, որ Ալքթօնէն
զմեզ զլետովն կործանած ըլլայ, մրմնջեց Տիկին Սառթէ: Միթէ
կը բարեհաճիք տեղեկութիւն առնել . . . ի՞նչ ըլլալն իմա-
նալ . . . վասն զի իր երկու եղբարքը զիս մտիկ չըրին:

— Այո՛ տիկին, այո՛, վստահեցէք ինձ, կը հարցնեմ, կը
տեղեկանամ . . . ես ձեզի որոշ տեղեկութիւններ կը բերեմ,
բարեկամ մ ունիմ ոստիկանութեան պաշտօնատուներ զլիաւոր
է. անկից կը հասկնամ Ալքթօնէնի ինչ ըլլալը: Աաղը, կամ
մէկ պահէն կուգամ առած տեղեկութիւններս կը հաղորդեմ:
Այս միջոցին դուք ալ տիկին, վիրաբոյսի ջուր մը խմեցէ՛ք, եւ
դուք պահեցէք ինքզինքնիդ . ի տեսութիւն սիրելի օրերդ:

Ու Տօքթօնը Էմմայի ձեռքը սեղմելով կամաց մը ըսաւ:

— Այսօրու ճիշտ պիտի իմանայ թէ դուք հարուստ
ժառանգորդ մը չէք ալ, եւ կը հաւատտեմ ձեզ որ ասի արդեւք
մը չպիտի ըլլայ զձեզ բարեւելու:

Էմմա չպատասխանեց, բայց ուժով մը բժշկին ձեռքը
սեղմեց . . . եւ այս ալ պարբերականէ մ'աւելի նշանակու-
թիւն ունի:

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՈՉԻՆՉ ԶԱՓԱՋԱՆՅԵԼՈՒ ՉԷ

Տօքթօնի այցելութենէն ետքը, որ Էմմայի հրճուանք ու
յոյս տուած էր, գիշերը երբ խնամածունին մեծ հառաչանքներ
կարձակէր, դձնապահն այս տիկնանց ուղղեալ նամակաւ մը
վեր ելաւ: Տիկին Սառթէին ուղղեալ էր, սորա աչերն լեցած
ըլլալուն ըսաւ օրիորդին:

— Կարդացէք զաւակս, վասն զի աղէկ գիտեմ թէ ինչպէս
որ ինձ նոյնպէս ալ ձեզ կը պատկանի: Թերեւս Տօքթօնէն է
այս նամակը, որ բարի լուրեր կաւետէ:

Էմմա նամակը բացաւ, որուն մէջէն նախ եւ առաջ եր-
կու հատ հազար ֆունտնոց թղթադրամ ինկաւ:

— Աստուած իմ, թղթադրամ, պոռաց պառաւ կինը: Ես
վստահ էի որ Ալքթօնէն բոլորովին երեսէ ձգած չէ մեզ . . .
նամակն իրմէն է. այնպէս չէ՞ զաւակս:

— Տիկին, ստորագրութիւն չեմ տեսնար:

— Բայց վերջապէս գրուած է . . . կարդացէ՛ք, շուտ
կարդացէք:

Գեղեցիկն Էմմա յուզմամբ կարդաց հետեւեալ տոմսակը
« Զեր դժբաղդութիւնն իմանալով, կը փութամ անմիջա-
« պէս այս թիթեւ ձեռնտուութիւնն ընել: Մի՛ մերժէ՛ք եւ
« անհանգիստ մ'ըլլաք ձեր ապագային վրայ. ամեն վեց ամիս
« այսչափ մը պիտի ղրկուի ձեզ, մինչեւ որ կարելի ըլլայ լա-
«ւագոյնն ընել »:

— Ահ, ի՞նչ երջանկութիւն . . . ստորագրութիւն չկայ:

— Ո՛չ, Տիկին:

— Բայց ձեր Ալքթօնէն եղբօր ձեռագիրը ճանչնալու էք:

— Ո՛չ . . . եղբօրս գիրը չէ . . . բոլորովին անձանթ է
ինձ . . . Տիկին կարծէք որ այս օղնութիւնը Ալքթօնէնէն
կուգայ:

— Բայց անտարակոյս, իրմէն զատ ուրիշ ո՛վ կրնայ այս

գումարը զրկել . եւ ամեն վեց ամիսն անգամ մը այսչափ խոստանալ . . . ասի ձեզ պարտական եղած գումարին վրայ տրկար թերհաշիւ մ'է , բայց վերջապէս կապացուցանէ գէթ որ ամենը կորսնցուցած չէ . ինչպէս որ կըսէին . եւ ո՞վ գիտէ թէ իւր շահադիտական գործոց մէջ երջանիկ չպիտի վերադառնայ .

Էմմա տիկին Սառէի կարծեացն համամիտ չէր , միտքն ուրիշ բաներ եկան , գորո կղզուչանար նմա հաղորդել , տիկնանց իւրաքանչիւրն իր յուսովը , ու իրենց ասպագային վրայ նուազ անվրդով պառկելու գացին :

Հետեւեալ օրն անհամբերութեամբ Տօքթօսը կսպասէին , եւ կը մտածէին թէ նորա ստացած տեղեկութիւններն այլ եւ ոտ տարակոյս չպիտի թողու անստորագիր նամակի հեղինակին վրայ :

Վերջապէս կէս օրէն ետքը՝ ժամը երկուքին ատենները ժուպեռ եկաւ , իր կերպարանքը լուրջ նաեւ ծանր էր : Սակայն Տիկին Սառէ հաղիւ բարեւելու ժամանակ տուաւ , նամակն ու երկու դրամատուներն անոր ցուցնելով , պոռաց ,

— Տեսէ՛ք , տեսէ՛ք Տօքթէօս , փառք Աստուծոյ , լուր ասինք , եւ բարի լուրեր :

Ահաւասիկ Վիքթօռէնի զրկածը . . . երկու հազար Փրօսանք , եւ ամեն վեց ամիսն անգամ մը այսչափ ալ կը խոստանայ : Շատ աղէկ գիտէի ես , որ այդ տղան անհաւատարմութիւն չընէր . . .

Բժիշկն յօնքերը պրկեց , նամակին վրայ ակնարկ մը նետեց եւ ըսաւ .

— Ինչէ՞ն կենթադրէք Տիկին , որ այս նամակն Վիքթօռէնէն եկած ըլլայ . . . միթէ ի՞նչն է ստորագրողը :

— Ո՛չ . բայց իրմէ զատ ո՞վ կը զրկէր մեզ այս գումարը :

— Ահ , մարդու մը վրայ չէք կասկածիր . . . ես գրաւ կը դնեմ որ Օրիորդ Էմմա ձեզմէ շատ տարբեր կարծիք ունի . . .

Էմմա երջանկաբար Տօքթէօռին երեսը նայելով ժպտեցաւ .

— Վերջապէս՝ պարոն , ըսաւ Տիկին Սառէ , որ իր յուսոյն վրայ հաստատ կեցած էր . ինչո՞ւ չէք ուղէր որ այս օգնութիւնը Վիքթօռէնէն եկած ըլլայ մեզ :

— Ինչո՞ւ , անաւասիկ ըսեմ Տիկին , քանզի վերջապէս

պէտք է որ գործին էութիւնը գիտնաք , պէտք է որ փարատի այն քօղը , որ զձեզ կը կուրացնէր , եւ այս սիրուն զաւկին եղբարցը վրայ այնչափ սխալ դատողութիւն կընեբազդեր ձեզ որը այնչափ ծաղրելի կերպով մեծցած էին , եւ կրնամ ըսել , այնչափ յիմարաբար կըթուած իրենց հօրմէն . . . Վիքթօռէն չկրնար այդ նամակը զրկելու . . . ասկից վեց ամսոյ չափ անաջ Մէօտօնի անտառին մէջ իր ուղեղն այրելով ինքզինքն սպաններ է :

Տիկին Սառէ ճիշ մ'արձակեց ու դէմքը ծածկեց , Էմմա աթոռի մը վրայ ինկաւ եւ արտասուաց հեղեղ կը թափէր : Բժիշկը նորա ձեռքը բռնելով , ըսաւ ,

— Ներեցէ՛ք զաւակս , հազար անգամ ներողութիւն կը խնդրեմ ասանկ աղետալի լուր մը տմարդութեամբ իմացնելուս . . . բայց թշուառութեանց , ինչպէս նաեւ բժշկական ցաւալի գործողութեանց համար սկզբունք համարած եմ ինձ շուտով ընթանալ , երբէք չվարանիլ : Ասկից զատ՝ հաւատացէ՛ք ինձ . մի՛ ցաւիք ձեր եղբարցը . խաղամու էր . . . եւ յիմար խաղամու մը . պոսայի մէջ սկսած էր կործանիլ եւ յետոյ այլոց դրամը կորսնցնել : Վերջին հարիւր հազար Փրօսանքը զօր իրեն վատանած էիք , մէկ գիշերուան մէջ ամբողջապէս Լանսքնէի խաղու վատնուեր են . . . Երբ մարդ այն աստիճանին գայ , երբ մարդ առանց խոճի այլոց ինչքը կորսնցնէ , շատ մօտ է գոտութեան , Վիքթօռէն ինքզինքը սպաննեց եւ այս էր ամենէն աղէկ ընելիքը . . . մի՛ ցաւիք :

«Ձեր Ֆէլիսիէն եղբայրն իւր հարստութիւնը կանանց հետ , պոռնկաց հետ , սիրունեաց հետ կուսնցուց . այնպիսեաց հետ , որք կը ծաղրէին զինքը : Բայց գէթ նա միայն իր ունեցածը կորսնցուց եւ կամ քիչ մ'աւելի : Ամենէն գէշն այն է , որ իւր առողջութիւնը աղիողորմ վիճակի մէջ է . . . այս առտու տեւսայ զինքը , վախցայ :

«Կը մնայ ձեր Ատօլֆ եղբայրը . նա իւր առողջութիւնը ու դրամը կորսնցնելու ընթացքին մէջ է , ինքզինքը գիւնոյ տուած է . . . մարդու մը համար այսպանելի միտումն . . . այնպէս որ կանասնացնէ զայն . . . ու տիմարներու հաւասարալիւ կընէ . եղբայրնիդ քսակահատներով պաշարեալ է , որք իրեն ինչքը

յափշտակելու համար նորա տկարութենէն օգուտ կը քաղեն , պատճառելով որ ոգելից ըմպելեաց վրայ լաւ գործողութիւններ ընել կուտան : Երեք տարի չտեսէր՝ ծոցը ստակ մը չմտաւրով , ինքն աշխատութեան անկարող պիտի ըլլայ :

« Ահաւասիկ , յիկին Սառժէ , այնչափ խիստ եւ այնչափ լուրջ Վիրթութեան հետեւանքը . զոր Պ. Մօնլօուան իւր որդեոցը տուաւ . փոխանակ Ֆէլիսիէնը ժամը տասնին պառկեցնելու փոխանակ ըսելու թէ կին մը տեսած ատեն դետին նայի , փոխանակ զանի պարտաւորելու որ փախչի անոնցմէ , եթէ թողած ըլլար իր որդին որ հաճոյքը ճաշակէ , եւ իւր հասակի խնդրութիւններն ընէ , այն ատեն սա ազատ տէր ըլլալով իւր անձին , այնչափ անկարգ կերպով չպիտի թողուր ինքզինքը այնպիսի կրքի մը , որուն անհաստատութիւնը արդէն գիտցած կըլլար : Գալով Աստիֆին՝ եթէ շարունակ իւր գինւոյն մէջ ջուր դրած չըլլար , սա ալ սեղանի հաճոյից այն անյագ բաղձանքը չպիտի զգար . . . այնպիսի հաճոյքներ , որոց մէջ մոլեգնաբար ինկաւ , քանզի արգիլեալ են :

« Գալով Վիթթօնէնի , հայրը չէր թողուր որ ձեռքը խաղու թուղթ առնէ . . . կարգելուր սրճարան մը մտնալով պիլլար խաղալ . . . սակայն եթէ այդ երիտասարդը մէկ քանի հարիւր ֆռանք խաղու մէջ կորսնցուցած ըլլար , չէր կործանէր իւր հայրը . բայց ասով պիտի հասկնար թէ ինչ խելագարութիւն է խաղու վրայ դնել յոյսը , հարստանալու համար : « Այս երեք երիտասարդաց քով տեսէ՛ք հիմայ Ֆէլիքս Ալպուէ՛ծնը , որոյ հետ իւր մօրեղբայրն այնչափ խստիւ կը վարուէր . վասն զի կը սիրէր հաճոյքը սա երեք հրապուրիչ ձեւերով , այն է կիններն , խաղն ու զինին : Այո՛ , կը սիրէր բոլոր ասոնք , բոլոր իր հասակակից երիտասարդաց պէս . . . Բայց ո՛չ չափազանցօրէն , կըսէ Նատին առակախօսը . իմաստուն է Փէտուէլի սա սկզբունքը . . . պէտք է ճաշակել իսկ ո՛չ զեղծանել : Երբ մարդ ժամանակէն առաջ իմաստուն , խելօք ըլլայ , վերջը ընաւ խելացի չըլլալու վտանգի կենթարկուի , մինչդեռ այն ցոփակեացը . . . ինչպէս որ պարոն Մօնլօուան կանուանէր իւր քեռորդին , այն ցոփակեաց Ֆէլիքսը հիմայ ընտիր ազնիւ տեսուչ մ'է եւ մասնաւոր շահու բաժին մ'ունի իւր վաճառա-

տան մէջ . սիրելի , յարգելի է իւր մեծացը , եւ միայն իր գործը կը նայի . . . ինքը խրկեց այն երկու հաղար ֆռանքը , որ իւր առաջին խնայութիւնն էր . . . շատ երջանիկ է ինքն ձեռքի անպոքոցանելու թէ ձեր թշուառութիւնները չէին կրնար այլայլել իւր առ ձեզ ուխտած բարեկամութիւնը . . .

— Միթէ կարելի՞ է , թո՞ղովեց տիկին Սառժէ , որ այս գուժարը Ֆէլիքս զրկած ըլլայ . . .

— Այո՛ , Տիկին , երեկ իմացուցի իրեն ձեր կացութիւնը եւ կը տեսնաք որ անսխալապէս լուր զրկեց ձեզ :

— Ա՛հ , ես աղէկ նախազգացի որ այդ նամակը Ֆէլիքսէն է , ըսաւ Էմմա արտասուքը սրբելով .

— Բայց իրաւ , խելացի է՞ հիմայ ինքն :

— Անտարակոյս , ինչպէս որ պէտք է , այնպէս , ինչպէս որ Ս. Պօղոս ըսած է , զգաստօրէն խելացի : Ուրեմն Տիկին , տակաւին պիտի մերժէ՞ք իւր երիտասարդ բարեկամին այցելութիւնները :

— Ո՛հ , ո՛չ , Տօքթէօն , քանզի կը տեսնամ որ անիրաւ էի իրեն նկատմամբ . խեղճ աղայ , հիմայ ո՞ր պահած ըլլալու է ինձ :

— Ամեն քան մոռցուած է , սիրելի տիկին , պօռաց Ֆէլիքս սենեակը վաղելով . ողջագուրեց տիկին Սառժէն եւ Էմմաի ձեռքն համբուրեց , որ զանի տեսնելով , մոռցաւ իր բոլոր վիշտերը ,

— Ի՞նչպէս , ինքն է . . . ուրեմն հո՞ս էր ինքն , հարցուց պառաւ Տիկինը :

— Այո . հետս էր , ըսաւ Տօքթէօնը : Ես հիմայ որովհետեւ չեմ ուզեր որ գործը երկարի , տիկին Սառժէ , ձեր գեղազէմ սանին ձեռքը կը խնդրեմ իւր հօրաքեռորդւոյն՝ Ֆէլիքս Ալպուէ՛ծնի համար :

— Ո՛հ , Տօքթէօն այլեւս խնամածուհի չեմ ես , քանզի միայն անտոռութիւններ կրնէի . . . Էմմաի անկէ պատասխանել եւ կանխաւ ընդունելի է ինձ իւր ըրածը :

Էմմա կարմրելով ձեռքը իր հօրաքեռորդւոյն ներկայացուց , քակելով .

— Ահաւասիկ իմ պատասխանս , Ֆէլիքս . . . բայց հիմայ աղքատ եմ .

— Սիրելիս Էմմա , կօրհնեմ ես այդ աղքատութիւնը , ըստ որում անով միայն կարողացայ ձեր ամուսինն ըլլալ :

Այս օրէն վեց շաբաթ ետքը Ֆելիքս Էմման քաղաքապետի պալատը տարաւ : Տօքթէօն Ժուպէն եւ Ֆելիքսի տէրը վրկայ էին : Հարմնացեալը պիտի ուզէր իւր երկու եղբարքը վրկայ ունենալ , սակայն Ֆելիքսին չէր կրնար սենեակէն դուրս ելնել , եւ Ատուֆ Ֆլանքէթի հետ Պուռսկօնը դացած էր , ուղելով որ որթէն քաղուած տեղն գինին խմէ :

Տիւֆիլէ եւ կինն արարողութեան հրաւիրուելով , ամենէն առաջ իրենք դացին քաղաքապետին պալատը , եւ երբ ամուսնացեալը կանչուեցան , գեղեցիկն լօռէթ կամաց մը ըսաւ իւր ամուսնոյն ,

— Կը տեսնա՞ս , կաթեղբայրդ քեզի պէս չընէր . . . կանչուածին պէս կերթայ , պատրաստ կեցեր է եւ քեզի պէս կօչիկները չհաներ . . .

— Ա՛յ չար , բայց չե՞ս տեսնար , երեսը բաց մուճակներ հագեր է նա .

Տօքթէօնի գուշակութիւնները կատարուեցան . վեց ամիս ետքը Ֆելիքսին ծիւրական ախտով մեռաւ , հետեւեալ տարին դէրն Ատուֆ Ֆլանքէթ եւ Կուտման տանց հետ ունեցած շահագիտական գործողութեանցը պատճառաւ , հաղար հինգ հարիւր Փռանք եկամուտով մնաց , եւ այնչափ անզգայացած էր գինւոյ գեղձումէն , որ այլեւս որ եւ է պաշտօն մը չէր կրնար կատարել : Արդէն գլտէք թէ խաղու ցանկութիւնը ո՞ւր տարաւ . Ալքթօնէնը .


Ընդհակառակը՝ Ֆելիքս ընկերութեան մէջ պատուաւոր տեղ մը բռնել ուզելով , իւր աշխատութեամբը բաւական հարստութիւն վաստկեցաւ , ու միանգամայն բարի հայր եւ բարի ամուսին եղաւ :

Սակայն եւ այնպէս սիրած էր կիները , խաղն ու գինին . . .
ԲԱՅՅ Ո՛Չ ՉԱՓԱՉԱՆՅՅՕՐԷՆ :

Վ Ե Ր Զ

Յ Ա Ն Կ

Ա.	Դրացիքն եւ դրացուհին	5
Բ.	Կաթ Եղբայրը	11
Գ.	Փեսին կօշիկները	17
Դ.	Մօնյօռան գերդաստանը	28
Ե.	Ձուարճասեր բժիշկ մը	34
Զ.	Մեռ. յիշէի հարսանիքը	44
Է.	Պարոն Տառտառի մէկ խարդախութիւնը	55
Ը.	Երէք մօրեղբօրորդիք	65
Թ.	Փոքրիկ մօրեղբօրադուստրը	72
Ժ.	Թատերական արկած մը	77
ԺԱ.	Կտակագիրը	87
ԺԲ.	Սերը երբեմն իմաստնացնէ	98
ԺԳ.	Կանայք	105
ԺԴ.	Մօնյօի պարտեզը . փոքրիկ մուրացկուհին	113
ԺԵ.	Աղիկ ճաշոյ պարոն մը	122
ԺԶ.	Գիւնի	133
ԺԷ.	Անշանասեր սիրահար մը !	142
ԺԸ.	Խաղ	147
ԺԹ.	Նենգութեանց գաղտնիքք կը յայտնուի	157
Ի.	Երջանիկ անկումներ կան	169
ԻԱ.	Ոչինչ ջափաղանցեալու ջե	175



Handwritten notes and signatures at the bottom of the page.


Վ Ր Ի Պ Ա Կ

Երես	Տող	Սխալ	Ուղղիչ
6	35	համարձակօս	համարձակախօս
10	8	կարկերհանի	կարկեհանի
22	18	բլիթէնի	բլիթենի
22	20	բլիթէնի	բլիթենի
23	17	ըսել է : ըսաւ	ըսել է , ըսաւ
30	35	օրիորդը կշտամբանք	օրիորդին վրայ
34	25	յապաւել	յապաղել
53	16	ծերունի	ծերունին
66	36	Գատեմ	Գիտեմ
117	6	գործօնէութիւնս,	գործօնէութեանս եւ



11000

Page	Text	Page	Text
110	11000	110	11000
111	11000	111	11000
112	11000	112	11000
113	11000	113	11000
114	11000	114	11000
115	11000	115	11000
116	11000	116	11000
117	11000	117	11000
118	11000	118	11000
119	11000	119	11000
120	11000	120	11000



2100

2013

